ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆ

ՀԱՅԿ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՄԻՋԱՆՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԻԳ. 00. 02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ,միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. 1. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ 13

1. 1. « Սոցիալականացում» եզրույթի արժեքային բազմաչափությունը 13

1. 2. Երիտասարդությունը քաղաքական գործընթացների դերակատար. հայեցակարգային վերլուծություն 32

1. 3. Երիտասարդությունը արդիականացման գործընթացներում. քաղաքական վերլուծություն.....57

1. 4. Երիտասարդության մասնակցությունը ընտրական գործընթացում, մասնակցության ոչ ինստիտուցիոնալ և ինստիտուցիոնալ ասպեկտները.....74

ԳԼՈՒԽ 2. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 93

2. 1. Հոգևոր ընտրանու դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում.....93

2. 2. Կրթության դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում.....99

2. 3. Երիտասարդության դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում. Երիտասարդական շարժումներ.....108

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....147

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....150

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հետազոտության թեմայի ընտրությունը կապված է ընթացիկ քաղաքական գործընթացի վրա ազդել ձգտող քաղաքացիների՝ քաղաքական գործունեության ակտիվության աստիճանի աճի հետ: Ներկայում քաղաքական համակարգի գործունեության վրա, քաղաքական ինստիտուտների ձևավորման և, ի վերջո, քաղաքական որոշումների ընդունման ու կատարման գործընթացում երիտասարդության ազդեցության զգալի աճ է դիտվում: Ժամանակակից քաղաքական գործընթացին երիտասարդության ներգրավմանպատճառների, ձևերի և մեխանիզմների ուսումնասիրմանը նվիրված հետազոտությունների թվի աճըարդիական է դարձնում հետազոտության թեման:

Քաղաքական պրակտիկան ցուցադրում է, որ գլոբալ աշխարհում ռազմավարական և քաղաքական առավելություններ ունենալու են այն պետությունները, որոնք կկարողանան արդյունավետ զարգացնել երիտասարդության նորարարական ներուժը: Հետազոտության թեման արդիական է դարձնում երիտասարդական քաղաքականության այն վեկտորների որոշումը, որոնք ուղղված են ժամանակակից երիտասարդության ստեղծագործական ներուժի զարգացմանը, կատարելագործմանն ու քաղաքական կյանքում ներդրմանը:

Այսօր Հայաստանում երիտասարդների համար լայն հնարավորություններ են բացված ինչպես քաղաքական, այնպես էլ հանրային կյանքի ոլորտներում, ինչը կարող է լինել երիտասարդության և քաղաքական իշխանության միջև գործընկերային հարաբերությունների զարգացման գրավականը և պայման դառնալ հասարակության ու պետության կայունության և կայուն զարգացման համար: Հետևաբար, կարևոր է դառնում ուսումնասիրել այն հարցերը, որոնք նվիրված են ժամանակակից քաղաքական գործընթացում երիտասարդության դերի ըմբռնմանը, ապա նրա քաղաքական ակտիվության ձևերի և բովանդակության ուսումնասիրությանը, պետական երիտասարդական քաղաքականության իրականացման մեխանիզմների և երիտասարդների քաղաքական մասնակցության ինստիտուտների գործունեության բարելավմանը Հայաստանի քաղաքական գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունում, ժողովրդավարական անցումից համախմբում քաղաքական գործընթացի մարտահրավերներով պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել վերարժևորելու երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործընթացում: Այս համատեքստում դիտարկելով գործընթացի քաղաքակրթական,

սոցիալ-հոգեբանական, քաղաքատնտեսական և աշխարհաքաղաքական բազմաչափությունը՝ անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրելու երիտասարդների դերը որպես քաղաքական սոցիալականացման դերակատար, սուբյեկտ:

Դիտարկելով երիտասարդությանը, որպես նոր արժեհամակարգի կրող և տարածող՝ կարող ենք պնդել, որ հենց երիտարադնության ակտիվ դերակատարմամբ են հաստատվելու քաղաքականության մեջ համագործակցության մշակույթի, ինչպես նաև հասարակության մասնակցային մշակույթի տարրերը: Երիտասարդությունը, ստանալով մրցունակ կրթություն, տիրապետելով ժամանակակից ՏՀՏ գործիքներին և բաց լինելով նորարարական գաղափարների համար կարող է հաստատել քաղաքական հաղորդակցության նոր չափանիշներ, ինչպես նաև թելադրել սեփական որոշիչ դերը մասնակցային և անմիջական ժողովրդավարության զարգացման գործում:

Հետազոտության հիմնական նպատակները.

- վերհանել երիտասարդության դերը ՀՀ քաղաքական գործընթացում և բացահայտել նրա քաղաքական ակտիվության զարգացման միտումներն ու հնարավորությունները:

- բացահայտել ՀՀ քաղաքական գործընթացում երիտասարդության՝ որպես ակտոր գործելու պայմանները,

- ուսումնասիրել երիտասարդության դերն ու տեղը ՀՀ էվոլյուցիոն արդիականացման գործընթացներում,

- բացահայտել երիտասարդության ընտրական վարքագծի ձևավորման վրա ազդող գործոնները,

- հիմնավորել, որ երիտասարդական պառլամենտարիզմը երիտասարդությանը քաղաքական գործընթացում ներգրավվածության նորարարական ձևերից է,

- բացահայտել երիտասարդական քաղաքական շարժումների նշանակությունը ժամանակակից Հայաստանի քաղաքական զարգացման մեջ,

- հիմնավորել, որ քաղաքական կրթության ինստիտուտը իշխանության և երիտասարդության ներկայացուցիչների փոխադարձ հարաբերություններ են, ինչպես նաև անմիջական քաղաքական սոցիալականացման միջոց:

Ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքը: Հետազոտության հիմքում դրված է նեոինստիտուցիոնալ մոտեցումը, որը թույլ է տալիս բացահայտել երիտասարդության դերն ու կարևորությունը քաղաքականսոցիալականացման

գործընթացում: Նշված մոտեցումը լրացվել է վարքաբանական մոտեցմամբ (Գ. Լասուել, Չ.Մերիամ և ուրիշներ[1][2]), ինչը թույլ է տվել առանձնակի նշել երիտասարդության մասնակցության օրինաչափությունները քաղաքականսոցիալականցման գործընթացում:

Երիտասարդության քաղաքական ակտիվության վերլուծության ժամանակ կիրառվել է համեմատական մոտեցում (Գ. Ալմոնդ, Ջ.Փաուէլ, Կ.Ստրոմ և ուրիշներ)[3], որը թույլ է տալիս բացահայտել սոցիալականացման էական հատկանիշները, ուսումնասիրել նրա փոխկապակցվածությունը քաղաքացիության ինստիտուտի, սահմանադրականության և մասնակցային ժողովրդավարության հետ:

Աշխատանքում օգտագործվում է դիալեկտիկական մեթոդը, որի շնորհիվ հաջողվել է վերլուծել երիտասարդության սոցիալ-քաղաքական ակտիվության առանձնահատկությունը քաղաքական գործընթացի այլ դերակատարների հետ իր առաջադեմ զարգացման և փոխազդեցության մեջ:

Ատենախոսության շրջանակներում իրականացվելէ բովանդակային վերլուծություն, դեպքերի ուսումնասիրություններ (քեյս-սթադիներ), ինչպես նաև օգտագործել է իրադարձային վերլուծության տարրեր: Այս տիրույթներում հաջողվել է եզրակացնել, որ ՀՀ-ում անցումից համախմբում գործընթացում և անցման, և համախմբման գերակա դերակատարը եղել և մնում է երիտասարդությունը: Հատուկ կարևորված է ՀՀ երիտասարդության ուղղակի գործողություն զանգվածային ակցիաները՝ ցույցեր, երթեր ու պիկետներ: Բովանդակային վերլուծության մեթոդը օգտագործվել է երիտասարդական խորհրդարանական շարժումների իրավական հիմքի, ինչպես նաև կուսակցական քաղաքական դպրոցների ուսումնական ծրագրերի ուսումնասիրության ժամանակ: Նախադեպային մեթոդը թույլ է տվել բացահայտել երիտասարդական ոչ քաղաքական շարժումների զարգացման օրինաչափությունները՝ որպես երիտասարդության քաղաքական ակտիվության նոր ինստիտուտ արդի Հայաստանում:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտն էերիտասարդությունը, որպես հատուկ սոցիալ-ժողովրդագրական խումբ և քաղաքական գործընթացների դերակատար:

---

[1] Lasswell G. D. The analysis of political behavior. L., 1947, p168

[2] Мерриам Ч. Новые аспекты политики // Антология мировой политической мысли. В 5 т. - Т. 2. Зарубежная политическая мысль. XX век. - М., 1997, 642 с

[3] Алмонд Г. Сравнительная политология сегодня. Мировой обзор / Г. Алмонд, Дж. Пауэлл, К. Стром, Р. Далтон. - М., 2002, 537 с

Ուսումնասիրության առարկան: Երիտասարդության տեղն ու դերը ՀՀ անցումից համախմբում քաղաքական գործընթացում. քաղաքական սոցիալականացման ուղիները և հիմնախնդիրները ՀՀ-ում:

Գիտական մշակվածության աստիճանը: Հայաստանում բնակչության որոշակի խմբերի քաղաքական և քաղաքացիական ակտիվության, ինչպես նաև այդ մասնակցության կոնկրետ ձևերի, քաղաքացիական հասարակության կայացման գործում երիտասարդության դերի մասին հետազոտություններ իրականացվել են Երիտասարդական հետազոտությունների ինստիտուտի, Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի, ԵԱՀԿ և ՄԱԿ երևանյան գրասենյակների, ինչպես նաև մի շարք այլ կազմակերպությունների և վերլուծաբանների կողմից:

Անհատին քաղաքականության մեջ ներգրավելու մոտիվների ուսումնասիրության հարցում Նշանակալի ներդրում է կատարվել Ա.Մասլոուի, Դ.Իսթոնի, Ֆ.Գրիշթեյնի, Է. Դյուրկհեյմի, Ս.Գիդենսի, Գ.Մյուրերի, Ֆ.Ֆոմինայայի, Կ.Մայնհեյմի, Գ.Պուշկարյովայի, Կ.Փոփերի, Ս.Իկոննիկովայի, Վ.Դոբրինինի[4] և այլոց կողմից:Սույն թեմայով հայ քաղաքագետնորից մեծ աշխատանքեն կատարել Հ.Շափաղաթյանը[5] և այլոք:

Քաղաքացիական, մասնավորապես, քաղաքական մասնակցության տեսության այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են՝ «քաղաքացիական ներգրավվածության», «քաղաքական ակտիվությունը», «քաղաքական մասնակցության» գործարկումը իրականացրել են Գ.Ալմոնդը և այլոք: Երիտասարդության մասնակցության հիմնախնդիրները տարբեր ժամանակակից քաղաքական ինստիտուտներում դիտարկել է Ա.Ի.Սոլովյովը:[6]

Երիտասարդության քաղաքական ակտիվության երևույթի իմաստավորումը քաղաքական գործընթացում ի սկզբանե նախաձեռնել են քաղաքագիտության տարբեր ուղղությունների գիտնականներ. կառուցվածքային ֆունկցիոնալիզմ (Տ.Պարսոնս, Ռ. Մերտոն և ալք), բիհեյվիորիզմի (Գ.Լասվել և Չ.Մերիամ), համակարգային մոտեցում (Դ.

---

[4] Институциональная политология: Современныи˘ институционализм и политическая трансформация России / Под ред. С В . Патрушева. - М., 2006; 147 с

[5] Շափաղաթյան Հ. Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրները,Երևան, 2007, էջ 15-20

[6] Соловьев А.И. Политическая коммуникация: к проблеме теоретическои˘ идентификации // Полис. - 2002. - No3. - С. 5-7.

Իստոն, Գ.Ալմոնդ, Ն.Լուման, Կ.Դոյչ) ինստիտուցիոնալիզմի և նեոինստիտուցիոնալիզմի (Պ.Հոլլ, Ռ.Թեյլոր և այլոք), կոնֆլիկտաբանական (Ռ.Դարենդորֆ, Լ.Կոզեր և այլք):[7]

Երիտասարդության քաղաքական մասնակցության ասպեկտները մոդեռնիզացման գործընթացներում գրավում են ժամանակակից քաղաքագետների (Ռ.Ինգլհարթ, Օ՛Դոնել, Ռ. Դալ, Յ.Հաբերմաս, Ա.Ս.Պանարին, Վ.Ի.Պանտին և ուրիշներ)[8] ուշադրությունը:

Այսօր կառավարության, գիտական, երիտասարդության շրջանակներում լայնորեն քննարկվում է երիտասարդական պառլամենտարիզմի թեման, որը դարձել է գիտական հետազոտությունների առարկա:

Խնդրի մշակվածության աստիճանի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ ժամանակակից հայրենական, ոչ էլ ժամանակակից արտասահմանյան գրականության մեջ երիտասարդ սերնդի դերի միանշանակ գնահատականը արտաքին քաղաքական գործընթացում ներկայացված չէ: Ի դեպ, հետազոտողների մեծ մասը դիտարկում են խնդրի միայն առանձին ասպեկտներ, իսկ քաղաքական ոլորտում երիտասարդության քաղաքացիական մասնակցությանը հատկացվող ուշադրությունը, ի վերջո, ակնհայտորեն անբավարար է: Այժմ անհրաժեշտություն է ծագել այնպիսի համակարգային բնույթի ուսումնասիրությունների, որոնք կարող են մեկնաբանել երիտասարդության քաղաքական մասնակցությունըանցումից համախմբում քաղաքական գործընթացում: Ուստի անհրաժեշտություն է առաջանում կատարել միջդիսցիպլինար վերլուծություն,որը թույլ կտա վերհանել երիտասարդների քաղաքական սոցիալականացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, երիտասարդական քաղաքականության ոլորտում գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերը, ՀՀ Նախագահի ուղերձները և ելույթները, ՀՀ երիտասարդական պետական հայեցակարգը, սոցիոլոգիական հետազոտությունները (Երիտասարդական հետազոտությունների ինստիտուտի, Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի և այլոց), հետազոտողների փորձագիտական գնահատականները, լրատվամիջոցների հրապարակումները ինտերնետային կայքերում, Երիտասարդական խորհրդարանի և այլ երիտասարդական ինքնակառավարման կազմակերպման համակարգերի ստեղծման և

[7] Социологическая энциклопедия. В 2 т. - М., 2003. - Т. 1. - С. 674-675; Т. 2. - С. 534-537
[8] Политическая энциклопедия. В 2 т. Т. 1. - М., 2000. - С. 727-728

շահագործման փորձ ունեցող երիտասարդական կազմակերպությունների կանոնակարգերը, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերով մշտական հանձնաժողովին կից գործող Երիտասարդական Խորհրդարանի որոշումները և ելույթները և այլն: Ուսումնասիրության ընթացքում համակողմանիորեն ուսումնասիրվել է երիտասարդության սոցիալականացման միջազգային փորձը:

Վերլուծվել են մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ, որոնք թույլ են տվել հաստատել, թե ինչպես է արտացոլվում երիտասարդների մասնակցությունը ժամանակակից քաղաքական գործընթացում: Մեր կողմից իրականացվել են նաև մի շարք սոցիոլոգիակ ան հ արցումներ, որոնք վերհանել են հարատև կրթության և երիտասարդաների քաղաքական սոցիալականացման կապը: Որպես դիտարկման առարկա ընտրվել է ՀՀԿ «Անդրանիկ Մարգարյան» քաղաքական դպրոցի առաջին և երկրորդ հոսքերի ընդունելությունը և ուսումնական գործընթացը:

Գիտական նորույթը. Քաղաքական գործընթացներում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման, հետազոտման և համեմատական վերլուծության արդյունքում մշակվել են երիտասարդության քաղաքական շարժառիթավորման եղանակները և քաղաքական սոցիալականացման մակարդակի բարձրացման գործնական ուղիները:

- ամփոփվել են տեսական հասկացությունները, որոնք նկարագրում են երիտասարդության դերը քաղաքական գործընթացներում և հայտնաբերվել են ժամանակակից քաղաքական գործընթացում երիտասարդության՝ ակտոր դառնալու պայմանները,

- սահմանված են ժամանակակից Հայաստանում արդիականացման գործընթացի փուլերը և հիմնավորված է երիտասարդության դերը այդ փուլերում,

- ընդգծված են այն գործոնները, որոնք ազդում են երիտասարդության ընտրական վարքագծի վրա, և ապացուցված է, որ երիտասարդների մասնակցությունն ընտրական քաղաքական գործընթացում կախված է նրանց սոցիալական և քաղաքական շահերի ներկայացման կազմակերպման ոչ ինստիտուցիոնալ և ինստիտուցիոնալ ձևերից,

- բացահայտված է Երիտասարդական խորհրդարանի դերը՝ որպես երիտասարդության ընտրական ակտիվության զարգացման մեխանիզմ և նոր քաղաքական էլիտայի հավաքագրմանը նպաստող գործիք,

- բերված է երիտասարդական քաղաքական կազմակերպությունների և քաղաքական շարժումների փոխակերպման հրամայականները և երիտասարդների քաղաքական սոցիալականացման ոչ ինստիտուցիոնալ եղանկները,

- ուսումնասիրված է երիտասարդների հոգևոր արժեհամակարգի ազդեցությունը քաղաքական սոցիալականացման վրա,

- տեսական ուսումնասիրությունների և մի շարք եղանակներով իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա ապացուցված է, որ բարձր կրթական մակարդակ ունեցող անձինք և այն անձինք, որոնք հետաքրքրված են հարատև կրթության ստացմամբ, առավել ակտիվ են քաղաքական գործընթացներում,

- հիմնավորված է, որ քաղաքական կրթությունը, և քաղաքական դպրոցը մասնավորապես՝ որպես Հայաստանում երիտասարդների և քաղաքական իշխանության փոխգործակցության ինստիտուցիոնալ ձև, երիտասարդական քաղաքական նորարարության մշակման վերլուծության և փորձարկման եղանակ:

- ապացուցվել է, որ կրթական ծրագրերը կարող են ծառայել որպես երիտասարդության քաղաքական սոցիալականացման միջոց քաղաքական կուսակցությունների համար՝ ապահովելով երիտասարդության մասնակցությունը քաղաքական գործընթացներին:

Պաշտպանությանը ներկայացվող թեզի հիմնական դրույթները.

1. Երիտասարդությունը հատուկ սոցիալական և տարիքային խումբ, որին յուրահատուկ է դեռ չկայացած համոզմունքներով. մաքսիմալիզմով, աննշան կենսական դետերմինիստիկ փորձով, հայացքներով, արժեքներով և հետաքրքրություններով, որոնք պայմանավորված են ժամանակակից հասարակության կողմից հստակ սոցիալական ընդունելի դերերի բացակայությամբ, սոցիալական և քաղաքական կյանքում վարվելաձևերի օրինակների ինվերսիայով: Երիտասարդության ժամանակակից քաղաքական գործընթացի ակտորի փոխակերպման պայմանները կապված են քաղաքական ռեժիմի տեսակի հետ, բուն քաղաքական գործընթացի ձևի և փուլի հետ, կախված են պետական պաշտոնական կառույցներին ՁԼՄ-ների հաշվետվողականության աստիճանից, սոցիալ-քաղաքական կյանքում տեղեկատվական բաղադրիչի զարգացման մակարդակից, «սպառողական հասարակության» իդեալների տարածվածության աստիճանից և կրթական մակարդակից:

2. Հայաստանի ժամանակակից քաղաքական տարածության մեջ նկատվում է արդիականացման մի քանի «ալիք», որոնց հիմքում էին բուն արդիականացման բնույթի, վեկտորի, ռեսուրսների, ակտորների և առարկայի տարբեր պատկերացումները: Եթե առաջին« ալիքը» կապված էր երիտասարդությանը քաղաքականացնելու, քաղաքական ակտիվության և քաղաքական փորձի զանգվածային ինստիտուցիոնալացման հետ, ապա, ժամանակի ընթացքում կատարվում է երիտասարդության ապաքաղաքականացումը, նրա ապաքաղաքականությունը արտահայտվում է նրան քաղաքացիական ակտիվության ոչ ինստիտուցիոնալ ձևերին ներգրավելու մեջ, ոչ այնքան քաղաքական, որքան նեղ սոցիալական խնդիրներ լուծելու ճանապարհին երիտասարդական ներուժը «շահադիտական-կուսակցական» նպատակներով օգտագործելու մեջ:

3. Հայաստանյան ընտրական քաղաքական գործընթացում երիտասարդության մասնակցության վրա ներգործում են. սեփական կենսափորձը, միջանձնային հաղորդակցումը, հասարական և քաղաքական ինստիտուտները, ԶԼՄ-ները և կապի միջոցները, սոցիալական շերտավորումը, երիտասարդների սոցիալ-քաղաքական հետաքրքրությունների ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ ներկայացման ձևերի առկայությունը, բուն ընտրական գործընթացի փուլը, իրենց իշխանական ներուժը իրականացնել ձգտող քաղաքական ուժերի առջև ծառացած մարտահրավերները տվյալ փուլում:

4. Երիտասարդության պառլամենտարիզմը, որը վերաբերում է երիտասարդությանը քաղաքական գործընթացներին ներգրավելու ինստիտուցիոնալացված ձևերին, նպաստում է երկրում քաղաքական կյանքի ժողովրդավարացմանը, հասարակական ինքնակառավարման մեխանիզմների զարգացմանը, քաղաքական մրցակցության աճին, քաղաքական վերնախավի և առաջնորդների ձևավորմանը:

5. Երիտասարդների ընդգրկումը քաղաքական կյանքի այս կամ այն ձևերում սահմանափակվում է քաղաքական իշխանության հետ տեղեկատվության անմիջական փոխանակման ուղիների ամբողջական բացակայությամբ, կամ մինիմիզացմամբ, ինչը նպաստում է երիտասարդության քաղաքական մասնակցության ոչ ինստիտուցիոնալացված ձևերի աճին:

6.Կրթական ցենզի բարձրացումը հանգեցնում է երիտասարդների քաղաքական սոցիալականացման մակարդակի բարձրացմանը:

7. Քաղաքական դպրոցները ոչ միայն հարատև կրթության միջոց են, այլև ծառայում են որպես երիտասարդական և քաղաքական իշխանության երկխոսության յուրահատուկ ձև,հարթակ են, որի վրա ձևավորվում է գործողության գաղափարախոսությունը, հայրենասիրությունը, հանդուրժողականությունը, ընդհանուր պատմության և էթնո-մշակութային և կրոնական արժեքների հանդեպ հարգանքը, կատարվում է քաղաքական ակտիվիստների մոբիլիզացումը, քաղաքական առաջնորդների հավաքագրումը, նոր էլիտայի ձևավորումը, նոր սոցիալական և քաղաքական նախագծերի ստեղծումը:

Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը կայանում է «երիտասարդական քաղաքականություն», «երիտասարդություն», «անցումային երիտասարդություն» կատեգորիաների բովանդակության և նրանց ինստիտուցիոնալ հատկանիշների ճշգրտման, ինչպես նաև երիտասարդական քաղաքական ակտիվության ինստիտուցիոնալացված ձևերի ռազմավարության բովանդակության և նպատակակետի հստակեցման մեջ: Որպես տեսական նշանակություն կար ող է դիտարկվել նաև կրթության և քաղաքական սոցիալականացման կապի քննարկումը:

Որոշ թեզեր հստակեցնում են երիտասարդական քաղաքականության տեսական և մեթոդական հիմքերը: Ընդհանրացումները, որոնք կատարված են ուսումնասիրության մեջ, կարող են ներառել երիտասարդական քաղաքականության տեսական հայեցակարգեր, ինչպես նաև սոցիալական և քաղաքական հարաբերությունների ոլորտում ռեակտիվ և ակտիվ քաղաքականության դոկտրինը:

Ատենախոսական հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա նյութերը և եզրակացությունները կարող են քաղաքական կուսակցությունների կողմից իրականացվող երիտասարդության քաղաքական սոցիալակնացման աշխատանքներում, պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի կատարելագործման և հետագա մշակման, ժամանակակից կազմակերպությունների գործունեության և քաղաքացիական հասարակության կառուցվածքային բաղադրիչների, երիտասարդության քաղաքական մասնակցության ազգային մոդելի մշակման, ռազմահայրենասիական դաստիարակության գործում:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել Հայաստանի պետական իշխանական մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների (ինչպիսիք են երիտասարդական հասարակական կազմակերպություններն ու շարժումները, ուսանողական խորհուրդները) միջև հարաբերությունների օպտիմալացման հարցում:

Ատենախոսական հետազոտության նյութերը կարող են օգտագործվել այնպիսի հատուկ դասընթացների նախապատրաստման համար, ինչպիսիք են «Պետական երիտասարդական քաղաքականությունը», «Երիտասարդական պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում» և «Կուսակցական քաղաքական դպրոցներ»:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության փորձաքննությունը իրականացվել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերով մշտական հանձնողովին կից գործող Երիտասարդական Խորհրդարանի, ՀՀԿ «Անդրանիկ Մարգարյան» քաղաքական դպրոցի և մի շարք այլ պետական և ոչ պետական կառույցների աշխատանքի կազմակերպման մեջ:

Հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են շուրջ 10 գիտաժողովներում և սեմինար-քննարկումներում ՀՀ-ում և արտասահմանում:

Մշակված տվյալները կիրառվել են ՀՀԿ «Անդրանիկ Մարգարյան» քաղաքական դպրոցի ստեղծման և գործունեության, և ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թվականների ռազմավարության մշակման մեջ: Առկա են ներդրման տեղեկանքներ:

Ատենախոսության հետազոտության հիմնական դրույթները արտացոլված են 8 գիտական հրապարակումներում:

Ատենախոսական հետազոտության ծավալն ու կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, որը բաղկացած է 111 անվանումներից: Թեզի ծավալը 156 էջ է:

ԳԼՈՒԽ 1. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ

1.1. « Սոցիալականացում» եզրույթի արժեքային բազմաչափությունը

Անձի սոցիալականացման հիմնախնդրով բազմաթիվ ուսումնասիրողներ են զբաղվել՝ Մ. Հայդեգեր, Կ. Յասպերս և այլք. սոցիոլոգներ Ու. Բրոնֆենբրենները, Է.Ս. Դոմրովինսկին, Է. Դյուրքհեյմը, Հ. Պարանսը և հոգեբաններ (Ս. Օլպորտ, Ս.Վ. Պետրովսկի և այլոք): Ուսումնասիրողների կողմից մշակվել են տարատեսակ տեսություններ: Այդպիսի տեսություններից է բիոգենետիկ տեսությունը: Ըստ բիոգենետիկ տեսության ներկայացուցիչների՝ Ջ. Հոլլ, Ս. Հեզել և այլն, սոցիալականացումը դիտարկվում է որպես բնական գործընթաց, որը ենթարկվում է իր ներքին օրինաչափությանը, անձի զարգացումը կրում է փուլային բնույթ, որոնց անցումը անխուսափելի է և տեղի է ունենում որոշակի դադարներով և փոփոխությունների անկանխատեսելիությամբ: Սոցիոգնետիկ տեսություններում (Ռ. Բենեդիկտ և այլք) սոցիալականացումն իրականացնում է ինտեգրացնող գործառույթ, ձևավորում է սոցիո-մշակութային ընդհանրության նկատմամբ պատկանելիության գիտակցման ձևավորում, անձը տարատեսակ մշակույթների «պրոդուկտ» է:

Բիհեվիորիստական և նեոբիհեվիորիստական տեսությունները (Յ. Ուզնդայք, Ս. Բանդորա, Վ, Ուոլթերս և այլք) սոցիալականացումը դիտարկում են որպես սոցիալական ուսումնառության գործընթաց, ինչը ենթադրում է որոշակի վարքաբանական մոդելների դիտում և կրկնօրինակում: Ուսումնառության գործընթացի կարևոր մասնիկներն են ամրապնդումը, փոխարկող ամրապնդումը, ինքնամրապնդումը: Ըստ բիհեվիորիստական և նեոհեվիորիստական տեսությունների յուրացված վարքաբանական մոդելների ամբողջականությունը անձն է: Դասական հոգեվերլուծության մեջ սոցիալականացումը դիտարկվում է որպես բնական կամ վայրի ձգտումների անցումային գործընթաց պաշտպանական համակարգերի միջոցով:

Նեոֆրոյդիզմի ներկայացուցիչները հատուկ ուշադրություն և առանձնակի տեղ են հատկացնում «էգո»-ին կամ «Ես»-ին, որպես հիմնական, կարևոր ադապտացնող համակարգ անձի սոցիալական զարգացման գործընթացում: Սիմվոլիկ ինտերակցիոնիզմի դպրոցի ներկայացուցիչները (Դ. Միդ, Տ. Կեմպեր) մշակում են սոցիալականացման մոդելների սոցիալական փոխհարաբերության, դերային վարքաբանության, «Ես»-ի ձևավորման հիման վրա: Ուսումնասիրողները գտնում են, որ սոցիալականացման

հիմնական արդյունքը անձի ինքնագիտակցության ձևավորումն է: Հումանիստական հոգեբանության դպրոցի ներկայացուցիչները (Ա. Մասլոու, Կ. Ռոջերս և այլք) դիտարկում են սոցիալականացման գործընթացը որպես «Ես»-հայեցակարգի, ինքնաակտուալացում:[9]

Լ.Ս. Վիգոտսկին քննադատեց «սոցիալականացում՝ որպես կենսաբանական գոյությունից անցումը սոցիալականացված անձի կյանքի» մոտեցումը: Ըստ նրա, նորածին երեխան արդեն իսկ որոշակի մշակույթի կրող կամ մասնիկն է, որոշակի սոցիալական կապերի կրող, կամ մասնիկ, քանի որ նա ծնված պահից ի վեր արդեն իսկ հանդիսանում է հասարակական գոյ, էակ, նա ի սկզբանե շրջապատված է բարդ, համակարգային սոցիալական աշխարհով, որի լիարժեք անդամը նա դեռ պատրաստվում է դառնալ: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու, անձի բնույթը սոցիալական է. ի տարբերություն Պիաժեի, նա գտնում է, որ զարգացումը գնում է ոչ թե դեպի սոցիալականացումը, այլ հասարակական հարաբերությունները վերածվում է հոգեկան գործառույթների:[10]

Ըստ նրա ոչ արտաքին աշխարհից երեխային ներմուծվում է աստիճանական սոցիալականացումը, այն աստիճանական անհատականացումը, որն առաջանում է երեխայի ներքին սոցիալականության հիմքի վրա, երեխայի զարգացման հիմնական չափորոշիչն է:

Ըստ Վ.Կ. Շեբելնիկովի, Գ. Հեգելը փիլիսոփայության, իսկ Լ.Ս. Վիգոտսկին կոնկրետ հոգեբանական մոտեցմամբ բացահայտում են անձի սոցիալական դետերմինացիան և հոգեկան զարգացումը: Հասարակությունը հոգեկանը ձևավորող սուբյեկտ է:[11]

Անձի զարգացման պատմամշակութային դետերմինացիայի զարգացումը ենթադրում է հասարակության և անձի հոգևոր կազմակերպման համապատասխանություն կամ իզոմորֆիզմ: Բացահայտվելով որպես հասարակության գործառույթային օրգան՝ անձը իր զարգացման ընթացքով արտացոլում է իրեն գերակշռվող անձի մշակութային համակարգի զարգացման ճգնաժամերի համակարգը կամ կառուցվածքը:

Ըստ ռուսական դպրոցի քաղաքական սոցիալականացումը դիտարկվում է որպես անհատի կողմից սոցիալական փորձի յուրացումը սոցիալական միջավայրի ներգրավմամբ

---

[9] Maskow A.H. Motivation and Personality.Harper and Brothers, 1987, 411 p

[10] Журавлев А.Л, Социальная психология. Москва 2002. - 351 с

[11] Исхаков А. М. о самоопредилении личности в современном обществе// психология и жизнь: сб. науч. тр. вып 1-М: МОСУ,РПО,2000, с19-22

և սոցիալական կապերի և հարաբերությունների համակարգերի յուրացմամբ[12] ՝ որպես գործընթաց, անհատի կողմից հասարակության նորմերի և արժեքների և դրանք հասարակական համակարգերով ակտիվ յուրացման գործընթաց, որը բնորոշում է անձի՝ որպես անհատի, վարքագիծը և դիրքորոշումը հասարակության համակարգում:

Քաղաքական սոցիալականացումը անհատի կողմից սոցիալական փորձի, հասարակական կապերի և փոխհարաբերությունների համակարգերի յուրացման և վերարտադրման գործընթացն ու արդյունքն է:

Ըստ ուսումնասիրողների, կա քաղաքական սոցիալականացումը հասկացության տարբեր մեկնաբանություններ: Ըստ վերոնշյալ բնորոշումների, քաղաքական սոցիալականացումը մի կողմից դիտարկվում է որպես անհատի կողմից սոցիալական փորձի յուրացման ակտիվ գործընթաց, հասարակական գործառույթների և ճգնաժամերի, շրջապատի հետ սոցիալական կապի համակարգերի փոխգործունեությամբ: Մյուս կողմից դա անձի ներքին անհատական զարգացման գործընթաց է, ուղղված սոցիալական ինքնորոշման՝ ստացած փորձի քննադատական իմաստավորման, այդ փորձի փոխակերպման և դրա հետ նորացման և բազմապատկման միջոցով: Այս դեպքում մարդու փոխհարաբերությունը հասարակության հետ իերառում է հասարակության և մարդու ճանաչումը կամ գիտակցումը որպես զարգացման սուբյեկտների:

Սոցիալականացման ընթացքում մարդը ոչ միայն ձեռք է բերում սուբյեկտային հատկանիշներ, որոնք անհրաժեաշտ են իրեն հասարակության մեջ կենսագործունեության համար, այլև ձևավորվում է որպես անհատականություն, որը ընդունակ է կառուցողական լուծում առաջարկել հասարակությունում առկա խնդիրների համար, ով ընդունակ է սոցիալական պրակտիկ նոր շրջաններ ձևավորել և դրանից առաջ գոյություն չունեցած սոցիալական ընդհանրություններ: Սոցիալականացման բնորոշման հետ կապված տարակարծություններ են առաջանում անձի զարգացումը և դաստիարակություն հասկացությունների կիրառման հետ կապված:

Անձի զարգացումը դիտարկվում է որպես անհատի համակարգային որակների փոփոխության օրինաչափ գործընթաց, որը տեղի է ունենում նրա սոցիալիզացիայի արդյունքում: Անձի զարգացումը հասարակության կողմից անհատի ենթարկում կամ նրա բիոլոգիական, կենսաբսանական բնույթի ճնշում չի, այլ որպես անհատի առանձնացում

[12] Андреева Г.М., Социально-психологические аспекты активизации человеческого фактора // Вопросы психологии. — 1986, № 3. , . с. 5-15

հասարակությունից՝ նրա համակարգում տեղի ունեցող հասարակական գործունեության ծավալման միջոցով: Անձնային կամ անհատական առանձնահատկությունները ձևավորվում են որպես սուբյեկտի հոգեբանական գործունեության ապահովում:

Անհատի ճանաչումը որպես սոցիալական գործունեության սուբյեկտ հատուկ նշանակություն է տալիս անհատի զարգացման գաղափարին, քանի որ երեխայի զարգացման գործընթացը հնարավոր չէ առանց սոցիալական զարգացման, հետևաբար, նաև առանց վերջինիս կողմից հասարակական կապերի համակարգի ընկալումի: Վերոհիշյալը նկատի ունենալով, անձի զարգացում և քաղաքական սոցիալականացում հասկացությունները որոշակի առումով համընկնում են, բայց անձի ակտիվությունը ավելի հստակ ներկայացվում է զարգացման, այլ ոչ թե սոցիալականացման գաղափարի մեջ:

Անձի սոցիալական զարգացման շարունակականության, անավարտության գաղափարը մատնանշելու համար կիրառվում է «սոցիալականացվածություն» հասկացությունը: Սոցիալականացվածությունը անձի համապատասխանությունն է այն տարիքային սոցիալական պահանջներին, անձնական և սոցիալ-հոգեբանական նախադրյալների առկայությունը, որոնք ապահովում են նորմատիվային վարքագիծը կամ սոցիալական ադապտացիայի գործընթացը:

Սոցիալական հասկացությունը ներառում է սոցիալականացման նշաններ և պատրաստակամություն սոցիալական զարգացման նոր իրավիճակների անցնելու, ենթադրում է ունակություն նոր սոցիալական պահանջմունքներ ադեկվատ ընկալելու, ընտրողական վերաբերմունք, սոցիալական ազդակների հանդեպ, սոցիալականացման մյուս փուլը հաղթահարելու համար նախարյալների ձևավորում:

Քաղաքական սոցիալականացումը շարունակվում է ողջ կյանքի ընթացքում և հասուն անհատների սոցիալականացման առանձնահատկությունը անկանխատեսելի հասարակական իրավիճակներում (գաղափարախոսության փոփոխություն, արժեբանային և վարքաբանական համակարգերի փոփոխում, մշտական բնակության վայրի փոփոխում, ազատազրկման վայրից ազատում և այլն) վերասոցիալականացում է:

Քաղաքական սոցիալականացումը վերականգնողական (ռեաբիլիտացիոն) գործառույթ ունի, որը բնորոշվում է սոցիալական կապերի վերականգնմամբ կամ ամրապնդմամբ, հասարակական դեադապտացիայի առաջացման չեզոքացմամբ:

«Դաստիարակություն» հասկացությունը կիրառվում է հոգեբանական 2 նշանակությամբ՝ լայն և նեղ: Նեղ իմաստով դաստիարակությունը դիտարկվում է որպես

անհատի՝ հասարակության կողմից ընդունելի նորմերի և արժեքների ձեռքբերում, բարոյական և իրավական նորմերի, անձի հատկանիշների և վարքագծի ձեռքբերում դաստիարակության գործընթացում:

Որպես ազդեցության սուբյեկտ հասկանում ենք հատուկ ինստիտուտ, հասուն մարդ, որն իրականացնում է նպատակաուղղված, ծրագրային փոխազդեցության գործընթաց երևակայական որոշակի պատկերացումների, նորմերի համակարգի փոխանցման նպատակով, բայց այս գործընթացը չի կրում կոշտ մանիպուլյատիվ բնույթ, այլ միջանձնային փոխազդեցություն, գործընկերություն է: Փոխազդող կողմի նպատակաուղղվածությամբ պայմանավորված, նրա վրա են դրվում նպատակադրման պարտականությունները, որոնք դուրս են տեղի ունեցող գործողությունների փոխազդեցության և ռեֆլեքսիայի շրջանակից: Պարզ է դառնում, որ «դաստիտարակությունը» նեղ իմաստով և «քաղաքական սոցիալականացումը» տարբերվում են իրենց նշանակությամբ:

«Դաստիարակություն»-ը լայն իմաստով կիրառելիս տարբերությունները ջնջվում են, քանի որ դաստիարակությունը բնութագրվում է որպես անհատի սոցիալականացման գործընթաց, նրա՝ որպես անհատի ձևավորումը և կայացումը ողջ կյանքի ընթացքում սեփական ակտիվության և բնական, հասարակական, մշակութային միջավայրի ազդեցությամբ:

Որպես դաստիարակության գործընթացի սուբյեկտ տվյալ պարագայում հանդես է գալիս հասարակությունը, հասարակական հարաբերությունների ողջ համակարգը, որն ուղղված է անձի դաստիարակությանը: Լայն իմաստով դաստիարակությունը սոցիալականացման առաջատար և բնորոշիչ սկիզբն է: Լայն իմաստով դաստիարակության լավագույն օրինակներից է քաղաքական դաստիարակությունը

Սոցիալականացման իմաստային գերակշռիչների վերլուծության համար ուսումնասիրողները առանձնացնում են նրա չորս ամբողջական եզրերը: Երեք եզրերը բնորոշում են սոցիալականացման մի կողմը, որը կապված է անձի ներգրավմամբ հասարակություն, դրանք են՝ ինկուլտուրացիան և ադապտացումը: Սոցիալականացման երկրորդ եզրը, որը արտացոլում է անձի կողմից յուրացված սոցիալական փորձի ակտիվ արտացոլումը, տարբերում է 4-րդ եզրը՝ սոցիալականացման՝ որպես կառուցողականության գործընթացի դիտարկում:

Ինկուլտուրացիայի գործընթացը արտացոլում է անհատի ուղղվածությունը բաշխատեղեկալման և գերակշռող մշակույթին բնորոշ վարքագծի, ինչի արդյունքում ձևավորվում է նրա կոգնիտիվ, զգայական և վարքագծային նմանությունը սույն մշակույթի այլ անդամների հետ և տարբերությունը մյուս մշակույթների անդամներից, անձի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություններում ուսումնասիրվում են մշակութային նորմերի և արժեքների, վարքաբանական մոդելների, սոցիալական կատեգորիացման մեթոդների, սոցիալական իդենտիֆիկացման (նույնականացման) առանձնահատկությունների և «Ես»-հայեցակարգի, փոխանցման տեսակները և համակարգերը:

Քաղաքական սոցիալականացումը կարող է դիտարկվել որպես անհատի կողմից սոցիալական փորձի տարատեսակ, մոդուսների յուրացման, ինտերնալիզացման գործընթաց (վարքաբանական մոդելների և սոցիալական նշանակության յուրացում, սիմվոլների արժեքների):

Ուսումնասիրության հիմնական շեշտադրումը արվում է այդ յուրացման տարատեսակ մեխանիզմների, համակարգերին և հենց բուն յուրացման բովանդակության վրա: Ժամանակակից ուսումնասիրության առանձնահատկությունը կայանում է ինքնակարգավորման և ինքնադետերմինացման ընդգծման մեջ որպես անհատի հասունության չափորոշիչ սոցիալական ազդեցությունների համակարգում:

Սոցիալականացման հիմնական արդյունքը անհատի հատկանիշների ձևավորումն է, որոնք ապահովում են նրա նորմատիվային գործունեությունը, իսկ սոցիալական զարգացման գլխավոր չափանիշը դառնում է նրա հասարակական կայացվածությունը, հաջողությունը: Սոցիալական միջավայրի պահանջներին համապատասխանության ձեռքբերման գործընթացը բնորոշվում է որպես սոցիալական ադապտացիայի գործընթաց, իսկ նրա խախտումը՝ որպես դեադապտացում: Անհատը հոգեբանական կառուցվածք ունի, որը համապատասխանում է սոցիալական տարատեսակ տենդենցների ազդեցությանը և փոխակերպում է դրանք ադապտացիոն վարքագծի սցենարների:

Ըստ ուսումնասիրողների, հասարակական-տնտեսական փոխակերպումների պայմաններում անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիան դինամիկ համակարգ է, որն ապահովում է սոցիալականացման՝ որպես պատմական գործընթացի զարգացում: Նրա հիմնական գործառույթը սուբյեկտիվ հոգեբանական կարգավորիչների ստեղծումն է, որոնք, փոխակերպվելով գործունեության և վարքագծի տարատեսակ ձևերի, նոր սոցիալական նորմերի հիմքն են, պահանջների և դերերի ձևավորման համար:

Սոցիալականացումը՝ որպես սոցիալականության կառուցողականության հասկացություն թույլ է տալիս հաղթահարելու անհատի և հասարակության փոխհարաբերություններում առկա կոշտ դետերմինիզմի հիմնախնդիրները: Ներկայում սուբյեկտի կողմից սոցիալական աշխարհի կառուցման խնդիրը վերլուծության առանձին թեմա է: Սույն գործունեության արդյունքում մարդու կողմից ստեղծվում է սոցիալական աշխարհի պատկերը որպես արարված, կերտված սոցիալական իրականություն, որի մի մասը հանդիսանում է սեփական անձի՝ որպես այս աշխարհի մի մասի վերաբերյալ պատկերացումը՝ սոցիալական նույնականացումը: Սոցիալական կառուցողականության բնույթի մասին գործընթացի մասին պատկերցումները թույլ են տալիս առանձնացնել և ուսումնասիրել մեծ սոցիալական խմբերի ձևավորման առանձնահատկությունները (դասեր, և այլն), մարգինալ վիճակում գտնվող անձանց սոցիալական սուպայդելների խմբում հայտնվելու հավանականության կանխորոշումը[13] :

Հասարակությունը իրական հարաբերությունների համակարգ է, որտեղ ամենօրյա փոխազդեցության մեջ են գտնվում մարդիկ: Որպես կանոն նրանք չեն առնչվում պատահական կամ ինքնաբուխ կերպով: Նրանց հարաբերությունները առանձնանում են սոցիալական կանոնակարգվածությամբ: Ըստ հասարակագետների այդ կանոնակարգվածությունը, փոխկապվածությունը կրկնվող և կայուն ձևերով կոչվում են հասարակական կառուցվածք:

Սոցիալականացման գործընթացը ժամանակակից հասարակությունում ունի իր յուրահատկությունը, որը կապված է հասարակական համակարգի և մոբիլիզացիայի հետ (աշխատանքի բաժանում, սոցիալական սահմանների խոցելիություն):

1) Ավանդական հասարակությունում անձի կյանքի ուղին մեծամասամբ կանխորոշված է իր ծնողների որոշակի սոցիալական խմբի պատկանելիությամբ: Մարդը իր կենսագործունեության ընթացքում անցնում է տարիքային մի քանի փուլ և յուրաքանչյուր փուլում ենթարկվում է «նախնական սոցիալականացման»: Ժամանակակից հասարակությունում մոբիլությունը կրում է հավանական բնույթ՝ յուրաքանչյուր սկզբնական փուլից անձը կարող է հայտնվել բազմաթիվ այլ փուլերում: Այդ իսկ պատճառով հնարավոր

[13] Шебельников В. Предметность и субъектность детерминирующего мира в концепциях психологии // ж. «Методология и история психологии». Том 1. Выпуск 1. Январь-июнь 2006, с.23-40

չէ անձին նախապատրաստել գործունեության բոլոր նշանակալից խմբերում, արդյունքում նա հայտնվում է որևէ խմբում, իսկ հետո սկսում է ադապտացվել (սոցիալականացվել):

2) Ժամանակակից հասարակությունում սոցիալականացման մյուս առանձնահատկությունը, ի տարբերություն ավանդական հասարակության, արտահայտված է սոցիալականացման ագենտների (կամ գործիչների) բազմազանությամբ և փոխադարձ անկախությամբ: Ավանդական հասարակությունում նորմերը, որոնք ընդունում են սոցիալական տարբեր գործիչներ, ավելի համաձայնեցված և համակարգված են գործում: Ժամանակակից հասարակություններին բնորոշ են դերային խնդիրներ՝ որպես սոցիալականացման մոզայիկ բնույթի արդյունք:

Դա կապված է երեք հանգամանքների հետ՝

1) Արժեքների համակարգի փոփոխությամբ, վերացմամբ, որի արդյունքում ավագ սերունդը ոչ միշտ կարող է նախապատրաստել նոր սերնդին, նոր պայմաններին:

2) Հասարակության սոցիալական համակարգի արմատական և շատ արագ փոփոխմամբ, շատ նոր նույնական խմբերի սեփական շարքերի վերարտադրության անկարողությամբ:

3) Ֆորմալ և ոչ ֆորմալ սոցիալական վերահսկողության համակարգի թուլացումը որպես սոցիալականացման գործոն:

Ժամանակակից սոցիալականացման առանձնահատկություններից է նրա տևականությունը ի տարբերություն նախորդող շրջանների: Պատանեկությունը որպես սոցիալականացման փուլ նկատելիորեն երկարաձգվել է ի տարբերություն մյուս դարաշրջանների: Առհասարակ պատանեկությունը որպես սոցիալականացման փուլ նորովի է սկսել դիտարկվել: Եթե այս փուլը նախկինում դիտարկվում էր որպես կյանքի նախապատրաստող շրջան, ապա ժամանակակից հասարակությունում այն դիտարկում են որպես կենսագործունեության յուրահատուկ շրջան, որը նույնքան կարևոր է որքան կյանքի հասուն փուլը: Նախորդ դարաշրջանների հետ համեմատած ժամանակակից հասարակությունում պատանեկության շրջանը ավելի բարձր ստատուս ունի: Հասարակությունը ավելի մեծ հանդուրժողականություն է ցուցաբերում պատանիների հանդեպ՝ նրանց դիտարկելով որպես հասարակության ապագա:

Բնականոն զարգացման և սոցիալականացման համար այնպիսի հասարակական ինստիտուտներ, ինչպիսիք դպրոցն ու ընտանիքն է, պարտավորվում են հոգ տանել մարդու կյանքի այդ փուլի վերաբերյալ:

Ժամանակակից հասարակությունում սոցիալականացման համար մեծ կարևորություն է տրվում կրթությանը և մասնագիտության ձեռքբերմանը: Գրեթե բոլոր երկրներում կրթությունը սոցիալականացման անհրաժեշտ պայման է: Քանի որ տեխնիկական զարգացումը առաջ է ընկնում նոր սերնդի աշխատողների փոփոխությունից կամ զարգացումից, մարդ ստիպված է կրթվել, սովորել իր ողջ կյանքի ընթացքում: Ժամանակակից կրթության հաջողությունը բնորոշվում է ոչ միայն նրանով, թե ինչ է սովորել անձը և ինչպիսին են նրա գիտելիքները, կարողությունները, այլև նոր գիտելիքներ ձեռք բերելը և նոր պայմաններում դրանք կիրառելու կարողությամբ: Կարևոր է, թե որքանով է սուբյեկտը ինքնուրույն տեղեկատվական տարածությունում, ինչպիսին են նրա կողմնորոշման ընդունակությունները, ինչքան արագ է նա կարողանում ընտրել այն, ինչ իրեն իրականում համապատասխանում է և որտեղ նա կկարողանա հասնել մասնագիտացման բարձր մակարդակի: Մասնագիտացման բարձր մակարդակը նորագույն արդյունաբերական զարգացման պայմաններում առաջնահերթություն է: Ժամանակակից հասարակությունը չափազանց թանկ գին է վճարում մասնագիտական սխալների համար:

Ստեղծագործելը նույնպես դառնում է սոցիալականացման անհրաժեշտ պայման և ժամանակակից հասարակությունում այլևս չի դիտարկվում որպես բացառիկ և արտասովոր երևույթ: Ժամանակակից հոգեբանությունը և մանկավարժությունը դիտարկում են յուրաքանչյուր մարդու՝ որպես ստեղծագործ անձի:

Կրթությունը որպես ժամանակակից սոցիալականացման պարտադիր պայման և առանձնահատկություն պայմանավորված է հասարակական խնդիրների բազմազանության հետ: Սակայն ժամանակակից հասարակությունում կարևոր տեղ են զբաղեցնում նաև անձնային խնդիրները: Մարդու ժամանակակից սոցիալականացման առանձնահատկությունը բնորոշվում է նաև այն նոր պահանջներով, բնավորության գծերով, որոնք անհրաժեշտ է ունենալ հասարակությունում լիիրավ քաղաքացի լինելու համար: Այս գծերը չեն տարբերվում անձի այն գծերից, որոնք անհրաժեշտ են եղել ավելի վաղ, սակայն նրանց համադրությունը անձին տալիս է ավելի վաղ արտահայտված անահատականություն:

Բացի այդ, սոցիալականացման գործընթացի բարդությունը և դինամիկան պահանջում է անձի գծերի բարձրագույն ներդաշնակեցում սոցիալական զարգացման գործընթացում, ինչը ենթադրում է հակադիր սկիզբների միասնություն: Ժամանակակից

մարդը պետք է իմանա իր առավելություններն ու թույլ կողմերը, քանի որ դրանք նրա պրոդուկտիվ կենսագործունեության կարևորագույն պայմանն են:

3) Անձի զարգացման փուլերը սոցիալականացման գործընթացում յուրովի տեղ է զբաղեցնում հոգեբանության համակարգում: Սոցիալիզացման հիմնախնդիրները մանրակրկիտ դիտարկվել են ֆրեյդիզմի դպրոցում, այդ իսկ պատճառով սոցիալականացման փուլերի որոշման հիմնահարցը դիտարկել է հենց այդ դպրոցը: Հոգեվերլուծության տեսանկյունից անձի զարգացման համար չափազանց մեծ է վաղ մանկության փուլը: Դա հանգեցրել է սոցիալականացման փուլերի կոշտ տարանջատմանը հոգեվերլուծության տեսության սոցիալականացումը այն գործընթացն է, որը ժամանակագրական առումով համընկնում է վաղ մանկության շրջանի հետ: Մյուս կողմից նեոորթոդոքսալ հոգեվերլուծական աշխատանքներում սոցիալականացման ժամանակային սահմանները զգալիորեն ընդարձակվել են: Դա պայմանավորված է պարմանիության և պատանեկության շրջանում սոցիալականացման ուսումնասիրության աշխատություններին հայտնվելով, ի տարբերություն ֆրոյդիստական դպրոցի, սոցիալական հոգեբանության մյուս ուղղություններն առանձնահատուկ շեշտադրում են կատարում պատանեկության փուլում սոցիալականացման ուսումնասիրության վրա: Վաղ մանկության, պատանեկության, հասունության շրջանում հասարակական փորձի յուրացում արդյոք տեղի է ունենում, ինչը կազմում է սոցիալականացման զգալի մասը: Վերջին շրջանում այս հարցը գլխավորապես դրական պատասխան է ստանում: Այդ իսկ պատճառով, որպես սոցիալիզացման փուլ են դիտարկվում ոչ միայն մանկությունն ու պատանեկությունը, այլև հասուն շրջանը: Ըստ ռուսական դպրոցի, քաղաքական սոցիալականացումը առաջնային ենթադրում է հաարակական փորձի յուրացում, առաջին հերթին աշխատանքի միջոցով կամ օգնությամբ: Այդ իսկ պատճառով որպես փուլերի դասակարգման հիմք առաջին հերթին դիտարկվում է վերաբերմունքը աշխատանքի հանդեպ: Հիմք ընդունելով այս սկզբունքը կարելի է տարանջատել հետևյալ փուլերը՝ նախաաշխատանքային, աշխատանքային և հետաշխատանքային:

Նախաաշխատանքային փուլը ընդգրկում է մարդու կյանքի ողջ ընթացքը, մեկ աշխատանքային գործունեության սկիզբ: Այս փուլը իր հերթին բաժանվում է երկու համեմատաբար անկախ փուլերի՝

ա) վաղ սոցիալականացման շրջան, որը ընդգրկում է մարդու կյանքի շրջանը ծնվելու պահից մինչ դպրոց հաճախելը, այսինքն՝ այն շրջանը, որը տարիքային դասակարգման մեջ համապատասխանում է վաղ մանկության շրջանին:

բ) ուսումնական փուլը, որը ներառում է երիտասարդության ողջ շրջանը: Այս ներառում է դպրոցում ուսումնառության ողջ ընթացքը: Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու վերաբերյալ կարծիքները տարբեր են: Եթե դիտարկենք աշխատելու տեսանկյունից, ապա բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառությունը չի կարող ընդգրկվել հաջորդ փուլում: Մյուս կողմից բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության շրջանը էապես տարբերվում է դպրոցական շրջանից, քանի որ ինչ-որ չափով աշխատանքի հետ համատեղելուն, այդ իսկ պատճառով անձի կյանքի այս շրջանը չենք կարող միանշանակ ընդգրկել փուլերից որևէ մեկի մեջ:

Աշխատանքային փուլը ընդգրկում է անձի հասունության շրջանը, չնայած դեմոգրաֆիական (ժողովրդագրական) տեսանկյունից ,հանուն, տարիքի սահմանները պայմանական են, այս շրջանի հստակ ֆիքսումը խնդրահարույց չի, քանի որ այն ընդգրկում է անձի աշխատանքային շրջանի ողջ փուլը: Ի հակադրումն այն մտքի, որ քաղաքական սոցիալականացումը ավարտվում է ուսումը ավարտելուն զուգահեռ, ուսումնասիրողների մեծ մասը հակված են այն մտքին, որ քաղաքական սոցիալականացումը շարունակվում է աշխատանքային փուլի ընթացքում: Անձի կողմից ոչ միայն հասարակական փորձի յուրացման, այլև այդ փորձի վերարտադրման միայն այդ շրջանը դարձնում է առանձնակի կարևոր: Սոցիալականացման աշխատանքային փուլի ճանաչումը տրամաբանորեն բխում է անձի զարգացման համար աշխատանքի կարևորության մտքից: Բարդ է համաձայնվել այն մտքին, որ աշխատանքը որպես անձի ներուժի բացահայտման պայման դադարեցնում է հասարակական փորձի յուրացումը: Ավելի բարդ է ընդունել այն միտքը, որ աշխատանքային փուլում դադարեցվում է հասարակական փորձի վերարտադրման գործընթացը: Անշուշտ, երիտասարդությունը անձի կայացման կարևորագույն շրջանն է, սակայն հաշվի առնելով աշխատանքային գործընթացի գործունեության կարևորությունը, հասուն շրջանը նույնպես ունի մեծ կարևորություն:

Քաղաքական գիտության մեջ այս խնդիրը դիտարկվում է որպես հետաշխատանքային սոցիալականացման փուլ: Հիմնական դիրքորոշումները հարցի շուրջ

հակադրվում են, ըստ տեսանկյուններից մեկի սոցիալականացման երևույթի կիրառումը մարդու կյանքի այն փուլին, երբ նրա բոլոր հասարակական գործողությունները ներփակվում են անիմաստ է: Սույն մտքից ելնելով, վերոբերյալ շրջանը չի կարելի նկարագրել հասարակական փորձի յուրացման և փորձի վերարտադրման եզրույթներով: Այս գաղափարի ծայրահեղ դրսևորումը ,ապասոցիալականացում, գաղափարն է, որը հաջորդում է սոցիալականացմանն: Ըստ հակադիր կարծիքի, ծերության շրջանը սոցիալականացման ուսումնասիրության տեսանկյունից նոր մոտեցում է ստանում: Մասնավորպես ծերության շրջանը մեծ ներդրում ունի հասարակական փորձի վերարտադրության գործընթացում: Այս փուլում փոխվում է միայն անձի հասարակական ակտիվությունը:

Համաձայն Ս.Վ. Պետրովսկու, անձի զարգացումը շարունակական և ընդհատվող երևույթ է: Անձի զարգացման շարունակականությունը արտահայտվում է համեմատական կայուն օրինաչափություն, սույն եզրույթում մի փուլից մյուսին անցման ընթացքում, ընդհատականությունը բնորոշվում է որակական փոփոխություններով, որոնք առաջանում են անձի նոր պատմական պայմաններ անցումից, որոնք պայմանավորված են անձի այլոց հետ փոխազդեցության գործոններով:

Ա.Վ. Պետրովսկին առանձնացրել է անձի հասարակական զարգացման մակրոփուլեր, որոնք բնորոշվում են հետևյալ կերպ՝

ա) մանկություն՝ անհատի ադապտացումը, որը արտահայտվում է հասարակության մեջ սոցիալական ադապտացմամբ և հասարակական նորմերի գոյացմամբ:

բ) պատանեկություն՝ անհատականացում, որը արտահայտվում է անձի մաքսիմալ «կայացման ձգտմամբ», «անհատականություն» լինելու պահանջմունքով:

գ) երիտասարդություն՝ ինտեգրացում: Այս շրջանում տեղի է ունենում անձի գծերի և հատկանիշների ձևավորումը, որոնք համապատասխանում են անհատական և խմբակային զարգացման անհրաժեշտությանը և պահանջներին:

Ըստ Ս.Լ. Ռուբինշտեյնի երեխան զարգանում է դաստիարակվելով և կրթվելով, այլ ոչ զարգանում է և դաստիարակվում և կրթվում,: Սա նշանակում է, որ երեխայի զարգացման գործընթացը ներառում է դաստիարակության և կրթման շրջանը, այլ ոչ թե ստորադասվում է դրանց: Երեխային նույնական հատկանիշները, կարողությունները, բնավորության գծերը և այլք ոչ միայն արտահայտվում, այլև ձևավորվում են երեխայի անհատական կամ ինքնագործունեության ընթացքում:

Անձի հասունության և զարգացման ընթացքը պայմանավորված է սոցիալականացման և անհատականացման (ինդիվիդուալիզացիա) գործընթացների փոխազդեցությամբ, ինչի ակունքներում էլ ձևավորվում է հոգեբանական ադապտացիան՝ սոցիալական և անձնային չափորոշիչների ամբողջությամբ: Շրջակա իրականության հետ փոխազդեցության, անհատական գործոնների ձևավորման անձի ձգտումը ծնվում և զարգանում է հասարակական հարաբերությունների այն տիրույթում, որտեղ փոխազդումը, ինչպես նաև հակասության մեջ են գտնվում անձի կայացման համար երկու կարևոր գործընթաց՝ սոցիալիզացման և անհատականացման գործընթացները: Հենց այս գործընթացներն են իրենց ամբողջությամբ ձևավորում անձի անհատական զարգացման համար ներքին և արտաքին գործոնները: Նրանք համապատասխանաբար պատասխանտու են սոցիալական և անձնական, անհատական ադապտացիայի ձևավորման համար: Միայն վաղ շրջանում՝ այս երկու գործընթացների բարձր մակարդակը կարող է ապահովելով դեռահասի հոգեբանական ադապտացիայի բարձր մակարդակը, ինչը բարենպաստ պայման են է ինքնորոշման ձևավորման համար:

Սոցիալականացման հիմնախնդրի ուսումնասիրմանդիտանկյունուց առանձին դիտարկման անհրաժեշտություն ունեն սոցիալ-հոգեբանական փոխազդեցությունները, որոնք ազդում են մակրոմակարդակում, այսինքն՝ անհատի անմիջական մերձավոր շրջապատ, որը խաղում, կատարում է սոցիալականացման իրականացման ինստիտուտի դեր: Շրջապատի այս չկազմակերպված սոցիալականացնող ազդեցությունները բնորոշենք որպես սոցիալականացման սոցիալ-հոգեբանական մեխանիզմներ: Սոցիալականացման մեխանիզմներ ասելով հասկանում ենք տարբեր տարերային, շրջակա մերձավորների կազմակերպված ազդեցությունները, որոնց շնորհիվ արտաքին զսպանակները, խմբակային նորմերը և նախադրյալները տեղափոխվում են ներքին պլան, դառնում են ներքին, ամենօրյա վարքաբանական կարգավորիչներ:

Սոցիալականացման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները կատարում են «կամուրջի» դեր արտաքին կարգավորիչների, խմբակային նորմերի և սովորույթների, ավանդույթների, դերային երևույթների, պատժի և խրախուսանքի, պատժամիջոցների, հավանության ու չդատապարտման և ներքին զսպանակների միջև դեպոզիցիաներով, հոգեբանական պատրաստվածությամբ որոշակի վարքաբանական արձագանքների:

Չգիտակցված մեխանիզմները, որոնք, գլխավորապես ի հայտ են գալիս մանկության շրջանում, նախադպրոցական շրջանում, կարելի է վերագրել արտաքին, հոգեբանական վարակի նմանակմանը, ինքորոշմանը:

Վարակը հոգեբանության մեջ բնորոշվում է որպես անհատի անգիտակից, կամքից անկախ հակվածությունը որոշակի հոգեվիճակներին: Այն չի արտահայտվում որևէ տեղեկատվության գիտակցված ընկալմամբ կամ վարքագծի յուրացման, այլ որոշակի էմոցիոնալ վիճակի փոխանցմամբ, արտահայտմամբ:

Ներշնչումը էմոցիոնալ-կամային նպատակաուղղված մի անձի չիմնավորված մի անձի ազդեցության ձև է մյուս անձի կամ մարդկանց խմբի նկատմամբ:

Նմանակումը միմյանց վրա փոխազդեցության ձև է, որի արդյունքում տեղի է ունենում անհատի կողմից դրսևորվող վարքագծի ձևերի և տարրերի վերարտադրություն:

Ինքնորոշումը դիտարկվում է մի անձի կողմից մյուսի հետ նույնականացմամբ, որի արդյունքում տեղի է ունենում մյուս անձի զգացմունքների, մտքերի, վարքագծի վերարտադրում:

Անձի գիտաիցության և ինքնագիտակցության աճի և ձևավորմանը զուգահեռ, ձևավորվում է բավականին հստակ, գնահատողական, ընտրողական վերաբերմունք շրջապատի նկատմամբ, նրա նորմերի, արժեքների, դերերի նկատմամբ:

Խմբային շփման պայմաններում սեփական շրջապատի նորմերի և արժեքների ընկալմամբ ընտրողականությունը արտահայտվում է այնպիսի սոցիալ-հոգեբանական ֆենոմեններում, որով միաժամանակ սոցիալականացման գործառույթ են կատարում՝ ռեֆերենտ խումբ, պրեստիժ, հեղինակություն, ճանաչվածություն:

Սոցիալ-հոգեբանական մեխանիզմներում հատուկ տեղ ունեն ռեֆերենտ խմբերը: Անձի անմիջական շրջապատում, որտեղ անցնում է նրա կյանքը, անհատի համար միայն առաջին խմբեր և անձեր են դառնում կարևոր՝ նրա վարքագիծը գնահատելով, սոցիալ-բարոյական չափորոշիչներ, կողմնորոշիչներ ընտրելիս: Այդպիսի խմբերը, որոնք անհատի համար ծառայում են որպես վարքաբանական, նորմատիվային և արժեքային կողմնորոշիչ, ստացել են ռեֆերենտային խմբեր անվանումը: Ռեֆերենտային խմբերը բաժանվում են մի քանի տեսակի՝ պայմանական, իրական, համեմատական, նորմատիվային,

Սոցիալականացման յուրահատուկ մեխանիզմ է պրեստիժը: Այն հանդես է գալիս որպես խմբային գնահատող երևույթ, հավանության արտաքին գնահատականների

ամբողջություն, որոնցով խմբկային նորմերի և չափանիշների տեսանկյունից գնահատվում են հասարակական երևույթներ:

Պրեստիժի՝ որպես սոցիալականացման մեխանիզմի յուրօրինակ արտահայտում է այն, որ ինքնագնահատականի հետ մեկտեղ, մասնակցում է անձի հավակնությունների ձևավորանը, այն նպատակների և ձգտումների, որոնք անձն ինքն իր առջև դնում է իր շրջապատի ազդեցության ներքո:

Ճանաչվածությունը նույնպես ձևավորվում է որպես ինքնուրույն ձևավորման երևույթ և նույնպես ձևավորվում է որպես գոհունակության գնահատման ամբողջություն, բայց ի տարբերություն պրեստիժի արտահայտվում է ոչ թե անձի ձգտումներում, այլ հասարակական ճաշակի ձևավորման, արժեքների ձևավորման, այսինքն՝ առաջին հերթին, խմբակային կարգավորիչների ձևավորման ժամանակ:

Սոցիալականացման մեխանիզմների շարքում յուրահատուկ տեղ են զբաղեցնում խմբակային սպասումները, այսպես կոչված խմբային էկսպետացիտաները, որոնք ուղղված են անհատին նրա շրջապատի կողմից: Այս էքսպետացիաները կարող են հանդես գալ թե՛ դերային սպասումների, թե՛ գնահատման կարծրատիպերի տեսքով, որոնք հանդես են գալիս մարդկանց հասարակական պերցեպցիայում:

Անձը սոցիալականացման գործընթացի ընթացքում գիտելիքի, նորմերի և արժեքների հետ մեկտեղ յուրացնում է նաև բազմաթիվ միջանձնային, ինչպես նաև սահմանադրական, մասնագիտական, հասարակական դերեր: Դերերի ընդունում և յուրացում է տեղի ունենում ինչպես քաջալերման և պատժի սանկցիաների, հավանության և մեղադրման ազդեցության ներքո, որոնք կիրառվում են հասարակությունում, այնպես էլ սպասումների, դերային խաղերի և սպասումների ազդեցությամբ, որոնք ուղղված են անհատին նրա շրջապատի կողմից: Հասարակական էքսպետացիաները մեծ նշանակություն ունեն միջանձնային սոցիալական դերեր (հայր, մայր, ամուսին, կին, ընկեր, տղա, դուստր և այլն) յուրացնելիս, որտեղ գրեթե բացակայում են պաշտոնական, գործող սանկցիաները, որոնք կոչված են նպաստելու այդ դերերի յուրացմանը:

Սոցիալականացման բոլոր փուլերում հասարակության ազդեցությունը անձի վրա իրականացվում է կամ անմիջականորեն, կամ խմբի միջոցով, բայց ներգործության կամ ազդեցության միջոցները ըստ Ժ. Պիաժեի հետևյալն են՝ նորմերը, արժեքները, սիմվոլները: Այլ կերպ կարող ենք ասել, որ հասարակությունը և խումբը կայացող անձին փոխանցում են նորմերի և արժեքների որոշակի համակարգ նշանների միջոցով: Այն

խմբերը, որտեղ անձը ընդհանրացվում է նորմերի և արժեքների համակարգին և որոնք հասարակական փորձի յուրահատուկ փոխարինողներ են, ստացել են սոցիալականացման ինստիտուտներ անվանումը: Նրանց դերի բացահայտումը սոցիալականացման ընթացքում հիմնվում է ընդհանուր սոցիոլոգիական վերլուծության, սոցիալական ինստիտուտների հաարակության մեջ ունեցած դերի վրա:

Նախաաշխատանքային փուլում այդպիսի ինստիտուտներ են ՝ վաղ մանկության շրջանում ընտանիքը և ժամանակակից հասարակությունում մեծ դեր ունեցող նախակրթարանները: Ընտանիքը դիտարկվում է որպես սոցիալականացման կարևորագույն ինստիտուտ: Ընտանիքում է երեխան ձեռք բերում փոխազդեցության առաջին փորձը, յուրացնում է առաջին սոցիալական դերերը (այդ թվում և սեռային դերերը, տեղի է ունենում մասկուլինի և ֆեմիհինի ձևավորում, իմաստավորում են առաջին նորմերը և արժեքները: Ծնողների վարքագիծը (ավտորիտար և լիբերալ) մեծ ազդեցություն ունի երեխայի «Ես»-կերպարի' ձևավորման վրա: Ընտանիքի՝ որպես սոցիապիզացիայի ինստիտուտի դերը բնականաբար կապված է հասարակության տիպից, նրա ավանդույթներից և մշակութային նորմերից: Չնայած այն փաստին, որ ժամանակակից ընտանիքը չունի այն դերը, որն ունեցել է ավանդական հասարակություններում (մի շարք փաստերով պայմանավորված՝ ամուսնալուծություններ, թվաքանակի աճ, ծնելիության ցածր ցուցանիշ, հոր ավանդական կերպարի թուլացում, կանանց աշխատանքային զբաղվածություն), նրա դերը սոցիալականացման գործընթացում շարունակում է մնալ կարևորագույնը:

Ըստ սոցիոլոգիական մոտեցման՝ ընտանիքը, որպես սոցիալական ինստիտուտ, դիտարկում է մարդկանց խմբերը, որոնք կապված են արյունակցական կապերով, նմանությամբ և ապրում են միասին՝ համագործակցելով միմյանց հետ և հոգ տանելով երեխաների մասին: Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ ընտանիքում կարևորագույն դերը կատարում են հոգեբանական կապերը: Նրանց բնորոշմամբ ընտանիքը միմյանց հետ կապված մարդկանց խումբ է, ովքեր միմյանց մասին հոգ են տանում և խնամում են միմյանց:

Ընտանիքները տարբերակվում են ըստ կազմի, ժառանգականության տիպի, բնակության վայրի և իշխանության տարանջատման: Ընտանիքի շրջանակում կնոջ և տղամարդու հասարակական հարաբերությունները կարող են կազմակերպված լինել տարբեր սկզբունքներով:

Ըստ ժառանգման ձևի ընտանիքները լինում են 3 տեսակ: Պարբիլիալ համակարգի պայմաններում, որտեղ ծագումնաբանությունը տարվում է հոր գծով, մարդիկ հետևում են ծագմանը և ժառանգությունը փոխանցում հոր գծով: Մարգիարիալ ժառանգումը իրականացվում է մայրական ձևով: Երկակի տիպի դեպքում անհատի ընտանեկան երկու ձևերն էլ ունեն նույնքան կարևորություն:

Ըստ բնակության վայրի տարբերվում են 3 տեսակի ընտանիք: Հայրիշխանության պայմաններում ընտանիքը բնակվում է ամուսնու ընտանիքի տանը: Հակառակ մոդելի դեպքում տեղի է ունենում հայրիշխանականին հակադիր: Ոչ լոկալ մոդելի դեպքում երիտասարդ զույգերը առանձնանում են և ծնողներից անջատ ապրում:

Ըստ իշխանության ձևի լինում է հայրիշխանական համակարգ, որտեղ ընտանիքի գլուխն է ամուսինը, իսկ նրա բացակայության դեպքում՝ ավագ տղամարդը: Մայրիշխանության դեպքում իշխանությունը կենտրոնացած է լինում կնոջ ձեռքում: Իշխանության երկրորդ ձևի՝ էլիտայի դեպքում իշխանությունը և հեղինակությունը հավասարապես բաշխվում է կնոջ և տղամարդու միջև: Այս տեսակը վերջին շրջանում գերակշռող է դառնում աշխարհում:

Ամուսնական կապերով միավորված մարդիկ տարբեր ցեղերի ներկայացուցիչներ են և այդ հանգամանքը որոշիչ է դառնում ընտանիքի կառուցվածքի համար: Բարեկամական կապերով միավորված խումբը շահագրգռված է իր որոշ անդամների նկատմամբ նրանց ամուսնությունից հետո էլ իշխելու պահպանմամբ:

Կնոջ և տղամարդու փոխհարաբերությունները կարող են կառուցվել 4 տարբեր սկզբունքներով, մոնոգամիա՝ մի տղամարդ և մի կին, պոլիգամիա՝ մի տղամարդ և 2 և ավելի կանայք, պոլիխոնդրիա՝ 2 կին և 2 և ավելի տղամարդ, խմբակային ամուսնություն:

Ընտանիքը կարևորագույն մեխանիզմ է, որը օգնում է անհատին այլ մարդկանց հետ մշտական և միտերմիկ հարաբերություններ հաստատել: Ընտանիքում առողջ մթնոլորտը նպաստում է այնպիսի զգացմունքների զարգացմանը, ինչպիսիք են ընկերությունը, սերը, պաշտպանվածությունը ինքնարժեքի, ինչպես նաև բարեկեցության ընդհանուր զգացողությունը:

Սոցիալականացման երկրորդ փուլի սկզբնական շրջանում հիմնական ինստիտուտը դպրոցն է: Ուսումնական և տարիքային հոգեբանությանը զուգահեռ հասարակական հոգեբանությունը մեծ ուշադրություն է դրսևորում ուսումնասիրության օբյեկտի հանդեպ: Դպրոցը աշակերտին ապահովում է սիստեմատիկ կրթություն, ինչը

ինքնին սոցիալականացման կարևորագույն տարր է, բայց, բացի դրանից դպրոցը պետք է մարդուն նախապատրաստի կյանքի հասարակությունում: Ի տարբերություն ընտանիքի, դպրոցը գլխավորապես կախված է հասարակությունից և պետությունից, չնայած այդ կախվածությունը տարբեր է ամբողջական և ժողովրդավարական հասարակություններում: Սակայն դպրոցը անհատին փոխանցում է քաղաքացու վերբերյալ նախնական պատկերացում և հետևաբար, նպաստում է նրա ներգրավմանը հասարակական կյանք: Դպրոցը ընդլայնում է երեխային շփվելու սահանները, այստեղ բացի ավագ տարիքի մարդկանց հետ շփումից, անդադար շփում է ապահովվում տարեկիցների հետ, ինչը սոցիալականացման կարևոր պայման է: Այս միջավայրը գրավիչ է նրանով, որ դուրս է մեծերի վերահսկողությունից, իսկ երբեմն անգամ հակադրվում է դրան[14]

Դպրոցը ժամանակակից հասարակության կենսագործունեության և պահպանման համար ունի կարևոր նշանակություն: Այն վայրերում, որտեղ դպրոցը բացակայում է, ը տեղի է ունենում նույն բնական ճանապարհով, ինչպես որ ծնողները երեխաներին սովորեցրել են խոսել և քայլել:

Ավագ սերունդը ժամանակակից հասարակությունում չի կարող երեխաներին դաստիարակել իրենց նմանությամբ: Շատ հաճախ ծնողների հմտությունները հնանում են և շատ հաճախ նրանք բախվում են այն խնդրին, որ իրենց մասնագիտությունը այլև պահանջարկված չէ: Ժամանակակից հասարակությունում անհրաժեշտ գիտելիքները և՛ հմտությունները չի կարելի ստանալ մեխանիկաբար և բնական, դրա համար անհրաժեշտ է հատուկ կրթական միջավայր:

Յուրաքանչյուր հասարակություն անհատին անկախ նրա որակներից և հնարավորություններից, տալիս է որոշակի կարգավիճակ: Մյուս կարգավիճակներին հասնում են ընտրության և մրցակցության միջոցով: Ժամանակակից հասարակությունում տեղի է ունենում երիտասարդության ընտրություն պաշտոնների և մասնագիտությունների համար, որոնք ենթադրում են հատուկ տաղանդների առկայություն: Կրթության ինստիտուտը, որպես կանոն, իրականացնում է այդ գործառույթը, որպես միջնորդ հանդիսանալով որոշակի մասնագիտությունների համար անհատներ ընտրելու գործում: Բաշխելով դիպլոմներ, վկայականներ, այն որոշում է, թե երիտասարդներից ով մուտք կստանա դեպի իշխանություն, պրեստիժ ստատուս: Շատերի համար «վերելակի» դերը

[14] Бронфенбреннер У., Два мира детства. Дети в США и СССР» М.: Прогресс, 1976, 167 с.

կատարում է դպրոցը, որը հնարավորություն է տալիս տաղանդավոր և շնորհալի մարդկանց բարձրանալ սոցիալական աստիճանով: Սակայն ըստ կոնֆլիկտոլոգների, դպրոցները դիտարկվում են որպես միջնորդներ, ովքեր վերարտադրում և լեգիտիմացնում են գոյություն ունեցող սոցիալական կապերը՝ այդպիսով ծառայելով մի խումբ անձանց և անտեսելով մյուսների շահերը

Ըստ կոնֆլիկտոլոգների՝ դպրոցում առկա է դասավանդման թաքնված ընթացք, այն բաղկացած է ոչ հստակ արտահայտված արժեքների, դիրքորոշումների և վարքաբանական մոդելների համակարգից, որոնք դաստիարակում են երեխաներին համաձայն գերակշռող ինստիտուտների պատկերացումների: Ուսուցիչները ձևավորում և գովաբանում են հատկանիշները, որոնք արտացոլում են միջին դասի նորմերը՝ աշխատասիրություն, պատասխանատվություն, բարեկրթություն, հուսալիություն, ինքնատիրապետում, արդյունավետություն: Երեխաները սովորում են լինել հանգիստ, պարտաճանաչ, համբերատար, հարգալից, խմբի համապատասխան պահանջների նկատմամբ:

Աշխատանքային փուլում սոցիալիզացման ինստիտուտներից կարևորագույնը աշխատանքային կոլեկտիվն է:

Դիտարկված ինստիտուտներից յուրաքանչյուրն ունի մի շարք այլ գործառույթներ, նրա գործառույթը չի կարող սահմանափակվել միայն հասարակական փորձի փոխանցմամբ:

Սոցիալականացումը գործընթացը, որի միջոցով անհատը դառնում է հասարակության անդամ յուրացնելով նրա նորմերը և արժեքները, ստանձնելով սոցիալական դերեր: Ավագ սերունդը երիատասարդին է փոխանցում գիտելիքներ, ձևավորում է նրանց մոտ ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ ընդունակություններ: Այսպես մի սերունդը փոխարինում է մյուսին՝ ապահովելով մշակույթի ժառանգականությունից, ներառյալ լեզուն, արժեքները, նորմերը, ավանդույթները:

Այլ անձանց հետ փոխազդեցության միջով անհատի մոտ ձևավորվում է իր սեփական համոզմունքները, բարոյական նորմերը, սովորույթները, այն ամենը, ինչ կազմում է անձի յուրահատկությունը: Այսպիսով, քաղաքական սոցիալականացումը իրականացնում է 2 գործառույթ՝ մշակույթի փոխանցում մի սերնդից մյուսին և «Ես»-ի գործառույթը:

1.2. Երիտասարդությունը քաղաքական գործընթացների դերակատար. հայեցակարգային վերլուծություն

Քաղաքական գործընթացները ժամանակակից աշխարհում դինամիկ բնույթ ունեն: Առանձնահատուկ նշանակություն ունեն քաղաքական գործընթացի ակտորները: «Քաղաքականության ակտոր» եզրույթը սովորաբար ընկալվում է որպես քաղաքական գործընթացի սուբյեկտ, որի գործողությունները «ուղղակիորեն առաջացնում կամ անուղղակի հանգեցնում են հասարակության հիմնական ինստիտուտների փոփոխություններ (անկախ այն բանից, թե բուն սուբյեկտը գիտակցել է այդ)»: Քաղագետներ Վ.Գելմանը և Մ.Բրին պաշտպանում են այն տեսակետը, որ քաղաքականության ակտորների կողմից խնդիրների հաջող իրականացումը նպաստում է նրանց ազդեցիկ ռեսուրսների առկայությունը, իրենց շահերը հստակորեն արտահայտելու և պաշտպանելու կարողությունը, որոնց հիման վրա ակտորները ձևավորում են քաղաքական գործողության ռազմավարությունները[15] : Մենք կարծում ենք, ակտոր հասկացությունը համահավասար է քաղաքականության սուբյեկտի սահմանմանը, որպես այլոց ուղղված գործողություններ կատարող անհատի: Առավել հաճախ «ակտոր» տերմինը նշանակում է պետության և առանձին անհատների դերը (մեր դեպքում երիտասարդությունը որպես հասարակության զարգացման պոտենցիալ ռեսուրս) քաղաքական համակարգում:

Ներկա փուլում ժողովրդավարական պետության զարգացման կարևոր վեկտորը քաղաքացիական հասարակության կատարելագործումն է: Հասարակությունը հավասարակշռեցնում է պետական իշխանության ազդեցությունը և այլ անկախ ակտորների քաղաքական մասնակցությունը՝ հասարակական կազմակերպությունների և շարժումների, երկրում արձանագրված բոլոր հասարակական միտումներով: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ ոչ կառավարական կազմակերպությունները և քաղաքական գործընթացի այլ ակտորները կարող են դառնալ քաղաքացիների շահերի ակտիվ

[15] Гельман В.Я. Россия регионов: трансформация политических режимов / В.Я. Гельман.С.И. Рыженков, М. Бри. - М., 2000., с. 19-20

պաշտպան, որոշակիացնելով դեպի օրենքի գերակայության պետություն շարժման գործընթացը[16]:

Քաղաքացիական հասարակության դրական զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է այն մարդկանց ներկայությունը, որոնք ընդունակ են կառուցողական փոխհարաբերությունների հասարակական ուժերի հետ հանուն ընդհանուր նպատակների, շահերի և արժեքների իրագործման: Այդպիսի մարդիկ պետք է պատրաստ լինեն ստորադասել մասնավոր շահերը և դրանց հասնելու միջոցները համընդհանուր բարօրությանը, որը արտահայտված է իրավական նորմերում: Քաղաքացիական հասարակության ակտիվ սուբյեկտի դաստիարակության գործընթացը անհրաժեշտ է սկսել արդեն այն տարիքում, երբ ձևավորվում է բուն անձը, հետևաբար, պետք է աշխատել երիտասարդ սերնդի հետ, որը վաղը պետք է ապրի պետության մեջ, ձևավորի նրա քաղաքականությունը և կենսագործունեությունը:

Քաղաքացիական հասարակության և իրավական պետության ստեղծումը անհնարին է առանց երիտասարդության լայն քաղաքական մասնակցության: Այսօր քաղաքական գործընթացում երիտասարդության տեղի ու դերի որոշման հարցը ակտուալ է և սկզբունքային ցանկացած պետության համար: Երիտասարդությունը սոցիալական խումբ է, որը միշտ աչքի է ընկնում աշխուժությամբ, շարժունակությամբ և դինամիզմով, բայց կյանքի փորձի պակասության պատճառով, և նոր-նոր ձևավորվող աշխարհայեցողությամբ, տարբեր ծայրահեղական ուժերի ազդեցության հանդեպ թույլ կայունություն է ցուցաբերում: Վերջին տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ պետությունները, որոնք կարողանում են արդյունավետ կուտակել և օգտագործել մարդկային կապիտալը, որի հիմնական կրողըերիտասարդ սերունդն է, ունեն հստակ ռազմավարական առավելություններ:

Պետությունն ու հասարակությունը պետք է ձգտեն ստեղծել պայմաններ երիտասարդության ինքնադրսևորման ու հասարակական և քաղաքական գործընթացներին նրանց ակտիվ ներգրավվածության համար: Քաղաքական գործընթացը որպես բարդ քաղաքագիտական կատեգորիա ենթադրում է քաղաքական կյանքի դինամիկ հատկանիշը, բացահայտում է քաղաքական համակարգի խորքային փոփոխությունները, նրա էվոլյուցիան ժամանակի և տարածության մեջ, քաղաքական

[16] Մամիջանյան Հ., ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ. Երևան.2017. Այլընտրանք, էջ 153-161

գործնական հարաբերությունների դինամիկայում ընդգրկված քաղաքական սուբյեկտների փոխգործակցությունը և գործունեությունը:

Քաղաքական գործընթացի հետազոտողները կարծում են, որ այդ հասկացությունը կարող է ունենալ առնվազն երկու իմաստ, կախված քաղաքականության ծավալման մակարդակից: Միկրո մակարդակում դա սոցիալ-քաղաքական սուբյեկտների մի ինչ-որ հավասարազոր գործունեություն է: Մակրո մակարդակը սահմանում է քաղաքական գործընթացը որպես քաղաքական տրանսֆորմացիաների հետևողական համակարգ, քաղաքական համակարգի բնական փոփոխություն:

Մեկ այլ կարծիքի են կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցման ներկայացուցիչները՝ Ս.Պարսոնսը և այլոք[17], ովքեր քաղաքական գործընթացը նույնացնում են համակարգի գործունեության արդյունքների հետ: Վարքաբանությունը որպես քաղաքագիտության ուղղություն (Չ.Մերիամ, Գ. Լասուել և այլոք) կենտրոնանում է սուբյեկտների սեփական շահերի իրականացման վարքագծային ասպեկտների վրա: Քաղաքական գործընթացը այդ հեղինակները դիտարկում են որպես տարբեր սուբյեկտների քաղաքական կամքի, շահերի, արժեքների գումարման արդյունք: Ռ.Դարենդորֆը և այլ կոնֆլիկտոլոգների աշխատություններում[18] խիստ ուշադրություն է հատկացվում իշխանության ռեսուրսների և նրանց համար պայքարին, ընդ որում շեշտը դրված է իշխանության ստատուսների և ռեսուրսների համար տարբեր խմբերի մրցակցության դինամիկայի ուսումնասիրության վրա:

Այսպիսով, մինչև օրս, քաղաքական գործընթացի սահմանման շուրջ ստեղծվել են բազմաթիվ մոտեցումներ: Ժամանակակից արևմտյան և հայրենական քաղաքագիտության մեջ (Դ. Իսթոնը և այլոք), քաղաքական գործընթացը դիտվում է համակարգային, կառուցվածքա-ֆունկցիոնալ, վարքաբանական, ինստիտուցիոնալ և նեո-ինստիտուցիոնալ մոտեցումների դիրքերից որպես գործառութային բնութագիր, քաղաքական համակարգի գործողությունների ձևավորման, փոփոխություն, վերափոխման և գործունեության միացություն:[19]

Քաղաքական գործընթացը կարող է նաև դիտվել որպես փոխգործակցություն՝ տարբեր ուժերի պայքար, «հավանական բնույթ, որը անխուսափելիորեն առաջացնում է

[17] Парсонс Т. Система современных обществ - М., 1997, 270 с.

[18] Дарендорф Р. От социального государства к цивилизованному // Политические исследования. - 1993. - № 5, с.33

[19] Истон Д. Категории системного анализа политики // Антология мировой политической мысли. - М., 1997, .с. 630-642

դնա ռացիոնալ և իռացիոնալ հիմքերը»[20]: Որոշ հետազոտողներ քաղաքական գործընթացների առանձնահատկությունները տեսնում են իշխանության ստատուսների և ռեսուրսների [21] համար խմբերի մրցակցության մեջ, մյուսները՝ քաղաքական համակարգի գործունեության արդյունքներում: Գ.Ալմոնդը [22] քաղաքական գործընթացը դիտարկում է որպես սոցիալ-քաղաքական ընդհանրացված իրականություն, որն առաջանում է քաղաքական համակարգի գործառույթների վերլուծությունից:

Երիտասարդության դերը քաղաքական գործընթացում միանշանակ չէ: Անկասկած, երիտասարդությունը քաղաքական գործընթացի ակտորներից մեկն է այլ սոցիալական խմբերի, ինչպես նաև քաղաքական էլիտաների, հասարակական շարժումների և միավորումների, ասոցիացիաների (օրինակ, գործարարների միությունների), պետության (օրինակ, գլոբալ քաղաքական գործընթացներում), և այոց հետ միասին: Միևնույն ժամանակ, երիտասարդության որոշակի մասը քաղաքականապես ակտիվ չէ, երիտասարդական միջավայրը բնութագրվում է աբսենտեիզմի՝ քաղաքական մասնակցությունից խուսափելու որոշակի մասով: Նշված խնդիրը իր արդիականությունը չի կորցրել, և այժմ ամենայն ակներևությամբ հասունացել է երիտասարդության պետական քաղաքականության նոր ռազմավարության մշակման անհրաժեշտությունը: Այն պետք է ավելացնի քաղաքական հաստատությունների, իշխանական և կառավարման մարմինների գործունեության արդյունավետության աճը, նպաստի պետության և հասարակության դինամիկ զարգացմանը:

Քաղաքական գործընթացում ներառվում են տարբեր ժողովուրդներ, դասեր, սոցիալ-ժողովրդագրական խմբեր, քաղաքական կուսակցություններ և հասարակական շարժումներ, և նրա իրականացման բնույթը բացահայտում է հասարակական դինամիկան, էվոլյուցիան, ժամանակի և տարածության մեջ փոփոխությունների հատկանիշները: Այդպես, Ա.Շուտովը դիտարկում է քաղաքական գործընթացը որպես «քաղաքական փոփոխությունների ցիկլ, իրավահաջորդության պետությունների քաղաքական համակարգ, որը ապահովում քաղաքականացման սոցիալական մարմնի մակարդակը և

---

[20] Кравченко И.И. Политика и сознание // Вопросы философии. - 2006. - № 11, с.15-22

[21] Дарендорф Р. Современный социальный конфликт. Очерки политической свободы. - М., 2002. с.120

[22] Алмонд Г,Пауэлл Дж, Стром К, Далтон Р. Сравнительная политология сегодня.Мировой обзор,Научные редакторы перевода доктор политнаук, проф Ильин М.В., доктор фил. наук, проф Мельвиль А.Ю., Аспент пресс,.Москва,2002, 537 с.

բնույթը» [23]: Ինչ վերաբերում է քաղաքական գործընթացի հիմնական փուլերին, ապա նրանց մեջ արտահայտվում է քաղաքական համակարգի զարգացման դինամիկան սկսած այն կառուցելուց և առ հետագա բարեփոխումների քայլերը:

Ավելի ամբողջական գիտակցելու համար «քաղաքական գործընթաց» հասկացության էությունը հարկավոր է հաշվի առնել, որ այն բաժանվում է ընդհանուր և մասնավոր գործընթացների: Առաջինները ընդգրկում են ամբողջ հասարակությունը և տանում են դեպի քաղաքական համակարգի փոփոխությունները, բաղկացած են բազմաթիվ մասնավոր գործընթացներից, ընդ որում, չհանդիսանալով դրանց պարզ գումարը, տեղի ընթանում են երեք ձևերով. Էվոլյուցիա, ռևոլյուցիա, ճգնաժամ:

Ըստ Օ.Կորպենկոյի կարծիքի, ընդհանուր քաղաքական զարգացումները արտացոլում են հասարակության քաղաքական համակարգի շարժումն ընդհանուր առմամբ, և դրսևորվում են վիճակների փոփոխմամբ, իսկ մասնավորները իրենցից ներկայացնում են «քաղաքական գործունեության բազմաթիվ ձևեր, որոնք ուղղված են որոշակի քաղաքական նպատակների իրագործմանը, սակայն չեն ազդում հասարակության քաղաքական համակարգի վիճակի վրա» [24]: Ըստ մասշտաբայնության մասնավոր գործընթացները ստորաբաժանվում են բազայինների և տեղականների: Ըստ հասարակության համար կարևորության քաղաքական գործընթացները բաժանվում են բազայինների և ծայրամասայինների: Յուրաքանչյուր քաղաքական գործընթացին բնորոշ է ցիկլայինությունը կամ կրկնելիությունը: Այսպիսով, ընտրական գործընթացի ձևավորումը տեղի է ունենում ընտրական ցիկլերի հիման վրա և քաղաքացիների քաղաքական գործունեությունը զարգանում է համապատասխան իշխանական մարմինների թեկնածուների առաջադրման, ընտրության և իրենց գործունեության վերահսկողության փուլերին: Քաղաքացիական ակտիվության գագաթնակետը համընկնում է ընտրությունների ժամանակի հետ:

Իշխանության, հասարակության և անհատի (այսինքն, քաղաքական ռեժիմի), հարաբերությունների բնույթից և մեթոդներից կախված քաղաքական գործընթացը բաժանվում է տոտալիտար, ավտորիտար և ժողովրդավարական տեսակների: Որպես ժողովրդավարական քաղաքական գործընթացի հիմնական հատկանիշներ նշենք

---

[23] Шутов А.Ю. Политический процесс. - М., 1994, с.19

[24] Карпенко О.М., Ламанов И.А. Молодежь в современном политическом процессе в России. - М., 2006, с.19

հետևյալը. սահմանադրության առկայությունը, գործառութային աշխատունակ և անկախ իշխանական թևերը, քաղաքական դատողությունների բազմակարծությունը, տեղեկատվական աղբյուրների բազմազանություն, քաղաքական շահերի արտաբերման ազատությունը, որպես հետևանք՝ զարգացած բազմակուսակցական համակարգի առկայության (կամ երկկուսակցական, ինչպես Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան ը այլն):

Քաղաքական իշխանության համակարգային կազմակերպման նշանները թույլ են տալիս խոսել ժողովրդավարական քաղաքական գործընթացների մասին (երբ տեղի է ունենում տարբեր ձևերի՝ կամքի ուղղակի և ներկայացուցչական արտահայտման սինթեզ) և ոչ ժողովրդավարական, որին բնորոշ է տոտալիտար կամ ավտորիտար ռեժիմների քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ինստիտուտի գործունեության առկայությունը:

Արտասահմանյան քաղաքագետները առաջարկում են քաղաքական գործընթացների մի քանի տիպաբանական դասակարգում: Առաջին մշակել է Լ. Պայը [25] համեմատական քաղաքագիտության շրջանակներում, այդ գիտնականը կապել արևմտյան և ոչ արևմտյան երկրների քաղաքական զարգացման սկզբունքային տարբերությունները նրանց մշակութային «կոդի» հետ, ինչը հիմնականում պայմանավորված է այս կամ այլ հասարակության անդամների վարքագծով:

Ժամանակակից հայ քաղաքագիտությունը որպես քաղաքական գործընթացների դասակարգման հիմնական ցուցանիշ դիտարկում է սոցիո-մշակութային և սոցիալ-տնտեսական հատկանիշները, որոնցից կախված նշված գործընթացները բաժանվում են տեխնոկրատական, իդեոկրատիկ և խարիզմատիկ տեսակների:

Կատարելով «քաղաքական գործընթաց» հասկացության բովանդակության վերլուծությունը, որպես բազային կօգտագործենք հետևյալ սահմանումը. քաղաքական գործընթացը՝ դա այս կամ այն քաղաքական ինստիտուտները ստեղծող և վերստեղծող սուբյեկտների, կառույցների, հաստատությունների և այլ քաղաքական ակտորների (ինչպիսիք են պետությունը և քաղաքացիական հասարակությունը, քաղաքական կուսակցությունները, մարդկանց կազմակերպված և թույլ կազմակերպված խմբերը, որոշ անհատները, և երիտասարդությունը այդ թվում) համեմատաբար անկախ, տեղական փոխազդեցությունների միավորումն է:

---

[25] Пай Д., Незападный политический процесс // Политическая наука. - 2003.№ 2. - С. 66-85

Մենք կարծում ենք՝ տվյալ հասկացության նման մեկնաբանումը բացահայտում է երիտասարդ քաղաքացիների քաղաքական կամքի արտահայտման երկու հիմնական ձևերը: Առաջին հերթին դա երիտասարդության շահերի արտահայտման բազմազանությունն է արտաբերման զանազան ձևերով, ինչպես նաև ագրեգացման միջոցով՝ ընտրություններին մասնակցելով, կուսակցություններին և հասարակական կազմակերպություններին անդամակցելով: Երկրորդը, քաղաքական առաջնորդների կողմից իրականացվող կառավարման որոշումների ընդունման և իրականացման բազմաթիվ ձևերը: Ակտորների ինտեգրման բացակայությունը՝ դա քաղաքական գործընթացի ևս մի առանձնահատկություն է:

Քաղաքական գործընթացը, որի հիմքում է իշխանությունների և հասարակության միջև երկխոսությունը, ներկայացվում է ուղղահայացով կազմակերպված: Մեր կարծիքով՝քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորման բացակայությունը հանգեցրել է այն բանի, որ հասարական պահանջների հաղորդման համակարգը մեր երկրում պատշաճ կերպով զարգացած չէ: Օրինակ, խորհրդային ամբողջատիրական ռեժիմի ժամանակահատվածում կառավարության և հասարակության միջև միակ օրինական կապի ուղին կոմունիստական կուսակցությունն էր, որը թույլ էր տալիս բարձրագույն իշխանություններին ձևավորել և վերահսկել քաղաքացիների միտքն ու տրամադրվածությունը: Խրուշչովյան «ջերմացման» ժամանակաշրջանում ներկայացուցչություն համակարգը լրացրեցին կապի լատենտային ձևերը (այլախոհների շարժումը և այլք):

Քաղաքական գործընթացի մեկ այլ առանձնահատկություն է հասարակությանը որևէ նորամուծություն պարտադրելու կառավարության ձգտումը: Անհրաժեշտ է նաև նշել, որ քաղաքական իշխանությունը և ռեսուրսները գործնականում գրեթե ամբողջությամբ իշխող վերնախավի ձեռքում են, ինչի արդյունքում, ընդդիմությունը ստիպված է հանդես գալ արմատական շարժումների ձևով, այլ ոչ թե քաղաքական ընդդիմախոսությամբ: Էլիտայի մշակութային և քաղաքական անհամասեռությունը հանգեցնում է իշխող վերնախավի և հակաէլիտայի սուր առճակատման: Ներկա պահին ցանկացած ժողովրդավարական պետության մեջ երիտասարդները իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը երիտասարդության շահերի վրա ազդող որոշումների կայացման բոլոր մակարդակներում: Անհրաժեշտ է նաև աջակցել երիտասարդներին և պայմաններ ստեղծել նրանց միջոցառումների և գործունեության տարբեր ձևերի մեջ ներգրավելու համար:

Երիտասարդությանը հասարակական կյանքին մասնակցելու հնարավորություն ընձեռելը ենթադրում է ոչ միայն օգնել նրանց արտահայտելու սեփական կարծիքը: Խոսքը գնում է նաև գործնականում աջակցություն ցուցաբերելու մասին: Որպեսզի այդ մասնակցությունը իսկապես իրական և իմաստալից լինի երիտասարդների համար, այն պետք է ոչ թե պարզապես բավարարի երիտասարդների կարիքները, այլև պարտադրի լուրջ և տևական հանձնառություններ ուրիշների վրա, հատկապես մարզային և տեղական իշխանությունների վրա:

Մինչ օրս դեռ հնարավոր չէ ասել, որ ժողովրդավարական քաղաքական համակարգը բնութագրվում է կայունությամբ: Անհատները և սոցիալական խմբերը, որոնք պատկանում են որոշակի քաղաքական համակարգի, ամենատարբեր աստիճանի են ներգրավվում քաղաքական գործընթացին: Ոմանք բոլորովին անտարբեր են քաղաքականության նկատմամբ (ինչը ստացել է քաղաքական աբսենտեիզմ անվանումը), մյուսները ժամանակ առ ժամանակ են մասնակցում երկրի քաղաքական կյանքին, երրորդները՝ իսկապես տարված են քաղաքական պայքարով: Ընդ որում, քաղաքական իրադարձությունների մեջ ակտիվ դեր խաղացողներից միայն ոմանք են համոզված ձգտում իշխանության:

Երիտասարության ներուժը որպես քաղաքական գործընթացի ռեսուրս, դեռևս լրիվ չի օգտագործվում, այդուհանդերձ, այդ տարիքային խմբի ներկայիս անդամները ժամանակի ընթացքում հասարակության կյանքի տնտեսական և քաղաքական, սոցիալական և հոգևոր ոլորտներում կգրավեն առաջատար դիրքեր: Երիտասարդության մեջ այսօր արդեն կարելի է նշմարել ապագայի նախատիպը, որից կախված է պետության հետագա զարգացումը:

Պետական իշխանության մարմինների համագործակցությունը երիտասարդության հետ ենթադրում է տարբեր սոցիալ-քաղաքական ուժերի շահերը: Ընտրություններին և քաղաքական ասպարեզում ուժերի բաշխման վրա ազդող այլ զանգվածային իրադարձություններին ու քաղաքական միջոցառումներին երիտասարդության մասնակցության միջոցով բազմազան քաղաքական խաղացողներ, ակտորներ կարող են ուժեղացնել իրենց ազդեցությունը քաղաքական գործընթացի վրա: Այսօրվա սրընթաց փոփոխվող և գլոբալացման ակտիվ գործընթացների ազդեցության տակ գտնվող աշխարհում, որ ներթափանցված է տեղեկատվության տարափով և պահանջում է նոր գիտելիքների մշտական հոսք, երիտասարդության դերը նշանակալիորեն աճում է:

Մենք կարծում ենք՝ երիտասարդության, որպես սոցիալական խմբերից մեկը, հատկանիշները և բնութագրերը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է կողմնորոշվել երիտասարդություն բուն հասկացության վերաբերյալ: Դիտարկենք որոշ մեկնաբանությունները:

1968 թ. տվյալ հասկացությանը առաջին անգամ տրվել է գիտական սահմանում: Սոցիոլոգ Վ.Լիսովսկին բնութագրել է երիտասարդությունը որպես սերունդ, որն անցնում է սոցիալիզացման փուլը և յուրացնում է կրթական, մասնագիտական, մշակութային և այլ սոցիալական գործառույթներ [26]:

"Երիտասարդություն" հասկացության այս սահմանման կողքին սոցիոլոգ և փիլիսոփա Ջ. Կոհնը մատուցում է ավելի լայն պատկերացում և խոսում է երիտասարդության մասին, որպես առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբի, որն առանձնանում է հետևյալ չափանիշներներով. տարիքային բնութագրերը, սոցիալական կարգավիճակի առանձնահատկությունները, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական հատկությունները, որ պայմանավորված են վերոհիշյալ գործոններով: Կենսաբանական առումով երիտասարդությունը, որպես կենսական ցիկլի հերթական օրինաչափ փուլ, ունիվերսալ բնույթ է կրում, մինչդեռ երիտասարդության բաշխումը տարիքային և սոցիալ-ստատուսային ենթախմբերի, որոնք ունեն իրենց սեփական հատկանիշներ, իրենց բնորոշ սոցիալ-պատմական բնույը և քաղաքական մշակույթի տեսակը, սոցիալականացման օրինաչափությունները, որոնք բնորոշ են տվյալ հասարակության համար [27]: Այս սահմանմամբ գիտնականը դիպել է քաղաքական սոցիալականացման խնդրին, որը նախկինում արծարծվածված էր Վ.Լիսովսկու կողմից:

Այդ երկու գիտնականների մեկնաբանությունը կարելի է վերագրել երիտասարդություն հասկացության սահմանման արժեքատարիքային մոտեցմանը, ինչպես նաև Իկոննիկովայի տեսակետը, որը դիտարկում է այն որպես «սերունդ, որի հատկանիշները չեն սահմանափակվում միայն տարիքով, այլ ներառում են համոզմունքների և նպատակների միասնությունը, ապրումների և կյանքի հանդեպ վերաբերմունքի ընդհանրությունը» [28]: Ըստ այս մեկնաբանության, անկախ տարիքից այս կամ այն սերնդի սոցիալական հատկությունները պահպանվում են: Երիտասարդական

[26] Лисовский В.Т. Социальные изменения в молодежной среде. - М., 2005, с.

[27] Кон И.С. Социология молодежи: Краткий словарь по социологии. - М.: Наука, 1988.- 150 с.

[28] Иконникова С.Н. Молодежь. Социологический и социально-психологический анализ. - Л., 1974, с.122

դիրքորոշման հիմնական բնութագրեր են համարվում ընդհանուր համոզմունքները, շահերը, ձգտումները, արժեքները, համակրանքը:

Վ.Դոբրինինան բերում է «երիտասարդություն» հասկացության իր մեկնաբանությունը հոգեբանական-ֆիզիոլոգիական, տնտեսական և սոցիալական չափանիշների վրա: Գիտնականի կարծիքով երիտասարդությունը գտնվում է հոգեբանական և ֆիզիոլոգիական ձևավորման փուլում, այսինքն այն ֆիզիկապես և հոգեպես դեռ լրիվ ձևավորված տարիքային խումբ չէ [29]: Երիտասարդները ոտք են դնում հասուն կյանք, ձգտում են նյութական անկախության և ինքնուրույնության: Աճող սերնդի սոցիալական ադապտացիումը դեռ ավարտված չէ, սոցիալ-մշակութային հիմքերի համակարգը՝ ձևավորված չէ: Թվարկված բնութագրերը միասին գումարվելով ձևավորվում են ընդհանուր հատկանիշ. երիտասարդությունը դառնում է հասարակության առավել դինամիկ մասը:

Կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցման հետևորդների թվում է սոցիոլոգ Ս.Էյզենշտադտ, որը դիտարկում է երիտասարդներին որպես կառուցվածքային դիրքերի համակարգ, որը բաղկացած է որոշակի սոցիալական կարգավիճակ և համապատասխան սոցիալական դերեր ձեռք բերող անհատներից [30]: Յուրաքանչյուր դեր փոխգործակցության մեջ ծառայում է որպես կառուցվածքային հիմնական միավոր և ունակ է կառավարել դեռ տհաս անձի վարքը: Ըստ մեզ, տվյալ մոտեցման աջակիցների կարևոր արժանիքը հանդիսացավ միջսերունդային համագործակցության հայեցակարգի կառուցումը:

Երիտասարդական պրոբլեմատիկայի արդիականությունը օտարերկրյա գիտնականների աշխատություններում պայմանավորված էր XX դարի 60-ականներին Միացյալ Նահանգներում և Եվրոպայում ուսանողական հուզումներով: Մի շարք արևմտյան քաղաքագետներ և սոցիոլոգներ կողմնակից էին «Երիտասարդություն» հասկացության մեկնաբանման հոգեբանական մոտեցման: Այսպես, անգլիացի գիտնական Ս.Ֆրիթը ներկայացրել է այդ կատեգորիայի սահմանման նոր տեսանկյունը իր «Երիտասարդության սոցիոլոգիան» [31] աշխատության մեջ, ընդգծելով ուսումնասիրվող հասկացության մի շարք չափանիշներ. 1) անցում մանկությունից չափահասության, 2) իրենց վարքում անցում

[29] Добрынина В.И. Воспитание личности - управляемый процесс // Социальное управление и молодежь. - Вып. 3. -М., 1969, с. 28-32

[30] Эйзенштадт Ш.Н. От поколения к поколению // Электронная еврейская энциклопедия. URL: www.eleven.co.il/article/10105

[31] Frith S. The Sociology of Youth. - L.: Open University Press, 1984, 230 p.

կախվածությունից անկախությանը և անպատասխանատվությունից պատասխանատու լինելուն:

Իր աշխատություններում Մ.Լիսաուսկեն [32] նոր սերունդն անվանում է անկախ ու նպատակասլաց, հաղորդակցման ազատության նվիրյալ, երիտասարդների՝ սպառման «ռոմանտիկներ»: Այդ կարծիքն ավանդական չէ, այլընտրանքային է և այլ հետազոտություններին հակադիր, ավելի շատ համահունչ է այն երիտասարդների կերպարին, որոնք տարված են նյութական արժեքներձեռք բերելու և կուտակելու մոլուցքով:

Ոչ պակաս հետաքրքիր է մեզ համար, երիտասարդության հայեցակարգը, որը անգլիացի հետազոտող Դ.Հեբդիդջայի աշխատանքներում: Նա ուսումնասիրել է երիտասարդության նկատմամբ մի շարք «պատմական» տեսակետ հասարակության տեսանկյունից. Իշխանական մարմինների, գիտնականների, լրագրողների և մանկավարժների աչքերով: Գիտնականն օգտագործում է «երիտասարդությունը որպես խնդիր» հասկացությունը նկարագրելու համար 1920-ականների սկզբի իրադարձությունները երիտասարդների միջավայրում: Հենց այդ ժամանակաշրջանում է ձևավորվել սուբմշակույթի հասկացությունը: Հետագայում Դ.Հեբդիդջան տարանջատում է հաջորդ «պատմական» փուլը երիտասարդության նկատմամբ, «երիտասարդությունը որպես զվարճալիք» (1950-ական թթ.), ինչը պայմանավորված էր ամերիկյան մշակույթի աճող ազդեցությամբ Արևմտյան Եվրոպայի երկրներում, և, ի վերջո, «երիտասարդությունը որպես կերպար» (1960-ական թ. կեսերին): Վերջին ժամանակահատվածը նշանավորվեց Մեծ Բրիտանիայի երիտասարդական ոճային խմբերի ծագումով (մոդեր, ռոքերներ, պանկեր, և այլք) :

Իստ մեզ, երիտասարդություն հասկացության հետագա կոնկրետացումը պահանջում է տարիքային սահմանների հստակ որոշում, ինչպես նաև երիտասարդ սերնդին պատկանող մարդկանց սոցիալական և քաղաքական ստատուսի ավելի խորը ընկալում:[33] ԱՄՆ-ում և Ճապոնիայում ժամանակակից երիտասարդության տարիքային սահմանները ընդունված են 13-14 տարեկանից մինչև 29-30 տարեկանը: Եվրոպական

[32] Волкова Ю., Социология молодежи: Уч. пособие / Ростов-н / Д, 2001, с.30-35

[33] Мамиджанян. А., «Трактовка понятия «молодежь», «Государственное и муниципальное управление в XXI веке: теория, методология, практика» (Новосибирск: Издательство ЦРНС, 2017, с.140-146

Միության «երիտասարդ ֆերմերի» (young farmer) տարիքը կարող է տատանվել 18-ից մինչև 40 տարեկանը: Անգլիայում և Նիդեռլանդներում երիտասարդներին երեխաներից չեն առանձնացնում. և նրանց, և սրանց ներառում են միևնույն համատեղ դասակարգման՝ 0-25 տարեկան: Ինչ վերաբերում է Իսպանիային, այստեղ ւնդունված է երիտասարդ համարել 14-30 տարեկան քաղաքացիներին (երբեմն սահմանը հասցնելով 32-34 տարեկանին, ինչը պայմանավորված է ինքնուրույն տնտեսավարման կյանքի սկզբի հետ): Լյուքսեմբուրգում այսօր երիտասարդ են համարվում 15-ից մինչև 25 տարեկան բնակիչները: Չնայած այն հանգամանքին, որ գիտնականների տեսակետները երիտասարդական տարիքային խմբերի մասին նշանակալիորեն տարբերվում են իրարից, տարիքային հոգեբանության ոլորտի մի շարք հետազոտողներ առանձնացրել են երիտասարդության երկու ժամանակաշրջան. պարմանիների և պատանիների տարիքը: Այսպես օրինակ, ԽՍՄՀ-ում 1965-ին թվ. պարմանիի տարիքն սկսվում էր 13 տարեկանից մինչև 16-ը, իսկ պատանեկությունը՝ 17-ից մինչև 21-ը: Տարակարծիք են նաև այլ հետազոտողներ: Դ.Բիրրին ենթադրում էր, որ պատանեկությունը ձգվում է 12-ից մինչև 17 տարեկանը, Դ.Բրոմլին՝ 11-ից մինչև 21-ը, Դ.Վեքսլերը՝ 16-ից մինչև 20-ը, Վ.Բունակը՝ 17-ից մինչև 25-ը, իսկ Վ.Գինսբուրգը՝ 16- ից մինչև 24 տարեկանը»[34] :

Երիտասարդության տարիքային կրթսեր խմբի մեջ, որոնց կոչում են պարմանիներ, մտնում են 15-ից մինչև 17 տարեկան տարիքի երիտասարդները: Սա ուղղակիորեն պատանեկության հետխորհրդային սերնդավորումն է: Մենք կարծում ենք, պատահաբար չի, որ օրինակ Ռուսաստանում անձնագրեր տրամադրում են 14 տարեկանից, քանի որ հենց այդ տարիքում է պարմանին սկսում պարզ գիտակցել իր մասնակցության անհրաժեշտությունը գործընթացներում, որոնք որոշում են նրա հետագա կյանքը: Միջին տարիքային խումբը՝ բու«բուն երիտասարդությունը» (18-24 տ.), այսպես կոչվող անցումային տարիքն է պատանեկությունից «երիտասարդ մեծահասակների» վիճակին: Որպես կանոն, նրանք ընտրական իրավունքի ակտիվ մասնակիցներն են:

Մեծերի տարիքային խումբը (այսպես կոչվող «երիտասարդ մեծահասակները») 25-ից 30 տարեկան տարիքի մարդիկ են: Լրացնելով 25 տարին, երիտասարդն երիտասարդն իրավունք ունի ընտրվելու ՀՀ Ազգային Ժողով, այսինքն դառնում է ընտրական իրավունքի պասիվ մասնակից: (Այսօր, այդ տարիքային խմբի ներկայացուցիչները իրենց վրա

[34] Сорокин О.В. Особенности формирования политического сознания современной российской молодежи // Социс. - 2008. - №8, С. 45 – 52

կրումում են հասարակության բարեփոխումների հետևանքները): Այստեղ անհրաժեշտ է նշել, որ 20-24 տարեկան տարիքի երիտասարդները արդիականացման գործընթացը հիմնական շարժիչ ուժն են, այն ժամանակ, երբ 25 - ից 30 տարեկանները կազմում են յուրատեսակ «բուֆեր» իշխանության և հասարակության միջև:

Համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության, երիտասարդություն ասելով հարկ է հասկանալ 16-ից ներառյալ 30 տարեկան քաղաքացիներին [35]: Դա սոցիալապես ակտիվ բնակչության այն մասն է, որը ձգտում է իրականացնել իր շահերը: Ընդգծենք, որ չնայած այն հանգամանքին, որ մենք կիսում ենք Ջ. Կոհնի կողմից առաջարկված «երիտասարդություն» հասկացության մեկնաբանումը, մեր աշխատության մեջ երիտասարդության տակ մենք կհասկանանք սեփական համոզմունքներ, հայացքներ, արժեքներ և քաղաքական մշակույթի այլ տարրեր ունեցող մարդկանց որոշակի սոցիալ-ժողովրդագրական խումբ, որը գտնվում է քաղաքական սոցիալիզացման փուլում, հետագայում քաղաքական գործընթացին մասնակցելու նպատակով:

Մեր ատենախոսական հետազոտական համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում 15-ից 27 տարեկան երիտասարդները, քանի որ երիտասարդների այս կատեգորիայի ներուժը կազմում երիտասարդական կազմակերպությունների և շարժումների սոցիալական բազան, և միաժամանակ քաղաքական վերափոխումներ կատարելու ռեսուրսն ու ակտորն են:

Երիտասարդության քաղաքական ձևավորման գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդների սերունդը, ինչպես նաև ժամանակակից հասարակությունն ընդհանուր առմամբ, հայտնվում է բավականաչափ մասնատված վիճակում, այսինքն քաղաքական մասնակցության բնույթով, ինչպես նաև իր բովանդակությամբ անհամասեռէ: Մի կողմից գոյություն ունի երիտասարդների սակավաթիվ, իր դատողություններով ինքնուրույն մի խումբ, որի անդամներն արդեն կայացած քաղաքական հայացքների ու համոզմունքների տեր են: Նրանք ակտիվ են և իրենց դատողություններում անկախ, նրանցից էլ հենց կազմավորվում է կուսակցության մեծահասակ վերնախավի կադրային ռեզերվը: Մյուս կողմից, գոյություն ունի

[35] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 25.12.14 նիստի արձանագրություն N54

երիտասարդների բազմաքանակ խումբ, որոնք ընտրություններին մասնակցում են միայն այն ժամանակ, երբ քաղաքական ուժը կարող է դիպչել իրենց շահերին: Այդ կապակցությամբ հետևություն է արվում քաղաքական տեխնոլոգիաների տարբերակված կիրառման կարևորության մասին. դրանցից մի քանիսը պետք է ուղղված լինեն ողջ երիտասարդությանը, իսկ մյուսները՝ միայն առանձին սեգմենտներին ու խմբերին:

Նշենք, որ տարիք առնելով և կենսափորձ կուտակելով քաղաքականության նկատմամբ երիտասարդների հետաքրքրությունն աճում է: Գիտնականները տարբեր կողմերից վերլուծում են երիտասարդների մասնակցությունը քաղաքական գործընթացներում: Այսօր երիտասարդների մասնակցությունը ենթադրում է երիտասարդների ակտիվ, տեղեկացված և կամավոր ներգրավումը ինչպես տեղական, այնպես էլ գլոբալ մակարդակով համայնքային կյանքի որոշումների կայացման գործընթացներին: Մասնակցությունը տվյալ դեպքում պետք է ընկալենք որպես համատեղ աշխատանք երիտասարդների հետ, որը հիմնվում է իրենց սեփական ջանքերի վրա: Երիտասարդական մասնակցությունը դիտվում է որպես գալիք սերնդի զարգացման կարևոր պայման:

Երիտասարդությանը բնորոշ է քաղաքացիական պասիվություն և քաղաքական անտարբերությունը, որ նրանք բացասաբար են տրամադրված իշխանության քաղաքական իրավիճակի հեռանկարների նկատմամբ, իսկ սեփական մասնակցությունը քաղաքական կյանքին անհնար են համարում: Այլ հետազոտողներ գտնում են, որ ժամանակակից երիտասարդության համար բնութագրական է հետաքրքրության աճը քաղաքականության նկատմամբ: Մենք կարծում ենք՝ արդի քաղաքական գործընթացում գոյություն ունեն և մեկը մյուսին փոխադարձ դետերմինացնում են երիտասարդության քաղաքական մասնակցության երկու նշված միտումներն էլ:

Երիտասարդությունը, լինելով ազդեցիկ իշխանական ռեսուրս, քաղաքական առաջնորդների և վերնախավի օրինականության հենարանը, գրավում է քաղաքագետների և հասարակական կարծիքի առաջնորդների ուշադրությունը, և ինքնին իրագործում է քաղաքական գործընթացը որպես ակտոր: Այսօր, երիտասարդության համար պետության կայունության և արդյունավետ գործունեության հիմնական խորհրդանիշներն են Նախագահն ու ՀՀ Կառավարությունը՝ անձնավորված իշխանության ձևով:

Երիտասարդներին հետաքրքրում է դերը, որը նրանք կարող են կատարել ժողովրդավարության զարգացման, իրավական պետության, քաղաքացիական հասարակության և շուկայական տնտեսության կայացման մեջ: Սակայն այսօր փաստացի մասնակցությունը այդ գործընթացներում նրանք ունենալ չեն կարող: Սոցիոլոգներն ու քաղաքագետները վաղուց են որոշել քաղաքականապես ակտիվ խմբի տարիքը՝ «60-ից ավել»: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ միայն այն հասուն տարիքի մարդիկ, որոնց բնորոշում է «հասել է որոշակի հիերարխիկ մակարդակի կուսակցության մեջ» նախադասությունը, պետք է զբաղվեն քաղաքականությամբ:

Նախընտրական պայքարի ժամանակ քաղաքագետների հիմնական խնդիրն է կենտրոնացնել երիտասարդների ուշադրությունը երկրի քաղաքական կյանքի շուրջ: Քսաներորդ դարի 90-ականների սկզբից նկատվում է աճող սերնդի ապաքաղաքականացման միտումը, արժեքաբանության փոփոխությունը, միևնույն ժամանակ , համաշխարհային քաղաքակրթության զարգացման ընդհանուր միտումները ցույց են տալիս, որ երիտասարդության համար արված ներդրումները բազմակի են վերադառնում: Այսօր երիտասարդները՝ կորցնելով հավատը իշխանական բոլոր կառույցների նկատամամբ՝ անտարբեր են հասարակաքաղաքական ակտիվություն ցանկացած ձևերի նկատմամբ: Երիտասարդությունը բաժանվում է ինչպես ըստ տարիքային, այնպես էլ ըստ սոցիալական հատկանիշների: Ըստ այդմ՝ երիտասարդության հասարակական ակտիվությունն ընդունված է դիտարկել որպես պատասխան սոցիալական և կադրային «վերելակների» բացակայությանը:

Երիտասարդության ակտիվությունը հնարավոր է դառնում վերլուծել տարբեր հասարակական շարժումների ուսումնասիրության ընթացքում: Նման ակտիվության վերլուծության և տեսական իմաստավորման առաջին փորձերն արվել են հոգեբանական վերլուծության դիրքերին /Դ. Յում, Զ. Ֆրեյդ ր ուրիշներ/, ավելի ճիշտ նրա հոգեբանական – դինամիկական տարբերակով: Բերված մոտեցման կողմնակիցներն ապացուցում էին, որ սոցիալական ակտիվությունը ավանդական հասարակական ինստիտուտների շրջանակներում / ընտանիքի, կրթության և եկեղեցու/ անձի ներքին կոնֆլիկտի լուծման անհնարինության հետևանքն է:

Ինչպես նշվել էր՝ երիտասարդությունը իր հասրակական ակտիվության ներուժը իրականացնում է հասարակական շարժումների շրջանակներում, որոնց հաջողությունը կախված է առաջադրված նպատակներին հասնելուց և իրենց առաջնորդներին ու

մասնակիցներին որպես այս կամ այն սոցիալական խմբի լիիրավ ներկայացուցիչ ճանաչելուց:

Մնայուն կարծիք է ձևավորվել այն մասին, որ երիտասարդական կազմակերպությունների քաղաքական գործունեության նպատակը այս կամ այն քաղաքական կուսակցություններիկն ծառայելն է: Անկասկած երիտասարդական կազմակերպություններն ու շարժումները հարկավոր են, բայց նրանք պետք է ավելի անկախ լինեն և իրենց աշխատանքով հետապնդեն հիմնական նպատակը՝ լուծել երիտասարդական խնդիրներ:

Երիտասարդների հասարակական և քաղաքական կյանքում մասնակցելու ցանկության բացակայությունը, քաղաքական առաջնորդների, մշակույթի գործիչների և սպորտի, կինոյի և գրքերի աշխարհում պաշտելի հերոսներ չգտնելու պատճառն է, մենք կարծում ենք՝ պետական երիտասարդական քաղաքականության անարդյունավետ մեթոդների կիրառումը: Օրինակ, ռուս գիտնական Վ.Լուկովը ընդգծում է, որ երիտասարդական շարժումներում երիտասարդ մարդու անձը շատ հպանցիկ է ներկայացված, իսկ երիտասարդական շարժման յուրահատկությունը կայանում է հենց խմբակային գործունեության մեջ [36], որն ընդգծվում է կոլեկտիվ վարքի առկայությամբ, ինչը նկարագրված է անգլո-ամերիկյան քաղաքագիտական դպրոցի ներկայացուցիչների կողմից ու հարում է Ջոն Լոկի և Տ.Հոբսի գաղափարներին կոլեկտիվ պայմանագրի մասին:

Ժամանակակից երիտասարդներին հնարավոր է ներգրավել տարբեր երիտասարդական խմբերի մեջ միայն այն դեպքում, եթե նրանք համոզվեն, որ իրենք կկարողանան ազդել շրջակա աշխարհի ու մարդկանց վրա, արտահայտելով իրենց անհատականությունը: Բայց հենց որ գործունեությունը ձանձրալի է դառնում, հետաքրքրությունը նրա նկատմամբ անհետանում է:

Մենք կարծում ենք՝ ժամանակակից երիտասարդության միջավայրում ավելի մեծ տարածում են գտնում նոր ժողովրդավարական մտածողության գաղափարները, և երիտասարդությունը դառնում է դրանց դեպի կյանք ակտիվ ուղղորդողը: Երիտասարդությունը, նայած ինչ աստիճանի է իրականացրել իր հասարակական դերը և

---

[36] Ковалева А.И., Луков В.А. Социология молодежи: Теоретические вопросы. - М., 1999. с.253

թե որքանով խորն է ընդունում պետական և հասարակական զարգացման նպատակները և խնդիրները, կարող է հանդես գալ թե որպես արագացման, թե արգելակման գործոն:

Այդուհանդերձ, երիտասարդությունը միշտ ձգտել է ակտիվ քաղաքական կյանքին, դրա վառ օրինակն է XIX դարի առաջին կեսը, երբ առավելապես ուսանողական երիտասարդությունը մասնակցում էր ազգային-ազատագրական շարժմանը: XIX դարի երկրորդ կեսին երիտասարդական կազմակերպությունների կողքին, որոնք սատարում էին հեղափոխական շարժմանը, ծագում են նաև քրիստոնեական երիտասարդական միավորումներ: XX դարի սկզբին մի շարք արևմտաեվրոպական երկրներում սկսեցին գործել երիտասարդության սոցիալիստական բանվորական միությունները (մասնավորապես, 1907 թվականին՝ երիտասարդության սոցիալիստական ինտերնացիոնալը), իսկ 1917 թվականի հեղափոխությունից հետո Ռուսաստանում՝ երիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալը: 1945 թ. նոյեմբերի 10-ին ժողովրդավարական երիտասարդության Մեծ կոնֆերանսը որոշում ընդունեց Համաշխարհային ժողովրդավարական երիտասարդության ֆեդերացիա ստեղծելու մասին: Այս տարեթիվը համարվում է երիտասարդության քաղաքական «ձայն» ձեռքբերելու օր և նշվում է որպես Երիտասարդության համաշխարհային օր:

Երիտասարդական գիտակցության քաղաքականացմանը հզոր շեշտակի խթանի դեր խաղացինխորհրդային միության փլուզման ընթացքում տեղի ունեցող իրադարձությունները: Վառ օրինակ է Հայաստանում ծավալվող Ղարաբաղյան շարժումը, որի շարժիչ ուժը կարող են համարվել երիտասարդները: Անցումային շրջանը ԱՊՀ բոլոր երկրների համար նշանակում էր, որ տրանսֆորմացվելու են և արտադրական հարաբերությունները, և սոցիալական ինստիտուտները, և հանրության աշխարհայացքը: Այդ պահին սոցիալական էվոլյուցիան համընկնում էր սերնդափոխությանը: Երիտասարդները հանկարծ իրենց գիտակցեցին որպես անձինք, որոնք ի զորու են ներգործել քաղաքականության վրա և նույնիսկ ողջ քաղաքական համակարգի բնույթի վրա:

Երբ երիտասարդությունը տվյալ իրադրությունում ի վիճակի չէ ինքնակազմակերպման, շեշտակի աճում է պետության պատերնիզացման դերը, ինչը ենթադրում և ակնկալում է երիտասարդ սերնդը: Եվ այստեղ պետությունը պարտավոր է հոգալ երիտասարդների խնդիրների լուծման մասին: Սակայն, պետական երիտասարդական քաղաքականությունը երիտասարդների տեսանկյունից դառնում է

առաջնահերթ, և այդ քաղաքականությանը նա վերաբերում է ընդգծված ուշադրությամբ: Ա.Պլոտնիկովը պետական երիտասարդական քաղաքականությունը մեկնաբանում է որպես պետական գործունեություն, որն ուղղված է հասարակության մեջ երիտասարդների սոցիալական կայացման, զարգացման և ինքնառեալիզացիայի մի շարք պայմաններ և երաշխիքներ:

XXI դարում երիտասարդության զանգվածային գիտակցության մեջ պետության տեսլականը գումարվում է պետական և քաղաքացիական ինստիտուտների գործունեության մասին մասնավոր պատկերացումներից, որոնք կոչված են ստեղծել բարենպաստ պայմաններ քաղաքացիների ձգտումների իրականացման համար, այդ թվում ՝ երիտասարդներինը: Այսօր նրա դերը լիովին փոխել է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Շատ երկրներում երիտասարդությունը սատարում է տեղի է ունեցող վերափոխումներին և սոցիալական բարեփոխումներին: Այսպես օրինակ, նախկին սոցիալիստական երկրներում տրանսֆորմացումները հանգեցրին երիտասարդական շարժման բուն կերպարի նորացմանը: Զանգվածային երիտասարդական կազմակերպությունները, որոնք անցյալում իրագործում էին, թվում էր թե, տոտալ գաղափարական ազդեցություն ունեին աճող սերնդի վրա, արագ կորցրեցին իրենց արդիականությունը և վերացան քաղաքական ասպարեզից: Նրանք փոխարինելու եկան երիտասարդական նոր շարժումներ ու կազմակերպություններ, որոնք ընդգրկում են քաղաքական և այլ շահերի ավելի լայն շրջանակ:

Դժվար է գերագնահատել հասունացող սերնդի իրավագիտակցության ձևավորման գործում հասարակական կազմակերպությունների քաղաքական դերը: Քաղաքականությունը երիտասարդության համար առաջին հերթին մի գործիք է, որի միջոցով նա ի վիճակի է լուծել իր առջև ծառացած մարտահրավերները: Ըստ մեզ, այս դիրքորոշումը առանցքային է: Այսօր երիտասարդությունը չի կարող հեռու մնալ քաղաքականությունից, քանի որ ժամանակակից հասարակության և պետության համար այն հանդիսանում է այսօրվա և ապագայի գործիք ժողովրդի շահերը ապահովելու համար. և այդ գործիքով անհնարին է միայնակ աշխատելը, դրա համար անհրաժեշտ է կազմակերպություն՝ քաղաքական կուսակցություն, կամ հասարակական-քաղաքական շարժում և այլն: Այսօր երիտասարդները նախապատվությունը տալիս են ոչ թե քաղաքական, այլ հասարակական կազմակերպություններին, որոնք ունակ են պաշտպանել իրենց օրինական շահերը, օգնել որևէ սոցիալական խնդիրներ լուծելիս,

կազմակերպել ժամանցը: Ընդհանուր առմամբ, հասարակական կազմակերպություններին դիմելու պատճառը սեփական կարիքների և շահերի բավարարման հնարավորությունն է: Գաղափարական հիմնավորումը երիտասարդների ազատ ժամանցը բովանդակալիորեն կազմակերպելն է, նրան դեվիանտային վարերից շեղելը:

Երիտասարդական կուսակցական կազմակերպությունների հիմնական խնդիրը հանգեցվում է քաղաքական գործունեության համար կադրեր պատրաստելուն, ինչպես նաև կուսակցության գաղափարները ապագայի երիտասարդ ընտրողներին հասցնելուն, հասարակական կարծիք ձևավորելուն: Ինքնավար երիտասարդական հասարակական-քաղաքական կազմակերպությունների համար գործունեություն իրականացնելը շատ ավելի դժվար է, քանի որ դա պայմանավորված է որևէ քաղաքական ուժի հետ նույնականալու բարդությամբ, նյութական ռեսուրսների բացակայությամբ:

Որպես քաղաքական հարաբերությունների սուբյեկտ՝ երիտասարդների առանձնահատկությունը արտահայտվում է քաղաքական գիտակցության յուրահատկությամբ, որը պայմանավորված է նրա ներկայացուցիչների տարիքային հատկանիշներով ու սոցիալական դիրքով: Հստակորեն երևում է, որ երիտասարդների ինքնագիտակցումը հեշտությամբ փոփոխվում է տարբեր գործոնների ազդեցությունից (տնտեսական, սոցիալական և քաղաքական և այլն), ինչը պայմանավորված է նրա կյանքի թույլ դիրքորոշմամբ, քաղաքական հասունության բացակայությամբ, սոցիալական կողմնորոշման անկայունությամբ: Ցանկացած քաղաքական ուժ շահագրգռված է, որ իրեն աջակցեն, և երիտասարդության նկատմամբ ներգործությունը իրականացվում է այնպես, որ կարելի լինի նրան խրախուսել որոշակի քաղաքական գործողությունների ի շահս կոնկրետ քաղաքական համակարգի: Սակայն հաճախ, հանուն սեփական շահադիտական նպատակների քաղաքական գործիչները մանիպուլացնում են երիտասարդներին որպես դեռ ամբողջովին չձևավորված քաղաքան գիտակցության կրողների:

Վերջին տարիներին, քաղաքական կուսակցությունները սկսեցին ձևավորել երիտասարդական արդյունավետ գործող քաղաքականությունը, որի նպատակը լինելու էր երիտասարդության համար պայմանների ստեղծումը նրա քաղաքականության ռեալիզացման համար, նրա մուտքի համար իշխանություն, քանի որ երիտասարդներին քաղաքական գործընթացներին որպես պասիվ մասնակցի ներգրավելն արդեն բավարար չէ:

Փորձառու քաղաքագետ-տեխնոլոգների և քարոզիչների կոլեկտիվներ զբաղվում են երիտասարդությանը քաղաքական գործընթացի մեջ ներգրավման ռազմավարությունների մշակմամբ, ընդ որում, հատուկ ուշադրություն է դարձվում երիտասարդ սերնդի հետ աշխատանքի ձևերի և մեթոդների բազմազանությանը (հետազոտություններ, հարցումներ, հանրահավաքներ, հանդիպումներ և այլն):

Միևնույն ժամանակ, հասարակության քաղաքական կյանքին երիտասարդության արդեն ձևավորված ակտիվ մասնակցության կողքին դիտվում է նաև հակառակ վարքագիծը: Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության այն մասը, որը քաղաքական ակտիվության գործընթացից և կյանքի տարբեր ոլորտներում մասնակցությունից դուրս է մղված, դժվարանում է ինտեգրվել հասարակության մեջ: Եվ չնայած երիտասարդների մեծամասնությունը հակված չէ համարել, որ իրենց անձնական բարեկեցությունը կապված է քաղաքական զարգացումների հետ երկրում և արտասահմանում, չարժե ժխտել, որ քաղաքական մեծ ասպարեզում տեղի ունեցող նման իրադարձությունները այս կամ այն չափով ազդեցություն են գործում բոլոր սոցիալական խմբերի վրա:

Զարմանալի չէ, որ աճող սերունդը ի վիճակի չէ ժամանակի քաղաքական զարկերակի փոփոխություններ: Բանն ապաքաղաքականությունը չէ, այլ այն, որ երիտասարդությունը ունենալով զգալի ներուժ, լրիվ չափով չի օգտագործում է այն, և ակտիվությունը, գործելու ծարավը, ինչը ներհատուկ է երիտասարդների բնությանը, հասարակության կողմից պատշաճ պահանջարկ չեն ունեցել:

Բավականին երկարատև ժամանակամիջոցի ընթացքում, գիտության բնագավառում պահպանվում էր այն պատկերացումը, որ երիտասարդ սերունդը քաղաքականապես հակված է անտարբերության, սակայն տեսանելի ապագայում, մենք կարծում ենք՝ երիտասարդության ազդեցությունը հասարակական կյանքի բազմաթիվ ասպեկտների վրա կաճի, ու նրանց թիվը կավելանա: Երիտասարդությունը կարող է հասարակական և, այսպես կոչվող, «խորհրդարանական» կազմակերպությունների ստեղծման միջոցով դառնալ նոր քաղաքական հայացքների տարածման շարժիչ ուժերից մեկը:

Մեր պատկերացմամբ, խոսել երկրի ու հասարակության կայուն զարգացման, մասին կարելի է միայն այն պայմանով, որ ձևավորված պետք է լինի պետական երիտասարդական արդյունավետ քաղաքականությունը, որպես պետության

գործունեության անկախ ուղղություն, ինչի իրականացումը կպահանջի ակտիվ, շահագրգիռ համագործակցության քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ բաղադրիչների, երիտասարդական կազմակերպությունների և շարժումների հետ, և միտված է սոցիալական միջավայրի ձևավորմանը երկրի ինովացիոն զարգացման գործում: Նման միավորումները քաղաքական գործընթացը խթանում են «ներքևից», հասարակական հարաբերությունների մեջ ինքնակառավարման նոր տարրեր են ներարկում, ուշադրությունը կենտրոնացնում են իրավական արժեքների վրա, ձևավորում են երիտասարդների վստահությունը առ այն, որ իրենց ստատուսը հավասարազոր է պետությանը և սոցիալական ինստիտուտներին:

Բայց, չնայած դրան, գոյություն ունի նաև ոչ ֆորմալ երիտասարդական խմբավորումների գոյացման միտում, ինչը պայմանավորված է սոցիալական ձևափոխումների մասշտաբայնությամբ: Քաղաքական անկայունության համատեքստում նման միավորումները իրենցից զգալի վտանգ են ներկայացնում, գործիք դառնալով արմատական և ծայրահեղական քաղաքական կազմակերպությունների ձեռքին:

Մեր պատկերացմամբ, երիտասարդության դիրքորոշումը հասարակության մեջ մեր ժամանակի մեծ մարտահրավեր է, իսկ ինքը երիտասարդությունը ինչպես առաջ էր մնում է բնակչության խմբերից նվազագույն ազդեցիկը և սոցիալապես առավել ճնշվածը: Վերաբերմունքը երիտասարդության հանդեպ պատմական դարաշրջանների փոփոխման հետ փոխվում և փոխվում է նրա դերը հասարակության կյանքում: Օրինակ, XX դարի երկրորդ կեսին երիտասարդների համար առաջնային նշանակություն ստացած խաղաղության պահպանումը համայն աշխարհաում, սառը պատերազմի դադարեցումն ու երկու երկրների միջև գործընկերական հարաբերությունների հաստատմը: Հենց երիտասարդությունն է խաղացել առանցքային դերը «թշնամու կերպարի» ոչնչացման գործում: Այդ ընթացքում երիտասարդությունը վերապրեց նաև մի շարք ճգնաժամեր, ինչպիսին էին ինքնահիրացման, սոցիալիզացման և ադապտացման, պետական իշխանության մարմիններին վստահության ճգնաժամը, անհատականացման ճգնաժամը:

Ընդգծենք, որ երիտասարդ սերնդի քաղաքական ակտիվության խնդիրը անմիջականորեն կապված է մարդկության զարգացման տեմպերի, բնույթի և որակական մակարդակի հետ: Հայաստանի երիտասարդ սերնդի քաղաքական վարքը կախված է հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխություններից:

Երիտասարդության գիտակցության ընդհանուր քաղաքական ակտիվացումը դրսևորվում է հասարակական սուր խնդիրներ քննարկումներում և քաղաքական գործիչների կողմից առաջարկվող լուծումներ քննադատմամբ: Քաղաքական ասպարեզում ընթացող գործընթացների մասին իրազեկության աստիճանի բարձրացումը ազդում է երիտասարդների մտածելակերպի և գործողությունների վրա. նրանց միջավայրում նվազեցվում է կոնֆորմիզմի աստիճանը, կատարվում է ավանդական շահագրգռվածությունների և սխեմաների վերագնահատումը, որոնք բացատրում են հասարակական հակասությունների պատճառները, ավելի ակտիվ են դառնում հանապազօրյա հարցերի լուծումների աննախադեպ տարբերակները:

ՄԱԿ-ի մի շարք փաստաթղթերում նշվում է, որ երիտասարդ բնակչության թվաքանակի աճով պայմանավորված, այն դառնում է հասարակության ձևավորման ավելի ու ավելի հզոր գործոն: Արդեն մոտ ապագայում անհրաժեշտ կլինի հաշվի առնել երիտասարդությունը՝ որպես երկրները զարգացնող որոշիչ քաղաքական և սոցիալ-տնտեսական ուժ:

Երիտասարդության քաղաքական ակտիվության ներկա փուլում կարևոր է պահպանել և ուժեղացնել միջազգային համագործակցության ամրապնդման և երիտասարդների միջավայրի բոլոր մակարդակներում ինտեգրացիոն գործընթացների նկատմամբ հետաքրքրությունը: Համարվում է, որ հենց այժմ կայացած կարելի է համարել ակտիվ երիտասարդական քաղաքականությունը, որը հետագայում զուգակցվում էր հատուկ շրջանակային և ճյուղային օրենքների մշակմամբ և ընդունմամբ, օրենքների, որոնք ուղղված են երիտասարդության իրավիճակը բարելավմանը, նրա իրավունքների ու շահերի պաշտպանությունը, ինչի արդյունքում բարձրացավ երիտասարդների պետական քաղաքականության որակը:

Վերջին տարիներին զգացվում է հասարակության ու պետության էական ուղղվածությունը դեպի երիտասարդության խնդիրների լուծման կառուցողական ուղիների և միջոցների հայթայթումը: Մեր տեսանկյունից, պետական երիտասարդական քաղաքականության և նրա հետ կապված ռազմավարական քաղաքական նպատակների ձևավորման ընթացքում պետք է հաշվի առնել նոր սոցիալական պայմանների տրամաբանությունը, ինչպես նաև երիտասարդ սերնդի առողջ սոցիալական զարգացման գործում շահագրգռված հասարակության պահանջները, կարիքներն ու շահերը: Ակնհայտ է երիտասարդության զարգացման ամբողջական հայեցակարգի ստեղծման

անհրաժեշտությունը: Սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և սոցիալ-քաղաքական հարաբերություններում երիտասարդության մասնակցության աստիճանը հետզհետե կնվազի քանի դեռ անհետաձգելի միջոցներ չեն ձեռնարկվել պետական երիտասարդական քաղաքականության ոլորտում, ինչը բացասական ազդեցություն է թողնելու երկրի սոցիալական և տնտեսական զարգացման ամբողջական տեմպերի վրա: Տեղական և մարզային իշխանությունները պետք է խրախուսեն և աջակցեն շահագրգռված երիտասարդների գործունեությունը երիտասարդների համար ակումբներ և ըստ հետաքրքրությունների խմբեր կազմակերպելու գործում, օրինակ, տրամադրելով ֆինանսական աջակցություն և երիտասարդական խմբերի համար նյութական պայմաններ ստեղծելով: Մեծամասնությանը պետք է խորհուրդներ տալ, ուղղորդել և աջակցել այն առումով, թե ինչպես լավագույնս մասնակցել կարևոր որոշումներ կայացնելու և այլ գործունեությանը, որը ազդում է երիտասարդության շահերի վրա դպրոցում, երիտասարդական խմբերում և ընդհանրապես հասարակության մեջ: Հաճախ երիտասարդները արդեն ձևավորած են լինում կարծիքներ, թե ինչպես կարելի է բարելավել կյանքը, հասարակության որոշակի խնդիրներ լուծել, բայց նրանք չունեն իշխանությունների անհրաժեշտ աջակցությունն ու օգնությունը մտածվածը է գործնականում իրականացնելու համար: Երիտասարդներին անհրաժեշտ է խրախուսել, որպեսզի մասնակցեն, անդամագրվեն բոլոր տեսակի քաղաքացիական հասարակության կազմակերպություններում: Հետևաբար, կարևոր է, որ նրանց ընտրություն տրվի, ինչպես նաև մասնակցելու գործընթացին լուրջ աջակցություն ապահովվի բոլոր տեսակի կազմակերպությունների և խմբերի, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները, հատուկ կազմակերպությունները, և այլն:

Սակայն, չնայած երիտասարդության որոշ խնդիրների լուծման հարցում նկատելի փոփոխությունների և իրական արդյունքների, պետությունը դեռևս կանգնած է տնտեսական, իրավական և կազմակերպական պայմանների ու երիտասարդների ինքնորոշման իրականացման երաշխիքների տրամադրման, իր կարգավորիչ և սոցիալիզացման գործառույթների լիարժեք իրականացմանը ուղղված շատ լուրջ աշխատանք իրականացնելու անհրաժեշտության արջև:

Երկրի քաղաքական կյանքում երիտասարդության դերի աճող կարևորությունը բնականաբար արտահայտվում է հասարակական զարգացման որոշակի գործընթացներում: Երիտասարդության դիրքորոշումն ու դերը հասարակության մեջ, նրա

հանդեպ հասարակության վերաբերմունքը, ձեռք է բերում ցուցանիշային ցուցիչ գործառույթը, որը թույլ է տալիս գնահատել տվյալ հասարակության արագ առաջընթացի ունակությունը և ժամանակակից չափանիշներին համապատասխանելը: Ընդհանուր առմամբ, քաղաքական իրավիճակը երկրում որոշում է քաղաքական գործընթացում մասնակցելու գործում երիտասարդության ընդգրկելու կամ բացառման աստիճանը:

Ընդգծենք, որ մինչ օրս ցանկացած զարգացած երկրում երիտասարդությունը ճանաչվում է հասարակության համար նշանակալի սոցիալական ռազմավարական ռեսուրս, և դա՝ հատկապես բարեփոխումների ընթացքում: Երիտասարդ սերունդը տվել, ակտիվ քաղաքական գործունեություն ծավալելու պատրաստակամություն է ցուցադրում, իրենից ներկայացնում է ներուժ, որի ներդրման իրացումից կախված կլինի երկրի սոցիալ-քաղաքական և մշակութային զարգացմանը:

Անցման փուլում գտնվողհասարակության ներկայիս պայմաններում երիտասարդությունը թերևս ամենակարևոր սոցիալական ռեսուրսն է հասարակությանը առերեսվող ռազմավարական խնդիրների տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ երիտասարդների միջավայրում նկատելի է առաջընթացը դեպի ժողովրդավարություն (համապատասխան դրույթների ու նորմերի ընկալման և ընդունման իմաստով), վերջնականապես փոխել երիտասարդների վերաբերմունքը քաղաքականության հանդեպ հնարավոր է միայն այն բանից հետո, երբ ինքն իրեն քաղաքական գործընթացի իրական ակտոր կգիտակցի: Դա հնարավոր կլինի այն ժամանակ, երբ պետությունը պետական երիտասարդական քաղաքականությունը իրական, այլ ոչ թե պաշտոնապես առաջնահերթ կդարձնի:

Այսպիսով, ավարտելով այս ենթաբաժինը, նշենք, որ քաղաքական գործընթացում երիտասարդության դերը միանշանակ չէ: Երիտասարդությունը այսօր կարելի է համարել քաղաքական գործընթացի ակտորներից մեկը այլ սոցիալական խմբերի, հասարակական շարժումների և միավորումների, ինչպես նաև քաղաքական էլիտաների, ասոցիացիաների (օրինակ, գործարար միությունների), պետության (օրինակ, գլոբալ քաղաքական գործընթացներում) , և այլնի հետ մեկտեղ: Մյուս կողմից, պետք է նշել քաղաքականապես երիտասարդների ոչ ակտիվ մասի առկայությունը, երբ աբսենտիզմի որոշակի տոկոս է գրանցվում, քաղաքական մասնակցությունից խուսափում են, ինչը կապված է ընդհանրապես բնակչության կողմից քաղաքական մասնակցության հանդեպ հետաքրքրության կորստի հետ:

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդների մեծամասնությունը արտահայտում են հետաքրքրությունը հասարակության կյանքում իրենց սեփական քաղաքական մասնակցության վերաբերյալ: Այդպիսի մասնակցության աստիճանը մեծապես կախված է երիտասարդության հանդեպ պետական իշխանության լոյալությունից, կոնկրետ քաղաքական գործընթացի ընթացքից՝ բնակչության քաղաքական ակտիվության աճի կամ անկման, ինչպես նաև երկրում քաղաքականության մեջ զանգվածային ներգրավվածության աստիճանց: Ժամանակակից քաղաքական գործընթացի ակտոր դառնալու պայմանները երիտասարդության համար կախված են քաղաքական ռեժիմի ձևից, ինքնին քաղաքական գործընթացի ձևից և փուլից, պաշտոնական ուժային կառույցներին ՀԼՄ-ների հաշվետվողականության աստիճանից, սոցիալ-քաղաքական կյանքի տեղեկատվական բաղադրիչի զարգացման մակարդակից, «սպառողական հասարակության» իդեալների տարածման աստիճանից:

Երիտասարդությունը գրավում է քաղաքական գործիչների և կարծիք ձևավորողների ուշադրությունը, որպես խոշոր ուժային ռեսուրս, քաղաքական առաջնորդների և վերնախավի օրինականության աջակից, այն քաղաքական գործընթացի արդյունավետ գործուն ակտոր է: Երիտասարդության քաղաքական ձևավորման գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդ սերունդը, ինչպես նաև ժամանակակից հասարակությունն ընդհանրապես, բավականաչափ մասնատված է, այսինքն քաղաքական մասնակցության բնույթի և բովանդակության տեսանկյունից անհամասեռ է: Մի կողմից, կա իր վճիռներում անկախ երիտասարդների ոչ բազմաթիվ մի խումբ, ովքեր արդեն ունեն հաստատված քաղաքական տեսակետներ ու համոզմունքներ: Նրանք ակտիվ են և ինքնուրույն, նրանցից է ձևավորվում կուսակցական մեծահասակ վերնախավի կադրային ռեզերվը: Իսկ մյուս կողմից, կա երիտասարդների մի մեծ խումբ, ովքեր մասնակցում են ընտրություններին միայն այն ժամանակ, երբ քաղաքական ուժը կարող է դիպչել նրանց շահերին: Այս առումով եզրակացնում ենք, որ կարևոր է տարբերակված կիրառել քաղաքական տեխնոլոգիաները. նրանցից որոշները պետք է հաշվի առնի երիտասարդությունը որպես ամբողջություն, իսկ մյուսները՝ ուղղված լինեն երիտասարդության միայն առանձին հատվածներին և խմբերին:

Ամփոփելով վերը նշված եզրակացությունները, նշենք, որ երիտասարդություն ասելով, կհասկանանք դեռ չկայացած հատուկ համոզմունքներով, մաքսիմալիզմով, փոքր կենսափորձով, ժամանակակից հասարակությունում սոցիալապես ողջունելի հաստատված

դերերի բացակայությամբ, սոցիալական և քաղաքական կյանքում վարվելաձևի ինվերսիայով պայմանավորված կարծիքներով, արժեքներով և շահերով մարդկանց կոնկրետ սոցիալական և տարիքային խմբերը: Երիտասարդությունը որպես քաղաքական գործընթացի ակտոր ակտիվ զբաղեցնում է կյանքում իր դիրքը, ձեռք բերելով ժամանակակից աշխարհում քաղաքական պրակտիկայի փորձը:

1.3. Երիտասարդությունը արդիականացման գործընթացներում. քաղաքական վերլուծություն

Քաղաքական գործընթացները ժամանակակից աշխարհում բնութագրվում են բազմաչոփողականությամբ և բազմազանությամբ: Ուսումնասիրության առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում արդիականացման գործընթացները, քանի որ արդիականացումնինքնին ազդում է բնակչության բոլոր հատվածների վրա, այդ թվում, և նույնիսկ ավելի շատ, երիտասարդության վրա, որը երկրների և տարածաշրջանների ապագա քաղաքական զարգացման համար իրական ներուժ ունի:

Հրատապ սոցիալապես նշանակալի խնդիրներից մեկն է ժամանակակից ժողովրդավարական պետության արդիականացման միտումների հետ կապված քաղաքականության խնդիրների լուշման հարցերում երիտասարդական ռեսուրսի ներգրավելն է: Հարկ է նշել, որ արդիականացման հեռանկարները են ավելի սերտորեն կապում են սոցիալական այն շերտի հետ, որը կոչված է իրականացնել կյանքում նախանշված փոփոխությունները (հաղթահարել համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքները, գլոբալիզացիայի հակասական գործընթացները հասկանալ), հետևաբար երիտասարդ սերնդի որակական կարգավիճակից է կախված լինելու սպասվող բարեփոխումների հնարավորությունն ու հաջողությունը:

XXI դարի սկզբին ազատական բարեփոխումների փուլը դժվարությամբ անցնելով, հայկական պետությունը հայտնվել է «կայուն անորոշության» և ավելի զարգացած երկրներից (ԱՄՆ, արևմտյան երկրներ, Հարավարևելյան Ասիայի երկրներ և այլն) աներկբա զիջող իրավիճակում: ԶԼՄ-ներում «արդիականացում» բառը ավելի հաճախ էր օգտագործվում «բարեփոխումներ» բառի փոխարեն: Արդիականացում սկսեցին անվանել ավանդական հասարակությունիցն ժամանակակիցին անցման բարդ գործընթացը (modernity): Ժամանակակից քաղաքական ձևափոխությունները և քաղաքական

համակարգում փոփոխությունները, որպես ընդհանուր համակարգային անցման անբաժանելի գործընթաց կոչվեցին քաղաքական արդիականացում:

Քաղաքական արդիականացումը արտահայտվում է նոր քաղաքական ինստիտուտների հիմնադրման և առկաների վերափոխման ու զարգացման մեջ, թե առաջինները և թե երկրորդները գտնվում են բարդ դինամիկ հարաբերություններում: Ընդ որում հասարակական զարգացման կարևոր նախապայման է դառնում պահպանել քաղաքական կայունությունը ընդհանրապես, իսկ մյուս կողմից, բնակչության տարբեր շերտերի քաղաքական ակտիվության հնարավորությունների և ձևերի ընդլայնումը փոփոխությունների պայմաններում:

Քաղաքական արդիականացման գիտական գրականության վերլուծությունը, թույլ է տալիս հասկանալ տվյալ գործընթացի հիմքը: Արդիականացման վերաբերյալ դասական աշխատանքները պատկանում են Ա.Կոնտեի, Հ.Սթենսերի, Կ.Մարքսի, Մ.Վեբերի, Է.Դյուրկհեյմի և ուրիշների գրչին: Արդիականացման նպատակները, ռեսուրսները, տեսակներ, փուլը սահմանելու գործում կարևոր ներդրում են ունեցել այնպիսի գիտնականները, ինչպես Գ.Ալմոնդը,Դ.Բելլը, Ս.Վերբան, Ռ.Ինգիլհարտը, Ս.Փարսոնսը և այլոք:

Որոշ գիտնականներ արդիականացման տակ հասկանում են «թերզարգացած երկրներին քաշվել զարգացածների մակարդակին, ինչը տեղի է ունենում հետամնաց հասարակությունների շրջանում արևմտյան երկրների նվաճումների տարածման և վերջիների կողմից դրանց յուրացման հետևանքով»: Ու. Ռոստուն նույնացնում է արդիականացման հասկացությունը եվրոպականացման, արևմտականացման արևմտականացմանհասկացությունների հետ [37]:

Արդիականացումը ներառում է տնտեսության, քաղաքականության, կրթության ոլորտներում, համայնքի ավանդույթային և կրոնական կյանքում մշտական փոփոխությունները»: «Ժամանակակից համաշխարհային ասպարեզում գերուղղորդող և առավել համատարած ներթափանցող առանձնահատկություն» է համարում արդիականացումը ու «ժամանակակից» լինելուն ձգտելը Շ.Այզենշտադտը [38]:Այդ առումով հատկապես կարևոր է Յ.Պլյասայի կարծիքը առ այն, որ «արդիականացումը ոչ այնքան

[37] Rustow D.A. Transitions to Democracy - Toward a Dynamic Model // Comparative Polities. - 1970. - Vol. 2. - № 3. p.337-363

[38] Эйзенштадт Ш.Н. Срывы модернизации // Неприкосновенный запас. - 2010. - №6 (74), с.42-67

գործընթաց է, քան նպատակ, որին կարելի է գալ ինչպես բարեփոխումների միջոցով, այնպես էլ հեղափոխական ճանապարհով»[39] :

Ելնելով մեզ հետաքրքրող հասկացության սահմանման վերը թվարկած մոտեցումներից, կարող ենք եզրակացնել, որ արդիականացումը հասարակական-պատմական բնական գործընթաց է, որի ընթացքում ավանդական հասարակությունները դառնում են ավելի զարգացած (տեխնոլոգիապես և արդյունաբերորեն) և նորարարության հանդեպ կենտրոնացած, քանի որ նորարարությունը գիտակցված կերպով գերիշխում է ավանդույթի նկատմամբ:

Արդիականացման այդ միջոցներից որը որոշիչ կլինի մեծապես կախված է երիտասարդների գիտակցությունից և վարքագծից: Այդ պատճառով իշխանությունների խնդիրն է ուղղել երիտասարդների էներգիան դեպի ստեղծագործական կիրառելիություն: Արդիականացման գործընթացների հաջողության հիմնական չափանիշը պետք է լինի ազգային արժեքների և երկրի բնակչության կենսամակարդակի առաջնահերթությունը:

Գիտնականները նկարագրել են արդիականացման մի քանի պատմական տեսակ: Այն երկրների համար, որոնք անցել են նոր հասարակական կարգի երկար ներքին զարգացման հետևանքով (Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Արևմտյան Եվրոպայի երկրներ) բնորոշ է առաջին տիպը՝ «բուն արդիականացման»: Գաղութային կախվածությունից ազատված զարգացող երկրների համար տիպիկ է «երկրորդական արդիականացումը»:

Արդիականացման երկրորդ ձևի դեպքում հատուկ դեր է խաղում քաղաքական վերնախավը: Առանձնացվում է արդիականացման էլիտաների չորս հիմնական տեսակներ. ավանդական, ազատական, ավտորիտար և ձախ արմատական: Նրանցից յուրաքանչյուրը իր սեփական ձևով է մեկնաբանում արդիականացման նպատակներն ու խնդիրները: Ընտրանին (էլիտան) ներկայացնում են հիմնական ուժը, որն ապահովում է արդիականացման գործընթացը: Կազմակերպելով քարոզչական կամպանիաներ և բացատրելով հանրությանը հսկայական օգուտները, որ կարող է բերել արդիականացումը, քաղաքական առաջնորդները ստանում են անհրաժեշտ աջակցությունը ներքևից:

Պատմական զարգացման հետ արդիականացման ընդհանուր տեսությունը նոր բովանդակությամբ լցվեց, արդիականացման գործընթացի կողմնորոշումն ու կառուցվածքը նաև զգալիորեն փոխակերպվեցին: Արևմտյան երկրները առաջինը անցան

[39] Пляйс Я.А. Политология в контексте переходной эпохи в России. - М.. 2009, с.99

փոփոխությունների ճանապարհով, իսկ ոչ-արևմտյան աշխարհի արդիականացման գործընթացները իրականացվում էին ի պատասխան Արևմուտքի մարտահրավերների (հետապնդող արդիականացում):

Ըստ Ս.Հանթինգթոնի, ավանդականից՝ ժամանակակից հասարակության հիմնական տարբերությունների թվում կարելի է անվանել քաղաքականության մեջ քաղաքացիների ներգրավվածության բարձր մակարդակը և բաց քաղաքական համակարգի առկայությունը, որը արդիականացման գործընթացներում քաղաքացիների մասնակցության ամրապնդմանը նպաստող մի շարք բարդ, ինքնավար, հարմարվողական և համաձայնեցված քաղաքական ինստիտուտների համալիր է [40]: Հետևաբար, հասարակության արդիականացման նպատակներն ու խնդիրները անհասանելի են առանց քաղաքական արդիականացման խնդիրների լուծման: Առաջին հերթին, փոփոխություններ պետք է կատարվեն ինստիտուցիոնալ միջավայրում (նորմերն ու արժեքները, որոնցով կառաջնորդվեն մարդիկ իրենց քաղաքական վարքագծում): Երկրորդ, ստեղծել քաղաքական համակարգ, որը պետք է հիմնված լինի քաղաքական բազմակարծության ու մրցակցության վրա, պետք է կարողանա ներկայացնել և համակարգել տարբեր սոցիալական խմբերի շահերը, ապահովել քաղաքացիների՝ վերափոխմանը մասնակցելու միջոցների մոբիլիզացումը: Այն դեպքում, երբ իշխող կառավարությունը ի վիճակի չէ ստեղծել քաղաքական համակարգ, որը համապատասխանում է թվարկված պահանջներին, ապա քաղաքացիները գտնում են իրենց ակտիվության իրագործման այլ, ոչ ինստիտուցիոնալ ուղիներ (բողոքիարկման գործողությունները, «ուղղակի գործողություն»):

Կարծում ենք, որ արդիականացման գործընթացը պետք է դիտարկել միայն քաղաքական բաղադրիչի հետ համատեղ: Անհրաժեշտ քայլ է քաղաքական համակարգի ներսում քաղաքական արդիականացման նպատակների և արտաքին գործոնների հստակ կապը, այդպիսիք են հասարակության կայունությունը, սոցիալական և տնտեսական զարգացման գործընթացները, քաղաքացիների ակտիվ քաղաքական մասնակցությունը:

Ժամանակակից քաղաքական գործընթացները ուսումնասիրելիս որոշակի են հասարակական ակտիվության ցանցային փոփոխությունները. քաղաքական և հասարակական զարգացման գործընթացներում, տեղեկատվության ընկալման

[40] Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах. - М., 2004. " Модернизация и политика в XXI в. / Отв. ред. Ю.С. Оганисьян. - М., 2011, С.309

միատարրությանը փոխարինել է բազմակարծությունը և խաղարկման լայն դաշտը: Տեղեկատվական դաշտի նոր արժեքաբանությունը փոխել է ամբողջ հասարակության, և մասնավորապես երիտասարդության ընկալումները: Երիտասարդությունը ակտիվություն է դրսևորում ոչ միայն քաղաքականության ոլորտում, այլ նաև սոցիալական արդարության ապահովման և հասարակական փոխակերպումների շրջանակներում մասնակցայնության ոլորտում:[41]

Նախկինում երիտասարդության քաղաքական սոցիալիսացիայի իրականացման հիմնական միջոցներն էին հանդիպումները, հանրահավաքները և այլն: Քաղաքական գործիչները շփվում էին երիտասարդության հետ հիմնականում ելույթների միջոցով, ինչպես օրինակ խորհրդային շրջանի քաղաքական դերակատարները:Որոշ քաղաքական ուժեր շարունակում են օգտագործել նաև տպագիր թերթոնները և այլ տպագիր քաղաքական քարոզչական նյութեր երիտասարդության հետ կապի ապահովման համար: Ժամանակակից քաղաքական հաղորդակցությունը արմատապես փոխել է արիտասարդության արժեհամակարգը: Հատևաբար արդի քաղաքական զարգացման տրամաբանությամբ պայմանավորված երիտասարդության սոցիալականացման գործընթնացում գերակա որոշիչ դեր ունեն նոր տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները: Հասարակությունը, և մասնավորապես երիտասարդությունը զգալիորեն ավելի հետաքրքրված է քաղաքականության էստետիզացմամբ: Այլ բառերով ասված՝ քաղաքականությունը այժմ շատ նման է շոու բիզնեսին իր խաղարկայնությամբ: Այն աշխարհը, որում այժմ ապրում են երիտասարդությունը այլ է՝ և սպառողական արժեհամակարգով, և ազատականությամբ, և ազատության պահանջներով: Բազմաթիվ երիտասարդական շարժումներ ուղղված են ցուցադրականության ապահովանը, մասնակիցների իմիջի ձևավորմանը, որը և բերում է իրենց զգալի պարզեցմանը:

Տևական ժամանակ քաղաքական կուսակցությունների կողմից երիտասարդությունը դիտարկվում էր զուտ որպես ժողովրդագրական խումբ, որի կարևորթույնը աճում էր միայն ընտրական գործընթացների ժամանակ: Երիտասարդները ներգրավված էին քարոզչական պարզագույն աշխատանքներում, սակայն իրավիճակը փոխվեց այն ժամանակ, երբ երիտասարդության ձայնը սկսեց որոշիչ դեր խաղալ նաև ընտրական գործընթացներում: Օրինակ, ՝ 1996 թվականին կայացած ՌԴ նախագահի

[41] Մամիջանյան Հ., ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ. Հանրային Կառավարում, N2, Երևան, 2017, էջ.143-150

ընտրությունների ժամանակ առաջին անգամ իրականցվում էին հատուկ երիտասարդների ձայների ներգրավվմանը ուղղված միջոցառումներ:

2000-ական թվականներին երիտասարդական քաղաքականությունը դարձավ մոդայիկ: Նոր գաղափարների և քաղաքական դեմքերի կարոտած հասարակությունը, քաղաքագիտական և լրագրողական հանրույթը սկսեցին կերտել նոր քաղաքական աշխարհ: Երիտասարդները սկսեցին ներգրավվել քաղաքական գործընթացներին որպես դերակատարներ, և երիտասարդության համար քաղաքական դաշտը դարձավ անձնավորված: Երիտասարդները հնարավորություն ստացան ինքնանույնականցվել դրա հետ՝ երիտասարդ քաղաքական գործիչների միջոցով: Երիտասարդների համար քաղաքական գործընթացների գրավչության ուսումնասիրման համար մենք դիտարկել ենք ամերիկացի մարդաբան Մ. Միդի հետազոտությունները [42]:

Մշակությային էվոլուցիան տեղի է ունենում հետֆիգուրատիվ մշակույթից կոնֆիգուրատիվ մշակույթի, ապա նախագիգուիրատիվ մշակույթի անցման ընթացքում: Եթե դիմենք այլաբանական օրինակների, ապա առաջին դեպքում «պապերը, իրենց գրկում օրորելով իրենց նորածին թոռների համար պատկերացնում են այնպիսի ապագա, ինչպիսին եղել է իրենց կյանքը»: Երկրորդ դեպքում անհատի համար ուղղորդիչ են իր ժամակակիցների կենսակերպն ու պարադիգմը, իսկ երրորդում՝ «երիտասարդները կանգնած են ապագայի մարտահրավերների առջև, որոնք այնքան անկանխատեսելի են, որ չեն կարող կառավարվել նախկինում մշակված առկա մոդելներով»: Հենց այդ մարտահրավերների դիմակայման հրամայականն է ձևավորում երիտասարնդրեի քաղաքական ընտրություն [43]:

Մ. Միդի ուսումնասիրությունները երիտասարդության ոլորտում գտան իրենց շարունակությունը Կ.Մայնհեյմի աշխատություններում: Ըստ Մայնհեյմի, յուրաքանչուր սերունդ «սահմանափակ պատմական պերիոդի» հատվածն է, հետևաբար կուտակում է իր չկրկնվող կենսափորձը: «Մեր ժամանակի ախտորոշումը» աշխատության մեջ [44] ներկայացված է երիտասարդությունը բնորոշող երկու ասպեկտ. Ինչ է կարող տալ հասարակությանը երիտասարդությունը և ինչ է ակնկալում հասարակությունից: Փիլիսոփա

[42] Мид М. Культура и мир детства. М.: Наука, 1988, 429 с.

[43] Мид М. Культура и преемственность. Исследование конфликта между поколениями: М.: Наука, 1970, 379 с.

[44] Манхейм К. Диагноз нашего времени. -М.: «АКАЛИС», 1994. – 168, с.13

և սոցիոլոգ Հ.Մառկուզեն օր «Միաչափ մարդ»[45] աշխատության մեջ նշում է, որ երիտասարդության բնորոշ հատկանիճը «աութսայդերությունն է», որի հեղինակը բացատրում է անհատականության պահպանման և աներկբա կառավարման վերացման ձգտմամբ:

Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդությունը դրսևորում է իր մշակութային արժեքաբանությունը համացանցի միջոցով, որտեղ ստեղծագործական ազատությունը համադրվում է տեսանելիության և հասանելիության հետ: Համացանցում երիտասարդների ինքնակազմակերպման ունակությունները զգալիորեն ավելի լավն են, քան իրական կյանքում:

Սակայն անհրաժեշտ է հասկանալ, որ այսօր քաղաքական և հասարակական շարժումներն այսօր ոչ միայն երիտասարդների սոցիալիզացիայով են պայմանավորված, այլ նաև հենց իրենց՝ երիտասարդների նախաձեռնողականության և արդյունք են: Նույիսկ «երիտասարդական շարժում» հասկացությունը վերաճել է պարզապես համընկնող հետաքրքրություններ ունեցող երիտասարդների խմբից (ժամանցային, մշակութային և այլն) լիիրավ քաղաքական և/կամ հասարակական կազմակերպությունների: ՀՀ պետական երիտասարդական քաղաքականու թյան հայեցակարգում նշվում է, որ երիտասարդական հասարակական կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական այն կազմակերպություններն են, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, զբաղվում են երիտասարդության հարցերով և/կամ իրականացնում են երիտասարդական աշխատանք :

Ժամանակակից երիտասարդական շարժումները կարելի դասակարգել ամենատարբեր սկզբունքերով, սակայն մենք ներկայացնում ենք դրանց դասակարգումը ըստ պատկանելության և հասարակական կյանքի մասնակցության: Առաջին տեսակը ոչ քաղաքական հասարակական շարժումներն են, երկրորդը՝ համացացնում իրենց գործունեությունը ծավալող երտիասարդական կազմակերպությունները, երրորդը կուսակցություններին կից ստեղծված երիտասարդական կազմակերպություներն են, իսկ վերջինը ծայրահեղական տրամադրված երիտասարդների միավորումները: Առաջին խմբին է պատկանում օրինակ «Սթրեյթ Էջ» Straight Edge կազմակերպությունը (կրճատ անվանումը sXe), որը ստեղծվել է անցյալ դարի 70-ական թվականներին ի հակադրություն սեքսուալ հեղափոխականության և ազատականության մշակույթի: Շարժման անդամները

[45] Marcuse H., One-Dimensional Man, Beacon Press, 1964, 257 p.

բացառում էին ալկոհոլի, թմրանյութերի և ծխախոտի օգտագործումը, անկանոն սեռական կապերը և մի շարք այլ սովորույթներ ու մոտեցումներ, որոնք այդ ժամանակ ասոցացվում էին պանկ-ռոկի հետ: Շուտով այն վերածվեց էթիկ-աշխարհայացքային շարժման, որի անդամները կարևորում էին ինքնակառավարումը և ազատությունը: Այդ շարժման գաղափարախոսությունը բացառում էր նաև դիսկրիմինացիայի բոլոր դրսևորումները՝ առաջին հերթին ռասսայական տրամաբանությամբ: Շարժումը չէր վարում ագրեսիվ քարոզչական աշխատանքներ և այդ պատճառով չուներ լայն տարածում վայելող տարբերանշաններ: Շարժման ամենախիստ կանոնակարգոց ապրող խմբավորման անդամները՝ սթրեյթ էթջ – հեդլայներները, բացառում էին սուրճի, էներգետիկ ըմպելիքների, ծխախոտի և ոգելից խմիչքների օգտագործումը: Այս շարժման փիլիսոփյության հենասյուներն են բարոյականությունը և ֆիզիկական մաքրությունը: Շուտով շարժման մասնակիցներից շատերը միախառնեցին իրենց կազմակերպության փիլիսոփայությունը քրիստոնեական ուսմունքի հետ՝ ստանալով հոգու և մարմնի մաքրությունը քարոզող գաղափարախոսական սինթեզ:

Այս դասակարգման մեջ կարելի է դիտարկել նաև մի շարք այլ երիտասարդական շարժումներ. Դիգգեռներ, թռեյսերներ (պառկուրի սիրահարներ), ստալկերներ, ռաստամաններ և այլք:

Համացանցում գործող երտիասարդական միավորումների ամենավառ օրինակը հաքերական միավորումներն են: Դեռևս համացանցի զարգացման վաղ փուլերում՝ տեխնոլոգիական առաջընթացին զուգահեռ ձևավորվում էին ցանցահենական և հաքերական միավորումները: Այսօր արդեն դրանք ունեն բազմաթիվ վիետևորդներ և իրականացնում են մի շարք համաշխարհային տարածում ունեցող նախագծեր: Այս կազմակերպությունների անդամները սովորաբար հանդես են գալիս տեղեկատվության հասանելիության համար, ինչպես նաև պետական և կորպորատիվ շահերի դեմ: Դրանցից կարելի է նշել Wikileaks պորտալի ստեղծումը, Anonymus միջազգային հաքերական խմբի գործունևությունը և այլն:

Երիտասարդական շարժումների երրորդ տեսակը կուսակցական երիտասարդական կազմակերպություններն են: Հիմնականում նման երիտասարդական շարժումների անդամագրումը իրականացվում է հետևյալ տարբերակներով [46].

[46] В.К.Мокшин,С.И.Шубин, Политическая социология, Архангельск, 2014, 363 с.

- **Կուսակցության կից** ստեղծվում է կազմակերպություն և նշանակվում ղեկավար, որի խնդիրն է իրականցնել երիտասարդների համախմբումը կուսակցության հովանու շուրջ: 2017 թվականի ԱԺ ընտրությունների արդյունքում Ազգային ժողով անցած չորս կուսակցություններից երեքը (Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, Բարգավաճ Հայաստան կուսակցությունը) ունեն երիտասարդական կազմակերպություններ, որոնք են կուսակցական առանձին ստորաբաժանումներ են: Հայ Յեղափախական Դաշնակցության կազմում գործում են երկու կառուցվածքային միավորներ, որոնք զբաղվում են երիտասարդների հետ տարվող աշխատանքներով՝ երիտասարդական և ուսանողական կազմակերպությունները: «Ելք» նախընտրական դաշինքի անդամների զգալի հատվածը երիտասարդներն են, ուստի կառույցը չունի առանձին երիտասարդական կազմակերպություն:
- **Գաղափարական հենքի վրա** միավորվում են երիտասարդական խմբեր, որոնք հետագայում միանում են այս կամ այն քաղաքական ուժին: Այս տարբերակը շատ ավելի հազվադեպ է հանդիպում, որովհետև գաղափարախոսության մշակումը և հանրայնացումը շատ ավելի երկար ժամանակ է պահանջում, քան առաջին տարբերակը: Սույն ճանապարհով է ձևավորվել ազգայնական «Հայազն» կուսակցության պատմությունը՝ 2009 թվականին ձևավորվելով որպես հասարակական կազմակերպություն, հետագայում՝ 2014-ին այն վերագրանցվեց որպես կուսակցություն: Սույն համատեքստում կարող է նաև դիտարկվել ՄԻԱՍԻՆ շարժումը, որի քաղաքական բաղադրիչն էր ՄԻԱԿ կուսակցությունը: Նշյալ կազմակերպությունը չէր մտնում Հայաստանի Հանրապետական Կուսակցության կազմի մեջ սակայն հրապարակային հանդես էր գալիս ՀՀ Նախագահ Սեւժ Սարգսյանի օգտին: Կազմակերպությունը ուներ բրգաձև կառուցվածք, իսկ աշխատանքները կազմակերպվում էին «հազարապետներ, հարյուրապետներ և տասնապետեր» համակարգի միջոցով:
- Որոշ երիտասարդական շարժումներ իրականացնում են իրանց հավաքագրումը «նորաձև» լինելու հաշվին՝ մասնակիցների համախմբումը իրականացվում է ոչ այնքան գաղափարական հենքի վրա, որքան ազդեցիկ և ճանաչված առաջնորդների շուրջ, այլ կերպ ասած **երիտասարդները իրենց ինքնանույնականացումը իրականացնում են ելնելով ժամանակակից թռենդային հոսքերի թելադրանքից**: Սույն գործընթացի թերևս լավագույն օրինակ կարող է ծառայել հանրային տրանսպորտի սակագնի թանկացման դեմ շարժումը: («չեմ վճարելու 150 դրամ» շարժում) :

Երիտասարդների նախաձեռնությամբ ավտոսիրողները կանգնում էին հանրային տրանսպորտի կանգարներում և իրականացնում անվճարև ուղևորափոխադրումներ: Ստեղծվեցին նաև համացանցային պորտալներ, որտեղ յուրաքանչյուրը կարող էր տեղադրել իր ուղերթը: Carpool կոչվող շարժման մասնակիցներից շատերը դրան մասնակցում էին ոչ թե սոցիալական կամ գաղափարական հիմքի վրա, այլ նորաձևությանը հետևելով: Նույն տրամաբանությունը նաև մասամբ տարածվում է Electric Yerevan շարժման վրա, որը ուղղված էր էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ: Մասնակից երիտասարդներից շատերը շարժմանը մասնկցում էին նորաձևության թելադրանքով:

- Մի շարք երիտասարդական կազմակերպություններ ստեղծվում են **կարճաժամկետ մասսայական միջոցառումների կազմակերպման համար**: Դրանք չեն հետապնդում որևէ գաղափարական կամ նույնականացման նպատակ, իսկ մասնակիցները հաճախ ներգրավվում են թեմատիկ հագուստի, աքսեսուարների միջոցով: Դրանց շարքին կարելի է դասել Armenian Flashmob Division կազմակերպությունը, որը ստեղծվել էր 2010 թվկանանին և զբաղվում էր կայծակնամբխոների (flashmob) կազմակերպմամբ:
- **Բուհական երիտասարդական կազմակերպությունները** կազմակերպվում են բուհերի ներսում և որպես կանոն ունենում են հստակ կանոնակարգված հիերարխիկ կառուցվածք: Դրանց գոյությունը ՀՀ-ում ամրագրված է «Կրթության մասին» օրենքով: Ուսանողական ինքնակառավարման մարմինների անկախության ապահովման համար օրենքով սահմանվում է դրանց կանոնադրության հաստատումը կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից, իսկ ֆինանսավորումը և առնվազն 25% ներգրավվածությունը բուհի կառավարման բոլոր մարմիններում սահմանվում է բուհերի տիպարային կանոնադրության մեջ [47]:
- **Ցանցային կամ հովանոցային կազմակերպությունները** մասին խոսելիս թերևս անհրաժեշտ է հիշատակել Հայաստանի Երիտասարդության Ազգային Խորհուրդը, որը հիմնադրվել է 1997 թվականին: Միավորելով շուրջ 60 երիտասարդական հասարակական, քաղաքական և ուսանողական կազմակերպություններ՝ այն համարվում է

[47] «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 10

ամենամեծ հովանոցային երիտասարդական կամակերպությունը Հայաստանի Հանրապետությունում:

- **Ծայրահեղական կազմակերպությունները,** ի տարբերություն նախորդ տեսակները, որպես կանոն բացասական են ընկալվում հասարակության կողմից: Վերլուծաբանները առանձնացնում են դրանց կազմավորման երեք հիմնական փուլեր՝պատճառային, կազմակերպչական և գործնական: Առաջին փուլում ձևավորվում է ծայրահեղական կազմակերպությոան ձևավորման պատճառը՝ հասարակական բողոք, մասնակցայնության ճգնաժամ, երիտասարդության որոշակի խմբի մարգինալացում և այլն: Երկրորդ փուլում տեղի է ունենում երիտասարդների միավորումը, որից հետո նոր՝ երրորդ փոուլում իրականացվում են բուն ծայրահեղական գործողությունները: Մի շարք հետազոտողներ պնդում են, որ ծայրահեղական երիտասարդական խմբերը ձևավորվում են բացառապես քաղաքաներում՝ ծայրամասային, աղքատ թաղամասերում: Նմանօրինակ «շարժում» կարելի է անվանել 2016 թվականի հուլիսին Երևանում ՊՊԾ գնդի գրավման ժամանակ ծագած զանգվածային անկարգությունները Երևանի «Սարի թաղ» կոչվող թաղամասում, որոնք հիմանկանում կրում էին կենցաղային բողոք, քանի որ ամբողջ թաղամասի գազամատակարարումը դադարեցվել էր անվտանգության նկատառումներով:

- Երիտասարդնարի համախմբման մեկ այլ միջոց են դարձել երիտասարդկան խորհրդարանները և երիտասարդական կառավարությունները: Առաջին Երիտասարդական Խորհրդարանը հիմնադրվեց Հայաստանի Հանրապետոյթունում դեռևս 2004 թվականին, որից հետո վերաձևավորվեց 2011 և 2012 թվականներին: Երիտասարդական Խորհրդարանը գործում է ՀՀ ԱԺ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության մշտական հանձնաժողովին կից և ունի խորհրդատվական մարմնի կարգավիճակ: ՀՀ ԱԺ 2017 թվականի ընտրությունների արդյունքում Ազգային Ժողով անցած բոլոր քաղաքական ուժերի համապետական և վարկանիշային ցուցակներում ընդգրկված էին երիտասարդ թեկնածուներ, որոնք եղել են առաջին կամ երկրորդ գումարման երիտասարդական խորհրդարանների պատգամավորներ, ինչը ցույց է տալիս սույն ինստիտուցիոնալ կառույցի կարևորությունը քաղաքական ընտրանու հավաքագրման գործընթացում, սակայն գործառնական տեսանկյունից դրա արդյունավետությունը ցածր է. Երիտասարդական խորհրդարանի ընդունքած օրինագծերից միայն մեկը հասավ ԱԺ լիագումար նիստին:Մի շարք հասարակական կազմակերպություններ հիմնադրել են նաև երիտասարդական կառավարություններ և

երիտասարդական քաղաքապետարաններ, սակայն դրանք չունենք որևէ պետական կարգավիճակ:

Վերջին տասնամյակում երիտասարդության քաղաքական սոցիալականացման սկզբունքների և մեխանիզմների մասին խոսելիս, նշում ենք, որ այս ոլորտում շրջադարձային փոփոխություններ են տեղի ունեցել. պետության կողմից երիտասարդության դաստիարակության տոտալ վերահսկողությունից մինչև երիտասարդ սերնդի վրա ազատ գաղափարական աշխարհայացքային ազդեցությունը, այնուհետև՝ գաղափարական բազմակարծությունը և երիտասարդության քաղաքական կրթության պետական մեխանիզմը միավորելու մերօրյա ջանքերը:

Սուբյեկտ-օբյեկտ հարաբերությունների արդիականացման ներուժի համատեքստում ժամանակակից երիտասարդությունը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինը խորհրդային քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի ապամոնտաժման մասնակից դարձավ: Տեղի ունեցավ պատերնալիզմից պոպուլիզմի կտրուկ անցում, որը նպաստեց երիտասարդության ինքնավար քաղաքական պահվածքի կանխարգելմանը: Այդ սերնդի ներկայացուցիչները ներգրավված էին եղել չեչենական պատերազմական գործողություններում, 2000-ական թվականներին 25-ից 30 տարեկան քաղաքացիները պետության հզորացման, կուսակցական համակարգի ոլորտում փոփոխությունների և այլ լուրջ տրանսֆորմացիաների վկա էին ու մասնակից: Երիտասարդության այդ խմբի արդիականացման ներուժը քաղաքական կյանքում դիտարկվում են որպես համեմատաբար ցածր, նրանց առաջնահերթությունները կենտրոնացած էին ընտանիքի և աշխատանքի վրա:

Երիտասարդների ավելի կրտսեր խումբը (14-25 տարեկան) կազմավորվել է ազատական միտումների, բազմակարծության և պետականության ապագաղափարայնականացման պայմաններում: XX և XXI երկու դարերի հատման կետում, երիտասարդության նշված տարիքային խումբը դարձել էր նպատակաուղղված դիտավորյալ ներազդեցությունների և դաստիարակության օբյեկտ, ինչի արդյունքում այն դարձավ հասարակական- քաղաքական կյանքի ակտիվ մասնակից: Պետության, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ցուցաբերած հետաքրքրությունը ստացավ ակտիվ արձագանք, և երիտասարդությունը ինքը (հատկապես ուսանողությունը) առաջ քաշեց պատասխան նախաձեռնությունները:

Բոլոր այդ փոփոխությունները հանգեցրին ոչ միանշանակ հետևանքների: Մենք կարծում ենք՝ երիտասարդության քաղաքական ակտիվության բնութագրերի և ձևերի , նրա գաղափարական արժեքների, քաղաքական մասնակցության շարժառիթների ուսումնասիրությունը արդիական է դառնում գլոբալացման համատեքստում և կնպաստի երիտասարդության քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ձևավորման, ինչպես նաև ժամանակակիցքաղաքական արդիականացման ապագա կողմնորոշիչների վերաբերյալ նոր դրույթների ձևակերպմանը:

Երիտասարդությունը՝ գործելով որպես ժառանգորդ, կուտակում է նախորդ սերունդների պատմական փորձը, դառնում է հասարակության կայունության յուրովի մի ցուցանիշ, և միևնույն ժամանակ, նորարարության հզոր մի ռեսուրս: Սակայն, արդիականացումների պատմական փորձը ցույց է տալիս, որ երիտասարդական ռեսուրսի պետական կառավարման և վերահսկողության քաղաքականության բացակայությունը հանգեցնում է լուրջ սոցիալական և տնտեսական հետևանքների, որոնք արտահայտվում են տարանպատակ միտումներով և ռեսուրսների արտահոսքով:

Երիտասարդության հանդեպ կայուն դիրքի ձևավորումը ժամանակակից պետության և հասարակության ակտուալ մարտահրավեր է, և պետությունը պետք է իմանա, թե որքան բարձր է երիտասարդությունը գնահատում կյանքի որակը և պետական ապարատի գործունեության արդյունավետությունը տվյալ հասարակության մեջ, թե ինչ նորամուծություններ է անում երիտասարդ սերունդը երկրի սոցիալ-քաղաքական և սոցիալական զարգացման գործում: Կարող ենք եզրակացնել, որ հասարակության սոցիալական զարգացումը ամբողջովին կախված է երիտասարդ սերնդի դիրքորոշումից, նրա պատկերից և բարոյպես առողջ լինելուց, որոնք հենց որոշելու են ժողովրդի ճակատագիրը և ապագան:

Չնայած այն հանգամանքին, որ XXI դարի սկզբից ի վեր երիտասարդության խնդիրների ուսումնասիրությանը հատկացվում էր ավելի մեծ ուշադրություն (մասնավորապես, արդիականացման քաղաքական գործընթացներում նրա դերին), այդուհանդերձ տեղի չունեցավ երիտասարդ սոցիումի՝ որպես արդիականացման գործընթացում ռազմավարական ռեսուրսի տեսակ ընկալումը: Նոր դարի սկզբին որպես արդիականացման սուբյեկտ իր ձևավորման ժամանակ երիտասարդությունը հայտնաբերեց մի շարք խնդիր և հակասություններ, որը ներառում է կենտրոնում և մարզերում երիտասարդական քաղաքականության զարգացման տարբերությունների ու

տարաձայնությունների ի հայտ գալը, երիտասարդության մասին օրենքի բացակայությունը, մարզերում ձեռք բերված փորձի փոխանակման իրական մեխանիզմների թույլ գործունեությունը, երիտասարդ աշխատողների վերաբերյալ աննշան ուշադրությունը:

Այսպիսով, երիտասարդության արդիականացման միտքը արտահայտվեց համախմբման/մոբիլիզացված քաղաքական ակտիվությունից անհատական ընտրությանն անցման մեջ, ինչը ձևավորեց կուսակցական կառույցներում երիտասարդության դերի «համակարգային» տեսլականը և հանգեցրեց երիտասարդական ընտրազանգվածի արդյունավետ ներգրավմանը քաղաքական գործընթացում՝ կուսակցական ցուցակներում ավելացման տեսքով: Չնայած դրան, երիտասարդությունը, նույնիսկ հիմա, երբ կա կուսակցական ցուցակներում, չի հավատում սոցիալական և քաղաքական խնդիրների լուծման վերաբերյալ իր ազդեցությանը, և երիտասարդների շատ փոքև հատվածն է վստահում քաղաքական կուսակցություններին:

Մենք կարծում ենք՝ այսօրվա երիտասարդությունը դիտարկելիս, պետք է ի նկատի ունենալ ոչ թե տարիքային, այլ մի շատ հատուկ հիմնականում ստեղծագործ մարդկանց սոցիալական-հոգեբանական կատեգորիա: Ժամանակակից երիտասարդության հակասական բնույթը որպես քաղաքական արդիականացման ռեսուրս, իրականում, գալիս է խնդրի քաղաքականացումից, սակայն այն ունի նաև օբյեկտիվ հիմքեր, որովհետև արդիականացումը, ըստ էության, քաղաքականապես ակտիվ քաղաքացիների շերտ ձևավորելն է, մարդկանց, որ ի վիճակի են իրենց շահերը պաշտպանել: Արդիականացման ընթացքում երիտասարդ սերնդի քաղաքական ակտիվությունից զգալի արդյունք ստանալը հնարավոր է միայն եթե որոշվի երիտասարդների քաղաքական գործողությանը գիտակից պատրաստակամության պահը, որը հնարավոր է չափել և բնութագրել օգտագործելով տեսական գործիքներ:

Երիտասարդությունը որպես քաղաքական և սոցիալական հարաբերությունների առարկա կարող է ազդել քաղաքական որոշումների ընթացքի վրա: Այդ դաշտում կատարված հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ, ընդհանուր առմամբ, երիտասարդ սերունդը գոհ է քաղաքական հայացքներն արտահայտելու իր տրամադրության տակ եղած միջոցներից:

Մենք կարծում ենք՝ արդիականացման հաջողությունը կախված է այլոց թվում նաև հասարակության իրավական նորմերի ընդունել կամ չընդունելուց: Նորմերը որպես կանոն

որոշվում են քաղաքական ոլորտում: Հետևաբար, իրավական կանոնների և կանոնակարգերի քաղաքական բաղադրիչը պետք է արտահայտի տվյալ երկրի ժողովրդի շահերը, և առաջին հերթին, նրա երիտասարդ սերնդի շահերը:

Երիտասարդությունը պետք է ոչ միայն ինտեգրման գործընթացների ուղղորդիչը դառնա, այլև դրանց սուբյեկտը, որը կարող է ազդել հասարակության ինտեգրման արագության և ուղղության վրա: Երիտասարդությանը վերագրելով նորարարության հսկայական ներուժ, հեղինակը կոչում է այն քաղաքական գործընթացի ակտոր, որը գործում է որպես սոցիալական առաջընթացը կանխորոշող օբյեկտիվ-սուբյեկտիվ տրանսֆորմատոր: Եիտասարդության դերի ավելացումը հասարակության կյանքում բնական միտում է, որը արդիականացման ներկա փուլում հստակորեն է արտահայտվում:

Երիտասարդ սերնդի քաղաքական ակտիվության արդիականացման գործընթացը կապված է քաղաքական համակարգի կառուցվածքային փոփոխությունների հետ: Երիտասարդ սերնդի ներգրավումը քաղաքական գործընթացում պետք է ապահովվի երիտասարդության հանդեպ հետևողական պետական քաղաքականությամբ: Իշխանական կառույցների երիտասարդացումը, երիտասարդական կազմակերպությունների ստեղծումը, երիտասարդական քաղաքական էլիտաների կառուցումը ու նոր տեսակների քաղաքական մշակույթի ձևավորումը արդիականացման գործընթացները ուղեկցող դրական կողմերն են:

Ժամանակակից երիտասարդության քաղաքական հայացքները նկարագրելով, վերլուծաբանները հաճախ մոռանում են երկրի քաղաքական կյանքին նրա մասնակցության գործառնական բնույթի մասին: Ընդհանուր առմամբ, այստեղ կարելի է նշել մի քանի միտումներ: Առաջինը՝ անորոշությունը և հուսահատությունն է, որ ուղեկցում են իդեալների ամորֆությունն ու անորոշությունը: Երկրորդը՝ երիտասարդների գիտակցության ագրեսիվ ու ռեպրեսիվ լինելը: Եվ երրորդը՝ քաղաքական գործողության գիտակցությունը ու հասարակական զարգացման գործընթացներում քաղաքական ակտիվության աճը:

Հարկ է նշել, որ երիտասարդությունը ձեռք բերելով որոշակի ընտրական փորձ, դառնում է արդիականացման ռազմավարական կարևոր ռեսուրս: Իսկ ժողովրդավարական պետություններում սոցիալական և քաղաքական փոփոխումների շարժիչ ուժը սերունդների փոփոխությունն է կամ դրանց շարունակականությունը: Ժամանակակից երիտասարդությունը ներկայանալով որպես արդիականացման

փոփոխությունների սուբյեկտ, ավելի արագ է հարմարվում ժամանակակից աշխարհում, քան ավագ սերունդը: Այսպիսով, արդիականացման գործընթացն ուղեկցող երիտասարդական միջավայրի անցման, կարող է օգնել լուծել իշխանական ուժերի հարաբերակցության, երիտասարդական հասարակության ինստիտուտիզացման, երիտասարդական ծայրահեղականություն և բողոքի տրամադրությունների, երիտասարդների միջավայրում էթնիկ և կրոնական ուղղությունների և այլի հետ կապված որոշ խնդիրներ:

Ժամանակակից հասարակությունում քաղաքական համակարգը չի կարող գործել առանց երիտասարդության ներկայացուցչության: Դա կդժվարացներ արդիականացման գործընթացները, կնպաստեր քաղաքական ինստիտուտների նկատմամբ երիտասարդ սերնդի անվստահության առաջացմանը: Այս խնդրի լուծումն է. առաջին հերթին իրավական և ինստիտուցիոնալ հիմքեր ապահովել, որոնք կխրախուսեն երիտասարդների մուտքը պետական մարմինների կառույցների մեջ: Պետության իրականացվող երիտասարդական քաղաքականությունը նպատակահարմար է կառուցել տարբերակված մոտեցման հիման վրա. երիտասարդության տարբեր շերտերը ակտիվացնել կատարելու համար հասարակության մեջ իրենց դերը որպես ռազմավարական առումով անհրաժեշտ ռեսուրս:

Չնայած XX դարի 90-ական թվականների գլոբալ փոխակերպումներն ուղեկցող ճգնաժամին՝ երիտասարդության շրջանում, վերջերս ձեռք է բերվել երիտասարդական որոշակի պոտենցիալ, որը ստեղծում է արդիականացման գործընթացներում երիտասարդության ներառման բարենպաստ հիմք [48]: Դա հիմնականում արտահայտվում է պետության քաղաքակրթական առանձնահատկությունները համաշխարհային քաղաքական պրակտիկայի ձեռքբերումների հետ համատեղելու գործում, ինչը կատարում է երիտասարդությունը որպես ռեսուրս: Երիտասարդությունը իսկապես կարող է դառնալ գիտելիքների ու եռանդի հզոր ռեզերվով նորարարական մի ռեսուրս, որի էներգիան կարելի է ուղղել քաղաքական և սոցիալական գործողությունների հոսքի մեջ: Այդ գործողությունների ամենախոստումնալից ոլորտները բացահայտելու հարցին կնպաստի ռեսուրսի կառուցվածքային վերլուծությունը և պետական և մարզային մակարդակներում

[48] Чекмарев Э.В. Молодежь - политический ресурс модернизации постсоветской России. Саратов, 2009, 244 с., с.15.

երիտասարդական ռեսուրսի կառուցվածքի առանձին տարրերի որակական բնութագրիչների ուսումնասիրությունը:

Ընթացիկ արդիականացման գործընթացում երիտասարդների վերաբերյալ լուրջ հեռանկարները ի հայտ եկան XXI դարի առաջին տասնամյակում և վերաբերում են երիտասարդական քաղաքականության պետական և հասարակական ասպեկտների բացահայտմանը և նրանց միջև ընդհանուր եզրեր գտնելուն: Պետական բաղադրիչը արտահայտված է այն փաստով, որ երիտասարդությունը քաղաքական գործընթացի ակտորներից մեկն է, իսկ հասարակական բաղադրիչը՝ այն առումով, որ երիտասարդությունը մասնակցում է տարբեր հասարակական շարժումների գործառնության մեջ:

Ընդգծենք, որ կատարվող արդիականացման ռեսուրսներից մեկը, որի ներուժը դեռևս լիարժեք չի օգտագործվում, կարելի է համարել այսօր երիտասարդությունը, որին պատկանում հասարակության առանցքային տեղերից մեկը: Ուսումնասիրության ընթացքում դիտարկեցինք տվյալ հասկացության սահմանման մի քանի մոտեցումներ և հայտնաբերեցինք նրա հիմնական բնութագրիչները: Մի կողմից, որպես սերունդների իրավահաջորդ այն կուտակում է պատմական փորձը, երիտասարդությունը դառնում է հասարակության կայունության մի տեսակ լակմուսի թուղթ, իսկ մյուս կողմից՝ նորարարական մեծ պոտենցիալ, որի վերացումը հնարավոր է նրա հանդեպ պետական կառավարման քաղաքականության բացակայության դեպքում:

Այսպիսով, ժամանակակից քաղաքական տարածության մեջ նկատվել են արդիականացման մի քանի «ալիք», որոնց հիմքում էին արդիականացման բնության, վեկտորի, ռեսուրսների, ակտորների և առարկայիմասին տարբեր հասկացությունները: Եթե առաջին« ալիքը» կապված էր երիտասարդության քաղաքականացման, քաղաքական ակտիվության և քաղաքական պրակտիկաների զանգվածային ինստիտուցիոնալացման հետ, ապա ժամանակի ընթացքում կատարվում է երիտասարդության ապաքաղաքականացումը, նրա ապաքաղաքականությունը արտահայտվում է նրան քաղաքացիական ակտիվության ոչ ինստիտուալիզացված ձևերում ներգրավելու տեսքով, ոչ այնքան քաղաքական, որքան նեղ սոցիալական խնդիրներ լուծելու նրա ջանալու ձգտումներում, «նեղ կուսակցական շահերի» նպատակներով երիտասարդական ներուժի օգտագործման տեսքով:

1.4. Երիտասարդության մասնակցությունը ընտրական գործընթացում, մասնակցության ոչ ինստիտուցիոնալ և ինստիտուցիոնալ ասպեկտները

Քաղաքական գործընթացների թվում ընտրական քաղաքական գործընթացը ընդհանուր առմամբ բնութագրվում է որպես հիմնականներից մեկը: Ընտրական գործընթացները ուսումնասիրելու, գիտնականների հիմնական ուշադրությունը կենտրոնում է ընտրական վարքագծի վրա, ինչը բնականորեն օրինաչափ է:

Ընտրական ակտիվությունը ուղղակիորեն կապված է երկրում ժողովրդավարության զարգացման հետ, խոսքի ազատության հետ, քաղաքացիների, այդ թվում՝ նաև երիտասարդ սերնդի իրավունքների և ազատությունների իրականացման հետ: Մեր ուշադրությունը ուղղված է երիտասարդների դերին (բնակչության ընտրազանգվածի նոր խմբին, որը, ինչպես կարելի է պատկերացնել, ի սկզբանե և հավանականորեն, պոտենցիալ պատրաստ է սուզվել ընտրական ակտիվության մեջ) ընտրական գործընթացում:

Ընտրությունները կարելի է մեկնաբանվել որպես երկրում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների վերաբերյալ երիտասարդների շրջանում ձևավորված հայացքների յուրատեսակ ցուցանիշ: Երիտասարդներն այսօր կազմում են Հայաստանի ընտրազանգվածի գրեթե զգալի մասը: Կյանքի ուղու սկզբում ստացած գիտելիքները, փորձը, քաղաքացիության և իր երկրի համար պատասխանատվության զգացումը երիտասարդն իր հետ կտանի ողջ կյանքի ընթացքում, դրանց հենվելով կդաստիարակի հաջորդ սերունդները: Քաղաքացիական հասարակության և իրավական պետության հիմքը շուտով կկազմեն նրանք, ով այժմ 14-ից մինչև 29-ը տարեկան է [49]:

Երիտասարդները պասիվ ընտրական իրավունք ունեն 16 տարեկանից՝ Հայաստանում, 18 տարեկանից՝ Ռուսաստանում, ԵՄ, ԱՄՆ-ում (մինչև 1971 թ., տարիքային սահմանափակումը 21 տարեկան էր) և այլն: Մի շարք երկրներում ՀՀ պես, այն իջեցված է մինչև 16 տարեկանը (Լատինական Ամերիկայի որոշ երկրներում) կամ բարձրացված է, ինչպես Իսպանիայում՝ մինչև 25 տարեկան: Դա պայմանավորված է տարածա շրջանների սոցիալ-մշակութային և քաղաքական զարգացման առանձնահատկություններով:

---

[49] Радченко А.Ф. Молодежь в социально-политических процессах // Социология власти. - 2008.- №3, с.134

Ժամանակակից ամերիկացի քաղաքագետ Ռ.Դահլը ժամանակակից ժողովրդավարության հինգ հիմնական չափորոշիչ է տարանջատում, որոնց սահմանման մեջ հատուկ նշանակություն է հատկացնում ընտրական գործընթացին: Առաջին չափորոշիչը արդյունավետ մասնակցությունն է (ժողովրդավարությունը ուղղակիորեն կապված է ազատ ընտրությունների, քաղաքական որոշումների կայացման հետ): Ժողովրդավարության երկրորդ չափորոշիչը՝ ընտրական ձայնի հավասար իրավունքն է բոլորի համար: Երրորդը՝ տեղեկացվածության վրա հիմնված իմացությունն է (յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա համապատասխան հավասար հնարավորություն որոշել և հիմնավորել իր ընտրությունը): Չորրորդը՝ վերահսկումն է ժողովրդի կողմից (այսինքն, քաղաքական հաշվետվողականությունը ժողովրդի արջև): Հինգերորդը՝ ընդլայնման սկզբունքն է (այժմ մենք այդ սկզբունքը կարող ենք բնութագրել անվանել համընդհանուր ընտրական իրավունք):

Մեր ժամանակներում կարելի է նկատել ընդհանուր անտարբերության աճ հասարակության մեջ: Այդ վիճակը արտահայտվում է անտարբերությամբ, հուզական պասիվությամբ, անտարբերությամբ տեղի ունեցածի նկատմամբ, ձգտումների ու հետաքրքրությունների նսեմացմամբ: Վերջին տարիների բոլոր մակարդակների ընտրությունները բնութագրվում էին ընտրողների ներկայության ցածր ցուցանիշով, իսկ ընտրազանգվածի կազմը կրճատվել էր, հասնելով արտաքին ճնշմանը հեշտ ենթարկվող, ըստ սովորության քվեարկության դուրս եկող քաղաքացիների քանակին:

Այսօր իշխանության համար քաղաքական ուժերի պայքարում հատուկ արդիականություն է ձեռք բերում երիտասարդության ներգրավվածությունը: Սակայն ընտրողների այդ խմբերի ներուժը օգտագործել կարող են ոչ բոլորը: Երիտասարդներին ընտրություններին ներգրավելու 1990-ականներին կիրառվող պարզունակ մեթոդները քաղաքական PR տեխնոլոգիաները օգտագործելու միջոցով, մեր օրերում արդյունավետ չեն: Այնպես որ, այսօր քաղաքական կառույցները, որոնք ունեն փորձառու քաղաքական տեխնոլոգներ և PR-մասնագետներ, ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն են հատկացնում սոցիալական հարցումների արդյունքներին, երիտասարդների խնդրին հատուկ ուշադրություն են դարձնում:

Իրենց, երիտասարդներին, քաղաքական կյանքին չմասնակցելը լուրջ խնդիր չի թվում: Երիտասարդները քաղաքական ակտիվության ցուցաբերման հարցում որևէ հատուկ դժվարություններ չեն տեսնում, սակայն, ընտրում են գործունեության այլ

ոլորտներ, մասնավորապես, այն պատճառով, որ հասարակական-քաղաքական ակտիվությունը, արմատավորված կարծիքով, չի հանգեցնի նյութական շահեր ստանալուն և չի նպաստում կարիերային առաջընթացին ու սեփական ստեղծագործական ինքնադրսևորմանը:

Վերջին տարիներին կատարված հետազոտությունները թույլ է տալիս պատկերացնել երիտասարդ քաղաքական գործչի հավաքական դիմանկարը: Սկսենք այն բանից, որ նա հարմարվող է, ընդ որում, ցուցադրական, կողմնակիցն այն ամենի, ինչը կատարվում է հասարակական քաղաքականության մեջ: Եվ չնայած երիտասարդները, կարծես թե, միշտ աչքի են ընկել նոնկոնֆորմիստական վարքով, ժամանակակից ուսումնասիրությունները հակառակն են վկայում. երիտասարդությունը տրամադրված չէ փոփոխություններին: Երիտասարդները պատրաստ են հարմարվել ու հիերարխիայում ցանկացած մի խորշ գրավել: Հետխորհրդային երկրներում աճել և ամրապնդվել է երիտասարդների 25-ից մինչև 30 տարեկան հատված, որոնք հասել են որոշակի հաջողությունների: Որպես կանոն, նրանք չափազանց գործունյա են ու ակտիվ: Այս տարիքային խումբը մեր ապագան է, թեկուզ միայն այն պատճառով, որ արդիականությունը արդեն իրենց է պատկանում: Իսկ կենսամակարդակը, որին նրանք հասել են, երկրի չափանիշներով միջինից բարձր է, ինչը, ի նկատի ունենալով տարիքը, կարելի է համարել կարևոր ձեռքբերում:

Հենց այդ խումբն է, որ հասարակության կառուցվածքում բավականին պասիվ է մնում ընտրությունների առումով: Իշխանության կողմից առաջարկվող Երիտասարդական քաղաքականությունը, որը նպատակաուղղված է մատչելի կրթություն, բնակավայր, զբաղվածություն և այլ բաներ տրամադրելուն, նրանց համար այլևս ակտուալ չէ: Տվյալ խմբի համար հիմնական խնդիր է դառնում սոցիալական աճը, ուղղաձիք առաջընթացը այն դեպքում, երբ ստեղծված պայմաններում գործնականում ուղղաձիք շարժունության գրեթե բոլոր ռեսուրսները նրանց համար անհասանելի են: Իսկ ընտրական իրավունքի նորամուծությունները (օրինակ, հանրահավաքներին, երթերին և այլն վերաբերող), կուսակցական օրենսդրության (օրինակ, քվեարկության միասնական օրվա մասին) հանգեցնում են այդ խմբում ներքին բողոքի և այլակարծության տրամադրությունների պորտկմանը տարերային, ոչ ինստիտուցիոնալ դաշտում:

Ուսումնասիրությունները փաստում են, որ երիտասարդական միջավայրը այժմ ձևավորել է երկու բևեռայնորեն հակադիր միտում. դա երիտասարդ սերնդի ձգտումն է,

մասնակցել երկրի քաղաքական կյանքին և, մյուս կողմից՝ անտարբերությունն է երկրում տեղի ունեցող բոլոր քաղաքական գործընթացների նկատմամբ: Ընդգծենք, որ վերջին միտումն ավելի լայն մասշտաբ և հետևանքներ ունի:

Որո՞նք են ընտրարշավներին երիտասարդության չմասնակցելու պատճառները: Նրանց կազմակերպիչները անց են կացնում ստեղծված իրավիճակի մանրակրկիտ վերլուծություն և ձգտում է հաշվի առնել քաղաքագետներ ու երիտասարդության հարցերի փորձագետների կարծիքը:

Որպես հետևանք, առանձնացվում են 7 հիմնական խնդիրներ, որոնցով պայմանավորվում է ընտրություններին և հանրաքվեներին երիտասարդների մասնակցության կայուն շարժառիթների բացակայությունը:

Նրանցից առաջինը այն է, որ այսօրվա երիտասարդությունը, որը չի ապրել տոտալիտար հասարակությունում, չի կրել նրա սահմանափակումներն ու արգելքները, չգիտի ժողովրդավարական ազատությունների իսկական գինը: Ժողովրդավարական հասարակության պայմաններում ծնված երիտասարդությունը ձգտում չունի պայքարելու այդ հասարակության ձեռքբերումների համար, բացակայում են կայուն քաղաքական շահերն ու նպատակները, իսկ արդյունքում նա չի հասկանում քաղաքական առաջնորդներին, քաղաքական կուսակցություններին և այլոց ձայն տալու կարևորության աստիճանը [50]:

Սոցիոլոգիական ուսումնասիրություններըկազմել դատողությունների մոդելներ, որոնց համաձայն երիտասարդությունը բացատրում է ընտրություններին իր չմասնակցելու պատճառները: Երիտասարդության առաջին սկզբունքային դիրքորոշումն այն է, որ նա չի հավատում որևէ մեկին: Երիտասարդության նման աբսենտեիզմը տվյալ դեպքում, պայմանավորված է գործող իշխանության և ընտրությունների ինստիտուտի բացասմամբ: Ընտրությունները նախօրոք հաշվարկված և կանխատեսելի գործընթաց են, ինչի մեխանիզմը երիտասարդ ընտրողների կարծիքով, քաջ հայտնի է: Փորձառու տեխնոլոգների թիմեր գրում են քաղաքական թեկնածուի ելույթները, թռուցիկներ են տպում, սովորեցնում են աշխատել ընտրազանգվածի հետ, արդյունքում հաղթանակը ապահովված է լինում: Այս դեպքում, երիտասարդները աբսենտեիկ են ու այդ պատճառով նրանք ընդհանրապես հրաժարվում են մասնակցել ընտրական քարոզարշավներին:

---

[50] Шурбе В.З. Молодежь и молодежная бюрократия: качество взаимодействия //Социология власти. - 2008. - № 3, с.123-126

Երկրորդ մոդելը ձևակերպվում է այսպես. «ես ընտրությունների չեմ գնում, որովհետև իմ ձայնը ոչինչ չի փոխելու»: Երիտասարդների այս խմբի չմասնակցելը ընտրական գործընթացին բացատրվում է քաղաքական ասպարեզում այն ուժի բացակայությամբ, որը ունակ կլիներ հստակ ձևակերպել երիտասարդության շահերը: Երիտասարդ սերունդը հակված է մտածել, որ ընտրությունների գնալը՝ դատարկ ժամավաճառություն է, չէ՞ որ ամեն ինչ վաղօրոք որոշված է, իսկ մի երիտասարդի չգալը քվեարկության արդյունքների վրա ոչ մի կերպ չի արտահայտվելու:

Երիտասարդների նման վարքագծի երրորդ մոդելը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք քաղաքականությամբ ընդհանրապես չեն հետաքրքվում: Այս խմբի երիտասարդների մասին կարելի է ասել, որ նրանք ընկղմված են սեփական գործերի մեջ, և քաղաքական կյանքը նրանց բոլորովին չի հետաքրքրում: Սա հարմար դիրքորոշում է, որը համատեղում է վարքագծի և առաջին, և երկրորդ մոդելները:

Երիտասարդների ընտրություններին չմասնակցելու երկրորդ խնդիրը պայմանավորված է երիտասարդության ճնշող մեծամասնության իրավական գիտելիքների ցածր մակարդակով, նրանք պատկերացում չունեն ժողովրդավարության սկզբունքների մասին, ինչպես նաև իրավական պետության սահմանադրական կառուցվածքի մասին: Երիտասարդներին չի հետաքրքրում երկրում տիրող քաղաքական իրավիճակը: Այսօրվա 18-ամյա երիտասարդը քաղաքականապես և իրավականապես անգրագետ է, իսկ հասարակության նման անդամի մասնակցությունը ընտրություններին կրում է ձևական ու չգիտակցված բնույթ:

Երրորդ խնդիրը: Երիտասարդությունը մեծ մասամբ ապաքաղաքականացված է և ընտրությունների ինստիտուտը աննշան տեղ է գրավում աճող երիտասարդության արժեքների և գերադասությունների համակարգում:

Այստեղ կարևոր է նաև հաշվի առնել, որ մի շարք քաղաքագետներին ձեռնտու է երիտասարդներին պահել անտեղյակության մեջ, այդ պատճառով տարբեր փառատոնների, համերգների անցկացումը նրանք ակտիվորեն ողջունում են, իսկ քաղաքական ակցիաներն արգելումեն:

Չորրորդ խնդիրն այն է, որ երիտասարդությանը բավական հեշտ է մանիպուլացնել, ինչից օգտվում են ընտրություններ ու հանրաքվեներ կազմակերպողները: Աշխատանքի պոպուլիստական մեթոդների կիրառումը (այդ թվում, տարբեր կարգի շոուներ) նպաստում է դրական էմոցիոնալ ֆոնի փևավորմանը, ինչը իրականացվում է քվեարկության

ժամանակ, որից հետո երիտասարդության մասին «բարեհաջող» մոռանում են մինչև հաջորդ ընտրությունները: Որպես հետևանք, երիտասարդը զգում է, որ իրեն ուղղակի օգտագործել են: Իսկապես, այսօր երիտասարդությամբ և նրանց խնդիրներով լրջորեն զբաղվող քիչ կա: Օրինակ, իրենց նախընտրական ծրագրերում ընտրովի պաշտոնների թեկնածուները մեծ ուշադրություն են դարձնում տարեց մարդկանց խնդիրներին, շեշտը դնում բնակչության այդ հատվածի սոցիալական և տնտեսական աջակցություն վրա, և ապավինում են նրանց ձայներին բոլորովին մոռանալով երիտասարդների մասին:

Հինգերորդ խնդիրը պայմանավորված է երիտասարդների կողմից քաղաքական ինստիտուտների հանդեպ վստահության պակասով, արդարության, ընտրությունների արդյունավետության մեջ հիասթափությամբ, օրենսդրական ակտերի դեկլարատիվ բնույթով և նրանց գործողության անարդյունավետությամբ:

Վեցերորդ խնդիրը վերաբերում է տնտեսական իրադրությանը: Ցածր աշխատավարձ, բարձր գործազրկություն, բարձր գներ և այլն: Սա ոչ միայն ծայր աստիճանի զայրացնում է, այլ նաև պարզապես վրդովեցնում է մարդկանց: Շատերը ոչ թե ապրում, այլ մի կերպ գոյատևում են: Այդ պատճառով նրանց համար կարևոր չեն ոչ առաջիկա ընտրությունները, ոչ թեկնածուները, ոչ էլ նրանց նախընտրական ծրագրերը: Վճարովի կրթությունը անհնարին է դարձնում անապահով ընտանիքներից երիտասարդների ուսումը: Դրա արդյունքում ձևավորվում է երիտասարդների աբսենտեիստական վարքագիծ:

Յոթերորդ խնդիրը կապված է հասարակության զգալի մարգինալացման հետ: Երիտասարդների ու նրանց ընտանիքների սոցիալական կարգավիճակի մակարդակն է հիմնականում ձևավորում վերաբերմունքը ընտրական գործընթացի նկատմամբ: Միջին և վերին դասերի միջև եղած տարբերությունը չափազանց մեծ հայտնվեց ու անհաղթահարելի: Որպես հետևանք, հասարակության մարգինալացումը կարելի է համարել մեր ժամանակին բնորոշ հատկանիշներից մեկը: Մարգինալացում ասելով հասկանում ենք առանձին անհատների կողմից որոշակի խմբավորումների հետ իրենց նույնականացման կորուստի օբյեկտիվ գործընթացը և որոշակի խմբերի սոցիալական կարգավիճակի փոփոխությունը նրանց հասարակական ստատուսի, եկամուտների մակարդակի և այլ փոփոխությունների պատճառով: Հանդիսանալով տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, բնակչության և ժողովրդի կենսամակարդակի ընդհանուր անկման հետևանքը փորձագետների գնահատականներով մարգինալացումը

հասնում է բնակչության ընդհանուր թվաքանակի 15%-ին: Մարդկանց այդ խմբում են այսպես կոչվող «նոր աղքատները» ու գործազուրկները: Որպես հետևություն, ավելի հաճախ և գիտակցաբար ընտրություններին քվեարկում են հասարակության ավելի կայուն դիրքի տեր մարդիկ (վերին և միջին դասերի), քան ստորին խավերի անդամներ,որոնք կորցրել են հավատը առ այն, որ նոր քաղաքական գործիչների գալուց հետո իրենց դրությունը կարող է փոխվել: Մենք կարծում ենք՝ ընտրազանգվածի հետաքրքրության ձևավորման անհրաժեշտ պայմանը պետք է լինի եզրային դասերի միջև հեռավորության կրճատումը, միջին խավի ուժեղացումը:

Իսկ ի՞նչ միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել, որ երիտասարդությունը ներգրավվի քաղաքականության մեջ, ինչպե՞ս է կարելի շահագրգռել և աշխուժացնել նրա ընտրական ակտիվությունը:

Ներկայացենք մի քանի սեփական դատողություններ այս հարցով: ԱՄՆ-ում և ԵՄ երկրներում լայն տարածում է գտել կամավորության պրակտիկան, այսինքն, երիտասարդության կամավոր և անձնուրաց մասնակցությունը հասարակական տարբեր տեսակի ծրագրերում:Օրինակ Ռուսաստանյան հասարակական-քաղաքական կազմակերպությունները դեռ լայն տարածում չեն գտել, ինչի հետևանքն է երիտասարդության մակերեսային հետաքրքրությունը քաղաքական գործընթացների նկատմամբ, հասարակական շարժումներում ակտիվություն դրսևորելու հարցում: Նույնը չենք կարող ասել ՀՀ հասարակականդաշտի մասին, որը գոնե ֆորմալ, իսկ որոշ դեպքերում նաև բովանդակայինառումով գտնվում է զարգացման բավականաչափ բարձր փուլում: Երիտասարդության այն մասն, ում հասարակական գործունեության հմտությունները ձևավորված են, հստակ հետաքրքրություն է ցուցաբերում քաղաքականության նկատմամբ և ընտրական ակտիվության բարձր մակարդակ է ցուցադրում: Տեղեկատվության հեղեղը, որը թափվում է ընտրողների վրա նախընտրական քարոզարշավների ընթացքում, անհրաժեշտ է համակարգել, քանի որ ի մի բերել ու ամփոփել, կողմնորոշվել քարոզչական նյութերում: Անհրաժեշտ է պարբերաբար կանոնավոր լուսավորչական աշխատանք անցկացնել:

Գործնական միջոցների թվին, որոնք կարող են գրավել երիտասարդության ուշադրությունը դեպի քաղաքական կյանքն ու, միևնույն ժամանակ, ձևավորել ընտրողների հմտությունները, արժե դասել ուսանողական կամ դպրոցական համայնքի ինքնակառավարման ձևերից՝ երիտասարդական խորհրդարան

Երիտասարդական խորհրդարանները թույլ են տալիս խաղի ձևով լուծել հետևյալ կարևոր խնդիրները. բարձրացնել քաղաքական, տնտեսական և իրավական գրագիտության մակարդակը, ձեռք բերել քաղաքական գործունեության փորձ, զարգացնել անձնավորության էմոցիոնալ-կամային որակները (քաղաքացիական ակտիվություն, նախաձեռնողականություն և այլն):

Առաջիկա ընտրությունների մասին տեղեկատվության մեծ մասը (մոտ 90%), երիտասարդները ստանում են լրատվամիջոցներից: Անհրաժեշտ է ստեղծել կանոնավոր (ցանկալի է շաբաթական) հեռուստատեսային հատուկ ծրագրեր, որոնք ուղղված են պետական կառուցվածքի խնդիրների քննարկմանը, ընտրական համակարգերին, քաղաքացու իրավունքներին ու պարտականություններին, ընտրողներին մանիպուլացնելու մեթոդներին, «սև PR-ի» տեսակներին և այլն: Եթերում նման զրույցների անհրաժեշտ է հրավիրել արհեստավարժ քաղաքական գործիչների, հայտնի արվեստագետների, գիտության գործիչների, որոնց կյանքին երիտասարդությունը ոչ միայն հետաքրքրությամբ է հետևում, այլ և ականջալուր է նրանց: Անհրաժեշտ ենք համարում, այժմ ավելի շատ երիտասարդական միավորումներ ստեղծել, երիտասարդական ակցիաներ կազմակերպել և այլն:

Երիտասարդության ընտրական ակտիվության բարձրացմանը կարող է նպաստել իշխող և հասարակական ինստիտուտներից նրանց օտարացման հաղթահարումը, երկրի կյանքի բոլոր ոլորտներում բարեփոխումների իրականացման գործընթացին երիտասարդության ներգրավման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը երիտասարդության էլեկտորալ ակտիվությունը ավելացնելու համար: Պետության Առաջնահերթ խնդիրը , մենք կարծում ենք՝ պետք է դառնա երիտասարդ այն սերնդի պահպանումը, որը ձևավորվել էր երկրի ժողովրդավարական տարանցման ժամանակաշրջանում: Պետությունը, իր բնույթով լինելով սոցիալական, կոչված է խթանել և օգնել երիտասարդներին լուծել խնդիրները: Հենց այդ խնդիրների լուծման դժվարությունն է դառնում քաղաքականության հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորման պատճառը և ժամանակակից ընտրական գործընթացին երիտասարդության չմասնակցելը:

Երիտասարդության սոցիալապես ակտիվ մասի նրա ինքնահիրականացման համար համապատասխան դաշտ կարելի է համարել համազգային ծրագրերում, տեղական ինքնակառավարման իրականացումը, առողջության և երկրի մարդկային կապիտալի

որակի մակարդակի բարձրացման ծրագրերում նոր տեխնոլոգիաները: Ներկայիս քաղաքակագետները պետք է ամեն կերպ նպաստեն թվարկված խնդիրների իրագործմանը:

Ընտրական գործընթացին մասնակցելու երիտասարդության դերի հարցի ավելի խոր ուսումնասիրությունը, պահանջում է նաև անդրադառնալ կարևորագույն հասարակական ինստիտուտներից մեկի հարցին՝ լրատվամիջոցներին: ԶԼՄ-ները հսկայական դեր են խաղում ընտրական գործընթացում, նրանց գործառույթները բազմազան են, նրանք տեղեկացնում են, կրթում են, զվարճացնում են, գովազդում են, շատ դեպքերում ձևավորում են հանրային գիտակցությունը: Ավելին, նրանց միջոցով իրագործվում է ընկալումն ու ըմբռնումը, տեղեկությունների հաղորդումը կարևոր իրադարձությունների և զարգացումների մասին, որոնք կատարվում են երկրում և աշխարհում:

ԶԼՄ-ները ընտրական գործընթացների կառուցվածքային տարրերն են, որպես նրանց ինստիտուցիոնալ [51] հիմքերից մեկը: Զանգվածային լրատվական միջոցները արտաբերում և ագրեգացնում են երիտասարդ սերնդի սոցիալական և քաղաքական շահերը, նրան առաջարկելով ընտրական համակարգի հատկանիշների, ընդհանուր առմամբ, քաղաքական իշխանության գործունեության տարբեր այլընտրանքային մեկնություններ: Այդ հանգամանքները հատուկ կարևորություն են ստանում ԶԼՄ-ների քաղաքական բնագավառ ներթափանցելու աճի ֆոնին, երբ մեդիա-ռեսուրսները վերափոխվում են քաղաքական գործընթացի իրականացման կարևորագույն գործիքի, ինչը ազդեցության զգալի ուժ ունի: Առավել զանգվածային և ինտենսիվ քաղաքական ազդեցություն ունեն քաղաքացիական հասարակության տեսալսողական ինստիտուտները, առաջին հերթին՝ ռադիոն և հեռուստատեսությունը: Ողջ վերը նշվածը մատնացույց է անում ԶԼՄ-ների որպես «չորրորդ իշխանության» գերիշխող դերը քաղաքական գործընթացում:

Որոշակի ազդեցություն գործադրելով տեղեկատվական ռեսուրսների վրա տնտեսական լծակների միջոցով, կարելի է ճնշում գործադրել նախընտրական ընտրարշավների ընթացքի վրա: Քարոզչամիջոցները և ընտրարշավների տեխնոլոգիաները դառնում են ավելի բարդ, ինչում լրատվամիջոցները առաջատար դեր

[51] Ковров В.Ф. Электоральные процессы в общественной системе // Социология власти. - 2008,- №6, с.128

են կատարում: Ընդ սմին, ԶԼՄ-ները լուսաբանում են իշխանության այլ ճյուղերի գործունեությունը (որոնք պետք է անընդհատ հոգան իրենց իմիջի մասին): Մեդիա-ռեսուրսների ինչպես զանգվածային, այնպես էլ անհատական գիտակցությունը ձևավորելու ունակությունը վեր է ածում նրանց, ըստ ամենայնի, իշխանության գոյություն ունեցող գործիքներից առավել արդյունավետի: Ստեղծված իրավիճակը անվանվել է «մեդիակրատիա» հատուկ տերմինով («ԶԼՄ-ների իշխանություն» կամ «իշխանություն ԶԼՄ-ների միջոցով»):

ԶԼՄ-ները ոչ միայն պարզապես արտացոլում և մեկնաբանում են իրողությունը, այլ այդ իրողությունը ստեղծում են, տեղեկատվության գործընթացի վրա ազդեցության միջոցով, ինչը, իր հերթին, թույլ է տալիս ձևավորել հասարակական կարծիքը: Տեղեկատվության գործընթացի փուլերի թվում կարելի է առանձնացնել, օրինակ, տվյալների հավաքելը, ընտրելը, մասնատելը, մեկնաբանելը և տարածելը: Քաղաքականության սուբյեկտի հետագա գործողությունները մեծապես կախված են նրանից, թե ինչ տեղեկատվություն նա կստանա, ինչ ձևով և ինչ մեկնաբանությամբ: Տիրապետել կարևոր տեղեկության նշանակում է տիրապետել իրական իշխանության, կարողանալ տարբերակել կարևոր տեղեկությունը իրենից կարևորություն չներկայացնողից, նշանակում է ավելի իշխանության տիրանալ:

Պատկերացումները որ մարդկանց քաղաքական գիտակցությունն և վարքը կախված են տեղեկատվական դաշտից, որ ստեղծում են ԶԼՄ-ները, այսօր համատարած են:

Ըստ Բուրդիեյի հասարակական կարծիքը որպես բոլորի կողմից ընդունելի միջինացված տեսակետ, իրականում գոյություն չունեցող վերացականություն է: Հետևաբար, ոչ բոլոր գիտնականներն են հավատում ԶԼՄ-ների զորությանը: Այսպիս, Դ.Մերիլը պնդում է, որ ԶԼՄ-ները, տիրապետելով մարդկային ուշադրությունը որոշ բաներին կենտրոնացնելու ուժին, չեն կարող ստիպել գործել: Եվ ապա նա հանգում է ԶԼՄ-ների հասարակության վրա ազդեցության բավական զուսպ գնահատականի. նրա ասելով, այդ ազդեցությունը այն բանում, որ հասարակությանը մատնացույց արվի, թե ինչի մասին պետք է մտահոգվի, այլ ոչ թե թելադրել նրան ինչ է պետք մտածել [52]:

[52] Бурдье П. Социальное пространство: поля и практики. - М., 2005, 576 с.

Այսպես, ԶԼՄ-ների իշխանությունը շատ դեպքերում կանխորոշում է «օրակարգը»: Հիմնավորելով ԶԼՄՆ-երի ամենազորության դիրքորոշման ժխտումը, հեղինակները հենվում են հետազոտությունների էմպիրիկ հիմքին (ուսումնասիրությունները անց են կացվել հիմնականում ԱՄՆ-ում. և դրանց սկիզբը 1940-ականներին դրել է Պ.Լազարսֆիելդը), որոնք չհաստատեցին ԶԼՄ-ների լուրջ ազդեցությունը բնակչության քաղաքական գիտակցության և քաղաքական վարքի ձևավորման վրա:

Սակայն այսօր, վերը բերված հակադիր տեսակետների կողքին, երևան են եկել մի շարք փոխզիջումային տարբերակներ, որոնց հեղինակները չեն ժխտում, որ ԶԼՄ-ները զգալի ազդեցություն ունեն բնակչության քաղաքական գիտակցության և վարքի վրա, բայց, միևնույն ժամանակ, ցույց են տալիս ԶԼՄ-ների հզորության առկա սահմանափակումները: Վերոհիշյալ սահմանափակումները ծագում են լրատվամիջոցների առաջացրած տեղեկատվական դաշտի ներքին հակասություններից: Այսօր նվազեցնել քաղաքական վարքագծի կախվածությունը կոնկրետ ԶԼՄ-ների ազդեցությունից հնարավոր է շնորհիվ տեղեկատվության աղբյուրների բազմազանության և նրանցից ընտրություն կատարելու ազատության: ԶԼՄ-ների ազդեցության բնույթի և չափի վերաբերյալ եղած կարծիքների բազմազանությունն ու հակասությունը օբյեկտիվ պահանջ է առաջացնում ստուգել դրանց ազդեցությունը զանգվածային քաղաքական գիտակցության վրա: Առավել ևս անհրաժեշտ է վերլուծել մարզային նյութի հիման վրա, և, հատկապես, նախընտրական քարոզարշավի համատեքստում:

Այսօր, համատարած են մանիպուլյացման տարբեր մեթոդներ: Նախագահական և խորհրդարանական ընտրությունների քարոզարշավների ընթացքում, մանիպուլացման միջոցով կարելի է ստեղծել որևէ թեկնածուի վերաբերյալ իրական իրավիճակը չարտացոլող ընտրազանգվածի պատկերացումներ: Քարոզչական գործընթացի պարտադիր բաղադրիչն են թանկարժեք գովազդային նյութերը, հրատարակությունները, տեսանյութերը և այլն: Նախընտրական քարոզչության համար կատարվող նշանակալից ֆինանսական ծախսերը այսօր նորմալ են համարվում՝ չե որ, ինչպես փորձը ցույց է տալիս, միջին վիճակագրական ընտրողը սովոր է դատողություններ անել քաղաքականության մասին ըստ իմիջի, որը ստեղծված է հեռուստատեսության և լրատվության այլ ԶԼՄ-ների մատուցած գովազդային փայլփլուն փաթեթավորման հետևում ընտրողին հաճախ դժվար է լինում տեսնել թեկնածուի իրական կերպարը, գնահատել նրա իրական քաղաքական դիրքորոշումը: ԶԼՄ-ների այս կարգի գովազդային մանիպուլացնող աշխատանքի

առանձնահատկությունը, փաստորեն, երիտասարդ քաղաքացուն զրկում է ազատ, գիտակցված ընտրության իրականացման իրավունքից, քանի որ նրա որոշումը ձևական է դառնում, վերլուծաբանների կողմից նախապես կանխատեսված:

Հարկ է նշել, որ ԶԼՄ-ներն ունեն աներևակայելի զորություն, երբ իշխող շրջանակների կամ առանձին շահագրգռված խմբերի օգտին այս կամ այն ակցիաներն են լուսաբանում: Եվ բնակչության զգալի հատվածները սատարում են դրանց լրատվամիջոցների շնորհիվ, ինչն առավել վառ է արտահայտվում ընտրական գործընթացում: Սա հաստատվում է նախագահական ընտրությունների գործընթացը, երբ թեկնածուների շտաբերի աշխատակազմերը սկսում են անհավանական պատրաստակամությամբ օգտագործել հաղորդակցման բոլոր առկա կապուղիները, որպեսզի ազդեն հասարակական գիտակցության վրա: Ավելին, նախընտրական արշավը թեկնածուներից յուրաքանչյուրի շուրջ տեղեկատվական կայսրության կամ կորպորացիայի մի տեսակ է առաջանում, որը բերում է նրան հաղթանակի: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԶԼՄ-ների ազդեցությունը քաղաքացիների քաղաքական գիտակցության վրա կարող է կայանալ, երբ այս կամ այն քաղաքական կերպարի մասին հաղորդագրությունների բովանդակության և տոնայնության որոշակի կապ է հաստատվում այդ ԶԼՄ-ների նպատակային լսարանի նախապես հայտնի քաղաքական նախասիրությունների միջև:

Փոխադարձ կապի բնույթը կոնկրետ ԶԼՄ-ի իր լսարանի վրա ունեցած ներգործության և տվյալ կերպարի վերաբերյալ մամլո այդ միջոցի վերաբերմունքի միջև կարող է արտահայտել այս կամ այլ ԶԼՄ-ի ազդեցության աստիճանը, այսինքն, նրա ներգործողության արդյունավետությունը: ԶԼՄ-ները կարող են մոդուլացնել քաղաքացիների վարքագիծը շատ տարբեր աստիճանների, և նրան հաղորդել ամենատարբեր վեկտորներ, ինչը պետք է հաշվի առնել տեղեկատվական-քաղաքական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում, որոնց նպատակն է վերհանել ԶԼՄ-ների և զանգվածային քաղաքական գիտակցության փոխադարձ ազդեցության գերիշխող տեսակը կոնկրետ թիրախային լսարանի համար:

Այն վարկածը, որ բնակչության քաղաքական նախապատվությունների վրա հսկայական ազդեցություն ունեն լրատվամիջոցները, չի հաստատվել: Այսօր ԶԼՄ-ների մանիպուլացման ազդեցությունը այնքան ուժեղ չէ, որքան այդ մասին հաճախ ասվում է: Դա, մասնավորապես, պայմանավորված է այն փաստով, որ այսօրվա հասարակությունը, ընդհանուր առմամբ, չի վստահում իշխանությանը և սոցիալական ինստիտուտներին, ինչը

պայմանավորված է կենսամակարդակի անկումով և իշխանությունների և հասարակական ինստիտուտների վարկաբեկմամբ բնակչության աչքում: Քանի որ հասարակական-քաղաքական կյանքը առաջացնում է բնակչության հիասթափության զգացումը, անհանգստությունն ու հուսահատությունը, լրիվ բացատրելի է դառնում նրա հետաքրքրության անկումը քաղաքական տեղեկատվության նկատմամբ:

Հետևաբար, զանգվածային գիտակցության մեջ ամրապնդված ԶԼՄ-ների կերպարը երկակի բնույթ է կրում, ինչն իր արտացոլումն է գտնում դրանց նկատմամբ հանրային վստահության ցուցանիշներում, որպես հատուկ ինստիտուտի: Մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի հանդեպ, վստահությունը բավական մեծ է, ավելի բարձր, քան հասարակական և քաղաքական այլ հաստատությունների նկատմամբ: Միևնույն ժամանակ, բնակչության մեծ մասի կողմից ներկայիս ԶԼՄ-ների աշխատանքը այդ ու հանդերձ քննադատաբար է գնահատվում:

ԶԼՄ-ների նկատմամբ վստահության ցածր մակարդակի պատճառը ծագում է ցանկացած սոցիալական և քաղաքական ինստիտուտների նկատմամբ վաղօրոք ձևավորված ավելի ընդհանուր, համակարգված հավատ չընծայելու միտումից: Այդ ու հանդերձ, ԶԼՄ-ներում հայտնված այս կամ այն քաղաքական գործչին վերաբերող մի շարք խայտառակող նյութերից հետո, կամ կայունությունը ապահովելու ունակ ուժեղ իշխանության գաղափարը կրող քարոզարշավների անցկացումից հետո, ընտրողների մասնակցության աստիճանը հատկապես բարձր է դառնում:

Երիտասարդության քաղաքական պասիվության պատճառները թաքնված են նաև պետական երիտասարդական քաղաքականության առանձնահատկության մեջ: Այսօր ակտիվորեն քննարկվում է ընտրողների ակտիվության նվազեցման երևույթը, ինչը պայմանավորված է իշխանություն հասկացության հետ կապված ամեն ինչին բնակչության չվստահելու գործոններով: Ի նկատի ունենք քվեարկությանը ինչպես մեծահասակների, այնպես էլ ընտրազանգվածի երիտասարդ հատվածի ներկայանալը: Հենց այդ պատճառով է, որ պետական կարևոր ռազմավարական հարց է դառնում ժամանակակից երիտասարդության արժեքների, քաղաքական կողմնորոշումների և դիրքորոշումների ձևավորումը: Արդեն այսօր, երիտասարդների ընտրական ակտիվությունը կախված է սոցիալական շերտավորման գործընթացից: Մատչելի կրթությունը, պատվաբեր աշխատանքը, ընտանիք ստեղծելու հնարավորությունը, ապրելու տեղի ձեռք բերելը վեր է ածվում բարդ և երկուստեք պայմանավորված խնդիրների:

Քաղաքական վարքի մեկ այլ հիմնական գործոն կարելի է անվանել քաղաքական ինստիտուտներին վստահելու գործոնը: Քաղաքական գործիչները չեն կատարում ընտրողներին տված խոստումները, հասարակությունը պարբերաբար դառնում է քաղաքական միջավայրում կոռուպցիոն սկանդալների վկա: Խոսք չկա, դա խարխլում է իշխանության հեղինակությունը և բոլորովին չի նպաստում երիտասարդների քաղաքական և, մասնավորապես, ընտրական ակտիվության ավելացմանը:

Շահադրդվածությունների մեկ այլ տեսակ է գաղափարականը: Դա մի իրավիճակ է, որտեղ երիտասարդությանը համակում է որոշակի քաղաքական մի գաղափար, և հանուն դրա իրականացման, նրանք պատրաստ են զոհաբերել շատ բ Այսօր, նման տրամադրությունները երիտասարդության շրջանում հազվադեպ են: Փորձագետների կարծիքով, ընտրական ակտիվության ցածր մակարդակը ստեղծվում է այն պատճառով, որ երիտասարդությունը կոնկրետ նպատակներ չի տեսնում, նա պատրաստ կլիներ սատարել ազգային գաղափարին, սակայն դրա հստակ ձևակերպման բանաձևը չկա: Այսպիսով, ժամանակակից երիտասարդության ընտրական վարքագծի վրա գաղափարական շահադրդվածությունները չեն ազդում, ինչպես և պրագմատիկները: Որպես հետևանք, երիտասարդությունը հայտնվում է պատահական, չհամակարգված ներգործությունների ազդեցության տակ:

Մենք կարծում ենք՝ պետության կարևոր գործառույթը այսօր պետք է լինի ցույց տալ երիտասարդությանը, որ պետականությունը, առաջին հերթին, հենց իրեն է անհրաժեշտ, որ դա մեր պետությունն է, ու նա կոչված է պաշտպանել մեր շահերը բոլոր մակարդակներում: Այստեղ հատուկ դեր պետք է խաղան լրատվամիջոցները, որոնք երիտասարդներին «ամբիոն» են տրամադրում իրենց շահերը արտահայտելու համար:

Ժառանգելով հասարակության և պետության զարգացման բոլոր խնդիրները և ձեռքբերումները, երիտասարդությունը դառնում է երկրի ապագայի կերպարը: Իր հերթին, երիտասարդների ներգրավումը ընտրական գործընթացին ռազմավարական նշանակություն ունի ոչ միայն քարոզարշավներիի ընթացքում:

Երիտասարդության օտարումը պետությունից և նրա օգտագործումը ընտրական գործընթացում որպես որոշ նպատակների հասնելու միջոց հանգեցնում է հանրաքվեներին մասնակցելու մակարդակի նվազեցմանը: Այդ միտումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետությունը չի նպաստում երիտասարդների ներթափանցմանը սոցիալական-քաղաքական ինստիտուտներ, իսկ համապատասխան փորձ չունենալով,

երիտասարդները դառնում են քաղաքական գործիչների շահարկման օբյեկտ և այլևս չեն ցանկանում կրկնել քաղաքական մասնակցության իրենց դառը փորձը: Երիտասարդության քաղաքական ակտիվությունը հայտնվում է փակուղում:

Երիտասարդության ընտրական ակտիվության էսկալացման վրա ազդելու են տարբեր գործոններ: Օրինակ, ինչ տեմպով է պետությունը արձագանքելու երիտասարդության շրջանում ցանկացած իշխանական և հասարակական ինստիտուտներից հեռանալու գերակշռող ցանկությանը, կամ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում վերափոխումների գործընթացում երիտասարդների ակտիվ ընդգրկման իրական պայմանների ստեղծման համար պետության նպատակաուղղվածությունը:

Համաշխարհային զարգացման հաստատված միտումն է հաղորդակցական և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների լայն կիրառումը: Այդ գործընթացում հատուկ դերը պատկանում է Ինտերնետ գլոբալ ցանցին՝ զանգվածային հաղորդակցության հատուկ ինտերակտիվ գործիքին, որն ակտիվորեն օգտագործվում է քաղաքական գործընթացում, հաջողությամբ մրցակցելով ավանդական ինստիտուտների և մեխանիզմների հետ:

Ինտերնետը համընդանուր նշանակություն է ձեռք բերում երիտասարդության համար, ինչը վկայում է աճող սերնդի նոր տեղեկատվական-հաղորդակցական ավանդույթների առաջացման մասին: Նոր իրականության կարևորագույն հատկանիշներն են գլոբալացումն ու ինտերակտիվությունը: Ինտերնետը թույլ է տալիս շրջանցել ուղղակի քաղաքական մասնակցության ինչպես աշխարհագրական, այնպես էլ կառուցվածքային սահմանափակումները: Քաղաքական հաղորդակցության ավանդական (ոչ նորացված) միջոցները ներկա պահին չեն ապահովում բնակչության ընտրական ակտիվության պատշաճ մակարդակը, ինչի համեմատությամբ ընդգծվում է համաշխարհային ոստայնի ակտիվ ներգրավվածությունը քաղաքականության մեջ: Մեր օրերում իշխանության համար պայքարում հաղթանակ կարելի է ակնկալել միայն այն պայմանով, եթե ավանդական ԶԼՄ-ները հասանելի են: Միևնույն ժամանակ, ամենավերջին ընտրարշավների փորձը բացահայտում է, որ ձևավորվել է տեղեկատվություն նոր ուղի, որով հարմար է ազդել ընտրազանգվածի վրա, և միևնույն ժամանակ, ավելի քիչ աշխատատար է, դա Ինտերնետն է: Կապի այս միջոցի հիմնական առավելությունը նրա արագությունն է և տեղեկատվություն հրապարակելու հեշտությունը: Ինտերնետ ցանցի հետ են կապված երիտասարդների քաղաքական չմասնակցության կարծրատիպը հաղթահարելու հույսերը:

Որպես կապի ինտերակտիվ գործիք, և տեղեկատվությունն արագ ստանալու միջոց, այն դառնում է քաղաքական տեղեկատվություն տարածելու հիմնական աղբյուրը, իսկ ավանդական ԶԼՄ-ները մղվում են հետին պլան: Եվ համացանցի հիմնական ակտորը դառնում է երիտասարդությունը, այստեղ նա կարող է ուղղակի հարցով դիմնել ցանկացած քաղաքական գործչի: Ինտերնետն այսօր գործող տեղեկատվական գործիք է ծառայում պետության, կուսակցությունների և հասարակական շարժումների, բիզնեսների ներկայացուցիչների և առանձին քաղաքացիների համար: Ինչպես ավանդական ԶԼՄ-ների դեպքում, Ինտերնետ ցանցի կիրառման ոլորտների կայուն ընդլայնումը և, համապատասխանաբար, նրա ազդեցությունը կարող է սպառնալ նրա մանիպուլատիվ ներգործության միջոցի վերածվելուն, այդ թվում, քաղաքական գործընթացի սուբյեկտների կողմից:

Իսկ ընդհանուր առմամբ, կարելի է հաստատել, որ ԶԼՄ-ների հնարավորությունները քաղաքացիների գիտակցության և քաղաքական վարքի վրա ազդեցության առումով բոլորովին անսահման չեն: Բնակչության կողմից նկատելի է քաղաքական տեղեկատվության սպառման կրճատում, ընկնում է նաև ԶԼՄ - ների հաղորդումների հանդեպ վստահությունը:

Վերը շարադրվածը չի նշանակում, որ նրանց ազդեցությունը վերացել է: Բանն այն է, որ հասարակության ներսում կատարվել է ԶԼՄ-ների հետ համագործակցության ակտիվության հատկանիշներով տարբերակման գործընթաց, մասնավորապես, տեղեկատվության ազդեցությանը արձագանքելու ինտենսիվության հատկանիշով: Հասարակական կարծիքը ԶԼՄ-ների գործունեության մասին մնում է երկակի և հակասական:

ԶԼՄ-ների ընկալման էական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել հասարակության մեջ վերջին երկու տասնամյակի ընթացքում, թույլ են տալիս կատարել որոշ ընդհանրացնող հետևություններ: Քաղաքական անկայունության ժամանակներում կամ հեղափոխական ցնցումների անհատի քաղաքական ինքնության հաստատման գործընթացը պահանջում է ավելի լայնածավալ տեղեկատվության օգտագործում, ԶՀՄ-ների դերն ու ազդեցությունը բարձրանում են: Եվ ընդհակառակը, կայուն շրջաններում, երբ քաղաքացիները զբաղված են իրենց սեփական կյանքով, ամենօրյա կենցաղով, լրատվամիջոցները կորցնում են ազդեցությունը, դրանք կարևոր են մնում միայն քաղաքական էլիտա կոչվող մարդկանց կոնկրետ կատեգորիայի համար:

Ամփոփելով այս բաժնում շարադրված ամենը, նշենք, որ առանց ԶԼՄ-ների ներգրավման ընտրական քաղաքական գործընթացն անհնարին է: Այսօր համարելով որպես առաջնային և հիմնական նախընտրական տեխնոլոգիա հանրության հետ աշխատանքը, հանդիպումները ընտրազանգվածի հետ, քարոզչական ակցիաների անցկացումը, և որպես երկրորդական՝ ԶԼՄ-ների միջոցով քարոզչությունը ընտրազանգվածում, մենք կարող ենք փաստել, որ մեր օրերում լրատվամիջոցների հետ աշխատանքի առաջատար նշանակությունը աճում է, քանի որ դրանք շատ լայն թիրախային լսարանում լուսաբանման հնարավորություն են ապահովում:

Նրանից, թե ինչ դիրքորոշում են ընդունում լրատվամիջոցները քաղաքական և այլ գործընթացների լուսաբանման հարցում, մեծապես կախված է լինելու հասարակության ապագան: ԶԼՄ-ների մասնակցությունը նախընտրական քարոզարշավին պահանջում է իրավական լուրջ կարգավորում: Խախտումները, որ կարող են առաջանալ նախընտրական քարոզարշավի ընթացքում, հատկապես վտանգավոր են, եթե նրանք ի հայտ են գալիս ինքնին ԶԼՄ-ներից, քանի որ շատ հաճախ տեղեկատվական այդ գործիքները ազդեցություն ունեն քաղաքացիների քաղաքական մասնակցության աստիճանի վրա և մարդկանց վերջնական ընտրության վրա:

Ընտրական ցիկլերում մեդիակրատիայի դերը զգալիորեն աճեց. քաղաքական կուսակցություններին աջակցության կամ ընդդեմ զանգվածային հանրահավաքները (խորհրդարանական ընտրություններին ընդառաջ), և այնուհետև, թեկնածուների պայքարը նախագահական մրցավազքում հաճախակի նախաձեռնվում էին սոցիալական ցանցերում կոչերի միջոցով երիտասարդական շարժումների և համայնքային նախաձեռնությունների անունից:

Ընտրական գործընթացի վրա որպես քաղաքական գործընթացի ակտոր երիտասարդության ազդեցության բնույթը բնութագրենք որպես երկակի: Մի կողմից, ամրապնդվել է երիտասարդության դերը քաղաքական գործընթացում (այդ մասին են փաստում սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները): Իսկ մյուս կողմից, քաղաքական աբսենտեիզմը բացասական միտումներ է կրում, և երիտասարդության շրջանում քաղաքականության հանդեպ հետաքրքրության պակասը փոխարինվում է այլ արժեքներին ձգտելու ցանկությամբ, այդ թվում, նյութական բնույթի, կամ վերափոխվում է սոցիալական նիհիլիզմի ձևաչափով:

Այսպիսով, ընտրական քաղաքական գործընթացում երիտասարդության մասնակցության վրա ազդում են. Սեփական կենսափորձը, միջանձնային հաղորդակցումը; հասարակական և քաղաքական ինստիտուտները, ԶԼՄ-ները և ԶՀՄ-ները, սոցիալական շերտավորումը, նրանց սոցիալ-քաղաքական շահերի ներկայացման ինստիտուալիզացված և ոչ ինստիտուալիզացված ձևերը, ընտրական գործընթացի փուլը, տվյալ փուլում իրենց հզորության ներուժը իրականացնել ձգտող քաղաքական ուժերի առջև ծառացած մարտահրավերները:

Ամփոփելով ատենախոսական հետազոտության առաջին գլխի արդյունքները, ընդգծենք, որ քաղաքականության ակտոր և սուբյեկտ հայեցակարգային հասկացությունները նույնանում են, նշելով երիտասարդությունը որպես քաղաքական համակարգում հասարակության զարգացման պոտենցիալ ռեսուրս, որը ի վիճակի է ընդհանուր նպատակների, շահերի և արժեքների իրականացման համար հասարակական ուժերի հետ կառուցողական փոխհամագործակցության գնալ:

Ժամանակակից քաղաքական գործընթացի ակտոր երիտասարդության փոխակերպման պայմանները կապված են քաղաքական ռեժիմի տեսակի, քաղաքական գործընթացի ձևի և փուլի, պաշտոնական իշխանական կառույցներին ԶԼՄ-ների հաշվետվողականության աստիճանի, սոցիալ-քաղաքական կյանքի տեղեկատվական բաղադրիչի զարգացման մակարդակի, ժամանակակից «սպառողական հասարակության» իդեալների տարածման աստիճանի հետ:

Պարզվում է, որ քաղաքացիական հասարակության ակտիվ սուբյեկտի դաստիարակության գործընթացը պետք է սկսել անձի ձևավորումից, այդպիսով, պետական իշխանությունը և հասարակությունը պետք է ձգտեն ստեղծել պայմաններ աճող սերնդի ինքնառեալիզացման և քաղաքական գործընթացներում նրա ակտիվ ներգրավվածության համար:

Հանդես գալով որպես քաղաքական գործընթացի ակտորներից մեկը այլ սոցիալական խմբերի, ինչպես նաև քաղաքական էլիտաների, հասարակական շարժումների և միավորումների, ասոցիացիաների (օրինակ, գործարար միությունների), պետության (օրինակ, գլոբալ քաղաքական գործընթացներում) հետ մեկտեղ, երիտասարդությունը քաղաքական գործընթացում ոչ միանշանակ դեր է կատարում:

Կարծիք կա, որ երիտասարդությունը բնութագրվում է քաղաքացիական պասիվությամբ և քաղաքական անտարբերությամբ, բացասաբար է տրամադրված

պետական իշխանական մարմինների առնչությամբ, բացառելով քաղաքական կյանքում սեփական մասնակցության հնարավորությունը, բայց, չնայած դրան, ժամանակակից երիտասարդությունը բնութագրվում է քաղաքականության հանդեպ հետաքրքրության աստիճանի ավելացմամբ:

Մենք կարծում ենք՝ երիտասարդության ներուժը որպես արդիականացման և քաղաքական գործընթացների ռեսուրս դեռ ոչ լրիվ է օգտագործվում, այնուամենայնիվ, այդ տարիքային խմբի անդամները որոշ ժամանակ անց կզբաղեցնեն տնտեսական, քաղաքական և հասարակության այլ ոլորտներում առաջատար դիրքերը: Այս կապակցությամբ արդեն այսօր պետք է տրամադրել երիտասարդությանը հասարակական կյանքում մասնակցելու հնարավորությունները, ինչը չի սահմանափակվում միայն երիտասարդներին իրենց կարծիքը արտահայտելու օգնությամբ: Ներգրավել ժամանակակից երիտասարդներին տարբեր երիտասարդական խմբերի գործունեության մեջ հնարավոր է միայն այն դեպքում, եթե նրանց համոզել, որ նրանք կկարողանան ազդել քաղաքական գործընթացների վրա որպես իշխանական ռեսուրս և քաղաքական առաջնորդների և վերնախավի լեգիտիմության աջակից: Երիտասարդ սերնդի ներգրավվածությունը քաղաքական գործընթացում պետք է ապահովվի երիտասարդության վերաբերյալ պետաության հետևողական քաղաքականությամբ. Իշխանական կառույցների երիտասարդացմամբ, երիտասարդական կազմակերպությունների ստեղծմամբ, երիտասարդական քաղաքական էլիտաների կազմավորմամբ և քաղաքական ակտիվության նոր օրինակների ձևավորմամբ:

Իշխանության տեղական և մարզային մարմինները պետք է խրախուսեն և սատարեն ապագային միտված երիտասարդների գործունեությունը: Երիտասարդությունը կարիք ունի արդիականացման փոփոխությունների հստակ ձևակերպված հեռանկար տեսնել: Համապատասխանաբար, պետությանը անհրաժեշտ է ոչ միայն բարենպաստ նյութական պայմաններ ստեղծել երիտասարդական հասարակական միավորումների և կազմակերպությունների համար, այլ և ճանաչել երիտասարդությունը հասարակության սոցիալական ռազմավարական նշանակալի ռեսուրս, որի ներուժից է կախված լինելու երկրի սոցիալ-քաղաքական և հոգևոր-մշակութային զարգացումը:

Այսպիսով, երիտասարդությունը կատարում է իրավահաջորդողի դեր և կուտակում է նախորդ սերունդների պատմական փորձը, դառնում է նորարարական հզոր ռեսուրս, ստանալով արդիականացման ընթացքում քաղաքական ակտիվության արդյունքը:

ԳԼՈՒԽ 2: ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1. Հոգևոր ընտրանու դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում

Պետական կառավարումը հաճախ սահմանվում է, որպես կառավարող սուբյեկտի կողմից կառավարվող օբյեկտի նկատմամբ կիրառվող անընդհատ ազդեցություն, որի նպատակն է օբյեկտի վիճակը բնութագրող պարամետրերի փոփոխության շնորհիվ այն դեպի ցանկալի վիճակ մղելը[53]:

Ըստ մեկ այլ սահմանման օրենքների և նորմատիվ ակտերի հիման վրա գործող այդ կառավարող սուբյեկտներն են համապետական և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպություններն և այլ ոչ պետական կազմակերպությունները, որոնք օժտված են համապատասխան լիազորություններով: Սակայն պետական կառավարումը լինելով պրոցես / գործընթաց /, այլ ոչ թե ստատիկ երևույթ իր մեջ ներառում է բազմաթիվ լատենտ երևույթներ [54]:

Ըստ պրոֆեսոր Մ.Մարգարյանի՝ ընտրանին կառավարողների, մտածողների և հասարաքաղաքական արժեքները համակարգողների խավն է [55]:Էլիտաների բազմաթիվ տեսակների մեջ հոգևոր դասի էլիտան սովորաբար դիտարիկվում է մշակութային էլիտայի համատեքստում: Այս երևույթը բացատրվում է նաև այն փաստով, որ կրոնը միջազգային գրականության մեջ դիտարկվում է որպես մշակութային երևույթ:

Պոստմոդեռնի դարաշրջանում կրոնը հաճախ դիտարկվում է նորագույն արժեքաբանության հետ բախման պրիզմայով: Այնուամենայնիվ կրոնը և հոգևորական դասը շարունակում է մնալ մարդկության համար modus vivendi-ի թելադրողներից մեկը: Դժվար կլինի սահմանել հոգևոր դասի ընտրանու դերը պետական կառավարման գործընթացում, հաշվի առնելով այն փաստը, որ դրա ուսումնասիրումը է գտնվում է լատենտոլոգիայի տիրույթում: Այդ պատճառով հոդվածի հիմնադրության ապացուցման համար մենք կդիտարկենք կրոնի դերը սոցիումի կյանքում, որպես մարդկային պահանջմունքների և դրանց հակասությունների կանոնակարգող օղակ:

Ինչպես հայտնի է՝ սեկուլարիզացիան 15-րդ և 16-րդ դարերում սկսած հասարակական կյանքում կրոնի դերի նվազման տենդենցն էր: Եվրոպայում այն

---

[53] Քալաշյան Վ. Պետական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները և առաջնահերթությունները. երեվան, 2002, էջ 19

[54] Топорнин Б.Н.. Юридическая энциклопедия, М.: Юристъ, 2001, с.229

[55] Մ.Մարգարյան. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱ, Պետական Ծառայություն, Երևան, 1999, էջ 4

ուղեկցվում էր բուրժուական դասակարգի դերի բարձրացմամբ [56]: Սակայն չնայած դրա բուռն զարգացմանը վստահաբար կարող ենք նշել, որ վաղ է խոսել կրոնի ճգնաժամի մասին: Ըստ Encyclopedia Britannica-ի տվյալների աշխարհում աթեիստների թիվը կազմում է ընդամենը 220 մլն, այսինքն կրոնը և հավատքը շարունակում են առանցքային դեր ունենալ հասարակության կյանքում:

Կրոնի դերի պահպանման երևույթը տեղ է գտել մի շարք մտածողների աշխատություններում: Իրականացվում էին հետազոտություններ, որոնք ուղղված էին ուսումնասիրելու հավատքի և կրոնի դերի կերպափոխումը արդի հասարակարգերում: Այսպես օրինակ պրոֆեսոր Ա.Դուգինը իր աշխատության մեջ նշում է, որ կրոնը սեկուլարիզացիային հակադրվեց հիմնական երեք գործքիներով. [57]

- Ուղղակի հակագրոհ / կրոնական պահպանողականություն /
- Ինդիվիդուալացում և անցում ենթամշակույթների մակարդակի
- Ադապտացում

Մերօրյա կրոնի նմանօրինակ որակական փոփոխություններին, որոնք անխուսափելիորեն բերում են դրա հանրայնացմանը, իրենց աշխատություններում անդրադարձել են մի շարք մտածողներ՝ տալով այդ գործընթացին ամենատարբեր անվանումներ. Փ. Բերգերը այն անվանել է “դեսեկուլարիզացիա” [58], Մ. Հորքսը՝ “ռեսպիրիտուալիզացիա” [59],Ջ.Քազանովան՝ “դեպրիվատիզացիա” [60], Մ. Ռիսբրոթը այն կոչեց “կրոնների վերադարձ” [61], իսկ Փ. Հիլլասը ընտրեց “կրոնական հեղափոխություն” եզրույթը [62].

Որպես այս գործընթացի հիմնական դրդապատճառ հաճախ նշվում են գլոբալիզացիոն գործընթացները և, այսպես կոչված, քաղաքական իսլամի առաջացումը՝ իսլամական աշխարհի միավորումը այս կամ այն քաղաքական խնդրի լուծման համար:

---

[56] Гараджа В.И..Социология Религии. М.: ИНФРА-М, 2005, с.280

[57] Материалы семинаров по проблемам религиоведения и традиционализма, ВЫПУСК 2, Евразийское движение, Москва, 2011, с.88

[58] Berger P.L. The Desecularisation of the World: Resurgent religion and world politics. Washington, 1999, 143 p.

[59] Matthias H. Trendbuch, Bd. Trendreport. Munich, 1993, 198 p.

[60] Casanova J. Public Religion in the Modern World. Chicago University of Chicago Press, 1994, 330 p.

[61] Riesebrodt M. Die Ruckkehr der Religionen: Fundamentalismus und der 'Kampf der Kulturen. Munchen, 2000, 158 s.

[62] Heelas P. Detraditionalizing The Stady of Religion // The Future of Study of Religion. Boston, 2000, 306 p.

Մերօրյա գլոբալիզացվող աշխարհում առկա է անձի ինքնության պահպանման խնդիր, որի լուծումը անհատը հաճախ գտնում է կրոնական ինքնանույնականացման մեջ: Համաշխարհային քաղաքական թատերաբեմում իսլամի միավորված դերակատարությունը համախմբման ազդակ հանդիսացավ նաև քրիստոնեական դավանանքի հետևորդներին գոնե ներպետական մակարդակում:

Պետություն-կրոն-անհատ եռաչափ համակարգում առկա գործընթացների և ինստիտուտների վերլուծության համատեքստում հետաքրքրքական է ֆրանսիացի մտածող Ժ.Ժ. Ռուսսոյի առաջ բերած կրոնի երեք տեսակները՝ մարդու կամ անհատի կրոն, հոգևորականի կրոն և քաղաքացու կամ քաղաքացիական կրոն: Առաջին տեսակը չունի եկեղեցի կամ խորան դրա դասական ընկալմամաբ և կարող է դիտարկվել միմյայն իրական թեոլոգիայի համատեքստում: Երկրորդը խիստ ծիսական է, ստիպում է դավանողին ենթարկվել երկու տարբեր, հաճախ միմյանց հակասող, նորմերային համակարգի: Երրորդը կրոնը դիտարկում է խիստ ներպետական համատեքստում՝ հակադրելով այն երկրի սահմաններից դուրս գտնվող աշխարհին: Այն ունի սեփական դոգմատները, տալիս է անհատին տեղական մակարդակում գտնվող պատրոններին և նորմերին հետևելու հնարավորություն: Վերջինիս արժեքային համակարգը էապես ներազդում է քաղաքացու ինքնանույնականացման վրա՝ տալով պետական ինստիտուտներին զգալիորեն ավելի մեծ ազդեցություն անձի մտածողության վրա: Այս կրոնը միավորում է Աստվածապաշտությունը և օրինապաշտությունը: [63]:

Նշենք նաև, որ Ռուսսոյի տեսությունը զարգացրել է ամերիկացի մտածող Ռոբերտ Բելլան՝ պրոյեկտելով այն Ամերիկայի հասարակության վրա: Իր աշխատության մեջ նա վերլուծում է Ջոն Քեննեդիի երդմնակալության ճառը, որտեղ նախագահը ազգին ուղղված իր ելույթում բազմիցս հղումներ է կատարում Աստծուն[64]:

Հասարակության վրա կրոնի ազդեցության մեկ այլ հետաքրքրքական վերլուծություն է ներկայացրել Էմիլ Դյուրկգեյմը: Վերլուծելով ավտրալական ցեղերի տոտեմային պաշտանմունքները և զարգացման ավելի բարձր մակարդակի վրա գտնվող հասարակարգերում հավատքի դրսևորումները՝ մտածողը եկել է այն եզրակացության, որ հավատքի գերբնական ուժի ազդեցությունը կարող է ունենալ պրակտիկ մեկնում՝ այն

[63] Ж.Ж. Руссо. Об Общественном договоре, или Принципы политического Права. М.: "КАНОН-пресс", "Кучково поле", 1998, с.370-380

[64] Robert N. Bellah, Civil Religion in America, Journal of the American Academy of Arts and Sciences, "Religion in America," 1967, Vol. 96, No. 1, p1-21

ազդում է միմյայն հավատացյալ համայնքի անդամների վրա: Այլ կերպ ասած, եթե առկա են մարդիկ, ովքեր դեռևս հավատում են, որ Տամպլիերների օրդենը չի վերացել և ունի իր լուրջ դերակատարությունը համաշխարհային քաղաքականության լատենտ խաղերում, ապա հավանական է, որ կառաջանան չհիմնավորված ամբիցիաներով տառապող և կենտրոնացված կառավարումից զուրկ խմբակներ, որոնք կփորձեն իրականացնել այդ գործառությները: Է.Դյուրկգեյմը նշում էր նաև որ տոտեմային պաշտանմունքի նկատմամբ անհատների ինքնանույնականացումը հնարավորություն էր տալիս իրենց օգտվել իրենց համայնքի համար սակրալ էներգիայի աղբյուրից, որը ինքնստինքյան բերում էր համայնքի ամբողջականության պահպանմանը: [65]

Դյուրկգեյմը գիտական շրջանառության մեջ է ներդնում նաև սոցիալական անոմիայի երևույթը, որը ենթադրում է հասարակության արժեքաբանական և նորմային համակարգի կազմաքանդում: Այլ կերպ ասած արժեքային անարխիա, արժեքային վակոուում որը բերում է հասարակության մտածողության աղճատմանը: Անոմիայի վերացման համար մտածողը առաջարկում է երկու ուղի, որոնք մենք պայմանականորեն կանվանենք պետականակենտրոն և հասարակակենտրոն[66]:

Առաջինի պարագայում պետական ինստիտուտները իրենց վրա են վերցնում հասարակության արժեքային համախմբման գործառույթը, իսկ երկրորդ դեպքում հասարակությունը ինքնակազմակերպվում է՝ ստեղծելով իր համար ընդունելի արժեքային կանոնակարգ: Երկու դեպքում էլ անուրանալի է կրոնի դերը թե որպես պետության կողմից թելադրվող արժեհամակարգի քարոզիչ, և թե որպես հասարակության ինքնակազմակերպման առանցք:

Կրոնի սոցիոլոգիայի ուսումնասիրմամբ զբաղվող Մաքս Վեբերը, ի տարբերություն Դյուրգկեյմի, իր աշխատության մեջ փորձել է վերհանել հավատացյալ անհատի գործունեության իմաստավորումը: Այլ կերպ ասած՝ Վեբերը փորձել է վերլուծել անհատի շահադրդման մեխանիզմները կրոնի համատեքստում: Հետաքրքրական են նրա հետազոտությունները, որտեղ տարվում է են զուգահեռներ բողոքականության և վաղ կապիտալիզմնի միջև: Վեբերը նշում է, որ բողոքականության ուսմունքների մեջ նկարագրված վերաբերմունքը բազմաթիվ ընդհանրություններ ունի կապիտալիստական

[65]Л.И.Василенко, Введение в философию религии, Издательство ПСТГУ, Москва, 2009, с.221-228

[66] Дюркгейм Э., Парсонс Т., Мертон Р. и др. // Хрестоматия. Социология: классические и современные парадигмы. - М., 2002. - 50 с. 104.

աշխատանքային էթիկայի հետ: Այս համատեքստում կրոնը կարող է դիտվել որպես պետության կողմից անձի շահադրդման գործիք: Սույն հետազոտության գաղափարը Վեբերը հղացել է հաշվի առնելով այն փաստը, որ կոմերցիոն կազմակերպությունների կառավարման բարձրագույն օղակներում և մրցունակ և արդյունավետ աշխատուժի մեջ գերակշռում էին բողոքականության դավանողները:

Հոգևորական դասը մեծ ազդեցություն է ունեցալ մի շարք պետությունների կառավարման համակարգերում: Օրինակ՝ Ռուսաստանում այն օգտագործվում էր թե քրիստոնեական, և թե մուսուլմանական համայքների կառավարման համար: Ռուսական Ուղղափառ եկեղեցու կոլլեգիալ կառավարման մարմինը՝ Սինոդը, 1917 թվականի մարտի 2-ին արդեն իսկ ընդունել էր երկրի կառավարման նոր վարչակարգը՝ փաստացիորեն մերժելով ցարական իշխանությունը: Մուսուլմանական համայնքի կառավարման համար դեռևս Եկատերինա 2-րդի օրոք ստեղծվեց մուֆթիատների ինստիտուտը, որը ցայսօր մուսուլմանական համայնքների կառավարման գործի ք է Կրեմլի ձեռքում:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ համաշխարհային քաղաքական թատերահարթակի խոշորագույն վերպետական դերակատարներից մեկը՝ Եվրոպական Միությունը, տնտեսական համագործակցության հիմքերից զատ հիմնվում է նաև ընդհանրական քրիստոնեական արժեքների վրա:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունը՝ նշենք, որ ՀՀ տիտղոսակիր ընտրանու շրջանում իրականացված հարցումների արդյունքում անհատները իրենց ինքնանույնականացնում են որպես հայ, ՀՀ քաղաքացի և քրիստոնյա: Այսինքն կրոնի դերը ՀՀ տիտղոսակիր ընտրանու շրջանում անուրանալի է:

Ինչպես հայտնի է ծեսերի դերը չափազանց բարձր է ազգի ինքնանույնականացման խնդիրների համատեքստում: Այս հաամտեքստում հարկ ենք համարում նշել նաև որոշակի ծեսերի և արարողակարգերի ժողովրդականության վերականգնումը՝ տնօրինեք, մեռելոց, հոգեհանգստի արարողության իրականացում եկեղոցում և այլն:

Կրոնի դերի արժևորման տիրույթում անչափ կարևոր է նաև երկրի իշխանական վերնախավի և անձամբ ՀՀ 3-րդ նախագահի երդմնակալության և մի շարք այլ ելույթներում անհամեմատ ավելի հաճախ Աստծո հիշատակումը: Սա կարող է դիտարկվել որպես պետության կողմից արժեհամակարգի տրանսֆորմացիայի ընտրված ուղենիշ:

Ի հավելումն նշենք, որ ըստ “Հողի հարկի մասին” ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների Հայ Առաքելական Եկեղեցին ազատված է սույն հարկավճարից [67]:

Կրոնը Հարավային Կովկասում երբեմն օգտագործվում է նաև գեոպոլիտիկ գործընթացների տիրույթում: Մասնավորապես Վրաստանում, հաշվի առնելով դեսեկուլարիզացիայի բարձր մակարդակը և եկեղեցու ազդեցիկ դերը պետական կառավարման լատենտ և բացահայտ գործընթացներում, կրոնի ծայրահեղ պահպանողական մոտեցումները հաճախ արհեստականորեն հակադրվում են հանդուրժողական արժեքաբանությանը: Այս երևույթները որոշ արևմտյան փորձագետների կողմից որակվում են որպես հոմոֆոբիայի դրսևորումներ և խոչընդոտում են երկրի եվրոպամետ արտաքին քաղաքականության հանրայնացմանը:

Հաշվի առնելով Հայ առաքելական եկեղեցու բացառիկ դերակատարումը ՀՀ հասարակական կյանքում՝ եկեղեցու երիտասարդական կառույցները (երիտասարդաց և հայորդաց տները և այլն) կարող են ստանձնել երիտասարդների քաղաքական գրագիտության և քաղաքացիական դաստիարակության դերակատարումը: Հասարակության ակտիվ անդամ դառնալով՝ երիտասարդները կարող են ծավալել իրենց գործունեությունը անցկացնելով որոշումները և շահադրդումները քրիստոնեական ուսմունքների պարադիգմով:

Հայ առաքելական եկեղեցու դերը Հայաստանի Հանրապետության հասարակական- քաղաքական կյանքում հստակ արտացոլվեց 2015 թվականին Գյումրիում ռուս զինծառայող Վալերի Պերմյակովի կողմից Ավետիսյանների ընտանիքի սպանությունից տեղի ունեցող ցույցերի ժամանակ: Ցուցարարների գործողությունների կազմակերպման և ոստիկանների հետ բախումների բացառման գործում մեծ դերկատարում ունեցավ ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Աջապանյանը, այլ նաև երիտասարդաց միության մի շարք ներկայացուցիչներ, որոնցից մեկին էլ ցուցարարները պատվիրակեցին մուտք գործել ռուսական 102-րդ ռազմաբազա և համոզվել, որ Վալերի Պերմյակովը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Հիշյալ դեպքը հստակորեն ցույց է տալիս Հայ առաքելական եկեղեցու դերակատարումը երիտասարդների քաղաքական սոցիալականացման, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակներում մեդիացիոն

[67] ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ, Հոդված 10

գործընթացներում: Հաշվի առնելով եկեղեցու երիտասարդաց միությունները պոտենցիալը անհրաժեշտ է լայնորեն ներգրավել դրանց անդամներին ոչ միայն կրոնական, այլ նաև հասարակական նշանակություն ունեցող խնդիրների լուծման մեջ:[68]

2.2 Կրթության դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում

Քաղաքական սոցիալականացման գործընթացը բազմաշերտ հասկացություն է: Քաղաքական սոցիալականացման կողմերից մեկը կրթությունն է, ուսուցումն ու դաստիարակությունը: Ամերիկացի հանրահայտ քաղաքագետ Ֆ. Գրիսթայնը քաղաքական սոցիալականացումը նկարագրում է հետևյալ կերպ. «Քաղաքական սոցիալականացում ասելով պետք է հասկանալ ուսուցման ցանկացած տեսակ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ, նպատակային և չպլանավորված, կյանքի ցանկացած փուլում՝ ներառյալ ոչ միայն բացահայտ արտահայտված քաղաքական ուսուցումն, այլև ապաքաղաքական ուսուցումը, որն ազդում է քաղաքական վարքագծի վրա: Օրինակ՝ համապատասխան քաղաքական վարքագծի յուրացումն ու համապատասխան քաղաքական խառնվածքի ձեռքբերումը» [69]:

Քաղաքական սոցիալականացման գործընթացի վրա հնարավոր է ազդել կառավարելով տեղեկատվության պահանջարկը: Եթե անհատը մանկուց տեղեկատվությունը ստանում է որոշակի լույսի ներքո, ապա այն ազդում է նրա քաղաքական հայացքների ձևավորման վրա: Հետագայում անհատն սկսում է ընտրողաբար ընկալել տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, քաղաքական համակարգերի տրանսֆորմացիայի և մոդերնիզացիայի դեպքում հայտնվելով սթրեսային իրավիճակում, անհատը մերժում է նոր կարգն ու արժեքները՝ այդպիսով խոչընդոտելով հասարակության հետագա զարգացմանը: Այլ կերպ ասած, չունենալով կատարվածին օբյեկտիվ գնահատական տալու ունակություններ, անհատը հեշտությամբ ենթարկվում է քաղաքական մանիպուլացիաների: Քաղաքական մշակույթի և սոցիալականացման բարձր մակարդակ ունեցող հասարակություններն ավելի հեշտ կառավարելի են, քանի որ այնտեղ ինքնակազմակերպման և ինքնազարգացման մեխանիզմներ են ներդրված:

Քաղաքական սոցիալականացման վրա ազդեցություն ունեցող բոլոր սուբյեկտները կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի՝

---

[68] Մամիջանյան Հ., Հոգևոր դասի ընտրանին որպես պետական կառավարման դերակատար.ապաաշխարհիկացում.Հանրային Կառավարում, N5, 2014,էջ 133-139

[69] Greenstein F. A note on the ambiguity of political socialization: definitions, criticism and strategies of inquiry - Boston, 1980, 90 p.

- Դաստիարակություն՝ ընտանիք, եկեղեցի, ոչ ֆորմալ խմբեր
- Կրթություն՝ դպրոց, բուհ, ոչ ֆորմալ կրթություն
- ԶԼՄ-ներ
- Քաղաքական գործընթացների հիմնական դերակատարներ՝ պետություն, քաղաքական կուսակցություններ և այլն:

Քաղաքական սոցիալականացման դասակարգումն այդ գործընթացը ժամանակային սկզբունքով բաժանում է առաջնային և երկրորդային փուլերի: Քաղաքական սոցիալականացման առաջնային փուլը տեղի է ունենում ընտանիքում. անհատը յուրացնում է լեզուն, նրան ներկայացվում են բարոյական հիմնական նորմերը, որոնք ընդունված են տվյալ սոցիումում՝ ելնելով տարիքով և սեռով պայմանավորված դերերից: Երկրորդային քաղաքական սոցիալականացումը տեղի է ունենում անհատի մոտ արդեն իսկ ձևավորված քաղաքական հայացքների հիման վրա: Որպես կանոն, երկրորդ փուլը կամ համընկնում է ուղղակի քաղաքական ակտիվության հետ, կամ նախորդում է դրան: Երկրորդային սոցիալականացման գոյության փաստը ենթադրում է, որ առաջնային փուլի արդյունքները ենթակա են փոփոխման: [70]

Քաղաքագետներն առանձնացնում են անմիջական սոցիալականացման մի քանի տեսակներ՝

- Այլ անհատների քաղաքական հայացքների և վարքագծի իմիտացիա. քաղաքական հայացքները փոխառնվում են ծնողներից, ազգականներից, կուսակցական առաջնորդներից և այլն:
- Կանխորոշող. Անհատները յուրացնում են այնպիսի քաղաքական հայացքներ և դերեր, որոնք համապատասխանում են այն ապագա դերերին, որոնք իրենք իրենց համար սահմանել են քաղաքականության մեջ:
- Նպատակաուղղված ազդեցություն. Քաղաքական սոցիալականացում ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցների ազդեցությամբ՝ կրթություն, կրոն և այլն:
- Նպատակաուղղված կամ պատահականորեն քաղաքական փորձառության ձեռքբերում. նախընտրական քարոզչություն, իշխանության ներկայացուցիչների հետ ունեցած առնչություններ:

[70] Easton D. Children in the political system: origins of political legitimacy - New York: McGraw-Hill, 1969, p.114

Քաղաքական սոցիալականացման վրա ազդող երևույթները փոխկապակցված են:[71] Ավելի վաղ ընդունված էր համարել, որ քաղաքական սոցիալականացման հարցում որոշիչ դերակատարում ունեն մարդկային հարաբերությունների ապաքաղաքական տեսակները (ընտանիք, դպրոց և այլն) մանկության և պատանեկության շրջանում: Ավելի ուշ գիտնականները եկան այն եզրակացությանը, որ այդ հիպոթեզը հիմնված է ենթադրությունների վրա և չի կարող ընդհանուր օրինաչափություն նշանակել: Մանկական և պատանեկան ապաքաղաքական հարաբերությունները լայն ազդեցություն ունեն անհատի քաղաքական համոզմունքների վրա, սակայն այս գործոնների և ավելի ուշ շրջանի քաղաքական վարքագծի միջև ընկած են շատ այլ գործոններ, որոնք ավելի լուրջ ազդեցություն ունեն անհատի քաղաքական հայացքների ձևավորման հարցում: Այդ գործոններից մեկը կրթությունն է, մասնավորապես՝ քաղաքական կրթությունը: Ինչպես ցույց է Գ. Ալմոնդի և Ս.Վերբայի «Քաղաքացիական մշակույթ» գրքում ներկայացված սոցիոլոգական հետազոտությունը՝ այն մարդկանց տոկոսային հարաբերակցությունը, ովքեր կարծում են, որ անհատը պետք է քաղաքական ու քաղաքացիական կրթություն ունենա և ակտիվ լինի տեղական համայնքում, կախված է հարցվածների կրթությունից (Տես Աղ. 1)[72] .

Աղյուսակ 1

Երկիր	Այդ կարծիքն ունեցող հարցվածների ընդհանուր թիվ	Տարրական կամ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող (ընդհանուր թվից)	Թերի միջնակարգ կրթություն ունեցող (ընդհանուր թվից)	Թերի բարձրագույն կրթություն ունեցող (ընդհանուր թվից)
	%	%	%	%
ԱՄՆ	51	35	56	66
Մեծ Բրիտանիա	39	37	42	42
Գերմանիա	22	21	32	38
Իտալիա	10	7	17	22
Մեքսիկա	26	24	37	38

[71] Almond G, Coleman J. The Politics of the Developing Areas - Princeton, N.J., 1960, p.26-33
[72] Альмонд Г., Верба С. Гражданская культура - Мысль, Москва, 2014, с.178-365

Հայաստանի երիտասարդության շրջանում նման օրինաչափություն արձանագրելու նպատակով մենք համարժեք սոցիալական հարցում իրականացրեցինք 16-30 տարեկան 250 մարդկանց շրջանում: Սույն հետազոտության շրջանակում լայնածավալ սոցիոլոգիական ուսումնասիրություն իրագործելը հնարավոր չէր, ուստի տվյալների հավաքագրման և մշակման համար կիրառվել է սոցիոլոգիայում հայտնի ընտրովի զննման մեթոդը: Հաշվի առնելով մեր հետազոտության նպատակը՝ մենք կրթական գործոնի հարցում ևս մեկ կետ ավելացրեցինք՝ ուսումնասիրելով նաև հարցվածների կարծիքը ոչ ֆորմալ կրթություն ստանալու վերաբերյալ:

Հարցվածների 55%-ը պատասխանել են, որ շարքային անհատը պետք է ակտիվ լինի տեղական և պետական մակարդակներում իրականացվող քաղաքական կառավարման հարցում: Միևնույն ժամանակ, միջնակարգ կրթություն ունեցողների միայն 35%-ն է այդ հարցին դրական պատասխանել: Թերի ու լիարժեք բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում այդ թիվը համապատասխանաբար 42% և 46% է: Եվ, վերջապես, բարձրագույն և ոչ ֆորմալ կրթության փորձ ունեցողների 93%-ը կարծում են, որ շարքային անհատը պետք է քաղաքացիական և քաղաքական կրթություն ստանա ու ակտիվ լինի տեղական և պետական մակարդակներում իրականացվող քաղաքական կառավարման գործում:

Այս հետազոտությունից կարելի է եզրակացնել, որ կրթության մակարդակը փոխկապակցված է անհատի քաղաքացիական մշակույթին, իսկ 10-ից 9-ը դեպքերում ոչ ֆորմալ կրթությունը ենթադրում է վստահություն քաղաքական կառավարմանն ակտիվորեն մասնակցելու կարևորության վերաբերյալ: Բացի այդ, կրթվածության տարբեր մակարդակները՝ կրթական տարբերակումը, դառնում է հասարակության շերտավորման պատճառներից մեկը:[73]

Նշված հարցման թերությունն այն է, որ հարցաշարըանհատի կրթական մակարդակը չափող գործիքակազմ չունի՝ հարցման շրջանակներում մենք ստիպված ենք հիմնվել անհատի ֆորմալ կրթական կարգավիճակի վրա: Լուսելու համար այս խնդիրը՝ մենք մշակեցինք համակարգչային ծրագիր, որը հնարավորություն կտար վերհանել կրթական մակարդակ-քաղաքական սոցիալականցում կապը ոչ միայն հիմնվելով ֆորմալ կրթական ցենզի այլ նաև փաստացի գրագիտության վրա: Նշված ծրագիրը իրենից

[73] Нестеров В. Образование как фактор социальной сплоченности и политической стабильности общества.- Вестник Военного университета.29009, N3(19), с.38

ներկայացնում էր keylogger տեսակի հավելված, որը տեղադրվելով (նախնական գրավոր համաձայնությամբ) 150 երիտասարդների համակագրիչների վրա ֆիքսում է ցանկացած հայերեն գրված տեքստի ուղղագրական և տարրական կետադրական սխալները: Ծրագիրը մշակված է այնպես, որ մենք ստանում ենք միայն գրավոր խոսքում կատարված սխալների թիվը և ընդհանուր գրված բառերի թիվը՝ որևէ տեսակի անձնական տեղեկատվություն ծրագրի միջոցով չի փոխանցվում: Մեկ ամիս տևած մշտադիտարկումներից հետո ֆոկուս խմբի մասնակիցների շրջանում իրականացվում է հարցում, որը պարզ հարցերի միջոցով վեր է հանում իրենց վերաբերմունքը քաղաքական գործընթացներին տեղական և համապետական մակարդակում: Տվյալների համադրումը ցույց է տալիս, որ բարձր գրագիտության աստիճան ունեցող ռեսպոնդենտները զգալիորեն ավելի ակտիվ են քաղաքական գործընթացներում, քան մյուսները:[74]

Այս երևույթը շատ գիտնականներ են ուսումնասիրել: Այսպես, Ջ. Դյուին իր գրքում դպրոցը հասարակության մոդել է համարում և կարծում է, որ կրթության նպատակն անհատի մոտ պատասխանատվություն ու սեփական արարքների սոցիալական նշանակությունը գիտակցելու ունակություն ձևավորելն է[75]: Մ. Վեբերը դիտարկել է կրթությունը սոցիալական շերտավորմանհիմնախնդրի դիտանկյունից: Նա սոցիալական հեղինակության անկյունաքարային չափանիշներից մեկը համարում է «ֆորմալ կրթությունը, որը արտահայտվում է պրակտիկ և տեսական ուսուցմամբ և համապատասխան կենսակերպի յուրացմամբ»[76]:

Հարկ է նշել քաղաքական գործընթացների և կրթության միջև եղած հատուկ փոխկապվածության մասին. անցումային շրջանում գտնվող երկրներում տեղի ունեցող քաղաքական գործընթացները պահանջում են պատմամշակութային համատեքստում կրթության դերի վերաիմաստավորում, քանի որ համապատասխան փոփոխությունները նաև ազդում են կրթության ոլորտի վրա[77] և քաղաքական կրթությունն էլ, իր հերթին անցումային գործընթացների կատալիզատոր է դառնում:[78]

---

[74] Мамиджанян А., Саргсян А., Политическое образование как аспект непрерывного образования молодежи в процессе политической социализации. Человек и образование, с.116-121

[75] Дьюи Дж. Творческая демократия – задача, которая стоит перед нами- Вестник Московского Университета. Сер.12.Политические науки.2008. N2/, с.46-61

[76] Вебер М. Основные понятия стратификации. - Социс. 1994, N5, с.156

[77] Тарский Ю., Тарская О. Политические контексты интегративных процессов в сфере образования - 2012.ВЕСТНИК ПАГС - С.128

[78] Дюркгейм Э. Социология. Ее предмет, метод, предназначение - Москва. Канон. 1995, с.244

Քաղաքական սոցիալականացման հարցում շարունակական կրթության դերը բացատրելու համար կարելի է դիմել ալեգորիայի, որը կիրառել է Բրիստոլի համալսարանի դասախոս Ջ. Ֆլոյդը. քաղաքական անգրագիտության յուրահատկությունն այն է, որ մարդիկ չգիտեն, որ իրենք դա չգիտեն: Եվ հակառակը, միկրոալիքային վառարանի միջին վիճակագրական օգտատերը չգիտի, թե այն ինչպես է աշխատում, սակայն նա հասկանում է դա: Այլ կերպ ասած՝ քաղաքական գործընթացները հասկանալու դեպքում խոսքը տգիտության փաստը չիմանալու մասին է, ինչը հանգեցնում է կայացվող քաղաքական որոշումների որակի վատթարացման, քաղաքական սոցիալականացման պասիվացման, երբեմն նաև ոչ գրագետ քաղաքական ակտիվության: Ժողովրդավարացման գործընթացի բարելավումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ «կրատոս»-ի բարելավմանը զուգընթաց բարելավվում է նաև «դեմոս»-ը: Ֆորմալ և շարունակական կրթությունը, և մասնավորապես քաղաքական կրթությունն այդ գործընթացի կատալիզատոր են դառնում:[79]

Կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ քաղաքական վարքագիծը ուսուցվող և դաստիարակվող է, այսինքն այն ենթակա է ձևավորման և շտկման: Անհատի քաղաքական կրթության կազմակերպման գործում կարևոր է հաշվի առնել կրթության՝ պոստմոդերնիստական մոդելի առանձնահատկությունը, որն ուղղված է ոչ թե անհատին կոնկրետ գործողություններ սովորեցնելուն, քանի որ դրանք շատ հաճախ են փոփոխվում, այլ ուղղված է սովորել սովորեցնելուն՝ պատրաստելով նրան կարճ ժամանակահատվածում նոր տեխնոլոգիաներ յուրացնելուն[80]: Քաղաքական կրթությունը պետք է զինի անհատին ոչ այնքան կոնկրետ քաղաքագիտական գիտելիքներով, այլ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման արդյունքում քաղաքական արագացող գործընթացները վերլուծելու գործիքակազմով: Եվրոպայի խորհուրդն ընդունել է կոմպետենտության հինգ հիմնական տեսակներ, որոնք, ըստ իրենց, պարտադիր են բուհ-երի շրջանավարտների համար. քաղաքական և սոցիալական կոմպետենտություն, ինչպես նաև գրավոր ու

---

[79] "The Conversation'' non-profit media service [Электронный ресурс]. – URL: http://theconversation.com/why-we-need-to-teach-political-philosophy-in-schools-57749 (дата обращения 02.06.2017)

[80] Камалаеева А. О необходимости формирования основных компетенций выпускников вузов в условиях создания единого европейского пространства высшего образования - Вестник ТГПУ. 2011. N1(103) - с.106

բանավոր հաղորդակցման ունակություններ և շարունակական ուսումնառության կարողություն, որոնք պետք է անկյունաքարային լինեն կրթական գործընթացում[81]:

Գիտելիքների, ունակությունների և կարողությունների ձեռքբերումը կարող է երիտասարդության համար քաղաքական գործընթացների սուբյեկտ դառնալու և շարժառիթ, և արդյունք լինել: Կրթության միջոցով երիտասարդությունը վարքագծի կարևոր օրինակներ, ինչպես նաև նորմեր և արժեքներ է ստանում, որոնք կարող են նպաստել հասարակական և քաղաքական հարաբերությունների համակարգում ինտեգրմանը:

Վերոնշյալից ելնելով՝ կրթության հիմնական խնդիրների շարքին (ուսանողների ճանաչողական ունակությունների զարգացում, «սովորելու ունակության» զարգացում, ինքնուրույն նպատակներ և խնդիրների լուծումներ գտնելու ունակությունների ներդրում, մտքի զարգացում և այլն) կարելի է դասել նաև քաղաքական սոցիալականացման խնդիրը:

Շարունակական կրթությունը որպես կրթության տեսակ, որն առանձնանում է իր ճկունությամբ և ուսանողների առավել բարձր մոտիվացիայով, պետք է կարևոր դերակատարում ունենա այս գործընթացում: Շարունակական կրթության գլխավոր խնդիրը մարդկային հնարավորությունների շարունակական զարգացումը կազմակերպելն է, որն իրականանալի է յուրաքանչյուր անհատի՝ մասնագիտական, մշակութային և քաղաքացիական ոլորտներում անձնական աճի նպատակով գիտելիքի և ունակությունների մշտական զարգացման հնարավորություն ստեղծելու միջոցով:

Գիտնականներն առանձնացնում են շարունակական կրթության 4 հիմնական նպատակներ. [82]

- անհատի դաստիարակում;
- աշխատաշուկայի համար մասնագիտական պատրաստվածության բարձրացում;

[81] Дзидзигури В. , Резинкина Л. Профессионально ориентированное самообразование как инструмент опережающего развития личности -Человек и образование, № 1 (42). – 2015, с. 79-84

[82] Սարգսյան Ա., Մեծահասակների կրթություն. Մեթոդներ և գործողություններ. Երևան, Ճարտարագետ, 2016, 127 էջ

- քաղաքացիական դաստիարակություն;
- մշակութային կրթություն:

Համապատասխանաբար, կարելի է համարել, որ շարունակական կրթության խնդիրներն են՝

- Անհատի զարգացումը;
- Աշխատաշուկայում ինտեգրումը;
- Ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության զարգացումը;
- Բնակչության մշակութային մակարդակի բարձրացումը:

Քաղաքական կուսակցությունները, լինելով քաղաքական սոցիալականացման հիմնական սուբյեկտներից, պետք է երիտասարդների քաղաքական սոցիալականացման ոլորտում կիրառեն շարունակական կրթության գործիքները: Քաղաքական սոցիալականացման գործընթացում կրթության կիրառման ինստիտուցիոնալ մոդել են կուսակցական դպրոցները: Նման կառույցներ շատ երկրներում են գործում. Հայաստան, Ռուսաստան, Չինաստան, ԱՄՆ, ԵՄ մի քնաի երկրներ և այլն: Այս կառույցները միմյանցից տարբերվում են մի շարք չափորոշիչներով.

- Կրթական գործընթացի կազմակերպման ձևաչափ (միանվագ դասընթացներ կամ ամրագրված կրթական ծրագիր);
- Թիրախային լսարան (տարիք, կրթական մակարդակ, կուսակցական պատկանելիություն և այլն);
- Կրթական ծրագիր (միայն քաղաքական կրթություն կամ ընդհանուր գիտելիքներ);
- Շրջանավարտների հարցում կադրային քաղաքականություն (կուսակցության նոր անդամների հավաքագրում, առաջխաղացում կուսակցական կադրային ուղահայացով);
- Ինչպես նաև մի շարք այլ չափորոշիչներ:

2012 թվականի դեկտեմբերին «Միացյալ Ռուսաստան» քաղաքական կուսակցությունը հանդես եկավ քաղաքական կրթության համակարգի ստեղծման նախաձեռնությամբ, որը «համարժեքորեն օգտակար կլինի քաղաքական գործընթացի

մասնակից բոլոր կուսակցությունների համար և կնպաստի քաղաքական մշակույթի և քաղաքացիական հասարակության ձևավորմանը: [83].

2016 թվականին նման նախաձեռնությամբ հանդես եկավ նաև Հայաստանի Հանրապետական կուսակցությունը՝ հայտարարելով Անդրանիկ Մարգարյանի անվան քաղաքական դպրոցի ստեղծման մասին: Դպրոցի ընդունելությունը բաց է բոլոր ցանկացողների համար՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Ուսումնական ծրագիրը պայմանականորեն բաժանված է չորս հիմնական մասի.

- Ազգային գաղափարախոսություն;
- Ներքաղաքական գործընթացներ (հասարակագիտության ոլորտում մի շարք գիտակարգերի տեսական և գործնական ուսուցում);
- Միջազգային գործընթացներ (տեսական և գործնական մաս);
- Անհատական աճ (քաղաքական գործունեության համար հիմնական հմտությունների ուսուցում)

Հաշվի առնելով ուսումնական ծրագրի կառուցվածքը՝ կարելի է ասել, որ մեր կողմից հիմնված քաղաքական դպրոցը հաշվի է առնում շարունակական կրթության բոլոր նպատակները և տիրապետում է այդ նպատակներից ծնված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ գործիքակազմին: Քանի որ քաղաքական դպրոցի թիրախային լսարանը ոչ միայն կուսակցական գործիչներն են, այլև 20-40 տարեկան բոլոր որակավորված և մոտիվացիա ունեցող անհատները՝ կարող ենք վստահաբար նշել Հայաստանում երիտասարդների քաղաքական սոցիալականացման հարցում դպրոցի ունեցած ծանրակշիռ դերի մասին:

Մի շարք քաղաքագետների տեսական ուսումնասիրությունները բացահայտել են կրթության կարևոր դերը քաղաքական սոցիալականացման հարցում: Շարունակական կրթության ինստիտուտները, ինչպիսին կուսակցական դպրոցներն են, կարող են իրական գործիք դառնալ կուսակցությունների համար՝ հասարակության մեջ երիտասարդների քաղաքական սոցիալականացումը կազմակերպելու նպատակով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ նման դպրոցների որակավորված և մոտիվացված շրջանավարտները կարող են մարգինալացվել այն դեպքում, եթե տվյալ երկրի քաղաքական մշակույթը թույլ չի տալիս նրանց կադրային աճ ապահովել: Այլ կերպ ասած՝ քաղաքական դպրոցների

[83] "Взгляд" Деловая газета, [Электронный ресурс]. – URL: https://www3.vz.ru/news/2012/12/4/610166.html (дата обращения 04.06.2017)

որակավորված և մոտիվացված շրջանավարտները կարող են հանդես գալ որպես կրիտիկական մասա տվյալ սոցիումի քաղաքական մշակույթի տրանսֆորմացիայի համար:

2.3.Ժողովրդավարություն: Երիտասարդության դերը քաղաքական սոցիալականացման գործընթացում. երիտասարդական շարժումներ

Ինստիտուցիոնալ ենթահամակարգը փոխկապակցված է քաղաքական վարչակարգի հետ[84]: Քաղաքական այս ենթահամակարգի և քաղաքական վարչակարգի փոխկապակցվածությունը դիտարկենք ըստ արտաքին աշխարհի հետ ունեցած փոխհարաբերությունների: Տարբերակվում են բաց և փակ քաղաքական համակարգեր: Բաց և փակ քաղաքական համակարգերը դիտարկելիս, անդրադարձ կատարենք Կարլ Պոպերրի բաց հասարակությունների տեսությանը: Ըստ Կ. Պոպերի բաց են այն հասարակությունները, որտեղ անհատը ստիպված է անձամբ որոշումներ կայացնել: Բաց հասարակությունը սոցիալական համակարգ է, որի շրջանակում զարգանում և հաստատվում են անձնակա շահ չհետապնդող, անհատի ազատություններին աջակցող ինստիտուտներ: Կ. Պոպերը հասարակությունները բնորոշելու համար անդրադառնում է պատմությանը, մասնավորապես, հին հունական պոլիսների կառուցվածքին: Վերջիններս զինվորականների խմբավորումներ են՝ ղեկավարվող ցեղական առաջնորդների և արիստոկրատ ընտանիքների կողմից, որոնք պատերազմում էին միմյանց դեմ ինչպես ցամաքում, այնպես էլ ծովում: Միֆական, ցեղային կառուցվածք ունեցող և հավաքական հասարակությունները բնորոշվում են որպես փակ, իսկ հասարակությունները, որտեղ անհատը հարկադրված է անձամբ որոշումներ կայացնելու՝ բաց: Փակ հասարակությունը կարելի է համեմատել կենդանի օրգանիզմի հետ: Փակ հասարակությունը կիսաօրգանիկ միավորում է, որի անդամները կապված են կիսաբիոլոգիական կապերով՝ բարեկամական կապեր, ընդհանուր կյանք, ընդհանուր վտանգներ: Դա կոնկրետ անհատների կոնրետ խումբ է, որոնք կապված են միմյանց ոչ միայն այնպիսի աբստրակտ սոցիալական հարաբերություններով, ինչպիսիք են աշխատանքի բաժանումը և բարիքների փոխանակումը, այլև որոշակի ֆիզիկական ընհանրություններով: Այսպիսի հասարակությունը ենթադրում է ստրկատիրական կարգերի առկայություն: Փակ հասարակություններում, կենդանի օրգանիզմի նման, բացառվում է սոցիալական խմբերի

[84] Мамиджанян А., ОТКРЫТЫЕ И ЗАКРЫТЫЕ ОБЩЕСТВА: РОЛЬ МОЛОДЕЖИ . АКТУАЛЬНЫЕ НАУЧНЫЕ ИССЛЕДОВАНИЯ В СОВРЕМЕННОМ МИРЕ, ВЫПУСК 5(25) Часть 8. 2017, с. 120-126

միջև պայքարը: Պայքար փակ հասարակությունում կարող է լինել կերակրման ռեսուրսներից օգտվելու համար: Համաձայն հասարակության կենսաբանական տեսության, որը կիրառելի է փակ հասարակություններ բնութագրելիս, վերջույթները չեն հավակնում կատարելու ուղեղի գործառույթները, այդպես էլ մի խումբը չի հավակնում զբաղեցնելու մյուս խմբի տեղը: Փակ հասարակության ինստիտուտները և կաստաները առաջնորդվում են տաբուի սրբազան արգելքներով:

Օրգանական բնույթի աստիճանական կորուստը նպաստում է փակ հասարակությունից անցմանը բաց հասարակության, որն էլ, իր հերթին, ըստ Կ. Պոպերի, ժամանակի ընթացքում կերպափոխվում է «վերացական հասարակության»: Հեղինակը վերացական հասարակության գործառույթները նկարագրելու համար կիրառում է մեկ հիպերբոլի հատկանիշները: Այդպիսի հասարակությունում մարդիկ իրականացնում են իրենց գործառույթները մեկուսացված պայմաններում և կապը միմյանց մեջ պահպանում են ժամանակակից կոմունիկացիոն տեխնոլոգիաների շնորհիվ: Ըստ Կ. Պոպերի ժամանակի ընթացքում ժամանակակից հասարակությունը աստիճանաբար կվերածվի նման անդեմ կամ վերացական հասարակության: Հեղինակը նշում է, որ նմանատիպ վերացական հասարակությունը չափազանցված է, քանի որ մարդիկ պատմական ողջ ժամանակահատվածում, կազմավորում են խմբեր, տարատեսակ սոցիալական կապեր են հաստատում: Սակայն, ըստ Կ. Պոպերի, ժամանակակից սոցիալական խմբերի մեծ մասը սուրոգատներ են, քանի որ նրանք չեն կարողանում ապահովել իրական պայմաններ հասարակական կյանքին լիարժեք մասնակցության համար: Սակայն, թերություններին զուգահեռ կան նաև առավելություններ, քանի որ նոր, բաց հասարակություններում մարդիկ ազատ են սոցիալական կապեր հաստատելու հարցում, ինչի շնորհիվ ձևավորվում է նոր անհատականությունը: Այս գործընթացին զուգահեռ, բիոլոգիական և ֆիզիկական կապերի թուլացման հետ մեկտեղ մեծ դեր են ձեռք բերում հոգևոր ընդհանրությունները: Այսպիսի իրական խմբերի ձևավորումը հակադրվում է վերացական հասարակության մոդելին: Ժամանակակից բաց հասարակությունը իրականացնում է իր գործառույթները աբստրակտ հարաբերությունների՝ փոխանակման և համագործակցության ճանապարհով: Հեղինակը գտնում է, որ անցումը փակ, օրգանական հասարակությունից բաց հասարակության գտնվում է դեռևս սկզբնական շրջանում : Կ. Պոպերը սոցիալական ինժեներիայի կողմնակից է, որը ենթադրում է սեփական շահերին և նպատակներին համապատասխան սոցիալական ինստիտուտների փոփոխման նպատակով փաստացի

տեղեկատվության ընտրություն: Այս մեթոդը հիմնվում է սոցիալական ինստիտուտների աստիճանական փոփոխության վրա՝ հարմարեցնելով հասարակության պահանջմունքներին, բացառելով պատմական պահանջմունքները և հասարակական ինստիտուտների սակրալիզացիան [85]: Կ Պոպերը, կարևորելով մարդու ազատությունը, դեմ է բացարձակ ազատությանը: Բաց հասարակությունում անհատի ազատությունները պաշտպանվում են օրենքով, որը սահմանափակում է պետության ազատությունը: Բաց հասարակությունում յուրաքնչյուրը պետք է պաշտպանված լինի պետության կողմից, տնտեսապես խոցելի խավի պաշտպանությունը տնտեսապես հարուստ խավից չի հակասում բաց հասարակության դրույթներին: Ըստ Պոպերի կառավարման լավագույն տարբերակը ժողովրդավարությունն է, որը ենթադրում է պետության նկատմամբ վերահսկողություն ժողովրդի կողմից: Անընդունելի է ցանկացած պետություն, որը օժտված է բացարձակ իշխանությամբ: Պետությունը պետք չէ օժտել ավելի մեծ իշխանությամբ, քան անհրաժեշտ է ազատությունը պաշտպանելու համար: Բաց հասարակությունում «Ով պետք է կառավարի» հարցը գլխավորն է: Անհրաժեշտ է պաշտպանվել կառավարիչների իշխանությունից, ուստի հարցադրումը պետք է անել այլ կերպ՝ ինչպես կարելի է նրանց վերահսկել: Պոպերը գտնում է, որ հասարակությունը հետևողականորեն չկատարելագործելու դեպքում, անհեթեթ կլիներ հույսը պատմական իռացիոնալ ուժերի հետ կապելը: Ուստի, պետական միջամտությունը հասարակության տարբեր ոլորտների կարգավորմանը, այն ուղին է, որով պետք է անցնի բաց հասարակությունը: Ըստ Պոպերի պատմությանը իմաստ և նշանակություն հաղորդում ենք մենք՝ ինքներս: Պատմությունը նախապես ծրագրել անհնար է, բայց հասարակական ինստիտուտների ծրագրումը և ձևավորումը՝ հնարավոր: Միայն ազատության պաշտպանման նպատակով հասարակական ինստիտուտների աստիճանական պլանավորման ճանապարհով կարելի է ձևավորել աշխարհի ցանկալի պատկեր [86]:

Ըստ Ռոբերտ Դալի՝ ժողովրդավարության կարևորագույն բնորոշիչը կառավարության չընդհատվող ունակությունն է արձագանքելու սեփական քաղաքացիների

---

[85] Поппер К. Открытое общество и его враги. Том I. Чары Платона. Пер. с англ, под ред. В. Н. Садовского. — М.: Феникс, Международный фонд «Культурная инициатива», 1992. С 5.,118, 216-220

[86] Поппер К. Р. Открытое общество и его враги. Т. 2: Время лжепророков: Гегель, Маркс и другие оракулы. Пер. с англ, под ред. В. Н. Садовского. — М.: Феникс, Международный фонд «Культурная инициатива», 1992. — 528 с., с.168

նախընտրություններին, որոնք քաղաքական առումով դիտարկվում են որպես հավասար: Քաղաքացիները պետք է հնարավորություն ունենան՝

- ձևակերպելու սեփական նախընտրությունները,
- հայտնելու սեփական նախընտրությունները համաքաղաքացիներին և կառավարությանը անհատական ու կոլեկտիվ գործողությունների միջոցով,
- կառավարության կողմից հավասար մոտեցում ցուցաբերելու սեփական նախընտրություններին, այսինքն՝ այնպիսի նախընտրություն, որը կբացառեր խտրականությունը [87]:

Ըստ Ռոբերտ Դալի հասարակության ազատությունը պայմանավորված է նախ և առաջ քաղաքական ընդդիմության առկայությամբ: Քաղաքական ընդդիմության առկայությունը ժողովրդավարության հիմնական և էական առանձնահատկություններից է:

Քաղաքագետ Ռոբերտ Դալն իր դասական աշխատություններում ընդդիմության առկայությունը համարում է պոլիարխիայի գոյության անհրաժեշտ ու պարտադիր պայման և նշում դրա վրա ազդող փոփոխականների մի ամբողջ շարք: Նա ներկայացնում է պոլիարխիայի անհրաժեշտ պայմանները, որոնք ամբողջությամբ կապված են ընդդիմության՝ որպես յուրահատուկ քաղաքական ինստիտուտի, առկայության հետ [88]: Այդ պայմաններից Դալն ընդգծում է աջակցության և քվեարկության համար մրցելու իրավունքը, ինչը ենթադրում է, որ ընտրողներն ընտրովի պաշտոնի համար պայքարող քաղաքականության սուբյեկտների զանազան առաջարկություններից ընտրություն կատարելու որոշակի այլընտրանք կունենան կամ ունեն: Դա իր հերթին ենթադրում է հայացքների որոշակի հեռավորություն. դրանք տարբերվում են միմյանցից կամ համընկնում են, ինչը համարժեք է որոշակի շարունակական անհամաձայնության կամ միևնույն խնդրին վերաբերող հակադիր կարծիքների առկայության: Սա, իր հերթին, կարևոր է ընդդիմության առկայության համար:

Ռ. Դալը, հենվելով մի շարք տեսաբանների կարծիքի վրա, առաջ է քաշում այն տեսակետը, որ ձայների համար պայքար մղող քաղաքական կուսակցությունների միջև եղած հակամարտությունը նման է շուկայում տարբեր «ֆիրմաների» հակամարտությանը. երբ ընդդիմությանը հնարավորություն է տրվում ձևավորելու քաղաքական

---

[87] Даль Р., Полиархия: участие и оппозиция, М., 2010, с. 62

[88] Dahl, Robert, Polyarchy: Participation and Opposition. New haven and London: Yale University Press, 1971, p. 15

կուսակցություններ և եթե կուսակցություններն էլ հնարավորություն ունեն մասնակցելու ընտրություններին, ընդ որում՝ ազատ և արդար, եթե բարձրագույն պաշտոնները երկրում զբաղեցնում են նրանք, ովքեր հաղթում են ընտրություններում, այդ ժամանակ հակամարտությունը քաղաքական ընտրանիների միջև առավել մեծ է դարձնում այն հնարավորությունը, որը կառավարության քաղաքականությունը ժամանակի ընթացքում կհամապատասխանի ընտրողների մեծամասնության նախընտրություններին [89]: Այնուամենայնիվ պետք է նշել, որ Ռ. Դալի վերաբերմունքը քաղաքական ընդդիմության վերաբերյալ միանշանակ չէ. «Ա-ն Բ-ի նկատմամբ այնքան իշխանություն ունի, որքանով կարող է Բ-ին ստիպել որևէ բան անել, ինչը Բ-ն այլ պարագայում չէր անի»: Այստեղ Բ-ն հանդես է գալիս որպես սուբյեկտ: Սակայն գոյություն ունի Ռ. Դալի մեկ այլ բնորոշում, որը նման է իշխանության բնորոշմանը. «Ենթադրենք, որ Ա-ն որոշում է այս կամ այն հարցով իշխանության կուրսը որոշակի քաղաքական համակարգում որոշակի ժամանակահատվածի շրջանակներում: Ենթադրենք՝ այդ ժամանակահատվածում Բն չի կարող որոշել կառավարության գործունեությունը և հակադրվում է կառավարության այն կուրսին, որը որոշվում է Ա-ի կողմից: Այդ ժամանակ Բ-ն այն է, ինչը մենք անվանում ենք «ընդդիմություն»»:

Ենթադրվում է, որ Դալը, այնուամենայնիվ, ի նկատի ունի ոչ թե հենց հակամարտությունը, այլ հակադրվող սուբյեկտը: Այս բնորոշումը նաև շարունակություն ունի. «Նկատենք, որ մեկ այլ ժամանակահատվածի ընթացքում կառավարության կուրսը կարող է որոշել Բ-ն, և այդ ժամանակ «ընդդիմության» մեջ կհայտնվի Ա-ն… Այս առումով չի կարելի խոսել շահերի օբյեկտիվ «բախման» մասին, որոնք պայմանավորված չեն մասնակից կողմերի ընկալումներով և համոզմունքներով»:

Ռ. Դալը կատարել է նաև եվրոպական տասը երկրների և ԱՄՆ քաղաքական ընդդիմության գործունեության համեմատական վերլուծություն: Նա սահմանափակել է սեփական ուսումնասիրությունը արևմտյան ժողովրդավարական երկրների շրջանակներով, որտեղ քաղաքական հակամարտությունները ինստիտուցիոնալացված են պետական օրենսդրության շրջանակներում՝ որպես ընտրական համակարգեր, միջկուսակցական հակամարտության, ներկայացուցչական ժողովրդավարությունների ինստիտուտների տեսքով:

[89] Даль Р., Демократия и её критики, стр. 421, М. 2003, с.48

Ռ. Դալը քաղաքական ընդդիմությունը բնորոշում է վեց չափորոշիչով՝

1. կազմակերպված միասնականություն կամ մրցակիցների կենտրոնացում,

2. ընդդիմության մրցակցության աստիճանը,

3. խնդիր, որի պատճառով տեղի է ունենում հակամարտություն իշխանության հետ, և այն վայրը, որտեղ դա տեղի է ունենում,

4. ընդդիմության նույնականացման հստակությունը,

5. ընդդիմության նպատակները,

6. ընդդիմության մարտավարությունը:

Ռ. Դալը կարծում է, որ քաղաքական կուրսի հակառակորդները կարող են ունենալ կազմակերպվածության տարբեր աստիճաններ: Դա կարող է լինել մեկ կամ մի քանի կազմակերպություն, որոնք գործում են մեկը մյուսից անկախ: Ժողովրդավարական ոչ մի երկրում գոյություն չունի մեկ միասնական ընդդիմադիր կազմակերպություն: Խնդիրը փոխվում է, երբ խոսքը վերաբերում է քաղաքական կուսակցություններին: Ընդդիմության կազմակերպվածության աստիճանը պայմանավորված է տվյալ երկրի կուսակցական համակարգի տեսակով: Կազմակերպվածության առավելագույն աստիճանը գործում է երկկուսակցական համակարգում, որտեղ իշխանության ղեկին չգտնվող կուսակցությունը փաստացիորեն մարմնավորում է ընդդիմությունը:

Բազմակուսակցական համակարգերում ընդդիմությունը ցրված է բազմաթիվ կուսակցությունների մեջ: Ըստ Դալի՝ նման ընդդիմությունը առավել բնական է. ժողովրդավարական հասարակարգում այն առավել կարողունակ է կառավարել հակամարտությունները, մինչդեռ երկկուսակցական համակարգը (ԱՄՆ, Անգլիա) ավելի շուտ շեղում է: Գոյություն ունի ընդդիմության կազմակերպվածության ևս մեկ չափորոշիչ: Այն բնորոշվում է կուսակցությունների ներսում միասնականության աստիճանով, ինչի մասին կարելի է դատել խորհրդարանում կուսակցության անդամների քվեարկությունների հիման վրա:

Ելնելով կուսակցությունների ներքին միասնականությունից՝ 1966 թվականին Ռ. Դալը, վերլուծելով արևմտյան ժողովրդավարական երկրներում քաղաքական ընդդիմության հիմնական չափորոշիչները, առանձնացրեց չորս հիմնական մոդելներ՝ «բրիտանական», «մայրցամաքային», «սկանդինավյան» և «ամերիկա-շվեյցարական»: Առաջին մոդելը (Մեծ Բրիտանիա), որը նաև կարելի է անվանել դասական կամ «վեստմինստերյան», բնորոշվում է երկու բավական լավ կազմակերպված

կուսակցությունների առկայու յամբ, ուստի ընդդիմությունը կենտրոնացած է մեկ կուսակցության շրջանակներում: Այդ կուսակցությունները խիստ մրցակցային են խորհրդարանում և ընտրությունների ժամանակ:

Ընդդիմությունն այնչափ տարբերակվող է, որչափ այն միանգամից հնարավոր է ճանաչել: Ընդդիմության և կառավարության միջև հիմնական հակամարտությունը տեղի է ունենում խորհրդարանական ընտրությունների ժամանակ և ազգային խորհրդարանում. ընդ որում, խորհրդարանն ամենօրյա հակամարտության վայր է: Հնարավոր կլիներ նաև խորհրդարանն անվանել ֆորում, որն առավելապես օգտագործվում է հաջորդ ընտրություններում հաղթանակ տանելու համար, քանի որ խորհրդարանական բանավեճերն ուղղված են ոչ այնքան ազդելու խորհրդարանականների, որքան հանրության վրա, հետևաբար՝ հաջորդ ընտրությունների վրա:

Երկրորդ դեպքում գործ ունենք մայրցամաքային Արևմտյան Եվրոպայի ընդդիմադիր ուժերի հետ (Ֆրանսիա, Իտալիա), որոնք ներկայացված են մի քանի կուսակցությամբ, և նրանց միջև պայքարը ոչ այնքան սուր մրցակցային բնույթ ունի, իսկ հիմնական հակամարտության վայրը ընտրություններից հետո եկող քաղաքական առևտուրն է գործադիր իշխանություն ձևավորելու նպատակով: Համապատասխանաբար ընդդիմության մարտավարությունն էլ ուղղված է ոչ թե խորհրդարանական մեծամասնություն ունենալուն, ինչն անհնար է նման պայմաններում, այլ խորհրդարանում տեղերի ավելացմանը, ինչը նրան լրացուցիչ հնարավորություններ է տալիս քաղաքական առևտրի ժամանակ:

Սկանդինավյան մոդելի (Շվեդիա, Նորվեգիա, Նիդերլանդներ)՝ որպես առանձին տեսակի առանձնացումը կարող է մի փոքր արհեստական թվալ. այստեղ էլ մեծ դեր ունի քաղաքական առևտուրը, սակայն հիմնական տարբերությունն այն է, որ դրա չափերն էականորեն լայնարձակ են: Կարևորագույն հարցերի քննարկման ժամանակ բանակցային գործընթացը ներառում է առավել մեծ թվով մասնակիցների, քան մայրցամաքայինի դեպքում, ներառյալ գործարարների և գործատուների միավորումները, արհեստակցական միությունները և այլն: Այսպիսով, ընդդիմության այս մոդելը ենթադրում է սոցիալական գործընկերության կառուցակարգերի առկայություն:

Ընդդիմության չորրորդ մոդելի (ԱՄՆ) պարագայում կարելի է ասել, որ այն էականորեն հեռու է «դասական» տարբերակից: Այս դեպքում քաղաքական կուսակցություններն առանձնանում են համեմատաբար թույլ ներքին միասնականությամբ

և ապակենտրոնացվածությամբ: Այս մոդելի շրջանակներում ներառված երկրների հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանցում ընդհանրապես բացակայում է հակամարտությունը ընդդիմության և կառավարության միջև: Կառավարության և ընդդիմության միջև բաժանարար գիծն անցնում է ոչ թե կուսակցությունների, այլ հենց իրենց միջև: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ առավել արդյունավետ և կայուն ընդդիմությունը ինքնադրսևորվում է առաջին մոդելի դեպքում:

Ռ. Դալը նշում է այն պայմանները, որոնք ազդում են ընդդիմության տեսակների ձևավորման վրա. դրանցից են՝

- էլեկտորալ համակարգը,
- հասարակ մշակութային առավելությունները,
- յուրահատուկ ենթամշակույթները,
- իշխանության նկատմամբ պահանջների խումբը,
- հասարակության մեջ գերակշռող սոցիալական և տնտեսական տարակարծությունները:

Քաղաքական ընդդիմության ինստիտուտը կարող է գործել բացառապես ժողովրդավարական հասարակարգում: Ամբողջատիրական պետություններում ընդդիմության գործունեությունը հաճախ դիտարկվում է որպես պետական դավաճանություն, ուստի և դրա համար էլ ընդդիմությունն ամեն կերպ ոչնչացվում է՝ պատժվում է դաժանորեն, իսկ երբեմն էլ ֆիզիկական մեթոդներով: Ժողովրդավարական հասարակարգում քաղաքական ընդդիմությունը ձեռք է բերում լեգիտիմ և ինստիտուցիոնալ բնույթ: Նրա՝ որպես քաղաքական ինստիտուտի կայացումն անմիջականորեն կապված է պառլամենտարիզմի զարգացման հետ: Վերոնշյալ չափորոշիչները հաշվի առնելով՝ Ռ. Դալը տալիս է ընդդիմության դասակարգումը: Առաջին հերթին դա ապահամակարգային ընդդիմությունն է (բացահայտ կերպով իշխանության հավակնող կուսակցություններ, ճնշման խմբեր, բացառապես իշխանություն նվաճելուն ձգտող կուսակցություններ): Ընդդիմության երկրորդ տեսակը սահմանափակ համակարգված ընդդիմությունն է (քաղաքական ռեֆորմիզմ, որն ուղղված չէ իշխանությանը): Երրորդ տեսակը հստակ համակարգված ընդդիմությունն է (այն ունակ է մրցակցելու և համագործակցելու այլ կուսակցությունների հետ) [90]:

[90] Dahl R. A., Political Oppositions in Western Democracies, Yale University Press, 1966, 484 p.

Ռ.Դալը տվել է նաև պոլիարխիայի մեկնաբանություն, որը դասել է հասարակության ինդեքսների թվին: Ո՞վ է կառավարում քաղաքական գործընթացը, ո՞վ է մշակում քաղաքական կառավարման սկզբունքները: Կենսական այս հարցերի պատասխանը ամերիկացի քաղաքագետ Ռ. Դալը առաջարկում է ուսումնասիրել պոլիարխիկ (բազմասկիզբ իշխանություն իրականացնող) էլիտայի գործառման դիտանկյունից: Այսինքն՝ ժողովրդավարացման գործընթացի արդյունավետության համար պատասխանատու են ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական, մշակութային, ռազմական, ռազմավարական էլիտաները, որոնք իրենց նպատակամետ գործունեությամբ հետևողականորեն վարում են ժամանակակից դինամիկ բազմակարծիք հասարակության (modern dynamic pluralist society՝ MDPS) ստեղծման քաղաքականություն: Այս իմաստով պոլիարխիկ էլիտան՝ որպես կառավարման դերակատար, «հրաման-կատարում» կառուցակարգում հանդես է գալիս և՛ որպես հրամայող, և՛ որպես կատարող՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ապահովում են փոխադարձ անվտանգության փոխզիջումնային (ՓԱՓ) համակարգի կառուցակարգ՝ գիտակցորեն մերժելով մենաշնորհը և գերշահույթը :

Ըստ Ռ.Դալի՝ պոլիարխիան քաղաքական զարգացման տանող միակ ճիշտ արժեքն է, իսկ թե ինչպես քաղաքական գործընթացների ժամանակ քաղաքացիները հետամուտ կլինեն նրա գործառմանը՝ ապահովելով իրենց ազգային ինքնությունը, տեսակի մրցունակությունը, իրենց խնդիրն է: Դա էլ ենթադրում է իրական գործող ինստիտուտներ, քանի որ ժողովրդավարությունը կայանում է այնպիսի գործոնների առկայությամբ որոնք ստեղծում են անհրաժեշտ կենսամիջավայր (սոցիալ-տնտեսական պայմաններ, մասնակցություն աշխատանքի միջազգային բաժանմանը, մասնակցային քաղաքական մշակույթ, կենսունակ և ոչ թե հեղափոխական ու մարգինալ ընդդիմություն, տրիպարտիզմ, և, վերջապես, լիդերների և էլիտաների համագործակցություն՝ հանրային շահի գերակայության հիմքի վրա): Այս դիտանկյունից քաղաքական էլիտայի ժողովրդավարական գործունեության ծավալման համար Ռ.Դալը մշակել է հետևյալ չափանիշները.

⇒ ժողովրդավարական ճանապարհով մրցունակ կառավարող էլիտայի հավաքագրում՝ ազատ և թափանցիկ ընտրությունների միջոցով.

⇒ Կառավարող էլիտայի համագործակցության մշակույթի զարգացում՝ նրանց կողմից կուտակված կառավարման փորձի արդիականացման գրավականով:

Պոլիարխիան քաղաքական վարչակարգ է, որին բնորոշ են բնակչության քաղաքական մասնակցության բարձր մակարդակ և կառավարող էլիտայի բաց մրցակցություն: Պոլիարխիայի հաստատման համար կարևոր է հաշվառել հասարակական գիտակցության վրա ազդող հետևյալ սկզբունքները.

⇒ քաղաքական վերափոխումների պատմական հետևողականության տրամաբանության պահպանում, ինչը հեշտացնում է տվյալ հասարակության արժեքային համակարգի քաղաքական էության ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը,

⇒ սոցիալ-տնտեսական զարգացման որոշակի մակարդակ. հստակ գիտես՝ ի՞նչ վերափոխել և ինչպես,

⇒ փոխպայմանավորված «համաձայնություն-տարաձայնություն» հասկացությունների միջև առկա կապի վերլուծություն. գիտես՝ ինչպես բախում և փոխհամաձայնություն մոդելավորել,

⇒ գլոբալ քաղաքակրթության ազդեցության ուսումնասիրումը ազգային մշակույթի վրա. գիտես՝ ինչ կարելի է մատուցել, ում և ինչպես,

⇒ արդյունաբերական երկրների հետ շփման եզրերի արժևորում. գիտես՝ ինչ տալ և ինչ վերցնել, ինչ պաշարներ կան կառավարման համար,

⇒ քաղաքական ընտրանու (նաև լիդերների) աշխարհընկալման և աշխարհաճանաչողության ուսումնասիրում. գիտես՝ ում պատժել և ում խրախուսել և, որ ամենակարևորն է՝ ինչպես:

Այս համատեքստում քաղաքական գործընթացում իշխանության իրականացման մշակույթի վերաբերյալ քաղաքական էլիտային ներկայացվող պահանջներն իրենց ողջ բազմազանության մեջ ենթադրում են ազգային մենթալիտետի ուսումնասիրում: Իշխանության իրականացման քաղաքակրթական փորձի հանրագումարից ակնհայտ է, որ միայն մենթալիտետ կազմող ազգային արժեքների իմացության դեպքում կարելի է իշխանության իրականացման մշակույթի ժողովրդավարացման համար արդյունավետ սկզբունքներ մշակել:

Ժողովրդավարության ամենապարզ բնորոշումը այն է, որ այն հանդիսանում է ժաղովրդի իշխանություն (demos’ ժողովուրդ, cratos’ իշխանություն): Ընդլայնելով այդ բնորոշումը և հետևելով ամերիկյան լուսավորիչների ավանդույթներին՝ դեմոկրատիան ժողովրդի իշխանությունն է, իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար: Քաղաքական պատմության մեջ մենք կգտնենք բազում ժողովրդավարական ձևեր, որոնք

վերաբերվում են հասարակական կյանքի կազմակերպմանը (օր.՝ աթենական ժողովրդավարությունը Հին Հունաստանում, հանրապետական Հռոմը, Միջին դարերի քաղաքային դեմոկրատիաները՝ այդ թվում Նովգորդյան հանրապետությունը, ժողովրդարության պառլամենտական ձևերը Անգլիայում, Հյուսիս-ամերիկյան նահանգների ժողովրդավարությունը և այլն): Ժամանակակից ժողովրդավարությունները ժառանգում են պատմական ժողովրդավարությունների բազում ավանդույթներ, բայց և ունեն նշանակալի տարբերություններ՝ էական և գործընթացային բնույթի: Այդպես են տարբերվում նաև դեմոկրատիայի կոնցեպցիաները, որոնք մեզ հայտնի են քաղաքական գաղափարների պատմությունից: Դեմոկրատիայի ժամանակակից ինդեքսները հիմնվում են առավելապես Նոր ժամանակների, Լուսավորության (Լոկկ, Մոնտեսքյո, Ռուսսո, Կանտ, Թոքվիլ) քաղաքական գաղափարների վրա: Ճիշտ է, այսօր ի հայտ են գալիս դեմոկրատիայի կոնցեպցիաներ, որոնք բացասական են վերաբերվում ժամանակակից գաղափարական ակունքներին՝ հետևողական դեմոկրատիա, տելեդեմոկրատիա, կիբերդեմոկրատիա, բայց դեռևս տեսական և գործնական ծրագրերում դրանք գտնվում են շրջագծի վրա, մարգինալ դիրք են զբաղեցնում ժամանակակից դեմոկրատական տեսություններում և պրակտիկայում: [91]

Պարունակող ծրագրում դժվար կլինի նկարագրել դեմոկրատիայի ժամանակակից ինդեքսները: Ամփոփելով տարաբնույթ մոտեցումները, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել ինդեքսների մի շարք, որոնք առավել հաճախ են ենթարկվում հետազոտության: Նշենք նաև, որ ժամանակակից դեմոկրատիայի ինդեքսների բազմազանությունը, այսպես թե այնպես հակված են 2 հիմնական տեսական պարադիգմաներին, որոնք ձևավորվել են 17-19-րդ դարերի քաղաքական մտքի դասականների կողմից: Խոսքը գնում է լիբերալ-դեմոկրատական և ռադիկալ-դեմոկրատական տեսությունների մասին:

2 տեսություններն էլ ծագել են, որպեսզի լուծեն այսպես կոչված «Հոբսի խնդիրը» («проблему Гоббса»), որի էությունը կարճ կարելի է բնորոշել հետևյալ կերպ՝ մարդը, «բոլորի պատերազմը բոլորի դեմ» իրավիճակից (բնական վիճակ) անցում կատարելով պետական-հասարակական կյանքի համաձայնությանը (հասարակական վիճակ), ինքն իրեն վստահում է պետական իշխանությանը, քանի որ միայն այն կարող է երաշխավորել

[91] Сморгунов Л.В. Сравнительная политология. Учебник для вузов. — СПб. Питер, 2012. — 448 с.: ил. — Стандарт третьего поколения. ISBN 978-5-459-01085-5, с. 541

համաձայնագրի գոյությունը: Ինչպես պահպանել մարդու ազատությունը հասարակական վիճակում: Հենց այս հարցի մեջ է «Հոբսի խնդրի» հանգույցը: Հետևաբար, տեսական խնդիրը կայանում է պետության գործունեության սահմանների հիմանվորման մեջ, որն ապահովում է մարդու ազատության պահպանումը: Լիբերալ-դեմոկրատական և ռադիկալ-դեմոկրատական ուղղությունների ներկայացուցիչները մարդուն համարում էին բանական էակ, բայց այլ կերպ էին մեկնաբանում դեմոկրատական տեսության այդ մարդաբանական նախադրյալը: Նրանք միասնական էին նաև խելամիտ անհատների կողմից ընդունված համաձայնության մեջ պետության ծագման մեկնաբանման հարցում, բայց տարբերում էին այդ պայմանագրի աղբյուրը: Նրանք պաշտպանում էին մարդու ազատությունը, բայց հասկանում և մեկնաբանում էին տարբեր կերպ [92]: (Աղյուսակ 2)

Աղյուսակ 2

Լիբերալ-դեմոկրատական և ռադիկալ-դեմոկրատական տեսություններ

Լիբերալ-դեմոկրատական տեսություն	Ռադիկալ-դեմոկրատական տեսություն
➢ բարոյապես ինքնավար անհատ ➢ անհատի սուվերենիտետ ➢ հասարակությունը որպես անհատների համագումար ➢ բոլորի շահերը ➢ շահերի բազմակարծություն ➢ օրենքի գերակայություն ➢ մարդու ազատություն ➢ մարդու իրավունքների գերակայություն (առաջնայնություն) ➢ ներկայացուցչական դեմոկրատիա, ընտրություններ	➢ հասարակական մարդ ➢ ժողովրդի սուվերենիտետ ➢ օրգանական հասարակություն ➢ ընդհանուր շահ ➢ շահերի միասնություն ➢ ընդհանուր բարօրության գերակայություն ➢ քաղաքացու ազատություն ➢ իրավունքների և պարտականությունների միասնություն ➢ անմիջական դեմոկրատիա

[92] Баранов, Н.А. Современная демократия: эволюционный подход /. Н.А. Баранов; Балт. гос. техн. ун-т. – СПб., 2007, 208 с.

➢ ազատ մանդատ ➢ իշխանությունների բաժանում ➢ փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը, փոքրամասնության իրավունքների պաշտպանության դիմաց	➢ հրամայական մանդատ ➢ գործառույթների բաժանում ➢ փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը

Լիբերալ-դեմոկրատական կոնցեպցիաներում մարդու ազատությունը ենթադրում էր բարոյական ինքնավարություն, որի համաձայն անհատը ինքն էր որոշում իր կյանքը և այլ մարդկանց հետ շփման կանոնները, որոնք չպետք է խախտեն իր անհատական իրավունքները: Պետությունը, որը ծագում է մարդկանց՝ որպես բարոյապես ինքնավար անհատների միջև համաձայնության հիման վրա, սահմանափակվում է իրավունքով: Այդ կերպ, տվյալ դեմոկրատական պարադիգման հիմնավորվում էր ինքնավար անհատի նախադրյալով, հասարակությունը դրանում մեկնաբանվում էր որպես ազատ անհատների հանրագումարով, իսկ հասարակական շահը, որպես ընդհանուրի շահ: Մասնավոր կյանքը այստեղ գնահատվում է ավելի շատ, քան հասարակական կյանքը, իսկ իրավունքը բարձր, քան հասարակական բարեկեցությունը:

Անհատական շահերի և անհատների միության (քաղաքացիական հասարակություն) կողմից ծագող շահերի բազմակարծությունը ուղեկցվում է նրանց միջև տեղի ունեցող կոնֆլիկտներով, որի լուծումը հնարավոր էր միայն կոմպրոմիսի (փոխզիջման) ճանապարհով: Այն հավաքագրվում էր միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր լինում միջնորդ (արբիտրաժային) դատավորի միջամտությունը: Ընդհանուր առմամբ կոնցեպցիան ենթադրում էր միայն «սահմանափակ պետություն», այսինքն՝ «գիշերային պահակի» պետություն: Նմանատիպ պետությունը կարող էր ձևավորվել միայն մարդկանց միջև համաձայնության շնորհիվ, իսկ պետության ներկայացուցիչները՝ բնակչության ընտրությամբ: Հետևաբար այստեղ մեծ դեր է

հատկացվում ընտրական գործընթացին և ներկայացուցչական դեմոկրատիային, որի ժամանակ ընտրված ներկայացուցիչները կապված էին միայն սեփական խղճով և սահմանադրությամբ (ազատ մանդատ): Ազատությունը նման պետությունում սահմանափակվում է միայն օրենքով, իսկ պետությունը կառուցվում է իշխանությունների բաժանման սկզբունքով: Քվեարկության ժամանակ ձայների մեծամասնությամբ որոշումների ընդունման սկզբունքը լրացվում է փոքրամասնության իրավունքների պաշտպանության սկզբունքով:

Համապատասխան ռադիկալ-դեմոկրատական կոնցեպցիաներին, բանական մարդը որպես ինքնավար էակ կարող էր գոյություն ունենալ միայն բնական վիճակում, հասարակական վիճակում նա կհամարվեր հասարակության մարդ, ով ընդունում է հասարակության արժեքները: Պետությունը, որը ծագում է համաձայնագրի հիման վրա, ղեկավարվում է հասարակության արժեքներով, որի կրող է հանդիսանում ժողովուրդը, սահմանափակվում է «ժողովրդի սուվերենիտետով»: Մարդու ազատությունը հասարակական վիճակում կապահովվի միայն այն ժամանակ, երբ ազատ է ժողովուրդը, ով պետությանը օրենքներ թելադրելու իրավունք ունի: Բռնապետական պետությունը որոշվում է նրանով, որ այն ղեկավարվում է մասնավոր, և ոչ թե ժողովրդի ընդհանուր շահերով: Ռադիկալ-դեմոկրատիայի տեսությունը ողջունում է հասարակական մարդուն, և հիմնավորում ընդհանուր շահի առաջնայնությունը իրավունքի նկատմամբ: Նման մարդու ազատությունը դիտվում է որպես քաղաքացիական ազատություն և հնարավոր է հասարակական վիճակում՝ օրենքների առկայության պայմաններում՝ ընդունված ժողովրդի կողմից: Ժողովրդի միասնությունը հանդիսանում է քաղաքական կյանքի կազմակերպման կարևորագույն սկզբունք, իսկ որպես դեմոկրատական մասնակցության ձև այստեղ հանդես է անմիջական դեմոկրատիան: Դեմքերը, որոնք ղեկավարում են պետությունը, օժտված են ժողովրդական մանդատով և պատասխանատու են նրա առաջ (հրամայական մանդատ): Իշխանության միասնությունը ապահովվում է ժողովրդի սուվերենիտետով, այդ պատճառով է, որ իշխանության բաժանման սկզբունքը էական չի համարվում: Այստեղ հնարավոր է խոսել ավելի շատ ֆունկցիաների, քան թե իշխանության բաժանման մասին: Փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը հանդիսանում է միասնական կամքի

արտաքին արտահայտում, որը սկզբունքորեն պահանջում է ընդհանուրի համաձայնությունը [93]:

Դեմոկրատիայի այս ինդեքսի հիմնադիրներն են հանդիսանում Մաքս Վեբերը և Իոսեֆ Շումպետերը: Իհարկե այս ինդեքսի ձևավորման գործընթացի վրա մեծ ազդեցություն են ունեցել նաև այլ հետազոտողներ (Ջոն Դյուն, Գաէտանո Մոսկան, Վիլֆրեդո Պարետտոն, Մոնսեյ Օստրոգորսկին), բայց հենց Վեբերի պլեբիցիտար դեմոկրատիայի, լեգիտիմության և պետության կոնցեպցիան և Շումպետերի մրցակցային դեմոկրատիայի կոնցեպցիաներն են, որոնք առավել հաճախ էին օգտագործվում կոմպարիտիվիստների կողմից՝ քաղաքական համակարգի էմպիրիկ-համեմատական հետազոտությունների ուղղությամբ քաղաքական հայեցակարգերի ձևավորման համար: Տվյալ դեպքում Վեբերը սահմանեց համեմատական հետազոտության ոչ թե մեթոդոլոգիան, այլ հանդես եկավ որպես դեմոկրատիայի տեսաբան՝ ուշադրությունը կենտրոնացնելով նրա (դեմոկրատիայի) հիմնական հատկանիշների վրա՝ դեմոկրատական ընտրություններ, կուսակցություններ, էլիտաներ, լիդերներ և իշխանության լեգիտիմություն: Համեմատական քաղաքագիտության մեջ կարևորագույնը դեմոկրատիայի սահմանումն է գոյություն ունեցող քաղաքական կարգի լեգիտիմության հանդեպ լիարժեք հավատի առկայության տեսանկյունից: Վեբերը, խոսելով պլեբիցիտար դեմոկրատիայի մասին, ընդգծում էր վերջինիս և պառլամենտական դեմոկրատիայի միջև եղած տարբերությունները: «Այսպիսի իդեալական կառավարումը նախ և առաջ պառլամենտականների կողմից, հակադրվում է նախկինում նրանցից մեծապես տարբերվող կուսակցական միավորումների ամենաժամանակակից ձևերին: Դա դեմոկրատիայի երեխան է»:

Գալիս է հարգարժան մարդկանց տիրապետությունը և պառլամենտականների միջոցով կառավարման վերջը: Նախաձեռնությունը իրենց ձեռքն են վերցնում «հիմնական մասնագիտությամբ» քաղաքական գործիչները, որոնք գտնվում էին պառլամենտից դուրս: Ֆորմալ առումով տեղի է ունենում բավական ընդարձակ դեմոկրատիզացում:

Առաջնորդ դառնում է միայն նա, ում որ ենթարկվում է այդ մեքենան: Այլ խոսքերով ասած, այդպիսի մեքենաների ստեղծումը մատնանշում էր պլեբիցիտար դեմոկրատիայի հաստատումը: Իսկ Շումպետերը տվել է դեմոկրատիայի դասական ձևակերպումը, ըստ

[93] Сравнительная политология: Учебник. — 3-е изд., перераб. и доп. —. Изд-во Европ. ун-та в С.-Петербурге, 2001. — 368 с

որի այն մրցակցություն է էլիտաների 2 և ավելի խմբերի միջև իշխանության հասնելու համար՝ շատ թե քիչ կանոնավոր և բաց ընտրությունների միջոցով:

Շումպետերը տարբերություններ էր տեսնում 1.դեմոկրատիայի դասական դոգտրինի, որը հիմնված էր մարդկանց կամքի և համընդհանուր բարիքի վրա, որտեղ ընտրողները օժտված են քաղաքական որոշումներ կայացնելու իրավունքով, և 2.դեմոկրատիայի տեսության միջև, որտեղ ընտրողների կողմից քաղաքական խնդիրների լուծումը հանդիսանում է երկրորդական այն մարդկանց ընտրման համեմատ, ովքեր էլ պետք է կայացնեն քաղաքական որոշումները: Նա կարծում էր, որ դեմոկրատիայի դասական դոկտրինը ճգաժամ է ապրում, և այսօր նրա հետ չի կարելի համաձայնել: Առաջին պլան է մղվում դեմոկրատիայի կոնցեպցիան, որտեղ ժողովրդի դերը կայանում է կառավարության կամ էլ միջանկյալ մարմնի (կառույցի) ստեղծման մեջ:

Շումպետերը սահմանում է դեմոկրատիայի նոր կոնցեպցիան՝ «Դեմոկրատական մեթոդը դա քաղաքական որոշումների ընդունման այնպիսի ինստիտուցիոնալ միջոց է, որտեղ անհատները՝ ընտրողների ձայների համար մրցակցային պայքար մղելու միջոցով ձեռք են բերում իշխանություն՝ որոշումներ ընդունելու համար»:

Այս կոնցեպցիայի առավելությունն այն է, որ այն վերաբերում է էմպիրիկորեն հեշտ ստուգվող բաների՝ դեմոկրատական ընթացակարգերի առկայությանն ու բացակայությանը: Դեմոկրատիայի դասական կոնցեպցիան չէր պարունակում այդպիսի քննադատություն, քանզի մարդկանց կամքին և բարօրությանը կարող էին ծառայել նաև ոչ դեմոկրատական ռեժիմները և կառավարությունը: Օր.՝ պառլամենտական դեմոկրատիայի պայմաններում (օր.՝ անգլիական տիպի) դեմոկրատիայի քննադատությունը իրականացվում է, իսկ «սահմանադրական» միապետությունը չի հանդիսանում դեմոկրատական, քանզի ընտրազանգվածը և պառլամենտը օժտված են բոլոր իրավունքներով, որոնք նրանք ունեն պառլամենտական դեմոկրատիայի պայմաններում, բայց մի բացառությամբ՝ նրանք չունեն կառավարություն ձևավորելու կամ նշանակելու իրավունք:

Նոր տեսության շրջանակներում մեծ տեղ է տրվում լիդերության ֆենոմենին: Ըստ Շումպետերի, դասական տեսությունը դա չէր անում: Հենց լիդերություն հասկացությունն է, որ թույլ է տալիս բացատրել, թե ինչպես և որտեղից է առաջանում համընդհանուր կամքը, ինչպես է այն փոխարինվում և կեղծվում: Այս առումով լիդերությունը հանդիսանում է գրեթե ցանկացած կոլեկտիվ գործողության գերակա մեխանիզմ, իսկ դեմոկրատիայի նոր

կոնցեպցիան առավել ռեալիստական է, քան դասականը: Նոր կոնցեպցիան չի հերքում խմբային կամքի գոյության փաստը, բայց այն դիտարկում է ոչպես փակ և գաղտնի այնքան ժամանակ մինչև ինչ-որ մի քաղաքական լիդեր այն կյանքի կկոչի և կդարձնի քաղաքական կյանքի կարևոր գործոն:

Նոր կոնցեպցիայի կարևոր հատկանիշներից մեկն էլ քաղաքական մրցակցությունն է, այսինքն պայքարը լիդերության համար: Սրա հետ կապված դեմոկրատիան միշտ օգտագործում է ինչ-որ ընդունված մեթոդ մրցակցային պայքար վարելու համար, իսկ ընտրությունների համակարգը՝ լիդերության համար պայքարի գրեթե փակ հնարավոր միջոցն է ցանկացած չափի և տեսակի հասարակությունների համար:

Նոր կոնցեպցիան բացատրում է նաև դեմոկրատիայի և անհատական ազատության միջև եղած կապը: Կարևոր է նշել, որ Շումպետերը դեմոկրատիան չէր համարում ռեժիմ, որը որ երաշխավորում է անհատական ազատության ավելի մեծ չափ, քան մյուս ռեժիմները, բայց նա պնդում էր, որ եթե յուրաքանչյուրն օժտված է քաղաքական լիդերության համար պայքարելու իրավունքով, և կարող է իր թեկնածությունն առաջադրել, ապա սա ինքնին նշանակում է բանավեճի ազատության նշանակալի չափաբաժնի առկայություն բոլորի համար: Բացի այդ, այս տեսության առավելություններից է նաև այն, որ ընտրողները կառավարություն ձևավորելու հետ մեկտեղ (ուղղակի կամ միջանկյալ մարմնի միջոցով), ունեն նաև այն ազատ արձակելու ֆունկցիա: Բայց այդուհանդերձ ընտրողների կողմից կառավարության վրա վերահսկողությունը սահմանափակված է հենց այս ֆունկցիայով: Եվ ի տարբերություն դեմոկրատիայի դասական կոնցեպցիայի, որը շեշտը դնում է ժողովրդի կամքի վրա, նոր կոնցեպցիան շեշտը դնում է մեծամասնության կամքի վրա: Ըստ Շումպետերի, դեմոկրատիայի սկզբունքն այս դեպքում այն է, որ իշխանության լծակները փոխանցվեն նրանց, ով վայելում է մեծամասնության աջակցությունը[94] :

Դեյվիդ Խելդոմը իր «դեմոկրատիայի մոդելները» գրքում տվել է դեմոկրատիայի մրցակցային-էլիտիստական կոնցեպցիայի ընդհանրացված բնութագիրը՝ հատուկ առանձնացնելով դեմոկրատիայի այս ինդեքսը նա փորձել է միավորել Վեբերի և Շումպետերի կոնցեպցիաների կենտրոնական, առանցքային էլեմենտները: Այս ինդեքսի առանցքային բնորոշիչներին են՝

[94] Сморгунов Л. В. Современная сравнительная политология. Учебник. — М., 2002, с. 148

1. Պառլամենտական կառավարում՝ ուժեղ գործադիր իշխանությամբ

2. Մրցակցություն կենսունակ քաղաքական էլիտաների և կուսակցությունների միջև

3. Պառլամենտի գերիշխանությունը կուսակցական քաղաքականության հանդեպ (թեպետ դա հակասում է վեբերյան՝ «պլեբիցիտար դեմոկրատիայի» կոնցեպցիային)

4. Քաղաքական լիդերության առաջնայնություն

5. Բյուրոկրատիայի առկայություն՝ անկախ և լավ

6. Սահմանադրական և պրակտիկ սահմանափակումներ՝ քաղաքական որոշումների ընդունման ոլորտի վրա

Դեմոկրատիայի քաղաքականա-մոդեռնիզացիոն ինդեքսի հիմքում ընկած են դեմոկրատիայի տարբեր սոցիալ-տնտեսական պայմանների ուսումնասիրությունները, որոնք տեղի են ունեցել 50-ականների 2-րդ կեսին Դանիել Լերների և Սեյմուր Լիպսեթի կողմից: Դեմոկրատիայի այս ինդեքսը երբեմն բնորոշում են որպես «քաղաքականա-մոդեռնիզացիոն տեսություն»:

Այս ինդեքսի ներքո դեմոկրատիան ներկայանում է որպես, նախ և առաջ, մի շարք սոցիալական և տնտեսական պայմանների զարգացման արդյունք՝ ուրբանիզացիա, արդյունաբերականացում, կրթություն, կոմունիկացիա, որոնք հանգեցնում են հասարակության համապատասխան դիֆերենցացիայի (տարբերակման) ձևավորմանը, տարբեր շահերի խմբերի ակտիվացմանը և նրանց ներկայացնող էլիտաներին,որոնք պայքարում են պետական իշխանության համար: Եթե Լերները շեշտը դնում էր 1.ամենատարբեր էլիտիստական խմբերի գործունեության, ինչպես նաև 2.զանգվածային հաղորդակցության համար անհրաժեշտ տարբեր միջոցների առկայության վրա, ապա Լիպսեթը շեշտը դնում էր՝

1. էլիտաների մրցակցության վրա,

2. բնակչության կողմից քաղաքական խաղի կանոններին աջակցության վրա, ինչպես նաև

3. դեմոկրատիայի գործառնության էֆեկտիվության վրա:

Դեմոկրատիայի կոնցեպտուալիզացումը (համակարգայնացումը) տվյալ մոդելում արտացոլում է նրա առանցքային բնութագրերը.

1.Քաղաքականա-մշակութային՝ դեմոկրատական վարքի նորմերի և ռեժիմի էֆեկտիվության նկատմամբ համոզմունքների համակարգի առկայություն

2.Քաղաքականա-կառուցվածքային՝ միմյանց հետ մրցակցող իշխող և ընդդիմադիր էլիտիստական խմբերի առկայություն

3.Քաղաքականա-ինստիտուցիոնալային՝ ընտրական համակարգի քաղաքական էլիտաների հերթափոխի նորմերի առկայություն

4.Քաղաքականա-մասնակցային՝ բնակչության մասնակցությունն ընտրություններում

Այսպիսով, Լիպսեթը դեմոկրատիան սահմանում էր որպես մի քաղաքական համակարգ, որն «ունի մշտական սահմանադրական հնարավորություններ կառավարող դեմքերի փոխարինման համար: Այն մի սոցիալական մեխանիզմ է, որը կոչված է լուծելու միմյանց հետ հակամարտող շահերի խմբերի շարքերում առաջացող, հասարակական ծագում ունեցող խնդիրները, ինչն էլ ենթադրում է, որ ընտրությունը կատարվում է մեծամասնության կողմից այն այլընտրանքային մրցակիցների միջև, որոնք պայքարում են քաղաքական պոստերի համար»:

Այստեղից էլ առաջ են գալիս այն անհրաժեշտ պայմանները, որոնք ոչ միայն որոշում են քաղաքական համակարգի դեմոկրատացվածության աստիճանը, այլև այդ համակարգի կայունությունը կամ անկայունությունը:

1. Համոզմունքների համակարգը լեգիտիմացնում է դեմոկրատական համակարգն ու նրա առանձին ինստիտուտները, որոնք ընդունվում են բոլորի կողմից որպես իրենցը:

2. Քաղաքական լիդերների որոշակի համախումբ, որն իրականացնում է կառավարումը:

3. Լիդերների 1 կամ ավելի խմբերի առկայություն կառավարությունից դուրս, որոնք գործում են որպես լեգիտիմ ընդդիմություն՝ փորձելով գրավել կառավարական պաշտոններ: Այս առումով, դեմոկրատիայի քաղաքական համակարգը համարվում է կայուն, եթե նրանում կա համոզմունքների արժեհամակարգ, որը թույլ է տալիս խաղաղ կերպով իրականացնել իշխանության «խաղը», այսինքն կառավարող խումբը ճանաչում է ընդդիմության իրավունքները, իսկ ընդդիմությունն էլ ենթարկվում է կառավարողների որոշումներին և այս ամենը տեղի է ունենում, եթե 1. քաղաքական խաղի արդյունքը հանդիսանում է խմբավորումների հերթափոխը, որոնք իրականացնում են պետության կառավարումը, 2. եթե կան համապատասխան պայմաններ ինչպես արդյունավետ

ընդդիմության, այնպես էլ քաղաքականության վրա ժողովրդական ազդեցության համար, և 3. դրա հետ մեկտեղ պաշտոնյաների իշխանությունը մաքսիմալ չէ:

Մասնակցային ժողովրդավարությունը գործընթաց է, որն ընդգծում է բնակչության լայն մասնակցությունը համայնքային ռազմավարությունների մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը:

Ժողովրդավարական հասարակության կարևոր բաղադրիչը քաղաքացիների մասնակցությունն է հասարակական կյանքին: Ժողովրդավարությունը հնարավոր չէ պատկերացնել առանց հասարակական գործընթացներին այն մարդկանց ներգրավվածության, որոնք հանրային քաղաքականությունների և որոշումների գլխավոր շահառուներն են: Տեղական ժողովրդավարության հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ քաղաքացիները պետք է իրավունք ունենան ազդելու իրենց համայնքի ներկայացուցչական մարմինների որոշումների վրա, որոնք վերաբերում են նրանց կյանքին, կենցաղին և համայնքին՝ ամբողջությամբ: Մասնակցային ժողովրդավարության հաստատման ամենակարևոր գործիքը մասնակցային կառավարման ապահովումն է:

Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում այնպիսի գործընթաց է, որն ընդգծում է բնակչության լայն մասնակցությունը համայնքային քաղաքականության մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը: Ուղղակի ժողովրդավարության ձևերից են :

- տեղական հանրաքվեն,
- հանրային նախաձեռնությունը (popular initiative),
- քաղաքացիների հանձնաժողովը (citizens' panel),
- համայնքային ժողովը (popular assembly),
- հանրային լսումները,
- խնդրագիր/պահանջագիրը (petition),
- համացանցային (ինտերնետային) հաղորդակցությունը,
- շուկայական կառուցակարգերը և այլն:

Տեղական հանրաքվեն լայնորեն ճանաչված և օգտագործվող քաղաքացիական մասնակցության ձև է: Դրա միջոցով ընտրազանգվածը կարող է համայնքին վերաբերող առաջադրված հարցերին քվեարկել կողմ կամ դեմ: Հանրաքվեն կարող է լինել պարտադիր և ոչ պարտադիր:

Պարտադիր հանրաքվեն հստակ պատասխան է տալիս հանրաքվեի դրված հարցին(երին), որը պարտադիր է ներկայացուցչական մարմնի համար: Դա նշանակում է, որ տեղական ներկայացուցչական մարմինը (Հայաստանում՝ ավագանին) չի կարող այլ որոշում ընդունել, քան ամրագրել հանրաքվեով ընդունվածը:

Ոչ պարտադիր հանրաքվեն տեղական իշխանությունների համար ունի խորհրդատվական բնույթ: Հանրաքվեի այս ձևը տեղական ներկայացուցչական մարմնին է վերապահում հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը:

Հանրային նախաձեռնությունը մի ընթացակարգ է, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին որոշումների առաջարկներ ներկայացնել կամ ստիպել տեղական իշխանություններին քննարկել կամ քվեարկել կոնկրետ հարցի վերաբերյալ: Դա նշանակում է, որ քաղաքացիներն իրենք չեն որոշում, բայց ստիպում են ներկայացուցչական մարմիններին որոշում ընդունել հօգուտ հանրության:

Քաղաքացիների հանձնաժողովը համայնքի բնակչությունից, ներկայացուցչականության հիման վրա ընտրանքային խմբի ձևավորում է՝ նրանց հետ հանրային քաղաքականության հարցերի վերաբերյալ խորհրդակցելու համար: Այս ինստիտուտը կարող է նաև օգտագործվել մինչ ընդունելը կամ կիրառելը առաջարկները կամ հայեցակարգերը փորձարկելու համար: Համայնքային ժողովը, որպես կանոն, հրավիրվում է փոքր համայնքներում. այն կարող է հնարավորություն ընձեռել տեղի բնակչությանը ուղղակիորեն և միասին որոշում կայացնել տեղական հանրային գործերի վերաբերյալ՝ տեղի ներկայացուցչական մարմնի փոխարեն:

Հանրային լսումները ընտրովի մարմինները կարող են կամ պարտավորված են կանոնավոր ձևով կազմակերպել՝ տեղեկացնելու տեղական բնակչությանը և/կամ ստանալու նրանց կարծիքը տեղական հանրային գործերի մասին: Խնդրագիր/պահանջագիրը համայնքի բնակիչների խմբի ստորագրությամբ փաստաթուղթ է, որի միջոցով նրանք արտահայտում են իրենց կոլեկտիվ ցանկությունները, առաջարկները և բողոքները: Համացանցային հաղորդակցությունը համայնքի բնակչության և տեղական իշխանությունների միջև օպերատիվ երկխոսության, ինչպես նաև՝ էլեկտրոնային ծառայությունների մատուցման ապահովման միջոց է:

Շուկայական կառուցակարգերը իրական ժողովրդավարության բաղկացուցիչ մաս են կազմում և այլընտրանքների ու հակակշիռների ընտրության հնարավորություններ են ստեղծում: Մասնավոր հատվածի ներգրավումը տեղական մակարդակում հանրային

ծառայությունների մատուցման ոլորտ, զգալիորեն բարձրացնում է դրանց արդյունավետությունը:

Մասնակցային կառավարումը մասնակցային ժողովրդավարության ամենակարևոր բաղադրիչն է: Այն ենթադրում է բնակիչների լայն զանգվածների ընդգրկումը համայնքի կառավարման մեջ: Մասնակցային կառավարումը, ամենից առաջ, ընդգծում է այն մարդկանց ներգրավումը կառավարման մեջ, որոնք դուրս են մնացել ավանդական կառավարման գործընթացներից: Դա նշանակում է այնպիսի կառուցակարգերի ներդրում, որոնք կխթանեն այն քաղաքացիների ուղղակի ներգրավումը համայնքային որոշումների կայացման գործընթացներում, որոնք տարբեր պատճառներով մասնակցելու դժվարություններ են ունենում: Դրանք հատկապես սոցիալական կարիքավոր խմբերի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն են և կանայք: Մասնակցային կառավարումը նշանակում է նոր տիպի փոխհարաբերությունների ձևավորում համայնքի բնակիչների և տեղական իշխանությունների միջև:

Այն ընդգրկում է ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներ և գործընթացներ, որոնք ապահովում են փոխադարձ կապը և փոխազդեցությունը տեղական իշխանությունների և նրանց մատուցած ծառայություններից օգտվող շահառուների միջև: Դրանք ոչ միայն տեղական ինքնակառավարման պաշտոնական ինստիտուտներն են (համայնքի ավագանի, համայնքի ղեկավար և այլն), այլև այն ինստիտուտները և կազմակերպությունները (ՀԿ-ներ, հիմնադրամներ և այլն), որոնք որոշակի ազդեցություն ունեն տեղական ինքնակառավարման կամ համայնքի կառավարման իրականացման վրա: Տեղական իշխանությունները, այս դեպքում, ռազմավարություններ և որոշումներ են ընդունում ոչ թե մեկուսացված ձևով, այլ խորհրդակցելով բոլոր նրանց հետ, ովքեր անմիջականորեն կրում են դրանց ազդեցությունը: Այդ փոխհարաբերություններում կարևոր և ծանրակշիռ դեր ունեն տեղական իշխանությունները, սակայն նրանք չեն որոշում ամեն ինչ:

Մասնակցային կառավարումը վերաբերում է միայն տեղական իշխանությունների և համայնքի բնակիչների կոլեկտիվ շահերի վրա հիմնված փոխհարաբերություններին: Այն չի ընդգրկում անձնական շահի վրա հիմնված կամ անհատական (թեկուզ կառավարմանը վերաբերող) փոխհարաբերությունները: Մասնակցային կառավարման կարևոր դերակատարները համայնքի բնակիչների խմբերն են՝ իրենց կոնկրետ շահերով: Այս առումով շատ կարևոր է, որ մինչև համայնքային ինստիտուտների և բնակիչների խմբերի

միջև բանակցություններն ու համագործակցությունը, հստակ առկա լինեն և այդ խմբերը, և նրանց պահանջները: Մասնակցային կառավարումը լայն հնարավորություններ է բացում քաղաքացիական հասարակության սուբյեկտների և քաղաքացիների շարժումների համար: Դրա միջոցով ՀԿ-ները և քաղաքացիական հասարակության այլ սուբյեկտները տեղական իշխանություններին են ներկայացնում իրենց առաջարկությունները, ծրագրերը և տեսակետները, դրսևորում են ակտիվություն և ձեռք են բերում ճանաչում: Ձևավորված քաղաքացիական շարժումները մեծ դեր են խաղում տեղական իշխանությունների առջև խնդիրներ բարձրացնելու և դրանց դրական լուծումներին հասնելու գործում:

Մասնակցային կառավարումը կարող է դիտարկվել որպես տեղական իշխանությունների լեգիտիմության աստիճանի բարձրացման միջոց: Այն տեղական իշխանությունները, որոնք կորցրել են համայնքի բնակիչների վստահությունը և նրանց ընդունած որոշումները դարձել են խնդրահարույց, կարող են վերականգնել վստահությունը՝ համայնքի կառավարմանը շահագրգիռ խմբերին ներգրավելու միջոցով: Շատ երկրներում մասնակցային կառավարումն առավել տարածված է տեղական ինքնակառավարման մակարդակում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղական իշխանություններն ավելի մոտ են կանգնած բնակիչներին և իրենց մատուցած ծառայություններով (օրինակ՝ ջրամատակարարում, կրթություն, առողջապահություն, աղբահանություն) ուղղակիորեն ազդում են նրանց կենցաղի և կենսամակարդակի վրա: Իհարկե, միշտ պետք է նկատի ունենալ, որ տեղական իշխանությունների մատուցած ծառայությունների տեսակները տարբերվում են երկրից-երկիր: Այս առումով, երկրի մասշտաբով ժողովրդավարացման և ապակենտրոնացման գործընթացները կարող են խթանել մասնակցային կառավարման հետագա ծավալումը:

Բաց հասարակություններում, ինչպես նաև բաց հասարակություններին անցման գործընթնացում մեծ է երիտասարդության դերը: Հաճախ հենց երիտասարդությունը և նորագույն կոմունիկատիվ տեխնոլոգիաների կիրառումն է անցման խթանիչ գործոն՝ այս կամ այն ձևով: ՀՀ-ում գործող քաղաքական կուսակցությունները լայնորեն օգտագործում են նորագույն տեխնոլոգիաները քաղաքական պայքարի համար: Ինչպես խորհրդային տարիներին Հայաստանի անկախացման մեջ մեծ դեր ունեցան “սամիզդատ” լրատվամիջոցները, այնպես էլ այսօր քաղաքացիական հասարակության ձևավորման և քաղաքական շփումների մեջ մեծագույն ավանդ ունեն համացանցային մամուլը և բլոգային հարթակները:

Սակայն մեդալը ունի նաև հակառակ կողմը: Ներքաղաքական սուր կոնֆլիկտների արծարծումը համացանցում բերում է հանդուրժողականության անկմանը և, որպես արդյունք, քաղաքական մշակույթի մակարդակի նվազմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ համացանցում բանավեճերը տարվում են շատ ավելի ագրեսիվ «տոնայնությամբ» և հիմնականում կուսակցությունների երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից՝ հետագայում դրանք կարող են հանգեցնել քաղաքական դաշտում համագործակցության մշակույթի վերացմանը:

Նշենք սակայն, որ քաղաքական գործիչների կողմից համացանցի օգտագործումը ավելացրել է հաշվետվողականության մակարդակը: Անձնային մակարդակում հաշվետվողականությանը նպաստող քաղաքական գործիչների հասանելիությունից բացի, ստեղծվել են նաև մի շարք պետական մարմինների քաղաքացիական մոնիտորինգի գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս քաղաքացիներին վերահսկել, թե ինչպես է իրականացվում կառավարումը: /www.parliamentmonitoring.am/ [95]:

Քաղաքացիական հասարակությունը ՀՀ-ում հասել է այն մակարդակի, որ 2012 թ մայիսի 6-ին կայացած համապետական ընտրությունների ժամանակ ստեծվել էր ընտրախախտումների գրանցման առցանց համակարգ՝ www.iditord.am[96]: Նմանատիպ համակարգ գործում էր նաև Ռուսաստանի դաշնային ընտրությունների ժամանակ /www.kartanarusheniy.ru/[97]: Երկու երկրների դեպքում էլ ընտրությունների օրը կայքերը ենթարկվեցին ցանցահենների կազմակերպած DDOS հարձակման և պրակտիկորեն չաշխատեցին: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է երկու երկրներում կիբերանվտանգության ցածր մակարդակի մասին:

Բացատրելով բաց և փակ հասարակությունները՝ դիտարկենք բաց և փակ քաղաքական համակարգերը: Բաց քաղաքական համակարգը շրջակա միջավայրի հետ փոխանակում է ռեսուրսներ, ընդունակ է յուրացնելու այլ համակարգերի արժե-շահային համակարգերը, համարժեք արձագանքել արտաքին աշխարհից եկող մարտահրավերներին: Փակ քաղաքական համակարգերը բնորոշվում են սահմանափակ

---

[95] Հայկական համացանցի զարգացումները, Սամվել Մարտիրոսյան, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 8, 2012, էջ 29-35

[96] ՀԱՅԱՍՏԱՆՅԻ ԻՆՏԵՐՆԵՏ-ՕԳՏԱՏԻՐՈՋ ՊԱՏԿԵՐԸ, Սամվել Մարտիրոսյան, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 5, 2012, էջ 35-41

[97] Котенко И.В., Саенко И.Б., Юсупов Р.М. Аналитический обзор докладов между-народного семинара «Научный анализ и поддержка политик безопасности в киберпространстве», Труды СПИИРАН. 2010. Вып. 2(13). С.226-248

շփումով արտաքին միջավայրի հետ, վատ են ընկալում և օտարում են այլ արժեքային համակարգերը: Քաղաքական համակարգի բնորոշիչ է քաղաքական վարչակարգը: Ըստ վարչակարգի համակարգերը լինում են ամբողջատիրական, ավտորիտար և ժողովրդավարական: Ըստ ֆրանսիացի քաղաքագետ Ժան Բլոնդելի, քաղաքական համակարգերը լինում են հինգ տեսակ:

- Ազատական-ժողովրդավարական՝ քաղաքական որոշումների հիմքում ընկած են անձի ազատության, անհատականության, սեփականության գաղափարները:
- Կոմունիստական համակարգերի դեպքում կարևորվում են հավասարության, սոցիալական ազատության արժեքները:
- Ավանդական համակարգերը հիմնվում են կառավարման օլիգարխիկ ձևի վրա, տնտեսական ռեսուրսները և սոցիալական աստիճանները անհավասարաչափ են բաշխված:
- Ամբոխահաճոյական (Պոպուլիստական) համակարգերը, որոնք գերակշռում են զարգացող երկրներում, հիմնվում են կառավարման ավտորիտար ձևի վրա և ձգտում են հասարակական բարիքների բաշխման հավասարության:
- Ավտորիտար-պահպանողական համակարգերը հետապնդում են սոցիալական և տնտեսական անհավասարության պահպանման, անհավասարության, հասարակությանը քաղաքական գործընթացից օտարմանը: [98]

ՀՍՀՄ փլուզման արդյունքում հետխորհրդային երկրների քաղաքական համակարգերում տեղի ունեցող գործընթացները սկսեցին ուսումնասիրվել անցումագիտության կամ տրանզիտոլոգիայի միջոցով:

Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգը և դրանում տեղի ունեցող գործընթացները կփորձենք վերլուծել տրանզիտոլոգիայի միջոցով: Անցումային ժողովրդավարությամբ հետխորհրդային երկրներում, պայմանավորված տարատեսակ քաղաքական խնդիրներով, անցումային շրջանի անորոշության հաղթահարման միտումներ են նկատվում: Սույն հանգամանքը նկատի ունենալով Ս. Հանթինգտոնը «Ժողովրդավարացման երրորդ ալիքը» աշխատությունում մի շարք հարցեր է առաջ քաշում. Ավարտվել է արդյոք «Ժողովրդավարացման երրորդ ալիքը» և հնարավոր է արդյոք ավտորիտարիզմի ներհոսքով պայմանավորված վերադարձը նախկին

[98] Блондель Ж., Политическое лидерство, Москва, 1992, с.98

ավտորիտար համակարգին: Վերոնշյալ հարցերը պայմանավորված են ժողովրդավարացման համաշխարհային գործընթացի ալիքային մոդելի զարգացմամբ [99]:

Ըստ Հ. Վելմանի ժողովրդավարացման որպես անցման գերխնդրի «լավատեսական» հայեցակարգերին փոխարինելու են գալիս միանգամայն այլ հայեցակարգեր: Տրանզիտոլոգիան ուսումնասիրողները գիտական շրջանառության մեջ են դնում «անորոշություն» հասկացությունը: Վ. Բանսը նշում է, որ անցումային շրջանում արդյունքների անկանխատեսելիությունը զուգամիտվում է գործընթացների անորոշությամբ: Արդյունքում ստացվում է կրկակի անորոշություն, իսկ մի շարք այլ ասպեկտների հետ մեկտեղ ստացվում է անորոշությունների շղթա [100]: Իր աշխատանքներում Բանսը նշում, որ անցման արդյունքում միշտ չէ, որ ժողովրդավարական վարչակարգ է հաստատվում: Սակայն հաջող անցման արդյունքը ժողովրդավարության հաղթանակն է լինում, ինչն էլ դառնում է հասարակության զարգացման հիմք որակապես նոր արժեհամակարգով և գաղափարական կողմնորոշիչներով:

Անցումագիտությամբ զբաղվող մեկ այլ հեղինակ Ռ. Սակվան հետևյալ կերպ է բնութագրում անցումը. «Անցումի որպես հասարակության զարգացման տրամաբանական փուլի ընդունումը ելակետից մինչ տրամաբանական վերջնական արդյունք, արմատացած է հասարակության ֆունդամենտալ սկզբունքներում արդիականացման ուղղահայաց և հորիզոնական պատեռներին վերաբերող պատկերացումներում, զարգացումներում: Միջազգային քաղաքական դրությունը ցույց է տալիս մի շարք երկրներում մի ոչ ժողովրդավարական համակարգից մյուսին անցումը կամ հիբրիդ համակարգերի ստեղծումը, ինչը վկայում է տրանսֆորմացիայի ճանապարհով ընթացող երկրների զարգացման տարրաբնույթ ընթացքը»: Իսկ Ա. Մելվիլը անցումագիտության հետևյալ սահմանումն է առաջարկում. «Քաղաքական տրանսֆորմացիաների բազմազանության օրինաչափությամբ զբաղվող անցումագիտությունը որպես ենթագիտություն, իր առջև նպատակ չի դնում համընդհանուր ժողովրդավարացման մատրիքսի ստեղծումը»:

Անցումագիտությունը ունի երկու չափորոշիչներ, որոնցից առաջինը դիտարկում է անցումային շրջանը ամբողջությամբ և անմիջականորեն կապված է տրանզիտ

[99] Хантингтон С., Третья волна:Демократия на исходе 20-ого века. С. Хантингтон, - М., 2003, с.368

[100] Банс, В. Элементы неопределенности в переходный период. В. Банс // Полис.- 1993. Н.1, с.44-51

հասկացության հետ, իսկ երկրորդը դիտարկում է անցումային շրջանի մոդելը, այսինքն քաղաքական վարչակարգի կերպափոխումը: Քաղաքական համակարգի կերպափոխումը փոխկապակցված է սոցիալական տրանսֆորմացիայի հետ: Սոցիալական կերպափոխումը սոցիալական ինստիտուտների, արժեհամակարգերի, սոցիալական վարքագծի մոդելների ակտորների կապակցված փոփոխությունների վեկտորների գործընթացն է: Սոցիալական տրանսֆորմացիան արտահայտում է սոցիալական ինստիտուտների ադապտացման հնարավորությունը նոր սոցիալական պահանջներին. Պահպանելով ռացիոնալ ավանդական կառույցները զուգահեռ նոր ինստիտուտներ ստեղծելով քաղաքացի-իշխանություն հետադարձ կապը պահպանելու նպատակով[101] : Սակայն, առանց համակարգի փոխակերպման ներդաշնակ անցում հնարավոր չէ: Ուստի, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի առանձնահատկությունները, վերլուծենք այն Տալկոտ Պարսոնսի համակարգային տեսության միջոցով:

Ըստ Տալկոտ Պարսոնսի քաղաքական համակարգի կառուցվածքային հիմքը կազմում են հինգ փոխկապակցված ենթահամակարգերը: Ենթահամակարգերից առաջինը իր կառուցվածքում տարատեսակ քաղաքական ինստիտուտներ և նրանց փոխհարաբերությունների ամբողջականությունը ներառող ինստիտուցիոնալ ենթահամակարգն է պետությանը՝ որպես քաղաքական իշխանության սկզբնաղբյուրով: Պետության հետ մեկտեղ կարևոր տեղ են զբաղեցնում քաղաքական կուսակցությունները, շահային խմբերը, զանգվածային լրատվության միջոցները, եկեղեցին, որոնք նշանակալիորեն ազդում են քաղաքական համակարգի վրա: Ինստիտուցիոնալ ենթահամակարգում կարևոր տեղ են զբաղեցնում շահային խմբերը: Հասարակության տարբեր խմբեր փոխկապակցված են շահային տարբերությունները արտահայտող հարաբերություններով: Մարդկանց խմբերի վարքագծային նմանությունը չի վկայում սոցիալական շահերի նույնության մասին, որոնք կազմում են հասարակության քաղաքական կյանքի կողմնորոշիչները: Շահերը անհատների և խմբերի որոշակի կարիքների և նպատակների արտացոլումն է, գործելու խթանը: Հասարակական և

[101] Мелвиль, А. Ю., О траекториях посткомунистиеских трансформаций / А. Ю. Мелвиль // Полис._2002.н.1.с.66

անհատական շահերը անհատական և խմբային քաղաքական ակցիաների պատճառներ են:

Շահային խմբերը որպես ոչ քաղաքական ինստիտուտներ, միավորում են միանման շահեր ունեցող անհատներին որոշակի խմբերում սեփական շահերի արտիկուլյացիայի համար, ինչպես նաև այլ խմբերի և քաղաքական ինստիտուտների հետ հարաբերություններում : Շահային խմբերը ունեն ճկուն կազմակերպչական հիմքեր և մասնագիտակցված աշխատակիցների կազմ: Շահային խմբերը մասնակցում են քաղաքական գործընթացին խորհրդակցական պետական կառույցներում իրենց ներկայացուցիչների միջոցով: Շահային խմբերը տարբերվում են կառուցվածքով, գործունեության բնույթով, ֆինանսավորմամբ: Վերոնշյալ տարբերությունները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական կյանքում: Շահային խմբերի տեսակներից առաջինը ոչ կանոնակարգված, տարերայնորեն ձևավորվող շահային խմբերն են: Այս խմբերը տարերայնորեն կազմավորվում են և նույն կերպ լուծարվում: Պայմանավորված կառավարության կողմից ընդունած որոշմամբ կամ հասարակության շրջանում տարածված տեղեկատվությամբ՝ առանց նախնական պայմանավորվածության, ֆրուստրացիայի ազդեցությամբ, անհատների խմբեր դուրս են գալիս փողոց՝ արտահայտելու իրենց բողոքը: Այնտեղ, որտեղ չկան կազմակերպված խմբեր կամ այդպիսի խմբերը քաղաքական համակարգում զրկված են պատշաճ ներկայացվածությունից, ցանկացած պատահականություն կամ նոր քաղաքական առաջնորդի երևան գալ կարող է ուժգնացնել բողոքը՝ վերածելով այն հրդեհի: Այնուհետև կարող է լինել սոցիալական պայթյուն, որը կստանա անկանխատեսելի և անկառավարելի բնույթ: Քաղաքացիական զայրույթի դրդապատճառները տարատեսակ են: Հաճախ հասարակական բողոքը արտահայտող ցույցերը լինում են մեկ ազգի կողմից մյուսի նկատմամբ բռնության արդյունքում կամ հասարակության տարբեր խմբերի սոցիալական բողոքի հետևանքով: Օրինակ՝ բրիտանական արհեստակցական միությունների շրջանում լայն տարածում ունեցող «վայրի» գործադուլները տարածում են ստանում մայրցամաքային Եվրոպայի այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան, Շվեյցարիան: Երբեմն ոչ կազմակերպված խմբերը անհատների խմբավորումներ են, որոնք որոշակի սոցիալական շերտի են պատկանում, օրնակ՝ ռասայական կամ էթնիկ խումբ: Երկրորդ խումբը ոչ ասոցատիվ շահային խմբերն են, որոնք չեն առանձնանում լավ կազմակերպվածությամբ և նրանց ակտիվությունը դրվագային բնույթ ունի:

Չկազմակերպված խմբերից տարբերվում են շահերի ընդհանրությամբ, նույն էթնիկ խմբին պատկանելությամբ, գործունեության բնույթով և հնարավոր է արյունակցական կապերով: Որոշ ենթախմբեր ոչ ասոցացված խմբերի ներսում կարող են հանդես գալ ոչ կազմակերպված խմբերի տեսքով: Կա ոչ ասոցացված խմբերի երկու տարրատեսակ: Տարատեսակներից առաջինը շատ մեծ խումբ է, զուրկ է կազմակերպվածությունից, չնայած նրա անդամները, աղոտ, բայց պատկերացնում են իրենց շահերի ընդհանրությունը: Շատ էթնիկ, տարածաշրջանային և մասնագիտացված խմբեր դասվում են այդպիսի խմբերի շարքին: Նմանատիպ խմբավորումներ ձևավորելը բավականին բարդ է: Այդպիսի խմբավորումների որոշ անդամներ տարբեր հարցերի նկատմամբ ունեն նույն մոտեցումները, բայց նրանք կարող են տարաձայնություններ ունենալ անհրաժեշտ ռեսուսների և աշխատանքի բաշխման հարցում: Երկրոդ խմբին են դասվում միմյանց հետ անմիջական կապ ունեցող փոքր գյուղական, տնտեսական կամ էթնիկ խմբակների անդամները: Փոքր, անձնական կապերով միավորված խումբը ունի մի շարք առավելություններ և կարող է շատ արդյունավետ լինել որոշակի քաղաքական իրավիճակներում: Եթե խմբի անդամները կապված են միմյանց հետ, իսկ նրանց շահերը օրենքի սահմաններից դուրս են, այդպիսի խումբը կարող է հարկ համարել պահպանելու իր ոչ պաշտոնական բնույթը կամ առհասարակ իր գործողությունը իրականացնել քողարկված: Հաճախ խմբային կապերը և շահերը նպաստում են անձնական շահերի շրջանառության մշտական մակարդակի հաստատմանը և դրանց լեգիտիմության բարձրացմանը :

Նմանօրինակ խմբերի կազմավորման և գործունեության մեջ բարձր է երիտասարդության ներգրավվածությունը: Անցման փուլում գտնվող երկրներում և մասնավորապես Հայաստանում երիտասարդությանը անհրաժեշտ է դիտարկել որպես քաղաքական գործընթացների ակտիվ և լիիրավ անդամ: Ուսումնասիրելով ՀՀ-ում հասարակական և քաղաքական դաշտը՝ կարող ենք փաստել, որ սկսած 2008 թվականից երիտասարդության դերը և նշանակությունը սույն գործընթացներում գրանցում է ստաբիլ աճ: Եթե 2008 թվականին տեղի ունեցող երկարաժամկետ բողոքի ակցիաների ընթացքում առաջին անգամ նորնակախ ՀՀ պատմության մեջ հայտարարվեց «Երիտասարդության օր», որին մասնակցեցին մեծամասամբ երիտասարդներ, ապա հետագայում կազմակերպվող գրեթ բոլոր խոշոր բողոքի ակցիաները՝ Electric Yerevan, «Ոչ 150

դրամին», «Դեմ եմ» և այլն կազմակերպվում էին կամ բացառապես երիտասարդների կողմից, կամ դրանց մասնակիցների գերակշիռ թիվը կազմում էին երիտասարդներ:[102]

Հաջորդը ինստիտուցիոնալացված խմբերն են. Քաղաքական կուսակցությունները, բիզնես-կորպորացիաները, զինված ուժերը, բյուրոկրատիան և եկեղեցին հաճախ օժանդակում են իրենց շահերի ներկայացմամբ և պաշտպանությամբ զբաղվող որոշակի քաղաքական խմբերի կամ առանձին ներկայացուցիչների: Ինստիտուցիոնալ խմբերը պաշտոնական կառույցներ են, որոնք, շահերի արտիկուլյացիային զուգահեռ, իրականացնում են քաղաքական կամ հասարակական գործառույթներ: Քաղաքական խմբերը արտահայտում են սեփական կամ հասարակության մաս կազմող առանձին խմբերի շահերը: Ինստիտուցիոնալ խմբերի ազդեցությունը պայմանավորված է նրանց կառուցվածքային հիմքով՝ տվյալ կորպորացիայի անդամներ կամ նրա կազմի մեջ մտնող կազմակերպություններ: Քաղաքական ինստիտուտի վրա հիմնվող խումբը ուղիղ մուտք ունի քաղաքական կուրսը որոշող անձանց նկատմամբ: Ժողովրդավարական երկրներում քաղաքական կուրսի մշակման հիմանական պատասխանատուները քաղաքական կուսակցություններն են: Ոչ քաղաքական ինստիտուցիոնալ խմբերը նույնպես կարող են դառնալ քաղաքական գործընթացի մասնակից: Օրինակ՝ Իտալիայում Հռոմեական կաթոլիկ եկեղեցին ինստիտուցիոնալ շահային խումբ է, որը մեծ ազդեցություն ունի քաղաքական կուրսի վրա: Քաղաքական կյանքի միջամտության հիմնական ուղիները կրոնական կազմակերպություններն են: Մուսուլմանական երկրներում արմատական հոգևորականությունը նույնատիպ դեր է կատարում՝ կանխորոշելով պետական քաղաքականություն իրականացնելիս բարոյական որոշակի սկզբունքներով առաջնորդվելու անհրաժեշտությունը, ակտիվ լոբբինգ իրականացնելով պետական պաշտոնյաների շրջանում և ժամանակ առ ժամանակ մասնակցելով կառավարման գործընթացին: Ամբողջատիրական վարչակարգի պայմաններում, որտեղ հստակ ընդգծված քաղաքական բնույթ ունեցող խմբերի գործունեությունը արգելվում է կամ խիստ վերահսկվում, ինստիտուցիոնալ խմբերը հսկայական կարևորություն են ձեռք բերում [103]: Ասոցատիվ խմբերը ձևավորվում են անհատների որոշակի խմբի շահերը ներկայացնելու համար: Դրանց թվին դասվում են արհմիությունները, երիտասարդական

[102] Мамиджанян А., ВЛИЯНИЕ ДЕМОКРАТИЧЕСКОГО ТРАНЗИТА НА ПОЛИТИЧЕСКИЕ СИСТЕМЫ: МОЛОДЕЖЬ КАК АКТОР. АКТУАЛЬНЫЕ НАУЧНЫЕ ИССЛЕДОВАНИЯ В СОВРЕМЕННОМ МИРЕ, ВЫПУСК 5(25) Часть 8 . 2017, ст. 127-131

[103] Парсонс Т. Система современных обществ, Аспект Пресс, Москва, 1998,270с, с.130-133

կազմակերպությունները, էթնիկ և կրոնական խմբավորումները: Այս խմբերը ունեն շահերի և պահանջների ձևավորման հստակ մեխանիզմներ և պրոֆեսիոնալ-աշխատակիցների մշտական շտաբ: Կազմակերպչական հիմքերի առկայությունը նրանց առավելություն է տալիս ոչ ասոցատիվ խմբերի նկատմամբ, բացի այդ նրանց նպատակները և մեթոդները լեգիտիմ են: Ասոցատիվ խմբի մեկ այլ տեսակ միավորում է քաղաքացիներին միասնական քաղաքական նպատակի շուրջ: Օրինակ՝ բնապահպանության պահպանմանն ուղղված խմբերը: Շահային խմբերը տարբերվում են նաև ըստ համակարգերի: Քաղաքական համակարգի և շահային խմբերի միջև կա համակարգային կապ: Բոլոր ժամանակակից հասարակություններում գոյություն ունեն տարատեսակ շահային խմբեր, սակայն նրանց և կառավարչական ինստիտուտների միջև փոխհարաբերությունների մոդելները նույնը չեն: Կարելի է առանձնացնել շահային խմբերի երեք համակարգեր՝ պլյուրալիստական, ժողովրդավարական կորպորատիվ և կառավարվող: Շահային խմբերի պլյուրալիստական համակարգին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ՝ տարատեսակ խմբեր կարող են ներկայացնել միասնական սոցիոէտալ շահ, անդամակցությունը խմբին կամավոր է և սահմանափակ: Պլյուրալիստական համակարգը առանձնանում է խմբերի ազատ բնույթով կամ ապակենտրոնացվածությամբ, կառավարությունից հստակ տարրանջատվածությամբ: Պլյուրալիստական համակարգի լավագույն օրինակը ԱՄՆ-ն է, նմանատիպ համակարգ զարգացած է Կանադայում և Նոր Զելանդիայում: Շահային խմբերի մյուս համակարգը ժողովրդավարական-կորպորատիվն է՝ շահերի ներկայացման առավել կազմակերպվածությամբ: Այս համակարգում յուրաքանչյուր սոցիոէտալ շահ ներկայացված է միասնական գլխադասային միության կողմից, իսկ անդամակցությունը հաճախ պարտադիր է և համընդհանուր:

Խոսելով ինստիտուցիոնալացված խմբերում երիտասարդների ներգրավվածության մասին ՀՀ-ում կարող ենք փաստել, որ 2017 թվականին տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրությունների արդյունքում պառլամենտում հայտնված չորս քաղաքական ուժերից երեքը ունեն ակտիվ երիտասարդական կազմակերպություններ: Հարկ է նշել, որ երիտասարդներից շատերը ներկայացված էին որպես թեկնածուներ, իսկ չորրորդ քաղաքական ուժի հիմնական շեշտադրումը թե թեկնածուների, թե նախընտրական արշավի, թե էլեկտորատի տրամաբանությամբ կատարվում էր հենց երիտասարդության վրա:

Երկրորդ ենթահամակարգը նորմատիվայինն է, որը իրավական նորմերի, ավանդույթների, սովորույթների, բարոյական սկզբունքների ամբողջություն է, որոնց միջոցով կարգավորվում և բնորոշվում է հասարակության քաղաքական կյանքը: Երրորդ ենթահամակարգը գործառութայինն է, որը բնութագրվում է քաղաքական համակարգի գործունեության ձևերը, իշխանության իրականացման ճանապարհները, քաղաքական և հասարակական ինստիտուտների գործառույթները: Չորրորդ ենթահամակարգը կոմունիկատիվն է, որը ներառում է քաղաքական փոխազդեցության բոլոր ձևերը և միջոցները, ինչպես բուն համակարգի ներսում, այնպես էլ համակարգի և միջավայրի միջև: Ներկա ժամանակաշրջանում կոմունիկացիայի կարևորությունը նպաստում է այս ենթահամակարգի կարևորության աճին: Հինգերորդ ենթահամակարգը մշակութային – գաղափարականն է, որը տարբեր քաղաքական գաղափարների, կոնկրետ հասարակությանը բնորոշ քաղաքական կողմնորոշիչների ամբողջությունն է: Քաղաքական համակարգի արժեքային բաղկացուցիչը կարևոր է, քանի որ քաղաքական գործընթացի սուբյեկտների արժեքային բաղադրիչներն են բնորոշում քաղաքական համակարգի զարգացվածությունը: Նշենք կարևորագույն խդիրները, որոնք կոչված է լուծելու քաղաքական համակարգը՝

- Նպատակադրում, նպատակների առաջադրում, որոնք համապատասխանում են հասարակության զարգացվածության տվյալ մակարդակին:
- Ինտեգրում՝ սոցիալական շահերի ագրեգացիա և հասարակությունում հակամարտային իրավիճակների զրոյացում, հատկապես ռեսուրսների բաշխման շուրջ:
- Շահային արժեքների պահպանում՝ հասարակությանը որոշակի արժեքային համակարգի շուրջ համախմբում:
- Կոմունիկացիա՝ տեղեկատվական հոսքերին մասնակցություն, արտաքին աշխարհից եկող ազդակներին համարժեք արձագանքի մշակում [104]:

Տեղեկատվական դարաշրջանի զարգացմամբ պայմանավորված եվրոպական երկրները ենթարկվում են սրընթաց փոփոխությունների տնտեսական, տեխնոլոգիական, քաղաքական և հասարակական կյանքում: Այս գործընթացները այնքան արագ են և անդառնալի, որ որոշ գիտնականներ դրանց նկարագրման համար օգտագործում են «հետինդուստրիալ», «հետֆորդիստական», «պոստմոդեռն» կամ «ինֆորմացիոն

[104] Bertalanffy L. von. General System Theory – A Critical Review // General Systems. Vol. VII. 1962. P. 1–20

հասարակություն» հասկացությունները: Անկախ գիտական հանրության կողմից այս եզրույթների ընդունված լինելուց՝ բոլոր գիտնականները համաձայնվում են այն պնդմանը, որ ՏՀՏ գործիքակազմը օգտագործող հասարակությունները խիստ տարբերվում են հետպատերազմյան հասարակություններից: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում ներկայացնել եվրոպական մայրցամաքում տեղի ունեցած երիտասարդական շարժումները, որոնք էապես ազդել են հանրային քաղաքականության մոդեռնիզամցան վրա:

Երիտասարդության տեսանկյունից կարելի է ասել, որ ժամանակակից արագ փոխվող հասարակարգը՝ իր սրընթաց տեխնոլոգիական և ստրուկտուրալ փոփոխություններով խթանում է նաև խորքային մոդերնիզացիոն գործընթացներ հասարակության մեջ:

Երիտասարդության մեջ փոփոխությունների խթանիչ գործոններից է համարվում դպրոցական կրթության երկարացումը: Դրա արդյունքնում երիտասարդները ավելի ուշ են մուտք գործում աշխատաշուկա և, որպես արդյունք, ավելի երկար ժամանակ ֆիանանսական կախում ունեն ծնողներից[105]:

Մեկ այլ խթանիչ գործոն է ընտանիքի ինստիտուտի փոփոխությունը. վիճակագրական հետազոտությունները վկայում են, որ ավանդական ընտանիքներից զատ այժմ մեծ տեսակարար կշիռ են կազմում ամուսնալուծված ընտանիքները, որտեղ երեխային խնամում է ծնողներից միայն մեկը: Սա պոստմոդեռն հասարակարգերում անձի ազատությունների և ազատականության դերի բարձրացման հետևանքն է: Այդ դերը բարձրացել է ի հաշիվ հասարակության, համայնքի և միջանձնային հարաբերություններում պարտավորությունների նվազման:

Ակնհայտ է, որ գլոբալացման և մասնավորապես եվրոպականացման գործընթացը կընձեռի շատ ավելի լայն հնարավարություններ երիտասարդների որոշակի խմբերին՝ լավ կրթված և մրցունակ երիտասարդներին, մինչդեռ մնացածի համար այն կարող է դառնալ աշխատաշուկայում չպահանջարկված դառնալու և հասարակության մեջ մարգինալացվելու պատճառ:

Մեկ այլ ահագնացող խնդիր է ԵՄ անդամ գրեթե բոլոր երկրների համար արտարխոն բնակչության ծերացումը: Մեծահասակների և չափահաս երիտասարդների օր

[105] Մամիջանյան Հ., Եվրոպական երիտասարդական շարժումների դերը երիտասարդության քաղաքական սոցիալականացման մեջ. Երևան. 2017. Տարածաշրջան և աշխարհ, էջ 35-40

օրի վատթարացող հարաբերակցությունը ծնում է «միջսերնդային պայմանագրի» փոփոխություն, որը բացասական է ազդում տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքի վրա: Չմանրամասնելով տնտեսական հետևանքները, որոնք ակնհայտ են, որպես քաղաքական և սոցիալական ազդեցության օրինակ կարող է դիտարկվել BrExit արշավը. ըստ հանրաքվեի ընթացքում իրականացված հարցումների երիտասարդ բրիտանացիների ճնշող մեծամասնությունը դեմ է արտահայտվել ԵՄ կազմից հեռանալու որոշմանը, սակայն մեծահասակ ընտրողների զգալի տեսակարար կշռի հետևանքով՝ փաստացի մեծահասակները կայացրեցին մի որոշում, որի հետևանքները հիմանակնում ընկնելու են երիտասարդների ուսերին:

Եվրապական գիտական դպրոցը սահմանազատում է երիտասարդական հետազոտությունների մի քանի տրամաբանություն: Առաջինը երիտասարդությունը դիտարկում է որպես տարիքային խումբ՝ 15-25, իսկ երբեմն 14-30: Սակայն դիտարկելով երիտասարդությանը որպես տարիքային խումբ գիտնականները կանգնում են խնդրի առաջ՝ ըստ հետազոտությունների երիտասարդները իրենց զբաղվածությամբ բաժանվում են. «ուսանողների, որոնք աշխատում են», «երիտասարդ աշխատակիցների, որոնք սովորում են», «ուսանողների», «երիտասարդ աշխատողների» և «գործազուրկների»: Նշված դասակարգման պարագայում բացակայում են տարիքային ընդհանրությունները, այպիսով երիտասարդությանը միայն որպես տարիքային խումբ դիտարկելը սխալ է :

Գիտնականների մեկ այլ խումբ դիտարկում է երիտասարդությանը որպես ռիսկային խումբ: Ըստ ուսումնասիրությունների երիտասարդները ավելի հակված են մտավոր հիվանդությունների, ալկոհոլիզմի և թմրամոլության: Այս համատեսքտում հետաքրքրական է “ենթադասի” ֆենոմենը. Որոշ երիտասարդներ՝ ներգրավվելով անկանոն սեռական հարաբերությունների մեջ դառնում են չպլանավորված և/կամ վաղաժամ հղիությունների քանակի բարձրացման պատճառ, որը բերում է առանց ծնողական հոգածության կամ առանց հայրական ծնողական խնամության երեխաների թվի աճին: Այս ցուցանիշը, իր հերթին բերում է հանցագործությունների, դաժանության, թմրամոլության և նմանօրինակ արատավոր երևույթների քանակի աճին: Հենց այս երևույթներով կաղապարված մարդկանց խումբն էլ կազմում է «ենթադասը», որը ունի ինքնավերարտադրման հատկություն: Ֆրանսիայի մեծ քաղաքաներում Banlieue կոչվող արվարձանների առաջացումը կարող է ծառայել այս արևույթի խոսուն օրինակ:

Մեկ այլ տեսանկյունից «երիտասարդությունը» հաճախ դիտարկվում է որպես անցման շրջան:

Գաղտնիք չէ, որ ԵՄ երկրներում, ինչպես և ամբողջ աշխարհում երիտասարդության մասնակցությունը քաղաքական գործընթացներին ընտրությունների միջոցով ցածր մակարդակում է: Սակայն եթե ընդլայնենք քաղաքական մասնակցության ընկալումները՝ դրանց մեջ ներառելով երիտասարդական շարժումները, ապա պատկերը տրամագծորեն այլ է: Նախ սահմանենք, թե ինչ է շարժումը: Գիտական գրականության մեջ հանդիպում են հետևյալ հատկանիշները ներառող սահմանումներ[106].

- Հավաքական կամ միացյալ գործողություն
- Արտա-ինստիտուցիոնալ կամ ոչ ինստիտուցիոնալ գործողություններ
- Փոփոխությունների պահանջ
- Պահանջի հասցեատեր՝ կառավարություն, կազմակերպություններ, քաղաքական խմբեր և այլն
- Կազմակերպվածության որոշակի աստիճան
- Որոշակի շարունակականություն
- Հավաքական համերաշխություն կամ հավաքական նույնականացում

Անցած դարի կեսերից սկսած երիտասարդական շարժումները մեծ թափ են առել Եվրոպայում: Սկսած 60-ականների մշակութային հեղափոխությունից մինչև էկոլոգիական և հակաավտորիտար շարժումները: Ինչ խոսք, երիտասարդական շարժումները չեն սահմանափակվում միայն բարեփոխիչ պահանջներով՝ հայտնի են մի շարք հետադիմական և նեոնացիստական շարժումներ Եվրոպայի մի շարք երկրներում: Սա, թերևս, պայմանավորված է երիտասարդների համեմատական ավելի սուր արտահայտված հուզականությամբ և ստատուս քվոն փոփոխելու մղումով: Ըստ հետազոտության՝ բոլոր ծայրահեղական շարժումների ներկայացուցիչները՝ ծայրահեղական աջականներից մինչև անարխիստներն ու բնապահպանները, վստահ էին, որ իրենք նպաստում են աշխարհը ավելի լավ կեցավայր դարձնելուն: Մեկ այլ պատճառ է սոցիալական անհավասարությունը, բարիքների անհավասարաչափ բաշխումը և այլն: Պատճառ է դիտարկվում այն փաստը,

[106] F Fominaya F., C., Social Movements and Globalization: How protests, occupations and uprisings are changing the world. Sociology for Globalizing Societies, Palgrave Macmillan, London, 2014.

որը երիտասարդները շատ ավելի քիչ կորցնելու բան ունեն և ավելի անհանդուրժող ու ծայրահեղական են քաղաքական և հասարակական գործընթացներում[107]:

Հաշվի առնելով նշված և մի շարք այլ անհատական դրդապատճառները՝ տրամաբանական է, որ դրանք պիտի բերեն երիտասարդների սոցիալականացման, համախմբման և ձևավորեն շարժումներ: Դրա համար որպես հարթակ հաճախ ծառայում են համալսարանները, որտեղ գործում են ֆորմալ և ոչ ֆորմալ երիտասարդական կազմակերպություններ: Դրանց շրջանակում են կազմակերպվում երիտասարդական շարժումների զգալի մասը՝ օգտագործելով ժամանակակից տեխնիկական հնարավորությունները՝ սոցիալական ցանցեր, հեռահաղորդակցություն և այլն: Օրինակ՝ «շղթայական կարճ հաղորդագրությունները» (chain sms), որոնք օգտագործվեցին Մադրիդյան պայթյուններից հետո կազմակերպված 13-Մ շարժման ժամանակ[108]:

Երիտասարդները զգալիորեն ավելի կրեատիվ են մոտենում իրենց քաղաքական և հասարակական ակտիվության կազմակերպմանը: Մասնավորապես հետխորհրդային եվրոպական երկրներում քաղաքական կուսակցությունները հաճախ երիտասարդների համար նույնականացվում են ավտորիտար հասարակարգի ժամանակ գործող միակուսակցական համակարգի հետ և հենց այդ պատճառով երիտասարդները ձգտում են գտնել քաղաքական ինքնաարտահայտման այլ խողովակներ: ԵՄ այն երկրներում, որոնք չեն կիսում խորհրդային անցյալը՝ երիտասարդները կուսակցությունները հաճախ ընկալում են որպես ընտրանու ակումբներ, որոնք դժվար են ենթարկվում փոփոխությունների:

Բացի ինստիտուցիոնալ քաղաքականության նկատմամբ մերժողականությունից Եվրոպայի հասարակական հորիզոնում առկա է ևս մի գաղափարական առճակատում, որը ակտիվորեն տեղի է ունենում անկախ շարժումների և համեմատաբար ինտիտուցիոնալացված ձախակողմյան երիտասարդական դերակատարների միջև դեռևս 1960-ական թվականներից: Այդ փաստը վկայակոչում է, որ երիտասարդության պասիվ մասնակցությունը ինստիտուցիոնալ քաղաքական կյանքին ցույց չի տալիս երիտասարդության քաղաքական անտարբերությունը կամ մասնակցայնության ցանկության նվազումը: Անկախ երիտասարդական շարժումները զգալի դերակատարում

[107] Giddens A., Modernity and Self-Identity: Self and Society in the Late Modern Age, Stanford, CA: Stanford University Press, 1991

[108] Fominaya F., Cristina ,"Autonomous Movement and the Institutional Left: Two Approaches in Tension in Madrid's Anti-globalization Network", South European Society & Politics, Vol 12, 3: 335-340, 2007

են ունեցել ֆեմինիստական, խաղաղասիրական, շրջակա միջավայրի պաշտպանության և ուսանողական մի շարք բողոքների ակցիաների մեջ, ուստի երիտասարդության մասնակցության մակարդակը հանրային նշանակություն ունեցող հարցերին շատ բարձր է[109]:

Անկախ երիտասարդական շարժումները սպառնում են չեղյալ համարել ներկայացուցչական դեմոկրատիայի և մեծամասնության որոշիչ կարծիքի օրենքները՝ պաշտպանելով մասնակցային կառավարման մոդել, որը հիմնված է ուղղակի ժողովրդավարության և ինքնակառավարման վրա: Սույն մոդելի հորիզոնական (ոչ հիերարխիկ) կառուցվածքը, կոնսեսնուսի (եթե հնարավոր է) կամ ընդհանուր նվազագույն պահանջների բավարարման տրամաբանությամբ որոշումների կայացումը զգալիորեն հակասում է ընդունված ժողովրդավարական նորմերին: Կառուցվածքային կարգապահության թույլ զարգացվածության պատճառով նմանօրինակ շարժումների պարագայում էական նշանակություն են ունենում զարգացած սոցիալական ցանցերը և արագ տեղեկատվական հոսքերը, որոնք կազմակերպվում են նորագույն տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի կիրառմամբ: Դրանց օգտագործումը հաճախ բերում է նրան, որ այս շարժումները շատ ավելի մեծ պոտենցիալ ունեն արագ մոբիլիզացվելու համար: Օրինակ՝ իսպանական Ինդիգնադոս շարժման մասնակիցները մերժում էին ինստիտուցիոնալ ձախակողմյան կառույցների մասնակցությունը (որպես կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ ոչ թե որպես անհատներ): «Աքոմպադասոլ»-ի հիմնական գաղափարներից էր «աններկայացվածությունը»՝ անհատները ներկայացնում են միայն իրենք իրենց, այլ ոչ թե խմբեր կամ ֆորմալ կազմակերպություններ: Նույն երեույթը նկատվում էր նաև 2015 թվականի ամռանը Երևանում իրականացված Electric Yerevan շարժման ընթացքում:

Անցած դարի վաթսունական թվականների անկախ երիտասարդական շարժումների գաղափարական կապերը այսօր էլ մեծ ազդեցություն ունեն հասարակական կյանքում: Խոսքը գնում է մի շարք առանցքային գաղափարների մասին, որոնք այժմ մեծապես օգտագործվում են ֆեմինսիտական և կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված շարժումներում: Օրինակ՝ «Անձնականը քաղաքական է» կոչը, որի հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ քաղաքական փոփոխությունների

[109] Bendit R., Youth Sociology and Comparative Analysis in the European Union Member States, German Youth Institute, Munich, 2006, 79 p.

ապահովման համար անհրաժեշտ է փոխել հասարակության ամբողջ կենսոլորտը, կենսակերպը: Այս գաղափարախոսության կողմնակիցները պնդում են, որ անհատի կենսակերպը, յուրաքանչյուր անհատի ամենօրյա խնդիրները փոխկապակցված են քաղաքական անցուդարձի հետ: Մեկ այլ օրինակ է այն գաղափարախոսությունը, որում նշվում է, թե հասարակությունը երբեք չի կարողանա ամբողջությամբ օգտագործել իր պոտենցիալը քանի դեռ այն չի գործում ամբողջական փոխօգնության, մասնակցայնության և քաղաքացիների հավասարության սկզբունքներով:

Երրորդ գաղափարը այն է, որ հասարակական շարժումներին անհրաժեշտ է անկախություն և սոցիալական տարածք իրենց քննադատության, նոր ռազմավարությունների և ընդունելի այլընտրանքների մշակման համար: Այլ կերպ ասած հասարակական շարժումները պիտի ազատ լինեն հեգեմոն իշխանության կառուցվածքային միավորներից: Չորրորդ գաղափարը քարոզում է այն պնդումը, որ հասարակությունը չի կարող սպասել ապագա հեղափոխություններին, որպեսզի բարելավի իր կյանքը՝ փոփոխությունները անհրաժեշտ է կատարել հենց այսօր:

Նշված բոլոր գաղափարների համար ընդհանրական է ժողովրդավարացման պահանջը: Երիտասարդության շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումների արդյունքում վեր հանված թերահավատությունը ժողովրդավարական ինստիտուտների հանդեպ և Եվրոպայում երիտասարդական անկախ շարժումների կողմից ժողովրդավարության կարևորումը հետաքրքրքական հակադրություն է ձևավորում, որը խորը ուսումնասիրման կարիք ունի: Նմանօրինակ երեույթները ունեն լայն աշխարհագրական և ժամանակագրական տարածում՝ սլովենական «rock the vote»-ից մինչև սերբական «Otpor»-ը, ուկրաինական «PORA»-ից մինչև վրացական «KMARA!»-ն: Այս բոլոր շարժումները և մի շարք այլ գունավոր հեղափոխությունների ժամանակ սկսված երիտասարդական շարժումներ ունեն բազմաթիվ ընդհանրություններ: Նմանություն է նկատվում նաև աշխարհի տարբեր ծայրերում ծագած այն երիտասարդական շարժումների հետ, որոնք պարունակում էին սոցիալական արդարության, կապիտալիստական հասարակարգի անարդարությունների վերցման, ժողովրդավարության հաստատմանն ուղղված կոչէր՝ Իսլանդական «պղինձների և թավաների» շարժումը, պորտուգալաան

«Geracao a Rasca» շարժումը, հունական «Syntagma» շարժումը, ինչպես նաև Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում և ԱՄՆ-ում ծագած «Occupy» շարժումները:[110]

Երիտասարդության քաղաքական մոբիլիզացիայի մեկ այլ տարածված պատճառ են այն սոցիալական խնդիրները, որոնց հետ բախվում են երիտասարդները:Դրանք հիմնականում ներառում են սոցիալական «անորոշության» դեմ պայքարի վրա՝ պետական պարտքի մեծացման, երիտասարդության շրջանում գործազրկության բարձր մակարդակի, մատչելի անշարժ գույքի բացակայության և մի շարք այլ սոցիալական խնդիրների վրա: Ժամանակակից նեոլիբերալ կապիտալիտական աշխարհակարգին դեմ կազմակերպվել են նաև մի շարք ներբուհական երիտասարդական շարժումներ Դանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում և Հունաստանում 2005 և 2006 թվականներին: Հիմնական պատճառ է ծառայել ուսման վարձերի աճը, որը ուսանողները կապում են համաշխարհային ճգնաժամի և սխալ ֆինանսավարկային քաղաքականության հետ [111]:

Կատարված ուսումնասիրություններից կարող ենք փաստել, որ Եվրոպայում երիտասարդության քաղաքական մասնակցության գործոնը աննկատ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ երիտասարդական քաղաքական մոբիլիզացիան վերաճում է մասայական ցույցերի և բողոքների: Այնուամենայնիվ, որպես կանոն նման բողոքի ակցիաները ունեն որոշակի ուղղորդված կազմակերպական կառուցվածք, երբեմն ամենօրյա քաղաքական գործընթացների մեջ ներգրավված երիտասարդների կողմից: Եթե երիտասարդների քաղաքական սոցիալիզացիան դիտարկել ոչ թե զուտ ինստիտուցիոնալ, այլ արտաինստիտուցիոնալ տրամաբանության մեջ, ապա նկատվում է երիտասարդության մասնակցայնության և քաղաքական սոցիալականացման բարձր մակարդակ:

[110] Stevanson J. M., Listening to Radicals: Attitudes and Motivations of Young People Engaged in Political and Social Movements Outside of the Mainstream in Central and Nordic Europe, British Council, 2011, 32 p

[111] Vanandurel M., Amerio A., Stafseng O. And Tap P., Young People and Associations in Europe, Council of Europe, 1996

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անցումից համախմբում կերպափոխվող հասարկության պայմաններում քաղաքաքական գործընթացներում խիստ ընգծվում է մի շարք քաղաքական ինստիտուների դերը: Մասնավորապես երիտասարդությունը սույն գործընթացի գործուն ակտոր է՝ իրականացնելով ոչ միայն ուղղակի քաղաքական գործողություններ, այլ նաև աննուղակիորեն որպես սուբյեկտ և օբյեկտ ներգրավված լինելով հասարակության հարացույցի և արժեհամակարգի փոփոխության մեջ: Երիտասարդության ժամանակակից քաղաքական գործընթացի ակտորի փոխակերպման պայմանները կապված են քաղաքական ռեժիմի տեսակի հետ, բուն քաղաքական գործընթացի ձևի և փուլի հետ, կախված են պետական պաշտոնական կառույցներին ԶԼՄ-ների հաշվետվողականության աստիճանից, սոցիալ-քաղաքական կյանքին տեղեկատվական բաղադրիչի զարգացման մակարդակից, «սպառողական հասարակության» իդեալների տարածվածության աստիճանից և կրթական մակարդակից: Հայաստանի ժամանակակից քաղաքական տարածության մեջ նկատվում է արդիականացման մի քանի «ալիք», որոնց հիմքում էին բուն արդիականացման բնույթի, վեկտորի, ռեսուրսների, ակտորների և առարկայի տարբեր պատկերացումները: Եթե առաջին «ալիքը» կապված էր երիտասարդությանը քաղաքականացնելու, քաղաքական ակտիվության և քաղաքական փորձի զանգվածային ինստիտուցիոնալացման հետ, ապա, ժամանակի ընթացքում կատարվում է երիտասարդության ապաքաղաքականացումը, նրա ապաքաղաքականությունը արտահայտվում է նրան քաղաքացիական ակտիվության ոչ ինստիտուցիոնալ ձևերին ներգրավելու մեջ, ոչ այնքան քաղաքական, որքան նեղ սոցիալական խնդիրներ լուծելու ճանապարհին երիտասարդական ներուժը «շահադիտական-կուսակցական» նպատակներով օգտագործելու մեջ:Ամփոփելով տեսական հասկացությունները, որոնք նկարագրում են երիտասարդության դերը քաղաքական գործընթացներում՝ մենք հայտնաբերեցինք ժամանակակից քաղաքական գործընթացում երիտասարդության՝ ակտոր դառնալու պայմանները: Վերհանելով այն գործոնները, որոնք ազդում են երիտասարդության ընտրական վարքագծի վրա, եկանք այն եզրակացության, որ երիտասարդների մասնակցությունն ընտրական քաղաքական գործընթացում կախված է նրանց սոցիալական և քաղաքական շահերը ներկայացնելու կազմակերպման ոչ ինստիտուցիոնալ և ինստիտուցիոնալ ձևերից: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով երիտասարդների քաղաքական և հասարակական ակտիվությունը՝ եկանք այն

եզրակացության, որ երիտասարդների քաղաքական սոցիալականացում իրականացող հիմնական ինստիտուցիոնալ կառույցները՝ քաղաքական կուսակցությունները, կարիք ունեն հարմարվելու արդի մարտահրավերներին՝ ներկայացնելով երիտասարդների շահադրդման և քաղաքական սոցիալականացման նոր միջոցներ: Երիտասարդների ընդգրկումը քաղաքական կյանքի այս կամ այն ձևերում սահմանափակվում է քաղաքական իշխանության հետ տեղեկատվության անմիջական փոխանակման ուղիներիամբողջական բացակայությամբ, կամ մինիմիզացմամբ, ինչը առաջացնում է երիտասարդության քաղաքական մասնակցության ոչ ինստիտուցիոնալացված ձևերի աճին: Հաշվի առնելով շարունակական կրթության նկատմամբ երիտասարդների հետաքրքրության բարձր մակարդակը ՝ կարող ենք փաստել, որ կրթությունը քաղաքական սոցիալականացման արդյունավետ գործիք է: Քաղաքական կրթությունը և քաղաքական դպրոցը մասնավորապես ի հայտ է գալիս որպես Հայաստանում նոր ծագող երիտասարդների և քաղաքական իշխանության փոխգործակցության ինստիտուցիոնալ ձև, երիտասարդական քաղաքական նորարարության մշակման վերլուծության և փորձարկման եղանակ: Տեսական ուսումնասիրությունների և մի շարք այլ եղանակներով իրականացված հետազոտությունների արյդյունքների հիման վրա կարող ենք փաստել, որ բարձր կրթական մակարդակ ունեցող անձինք և այն անձինք, հետաքրքրված են հարատև կրթության ստացմամբ առավել ակտիվ են քաղաքական գործընթացներում: Քաղաքական դպրոցները, ոչ միայն հարատև կրթության միջոց են, այլ նաև ծառայում են երիտասարդական և քաղաքական իշխանության երկխոսության յուրահատուկ ձև, հարթակ, որի վրա ձևավորվում է գործողության գաղափարախոսությունը, հայրենասիրությունը, հանդուրժողականությունը, ընդհանուր պատմության և էթնո-մշակութային և կրոնական արժեքների հանդեպ հարգանքը, կատարվում է քաղաքական ակտիվիստների մոբիլիզացումը, քաղաքական առաջնորդների հավաքագրումը, նոր էլիտայի ձևավորումը, նոր սոցիալական և քաղաքական նախագծերի ստեղծումը: Քաղաքական դպրոցների նպատակն է օգնել երիտասարդներին հասկանալ ժամանակակից Հայաստանի քաղաքական գործընթացների բնույթը և առանձնահատկությունները, սոցիալական և քաղաքական պրակտիկ ոլորտում ձեռք բերել փորձառություն:

Ուսումնասիրելով երիտասարդական քաղաքական կազմակերպությունների և քաղաքական շարժումների փոխակերպման հրամայականները և երիտասարդների

քաղաքական սոցիալականացման ոչ ինստիտուցիոնալ եղանկաները՝ կարող ենք փաստել, որ Երիտասարդական խորհրդարանները անհրաժեշտ է դիտարկել որպես երիտասարդության ընտրական ակտիվության զարգացման և նոր քաղաքական էլիտայի հավաքագրման մեխանիզմ: Երիտասարդության պառլամենտարիզմը, որպես երիտասարդությանը քաղաքական գործընթացներին ներգրավելու ինստիտուցիոնալացված ձև , նպաստում է երկրում քաղաքական կյանքի ժողովրդավարացմանը, հասարակական ինքնակառավարման մեխանիզմների զարգացմանը, քաղաքական մրցակցության աճին, քաղաքական վերնախավի և առաջնորդների ձևավորմանը:

Ստացված տվյալները կարող են օգտագործվել քաղաքացիական հասարակության հաստատությունների համար տեսական և մեթոդաբանական առաջարկությունների սահմանման, ինչպես նաև երիտասարդության մասնակցության ակտիվացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Lasswell G. D. The analysis of political behavior. L., 1947, p168
2. Мерриам Ч. Новые аспекты политики // Антология мировой политической мысли. В 5 т. - Т. 2. Зарубежная политическая мысль. XX век. - М., 1997, 642 с
3. Алмонд Г. Сравнительная политология сегодня. Мировой обзор / Г. Алмонд, Дж. Пауэлл, К. Стром, Р. Далтон. - М., 2002, 537 с
4. Институциональная политология: Современный институционализм и политическая трансформация России / Под ред. С В . Патрушева. - М., 2006; 147 с
5. Շափաաղաթյան Հ. Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրները,Երևան, 2007, էջ 15-20
6. Соловьев А.И. Политическая коммуникация: к проблеме теоретической идентификации // Полис. - 2002. - No3. - С. 5-7.
7. Социологическая энциклопедия. В 2 т. - М., 2003. - Т. 1. - С. 674-675; Т. 2. - С. 534-537
8. Политическая энциклопедия. В 2 т. Т. 1. - М., 2000. - С. 727-728
9. Maslow A.H. Motivation and Personality.Harper and Brothers, 1987, 411 p
10. Журавлев А.Л, Социальная психология. Москва 2002. - 351 с
11. Исхаков А. М. о самоопредилении личности в современном обществе// психология и жизнь: сб. науч. тр. вып 1-М: МОСУ,РПО,2000, с.19-22
12. Андреева Г.М., Социально-психологические аспекты активизации человеческого фактора // Вопросы психологии. — 1986, № 3. , . с. 5-15.
13. Шебельников В. Предметность и субъектность детерминирующего мира в концепциях психологии // ж. «Методология и история психологии». Том 1. Выпуск 1. Январь-июнь 2006, с.23-40
14. Бронфенбреннер У., Два мира детства. Дети в США и СССР» М.: Прогресс, 1976, 167 с.
15. Гельман В.Я. Россия регионов: трансформация политических режимов / В.Я. Гельман.С.И. Рыженков, М. Бри. - М., 2000., с. 19-20
16. Մամիջանյան Հ., ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ. Երևան.2017. Այլընտրանք, էջ 153-161
17. Парсонс Т. Система современных обществ - М., 1997. 270 с.

18. Дарендорф Р. От социального государства к цивилизованному // Политические исследования. - 1993. - № 5, с.33-44

19. Истон Д. Категории системного анализа политики // Антология мировой политической мысли. - М., 1997, с. 630-642

20. Кравченко И.И. Политика и сознание // Вопросы философии. - 2006. - № 11, с.15-22

21. Дарендорф Р. Современный социальный конфликт. Очерки политической свободы. - М., 2002. с.120

22. Алмонд Г,Пауэлл Дж, Стром К, Далтон Р. Сравнительная политология сегодня.Мировой обзор,Научные редакторы перевода доктор политнаук, проф Ильин М.В., доктор фил. наук, проф Мельвиль А.Ю., Аспент пресс,.Москва,2002, 537 с.

23. Шутов А.Ю. Политический процесс. - М., 1994, с.19

24. Карпенко О.М., Ламанов И.А. Молодежь в современном политическом процессе в России. - М., 2006, с.19

25. Пай Д., Незападный политический процесс // Политическая наука. - 2003.№ 2. - С. 66-85

26. Лисовский В.Т. Социальные изменения в молодежной среде. - М., 2005, с.54

27. Кон И.С. Социология молодежи: Краткий словарь по социологии. - М.: Наука, 1988.- 150 с.

28. Иконникова С.Н. Молодежь. Социологический и социально-психологический анализ. - Л., 1974, с.122

29. Добрынина В.И. Воспитание личности - управляемый процесс // Социальное управление и молодежь. - Вып. 3. -М., 1969, с. 28-32

30. Эйзенштадт Ш.Н. От поколения к поколению // Электронная еврейская энциклопедия. URL: www.eleven.co.il/article/10105

31. Frith S. The Sociology of Youth. - L.: Open University Press, 1984, 230 p.

32. Волкова Ю., Социология молодежи: Уч. пособие / Ростов-н / Д, 2001, с.30-35

33. Мамиджанян. А., «Трактовка понятия «молодежь», «Государственное и муниципальное управление в XXI веке: теория, методология, практика» (Новосибирск: Издательство ЦРНС, 2017, с.140-146

34. Сорокин О.В. Особенности формирования политического сознания современной российской молодежи // Социс. - 2008. - №8, С. 45 – 52

35. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 25.12.14 նիստի արձանագրություն N54

36. Ковалева А.И., Луков В.А. Социология молодежи: Теоретические вопросы. - М., 1999.с.253

37. Rustow D.A. Transitions to Democracy - Toward a Dynamic Model // Comparative Polities. - 1970. - Vol. 2. - № 3, p.337-363

38. Эйзенштадт Ш.Н. Срывы модернизации // Неприкосновенный запас. - 2010. - №6 (74), с.42-67

39. Пляйс Я.А. Политология в контексте переходной эпохи в России. - М.. 2009, с.99

40. Хантингтон С. Политический порядок в меняющихся обществах. - М., 2004. " Модернизация и политика в XXI в. / Отв. ред. Ю.С. Оганисьян. - М., 2011, С.309

41. Մամիջանյան Հ., ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ. Հանրային Կառավարում, N2, Երևան, 2017, է.143-150

42. Мид М. Культура и мир детства. М.: Наука, 1988, 429 с.

43. Мид М. Культура и преемственность. Исследование конфликта между поколениями: М.: Наука, 1970, 379 с.

44. Манхейм К. Диагноз нашего времени. -М.: «АКАЛИС», 1994. – 168 с.

45. Marcuse H., One-Dimensional Man, Beacon Press, 1964, 257 p.

46. В.К.Мокшин,С.И.Шубин, Политическая социология, Архангельск, 2014, 363 с.

47. «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28, կետ 10

48. Чекмарев Э.В. Молодежь - политический ресурс модернизации постсоветской России. Саратов, 2009, 244 с.

49. Радченко А.Ф. Молодежь в социально-политических процессах // Социология власти. - 2008.-№3, с.134

50. Шурбе В.З. Молодежь и молодежная бюрократия: качество взаимодействия //Социология власти. - 2008. - № 3, с.123-126

51. Ковров В.Ф. Электоральные процессы в общественной системе // Социология власти. - 2008,-№6, с.128

52. Бурдье П. Социальное пространство: поля и практики. - М., 2005. 576 с.

53. Քալաշյան Վ. Պետական կառավարման համակարգի զարգացման հեռանկարները և առաջնահերթությունները. երեվան, 2002, էջ 19

54. Топорнин Б.Н.. Юридическая энциклопедия, М.: Юристъ, 2001, с.229

55. Մ.Մարգարյան. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱ, Պետական Ծառայություն, Երևան, 1999, էջ 4

56. Гараджа В.И..Социология Религии. М.: ИНФРА-М, 2005, с.280

57. Материалы семинаров по проблемам религиоведения и традиционализма, ВЫПУСК 2, Евразийское движение, Москва, 2011, с.88

58. Berger P.L. The Desecularisation of the World: Resurgent religion and world politics. Washington, 1999, 143 p.

59. Matthias H. Trendbuch, Bd. Trendreport. Munich, 1993. 198 s.

60. Casanova J. Public Religion in the Modern World. Chicago University of Chicago Press, 1994, 330 p.

61. Riesebrodt M. Die Ruckkehr der Religionen: Fundamentalismus und der 'Kampf der Kulturen. Munchen, 2000, 158 s.

62. Heelas P. Detraditionalizing The Stady of Religion // The Future of Study of Religion. Boston, 2000, 306 p.

63. Ж.Ж. Руссо. Об Общественном договоре, или Принципы политического Права. М.: "КАНОН-пресс", "Кучково поле", 1998, с.370-380

64. Robert N. Bellah, Civil Religion in America, Journal of the American Academy of Arts and Sciences, "Religion in America," 1967, Vol. 96, No. 1, p1-21

65. Л.И.Василенко, Введение в философию религии, Издательство ПСТГУ, Москва, 2009, с.221-228

66. Дюркгейм Э., Парсонс Т., Мертон Р. и др. // Хрестоматия. Социология: классические и современные парадигмы. - М., 2002. - 50 с.

67. ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ, Հոդված 10

68. Մամիջանյան Հ., Հոգևոր դասի ընտրանին որպես պետական կառավարման դերակատար.ապաաշխարհիկացում.Հանրային Կառավարում, N5, 2014,էջ 133-139

69. Greenstein F. A note on the ambiguity of political socialization: definitions, criticism and strategies of inquiry - Boston, 1980. 90 p.

70. Easton D. Children in the political system: origins of political legitimacy - New York: McGraw-Hill, 1969, p.114

71. Almond G, Coleman J. The Politics of the Developing Areas - Princeton, N.J., 1960, p.26-33

72. Альмонд Г., Верба С. Гражданская культура - Мысль, Москва, 2014, с.178-365

73. Нестеров В. Образование как фактор социальной сплоченности и политической стабильности общества.- Вестник Военного университета.29009, N3(19) , с.38

74. Мамиджанян А., Саргсян А., Политическое образование как аспект непрерывного образования молодежи в процессе политической социализации. Человек и образование, с.116-121

75. Дьюи Дж. Творческая демократия – задача, которая стоит перед нами- Вестник Московского Университета. Сер.12.Политические науки.2008. N2/.с.46-61

76. Вебер М. Основные понятия стратификации. - Социс. 1994, N5, с.156

77. Тарский Ю., Тарская О. Политические контексты интегративных процессов в сфере образования - 2012.ВЕСТНИК ПАГС - С.128

78. Дюркгейм Э. Социология. Ее предмет, метод, предназначение - Москва. Канон. 1995

79. "The Conversation'' non-profit media service [Электронный ресурс]. – URL: http://theconversation.com/why-we-need-to-teach-political-philosophy-in-schools-57749 (дата обращения 02.06.2017)

80. Камалаеева А. О необходимости формирования основных компетенций выпускников вузов в условиях создания единого европейского пространства высшего образования - Вестник ТГПУ. 2011. N1(103) - с.106

81. Дзидзигури В. , Резинкина Л. Профессионально ориентированное самообразование как инструмент опережающего развития личности -Человек и образование, № 1 (42). – 2015, с. 79-84

82. Սարգսյան Ա., Մեծահասակների կրթություն. Մեթոդներ և գործողություններ. Երևան, Ճարտարագետ, 2016, 127 էջ

83. "Взгляд" Деловая газета, [Электронный ресурс]. – URL: https://www3.vz.ru/news/2012/12/4/610166.html (дата обращения 04.06.2017)

84. Мамиджанян А., ОТКРЫТЫЕ И ЗАКРЫТЫЕ ОБЩЕСТВА: РОЛЬ МОЛОДЕЖИ . АКТУАЛЬНЫЕ НАУЧНЫЕ ИССЛЕДОВАНИЯ В СОВРЕМЕННОМ МИРЕ, ВЫПУСК 5(25) Часть 8. 2017, с. 120-126

85. Поппер К. Открытое общество и его враги. Том I. Чары Платона. Пер. с англ, под ред. В. Н. Садовского. — М.: Феникс, Международный фонд «Культурная инициатива», 1992. С 5.,118, 216-220

86. Поппер К. Р. Открытое общество и его враги. Т. 2: Время лжепророков: Гегель, Маркс и другие оракулы. Пер. с англ, под ред. В. Н. Садовского. — М.: Феникс, Международный фонд «Культурная инициатива», 1992. — 528 с.

87. Даль Р., Полиархия: участие и оппозиция, стр. 6-8 М., 2010, с. 62

88. Dahl, Robert, Polyarchy: Participation and Opposition. New haven and London: Yale University Press, 1971, p. 15

89. Даль Р., Демократия и её критики, стр. 421, М. 2003, с.48

90. Dahl R. A., Political Oppositions in Western Democracies, Yale University Press, 1966, 484 p.

91. Сморгунов Л.В. Сравнительная политология. Учебник для вузов. — СПб. Питер, 2012. — 448 с

92. Баранов, Н.А. Современная демократия: эволюционный подход /. Н.А. Баранов; Балт. гос. техн. ун-т. – СПб., 2007, 208 с.

93. Сравнительная политология: Учебник. — 3-е изд., перераб. и доп. —. Изд-во Европ. ун-та в С.-Петербурге, 2001. — 368 с

94. Сморгунов Л. В. Современная сравнительная политология. Учебник. — М., 2002, с. 148

95. Հայկական համացանցի զարգացումները, Սամվել Մարտիրոսյան, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 8, 2012, էջ 29-35

96. ՀԱՅԱՍՏԱՆՅԻ ԻՆՏԵՐՆԵՏ-ՕԳՏԱՏԻՐՈՋ ՊԱՏԿԵՐԸ, Սամվել Մարտիրոսյան, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 5, 2012, էջ 35-41

97. Котенко И.В., Саенко И.Б., Юсупов Р.М. Аналитический обзор докладов между-народного семинара «Научный анализ и поддержка политик безопасности в киберпространстве», Труды СПИИРАН. 2010. Вып. 2(13). С.226-248

98. Блондель Ж., Политическое лидерство, Москва, 1992, с.98

99. Хантингтон С., Третья волна:Демократия на исходе 20-ого века. С. Хантингтон, - М., 2003, с.368

100. Банс, В. Элементы неопределенности в переходный период. В. Банс // Полис.- 1993. Н.1, с.44-51

101. Мелвиль, А. Ю., О траекториях посткомунистиеских трансформаций / А. Ю. Мелвиль // Полис._2002.н.1, с.66

102. Мамиджанян А., ВЛИЯНИЕ ДЕМОКРАТИЧЕСКОГО ТРАНЗИТА НА ПОЛИТИЧЕСКИЕ СИСТЕМЫ: МОЛОДЕЖЬ КАК АКТОР. АКТУАЛЬНЫЕ НАУЧНЫЕ ИССЛЕДОВАНИЯ В СОВРЕМЕННОМ МИРЕ, ВЫПУСК 5(25) Часть 8 . 2017, ст. 127-131

103. Парсонс Т. Система современных обществ, Аспект Пресс, Москва, 1998,270с

104. Bertalanffy L. von. General System Theory – A Critical Review // General Systems. Vol. VII. 1962. P. 1–20

105. Մամիջանյան Հ., Եվրոպական երիտասարդական շարժումների դերը երիտասարդության քաղաքական սոցիալականացման մեջ. Երևան. 2017. Տարածաշրջան և աշխարհ, էջ 35-40

106. Fominaya F., Social Movements and Globalization: How protests, occupations and uprisings are changing the world. Sociology for Globalizing Societies, Palgrave Macmillan, London, 2014.214 p

107. Giddens A., Modernity and Self-Identity: Self and Society in the Late Modern Age, Stanford, CA: Stanford University Press, 1991, 264 p

108. Fominaya F., Cristina ,"Autonomous Movement and the Institutional Left: Two Approaches in Tension in Madrid's Anti-globalization Network", South European Society & Politics, Vol 12, 3: 335-340, 2007

109. Bendit R., Youth Sociology and Comparative Analysis in the European Union Member States, German Youth Institute, Munich, 2006, 79 p.

110. Stevanson J.M., Listening to Radicals: Attitudes and Motivations of Young People Engaged in Political and Social Movements Outside of the Mainstream in Central and Nordic Europe, British Council, 2011, 32 p

111. Vanandurel M:, Piero Amerio, Ola Stafseng and Pierre Tap, Young People and Associations in Europe, Council of Europe, 1996, 63 p.